

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ



ՀԱԼԵՊԻ «ԶԱՐԷՆ ԵՓՓԷ» ԱԶԳԱՅԻՆ ՃԵՄԱՐԱՆԻ
ՀԻՄՆԱԿԻՐՄԱՆ 75-ԱՄՑԱԿԻՆ
ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ


ՊՐԱԿ Գ

ԵՐԵՎԱՆ
2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱԼԵՊԻ «ՔԱՐԵՆ ԵՓՓԷ» ԱԶԳԱՅԻՆ ՃԵՄԱՐԱՆԻ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 75-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ,
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ



ԵՐԵՎԱՆ
2023

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱԼԵՊԻ «ՔԱՐԷՆ ԵՓՓԷ» ԱԶԳԱՅԻՆ ՃԵՄԱՐԱՆԻ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 75-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ
ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՊՐԱԿ Գ

ՄԵՄԲՐՈՎ ԱՐԽ. ՄԵՏՐՈԲ
ՄԱՅՈՒՆՅԱՆ

245



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

245

ԵՐԵՎԱՆ
2023

**NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF HISTORY**

**FOREIGN-LANGUAGE SOURCES ON
ARMENIAN COMMUNITIES**

**PAPERS OF THE INTERNATIONAL CONFERENCE, DEDICATED
TO THE 75TH ANNIVERSARY OF THE ESTABLISHMENT OF
"KAREN JEPPE" NATIONAL COLLEGE IN ALEPPO**

ISSUE C

YEREVAN -2023

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСТОРИИ**

**ИНОЯЗЫЧНЫЕ ИСТОЧНИКИ ОБ
АРМЯНСКИХ ОБЩИНАХ**

**СБОРНИК МАТЕРИАЛОВ МЕЖДУНАРОДНОЙ
КОНФЕРЕНЦИИ, ПОСВЯЩЕННОЙ 75-ЛЕТИЮ ОСНОВАНИЯ
НАЦИОНАЛЬНОЙ СЕМИНАРИИ "КАРЕН ЙЕППЕ" В АЛЕППО**

ВЫПУСК 3

ЕРЕВАН-2023

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ԽՄԲԱԳԻՐ՝

Պ.Գ.Դ. ՊՐՈՖ. Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ՝

Պ.Գ.Թ. ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Պ.Գ.Թ. ՎԱՀԵ ՄԱՐԳՍՅԱՆ

ԷԼԻԶԱԲԵԹ ԹԱԶԻՐՅԱՆ

ՀՏԴ 94(479.25)(082)

ԳՄԴ 63.3(52)Գ43

Օ-780

Օտար աղբյուրները հայկական գաղթալայրերի մասին:
Օ-780 Հալեայի «Քարեն Եփփե» ազգային ձեռնարանի հիմնադրման 75-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու.- Եր. ՀՀ ԳԱԱ Պատմ. Ինստ., 2023.- 197 էջ

Ժողովածուում քննարկված են «Օտար աղբյուրները հայկական գաղթալայրերի մասին» (Երևան, 2022 թ նոյեմբերի 4) միջազգային գիտաժողովի նյութերը: Գիտաժողովը նվիրված էր Հալեայի «Քարեն Եփփե» ազգային ձեռնարանի հիմնադրման 75-ամյակին:

Օտար աղբյուրները հսկայական ծավալի նյութ են սարունակում հայկական գաղթօջախների բնակչության թվաքանակի, սոցիալ-տնտեսական, կրթաօժանոցային և ներհամայնքային կյանքի բազմաթիվ խնդրությունների վերաբերյալ:

Գիտաժողովի խորագրի համեմատությամբ բացառություն է կազմում Հավախքի հայությանը վերաբերող մեկ զեկուցում:

Նախատեսված է հայոց պատմության, հայկական գաղթօջախների պատմության հարցերով հետաքրքրվող և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 94(479.25)(082)

ԳՄԴ 63.3(52)Գ43

ISBN 978-9939-892-38-2

© ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2023



Դանիացի հայասեր բարերարուհի Քարեն Եփփե



**Հալեայի «Քարեն Եփփե» ազգային ճեմարանը
(1947-2022)**



ՅՈՒՐԵՆԵՆԱԿԱՆ
ՀԱԼԷՊԻ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՐԵՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆԸ
ԵՕԹԱՆԱՍՈՒՆՀԻՆԳ ՏԱՐԵԿԱՆ

պ.գ.թ. Անի Տիշենկճեան

Աստուածային տնօրինումով հայ ժողովուրդը իր ողջ գոյութեան ընթացքին արձանագրած է վերելքի եւ անկման ժամանակահատուածներ: Անառարկելի փաստ է, որ ինչ-ինչ պատճառներով երբեմն աշխատանքի բերումով եւ ընդհանրապէս հարկադրաբար լքած է իր բնակավայրը՝ սփռուելով աշխարհով մէկ, իր բախտը որոնելու օտարութեան մէջ միշտ բախելով իր ազգային ինքնութիւնը կորսնցնելու եւ ձուլուելու վտանգին:

Օտար երկիրներու, այլակրօն ժողովուրդի մէջ հայը հայ պահելու գործը ոչ թէ դժուար, այլ անելի ճիշդ պիտի ըլլար ըսել հերոսական քայլ էր ու է, ուղղակի ամենօրեայ պայքար հայուն բնորոշ աննկուն ու անկոտրում կամքին ու յարատեւութեան տեսիլքին հաւատալու շնորհիւ: Իր դեգերումներու ճանապարհին հայը միշտ ձգտած է բնակութիւն հաստատել այն երկիրներու մէջ, ուր համեմատաբար հնարաւոր էր ոչ միայն ապահովել ֆիզիքական գոյութիւնը, այլ նաեւ ծաւալիլ արդիւնաւետ գործունէութիւն քանի որ իր բնոյթով, իր ներքին էութեամբ հայը արարող, ստեղծող ու շինարար ժողովուրդ է:

Եկեղեցոյ եւ հաւատքի շնորհիւ հայը օտար երկիրներու մէջ պահպանեց իր հոգեւոր կեանքի ու մշակոյթի աւանդները, իր գիրն ու գրականութիւնը եւ ազգային առանձնայատկութիւնները: Ասով պայմանաւորուած էր այն հանգամանքը, որ բոլոր գաղթօճախներուն եւ Սփիւտքի հայկական համայնքներու մէջ հայերուն առաջնահերթ նախաձեռնութիւնը հայկական եկեղեցոյ կառուցումը եղաւ, որուն որպէս տրամաբանական շարունակութիւն եւ ներքին պահանջք ու մղում յաջորդեց դպրոցաշինութիւնը: Թիթեղածածկ տնակներու եւ վրաններու

տակ սկսան գործել հայկական առաջին դպրոցները, սակայն հայ երեխային օտար միջավայրի մէջ հայ պահելու եւ անոր հայեցի կրթութիւն ու դաստիարակութիւն տալու գերագոյն նպատակը անոնց տուաւ դժուարութիւնները դիմակայելու, պայքարելու ուժ եւ նոր արժէքներ ստեղծելու ձգտում:

Հայկական դպրոցներ բանալու եւ անոնց գործունէութիւնը անխափան տանելու գործի հիմնական նախաձեռնողն ու կազմակերպողը եղաւ Հայ Եկեղեցին:

Հալէպի մէջ 1920-1930 թուականներուն տասնեակ հայկական նախակրթարաններու մեծ ցանց մը կը գտնուէր: Սակայն ազգային երկրորդական վարժարան ունենալու հարցը հրատապ անհրաժեշտութիւն կը նկատուէր Սուրիոյ հայաշատ քաղաքներուն, մասնաւորաբար Հալէպի մէջ:

1930-1940ական թուականներուն սուրիահայ մամուլը յաճախ արձանագրած է այն անհրաժեշտութեան մասին, որ կը միտէր նոր սերունդը «փրկել օտար վարժարաններու եղծանող ազդեցութիւններէն»:

Հակառակ նիւթի յաճախակի արծարծումին ու անհրաժեշտութեան, միայն հայրենադարձութենէն մէկ տարի անց, 1947թ. Հոկտեմբերին, Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդարանի Քաղաքական ժողովի որոշումով կը բացուի ազգային երկրորդական վարժարանը Քարէն Եփփէ Ազգային Ճեմարան անունով գիտութեան դարբնոցը, ի գնահատանք եւ երախտագիտութիւն մեծ հայասերին չարչարագին ծառայութիւններուն:

«Մայրիկը», Քարէն Եփփէ դանիացի օրիորդը, որ եկած էր հեռաւոր Կիւրէն դէպի Հալէպի անապատները, խառնուեցաւ բախտագուրկ հայութեան բեկորներուն ու անոնց ֆիզիքական ու բարոյական գոյութեան համար զոհաբերեց իր կեանքը, մինչեւ վերջին շունչը: Ամբողջ երեսուն տարի խառնուեցաւ մեր կեանքին, միսէն միս ու ոսկորէն ոսկոր հայ դարձաւ, շաղախուեցաւ մեր հանրային գործունէութեան եւ աւելին՝ դարձաւ Հայ Եկեղեցւոյ հաւատաւոր զաւակը փափաք

յայտնելով, որ Հայ Առաքելական Եկեղեցւոյ ծէսով ամփոփուի իր մարմինը յաւիտենական հանգստարանին մէջ:

Օր. Քարէն Եփփէ, որ տնօրէնուհին էր Դանիական Բարեսիրական Միութեան, 1935-ին, իր մահէն առաջ ձգած կտակով այրիանոցի խնամատարութիւնը կը յանձնէր Ազգային Առաջնորդարանին, որուն օրուան առաջնորդն էր Գերշ. Տ. Արտաւազդ Ս. Արք. Սիրմէեանը:

1947-ին, Ազգային Իշխանութիւնները նկատելով այրիանոցը պահելու հետզհետէ նուազող անհարժեշտութիւնը կապ կը հաստատեն բարերարուհիին պարագաներուն հետ: Դանիական Բարեսիրական Միութիւնը ընդառաջելով Թեմի Առաջնորդին խնդրանքին, հայ ազգին կը նուիրէ 10.000 քառ. մէթր տարածութեամբ մեծարժէք հողը, ուր 75 տարիէ ի վեր խրոխտ կանգնած է Ճեմարանը:

Եօթանասունհինգ ամեայ Ազգային Ճեմարանի բացման մէջ գլխաւոր դեր կ'ունենան Բերիոյ Թեմի Ազգային Իշխանութիւններն ու կուսակցական-հանրային գործիչները, օրուան Առաջնորդ Տ. Զարեհ Ս. Եպս. Փայապէանի հովանաւորութեամբ ու աջակցութեամբ:

Ուսումնակրթական գետնի վրայ կարեւորագոյն նուաճումն էր Քարէն Եփփէ Ազգ. Ճեմարանի հիմնարկութիւնը իբրեւ տեսիլք եւ իբրեւ իրագործում: Ճեմարանը կը սկսի գործել 1947թ. 15 Հոկտեմբերին, ընդամենը մէկ դասարանով եւ 22 երկսեռ աշակերտ-աշակերտուհիներով: Իբրեւ շէնք կը տրամադրուի Նոր Գիւղի Ազգային Սահակեան Վարժարանի կից բարերարուհիին հիմնած միայարկ ու թիթեղածածկ շէնքերէն մէկը:

Կիրակի, 26 Հոկտեմբեր 1947-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ յետ պատարագի հոգեհանգստեան արարողութիւն կը կատարուի Օր. Քարէն Եփփէի հոգւոյն համար, ապա թափօրը եկեղեցիէն կ'ուղղուի դէպի նորաբաց վարժարան, ուր կը կատարուի պաշտօնական բացում, որմէ ետք Սրբազան հայրը, ազգային իշխանութեանց ներկայացուցիչներուն, աշակեր-

տութեան եւ ուսուցչական կազմին հետ կ'այցելեն Ազգային Գերեզմանատուն յարգանքի տուրք մատուցելու «Մայրիկի» անթարամ յիշատակին:

Իր առջեւ դրած առաջնահերթ խնդիրներէն էր Հայեցի դաստիարակութիւնն ու մշակութային արժանիքներու պահպանումը: Ան միշտ ալ ամեն ինչէ վեր դասեց, որովհետեւ հաւատացած էր ու մինչ օրս կը հաւատայ, որ մշակութի ոլորտին մէջ է, որ կը մշակուին ու կը ստեղծուին հոգեւոր-ազգային արժէքները, որոնց միջոցով կը պահպանուի, կը վերարտադրուի եւ կը զարգանայ հայոց արժեհամակարգը: Իր ժողովուրդին մատուցեց ամենամեծ, ամենէն անհրաժեշտ ու արժէքաւոր բարիքը: Եօթ եւ հինգ տասնեակ տարիներ ոչ միայն Սուրիոյ հայ համայնքի, այլ աշխարհով մէկ սփռուած հայ հաւաքականութեան պատրաստեց ու հրամցուց հայ մարդը, գիտութեամբ ու հայկականութեամբ օժտուած: Թէեւ գիտութիւնները կրնան դաստիարակութեան լոյս տալ, բայց եւ այնպէս անոնք ալ կրնան անկէ աւելի լուսաւորուիլ: Առանց դաստիարակութեան եւ մանաւանդ հայեցի դաստիարակութեան ուսումը նման է լծակի, որ յենելու կէտ չունի:

21-րդ դար...

Հայ Դպրոցին ու Հայ Եկեղեցւոյ առաջ կանգնած են նոր մարտահրաւերներ, որոնք անյայտօղ կը սպասեն իրենց առողջ լուծման: Առանց անոնց՝ ազգը դատապարտուած է ուժացումի:

Հայ ժողովուրդի համար հայրենասիրութեան գաղափարը առաջացած եւ ձեւաւորուած է հազարամեակներու ընթացքին: Նուիրուածութիւնն ու սէրը հայրենիքի նկատմամբ, հպարտութիւնը անցեալի ու ներկայի համար, կապուածութիւնը հայ հողին, սէրը մայրենի լեզուին նկատմամբ, հաւատարմութիւնը արանդութիւններուն, քրիստոնէական հաւատքին եւ տակաւին շատ ազդակներ դարեր շարունակ ուղեկցած են օտար ամբարձու վրայ ապրող հայուն:

Արդ, վերոյիշեալ դրսեւորումներու բացակայութեան կամ խզումին մարդը որպէս մարդ կը շարունակէ շնչել, սակայն կը

դադրի լիարժեք հայ մարդ գոյատևելէ, որովհետեւ ազգային լեզուն, կրօնը, պատմութիւնը, մշակոյթը իմանալը՝ ազգային լուսատրութեան հիմքը եւ ազգի հոգեւոր միասնութեան ու բարոյական վերելքի ամենակարեւոր գործօնն է:

Եօթանասունհինգ ամեայ Ճեմարանը այսօր ալ կանգնած է նոր մարտահրաւերներու առջեւ: Սուրիոյ տասնամեայ պատերազմը իր մատնահետքերը դրաւ նաեւ Հալէպի հայաշատ համայնքի ընկերային, տնտեսական եւ մանաւանդ կրթական ոլոստին վրայ: Բախումներու պատճառով Ճեմարանը յայտնուեցաւ վտանգաւոր գօտի: Կեանքը շարունակութեցաւ, սակայն Ս.Վրացեան կեդրոնէն եւ Ազգային Կիւլայէնկեան վարժարանէն ներս: Հետզհետէ ընթացող արտաքին եւ ներքին տեղաշարժերու հետեւանքով կրթարանը արձանագրեց աշակերտութեան թիւի նօսքացում եւ վաստակաշատ ուսուցիչներու բաց որոնց եկան փոխարինելու նորերը:

Այսօր, Ճեմարանը կը դիմագրաւէ տնտեսական տագնապ եւ կարիքը ունի մարդուծի: Շնորհիւ աշխարհացրիւ ճեմարականներու եւ ճեմարանաւարտներու համեմատաբար տնտեսական տագնապը կը մեղմանայ, բայց եւ այնպէս մասնագէտ, յատկապէս Հայերէնաւանդ ուսուցիչի անհրաժեշտութիւնը հրամայական պահանջք է:

ԱՅՍՐԿՈՎԿԱՍ
ԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՆ ՇԱՄԱԽԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ.
XV-XVIII ԴԴ. (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)

Հիմնաբառեր. Բուն Աղվանք, Կուրի ձախափնյակ, Շամախի, Այսրկովկաս, հայեր, Էնզելբերտ Կեմպֆեր, Պեդրո Կուբերո Սեշաստիան, Կոռնելի լը Բոյուիկ:

Պատմական հավաստի հիշատակությունները վկայում են, որ Արևելյան Այսրկովկասի (ներառում է Կուրից հյուսիս պատմական Բուն Աղվանքի և նրանից հյուսիս-արևելք տարածվող մերձկասպյան, ինչպես նաև Կուրի աջափնյա դաշտավայրը և Երասխ/Արաքսի ստորին հոսանքից հարավ գտնվող Մեծ Հայքի Փայտակարան աշխարհի արևելյան Կասպից ծովի առափնյա շրջանները) տարեթնիկ տարածքում վաղ ժամանակներից բնակվել են ոչ միայն աղվաններ, այլև որոշակի հայկական էթնիկ տարր¹, որն ուրույն դերակատարություն է ունեցել երկրամասի մշակութային և քաղաքական զարգացումներում²:

¹ Տե՛ս Գալստյան Հ., Հակոբյան Ա., Էթնալեզվական գործընթացները Բուն Աղվանքում (Գալստյան Հ., Հոդվածներ, հուշագրություններ, հարցազրույցներ (ժողովածու): Կազմ. Մարություն Հ., Երևան, 2003, էջ 91-92:

² Որպես երկրամասի տեղաբնիկ և մշակութալերտ ժողովուրդ հայերը՝ մասնակցեցին այդ տարածաշրջանի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային կյանքին և ստեղծեցին հարուստ պատմություն: Կուրի ձախափնյակի էթնոմշակութային զարգացումներում հայկական ազդեցությունն առավելապես դրսևորվել է քրիստոնեության և դպրության տարածման ու հաստատման գործում: Ազաթանգեղոսի հաղորդմամբ՝ Գրիգոր Լուսավորիչը և Հայոց թագավոր Տրդատ III Մեծը (298-330 թթ.) քրիստոնեության քարոզչությունը տարածեցին «...մինչ ի սպառ ի սահմանս Մասքթաց, մինչև ի դրունս Ալանաց, մինչ ի սահմանս Կասպից...» (Ազաթանգեղայ Պատմություն Հայոց, աշխատութեամբ Գ. Տեր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց, Տիփսիս, 1909, էջ 439): Բուն Աղվանքը հնուց գտնվել է հայկական պետականության ու Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր ու քաղաքակրթական ազդեցության ներքո: Այն, որ վաղ

միջնադարից մինչև Հայոց թագավորության անկումը (428 թ.) Աղվանից թագավորությունը որոշ ընդհատումներով գտնվում էր հայկական թագավորության քաղաքական ու մշակութային ազդեցության ներքո, խոսուհի վկայությանն ենք հանդիպում Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց» երկում. «Ալիզրն առաջնոյ պատմութեանն եղաք զսուրբ Լուսավորիչն Հայոց... զսուրբն Գրիգորիոս... Իսկ երկրորդ հատուածիս դիշուք զլուս զլուսատրիչս կողմանցն Աղուանից, որպէս զազգայնոց և զհաւատուկցաց մերոց, մանաւանդ զի և առաջնորդք նոցա հայալեզուք, հայերէնախօսք յուրվք էին. թագաւորքն՝ հնագանդք՝ թագաւորացն հայոց, ընդ ձեռամբ նոցա լեալք, և եպիսկոպոսքն՝ ձեռնադրեալք ի սրբոյն Գրիգորէ և յաթոռակալաց նորա, և ազգն ուղղափառութեամբ ընդ մեզ կացեալ ի կրօնս, վասն այնորիկ արժան է ի միասին լինել յիշատակ երկուց ազգացս» (**Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Գ. Մելիք-Օհանջանյանի. Երևան, 1961, էջ 192): Հայր Ներսէս Ալկինյանի դիտարկմամբ «...Աղուանից աշխարհը ոչ միայն ...Մեծ Հայաստանի հովանւոյն տակ ապրած էր եւ անոր մշակոյթով սնած, այլ եւ... կրօնքով եղբայրացած... թէպէտ յետոյ քաղաքականապէս անկէ բաժանուած, բայց եղած է... անոր հետ դաշնակից եւ դրացիութեամբ» (**Ալկինեան Ն.**, Ս. Մաշտոց վարդապետ. Կեանքն եւ գործունեութիւնը, հանդերձ կենսագրութեամբ Ս. Սահակյա, Վիեննա, 1949, էջ 315): Երկրամասի էթնոմշակութային պատմության մեջ հայոց էթնոհոգևոր և քաղաքակրթական ակունքների, հայկական ու հայաբնակ գյուղերի մշակութային գործունեության անվիճելի վկայություններն են հայ ճարտարապետության հորինվածքներով կառուցված միջնադարյան բազմաթիվ եկեղեցիները, վանքերը և մատուռները, հնավայրերի հայերեն արձանագրված հարյուրավոր խաչքարերն ու տապանաքարերը, որոնցով հարուստ են Նիժ, Վարդաշեն, Ճալեթ, Ամուրավան, Գանձակ, Ղալակա, Վանք, Ռուշանաշեն, Հնդաք, Մաղիան, Մատրասա և այլ գյուղերի գերեզմանատները (տե՛ս **Վարդապետյան Ս.**, Բուն Աղվանքի հայերեն վիմագրերը: Գիրք Ա, Երևան, 1997): Կուրի ձախափնյակում հայերեն խոսքն ամրապնդվում և տարածվում էր նաև հայ գրով: Սյա առումով պատմական բացառիկ արժեք ունեն նաև երկրամասի տուսնյակ գրչօջախներում XIV-XVIII դդ. ընթացքում ընդօրինակված հայերեն ձեռագիր բազմաթիվ մատյանները (Ավետարաններ, սաղմոսարաններ, քարոզգրքեր, ճաշոցներ, եկեղեցական-ծիսական այլ ժողովածուներ՝ Մաշտոցներ, ժամագրքեր, խորհրդատետրեր և այլն): Տե՛ս **Եգանյան Օ.**, Մեսրոպ արքեպս. Սմբատյանի «Նկարագիր Շամախույ թեմի» գրքում հիշատակված ձեռագրերը, «Ջջմիածին», Ս. էջմիածին, 1970. Ա, էջ 45-48, տե՛ս նաև **նույնի՝** Աշխատություններ: Հրատարակութեան պատրաստեց **Գ. Տեր-Վարդանեան**. Երևան, 2014, էջ 72-75: **Մսեփախյան Գ.**, Շամախու Հայոց թեմի գրչության այլ վայրերում գրչագրված եկեղեցապատկան և վանքապատկան մատյանները (XIV-XIX դդ.), «Ջջմիածին», Ս. էջմիածին, 2005, ԺԲ, էջ 67-73):

Հայկական լեռնաշխարհից արևելք՝ Կուրի ձախափնյակում, հայ էթնիկ տարրի վաղեմությունը փաստող բազմաթիվ ապացույցներ կան հայկական աղբյուրներում: Միմեոն Ա Երևանցի պատմագիր կաթողիկոսն հիշատակարանում գրում է. «Իսկ բազմութիւնք հայալեզու և հայակոսն ժողովրդոցն, որք այժմ գոն ի յերկիրն Աղուանից, հայք են ի բնէ»¹ (ընդգծումը մերն է - Գ. Ս.): Ի լրումն վերոնշյալի՝ ավելացնենք, որ Կուրի ձախափնյակում և մերձկասպյան շրջաններում հայ էթնիկ տարրի վաղեմության փաստը հավաստում են նաև օտար աղբյուրները: Այդ իմաստով հատկապես ակնառու է կովկասագետ, կայսերական ակադեմիայի թղթակից անդամ Յուլի Գագեմեյստերի տեղեկությունը. «Նախկին Կասպիական մարզի ամբողջ բնակչությունից իրենց նախաբնակությունը կարող են ապացուցել միայն հայերն ու ուղիները»²:

Բուն Աղվանքը հնուց գտնվել է հայկական պետականության ու Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր և քաղաքակրթական ազդեցության ներքո: Հր. Աճառյանը, բարձր գնահատելով Հայոց քաղաքակրթական նշանակությունը երկրամասում, գրել է. «Աղուանից երկրին մեջ գտնուէին հայկական ծագում ունեցող ցեղեր... Ասոնք այնպէս ուժեղ էին և այնպէս հաստատուն կերպով տեղաւորուած երկրին մէջ, որ ոչ թէ միայն իրենց ինքնուրոյնութիւնը կորցրած չէին, այլ և ընդհակառակը, զանազան յաջող հանգամանքներու պատճառաւ... ազդեր էին երկրի վրայ...»³: Շիրվանում հայ բնակչության՝ հնուց և վաղ միջնադարից եկող մշակութակերտ գործունեության շարունակականության վերաբերյալ ուշագրավ դիտարկում է արել Լեոն՝ նշելով, որ «Հայերը Շիրվա-

¹ Գիւան Հայոց պատմութեան, Գ զիբք, մասն Բ, Միմեոն կաթողիկոսի յիշատակարանք: Հրատարակեց Գիւտ քահանայ Աղանեանց, Թիֆլիս, 1894, էջ 417-418:

² Гегемейстер Ю., Хозяйственный очерк Закавказского края: народонаселение (Сборник газеты «Кавказ»), первое полугодие 1847 года. Изд. О. Н. Константиновым, Тифлис, 1847, с. 58 (բնագրում՝ «Из всего населения бывшей Каспийской области одни Армяне и удины... могут доказать первобытность свою».

³ Աճառյան Հ., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002, էջ 44:

նում բնակութիւն են հաստատել շատ հին ժամանակներից: Բացի դրանից, չը պետք է մոռանալ, որ Շիրվանը հին Աղուանից երկրի մի մասն է, իսկ Աղուանից երկիրը, երկար դարերի ընթացքում եղել է հայերի կուլտուրական եւ քաղաքական խիստ ազդեցութեան տակ»¹:

Այսպիսով՝ հայերը որպէս երկրամասի տեղաբնակ և մշակութակերտ ժողովուրդ՝ մասնակցեցին այդ տարածաշրջանի հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային կյանքին և ստեղծեցին հարուստ պատմություն: Ըստ որոշ տեղեկությունների՝ միջնադարում երկրամասի ողջ տարածքում Կուրից մինչև Կասպից ծով, բնակվում էին մեծ թվով հայեր. հայաբնակ բնակավայրերի թիվը հասնում էր ավելի քան 200-ի²: Այս առումով ուշագրավ դիտարկում է կատարել կովկասագետ, ազգագրագետ Ն. Զեյդլիցը, գրելով, որ «Շամախի քաղաքի շրջակայքում սփռված հայկական բնակավայրերը ամենայն հավանականությամբ կազմում են միջին դարերում առավել մեծ քանակությամբ եղած բնակավայրերի մնացորդները»³:

Հարկ է նշել, որ գյուղական բնակավայրերից բացի հայ բնակչության մի խոշոր զանգված՝ Նուխի, Բաքու և Ղուբա քաղաքներից բացի կենտրոնացած էր հինավուրց Շամախիի գավառի կենտրոն համանուն քաղաքում: Շամախիի գավառը գտնվում էր Բաքվի նահանգի կենտրոնական մասում՝ Մբ. Սահակ (Փիր-Սահաթ) և Աղսու գետակների միջև: Հյուսիսից սահմանակից էր Ղուբայի, հարավից՝ Զավաթի, արևելքից՝ Բաքվի և արևմուտքից՝ Գյոքչայի գավառներին:

Պատմության մեջ բազմիցս հիշատակվող Շամախի քաղաքը տարածված է Կովկասյան լեռնապարի հարավարևել-

¹ Լ [Լեո], Շամախի, «Մշակ», Թիֆլիս, 1902, փետրվարի 7, N 28:

² Տե՛ս Կարապետյան Ս., Շամախու գավառի գյուղերի պատմությունից. Երևան, 1997, էջ 57:

³ Списки населенных мест Российской империи по Кавказскому краю. LXV Бакинская губерния. Список населенных мест по сведениям 1859 по 1864 г. Сост. глав. ред. ком. Н. Зейдлицем, Тифлис. 1870, с. 93.

յան ճյուղերի ստորոտին, փոքրիկ բլրաշարի վրա՝ փոված Մբ. Սահակ և Ջագալավա գետակների խառնվելու տեղում: Քաղաքին ամենամոտիկ սարերն են դեպի հյուսիս-արևմուտք ձգվող Լզղարասին և Փեղրաքունը: Քաղաքի գեղանիստ դիրքին հետևյալ նկարագիրն է տվել Մակար եպս. Բարխուտարեանցը. «Խոր ձորեր են Շամախու արևելեան և արևմտեան կողմերն: Արևմտեան ձորով հոսում է Մեյսարու վտակն և արևելեան ձորով մի փոքրիկ առու: Երկու ջրերս միանում են պարսից թաղի ստորոտում և խառնում Փիր-Սահաթ գետակին: Քաղաքիս վերնամասն հարթ է, միջնամասն՝ լանջ, ստորին մասն՝ հովտահարթ»¹: Ալեքսանդր Շիրվանզադեն «Իմ կյանքից» խորագրով հուշերում գմայլանքով է նկարագրել ծննդավայրի գեղաշուք բնությունը. «Անդրկովկասի մի անկյունում կայ մի քաղաք, անունը Շամախի կամ Շիրվան: Ա՛հ, հրաշալի է այդ քաղաքի բնութիւնը. Այնտեղ երկինքը կապոյտ է, ինչպէս Փիրուզա, երկիրը բոյսերով, ծաղիկներով փարթամ, ինչպէս մի սքանչելի պարտեզ: Այնտեղ ձմեռը եղանակը մեղմ է, դիւրեկան, ոչ քամի, ոչ փոթորիկ: Իսկ գարնանը և ամռանը բարձրագագաթ ծառերի վրայ գիշեր-ցերեկ երգում են անթիւ սոխակներ: Եւ ի նչ համեղ մրգեր կան այնտեղ, եթէ գիտենաք, ի նչ հոտաւետ պտուղներ»²: Բնակլիմայական այս նպաստավոր պայմանների բերումով էլ Շամախին ու նրա մերձակայքը, դեռևս Աղվանից թագավորների ժամանակներից սկսած, համարվել են ամառանոց ու հանգստավայր: Երկրամասի բնակչության համար այս սովորությունը շարունակվեց հետագայում ևս: Գավառական բժիշկ Միսաք Արամյանցը, նկարագրելով Շամախիի առողջարար կլիման, 1887 թ. գրել է. «Ո՛վ տեսել է Շիրուանի սքանչելի բնութիւնը և չէ հիացել. ո՛ր տկարը դիմել է նրա կենդանարար օդին

¹ Բարխուտարեանց Մ., Աղուառից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան), Թիֆլիս, 1893, էջ 156:

² Շիրվանզադէ Ալ., Իմ կեանքից, «Հասկեր», Թիֆլիս, 1910, N 11, էջ 320- 321, տե՛ս նաև Հին թուրթեր. նիւթեր Շիրվանզադէի մասին, «Վեմ», Փարիզ, 1935, Դ տարի, սեպտեմբեր-դեկտեմբեր, N 4, ԺԲ, էջ 90,

ու ջրին և չէ կազդուրուել հոգով ու մարմնով: Ամեն տարի ընտանիքս Շամախի ամառանոց ուղարկելով, միջոց եմ գտել միատեղ ութ-տասն օր Մաղեանի Նախավկայի մենաստանում Շիրուանի կենդանաբար օդն ու ջուրը վայելելով, հոգեպէս և մարմնապէս թարմանալու, զուարթանալու և կազդուրուելու»¹: Աղբյուրները վկայում են, որ միջնադարից Շամախին ուսումնակրթական սերտ կապեր է ունեցել Սյունյաց մետրոպոլիտական Աթոռի հետ: Ձեռագիր հիշատակարանի վկայության համաձայն՝ Հովհան Ռոտունեցու մահվանից հետո (1382 թ.), երբ Տաթևի համալսարանը գլխավորում էր նրա աշակերտ Գրիգոր Տաթևացին (1346-1411 թթ.), Ջուղայից, Թավրիզից, Սյունիքից և այլ վայրերից ուսանելու եկած 12 աշակերտներից մեկը, որի անունն էր Հունան, Շամախիից էր: Թովմա Մեծոփեցու հավաստմամբ՝ «Եւ նորա ժողովեալ զբազումս ի յաշակերտաց իւրոց՝ զՄխիթարն Տաթևու... զՅովհաննէսն ի Վաղանդնու... զՌունան ի Շամախու...»²:

• • •

Հարկ է նշել, որ հայկական աղբյուրները լրացնում են նաև օտար հեղինակների երկերում շամախահայերի մասին պահպանված ուշագրավ տեղեկությունները:

Շամախին Այսրկովկասի հնագույն և վաճառաշահ քաղաքներից էր: Իր աշխարհագրական դիրքով այն գտնվել է հին աշխարհի հաղորդակցության և առևտրական մեծ ճանապարհների վրա: Այդտեղով էր անցնում առևտրառագմական մեծ նշանակությամբ հայտնի Պարտավ-Դերբենդ ճանապարհը: Տա-

¹ Արամեանց Մ., Մալխանից Էջմիածին. նկարագիր ուխտաւոր ուղեւորութեան (փոփոխութիւններով արտատպված «Նոր-դար» ամենամեայ լրագրից), Թիֆլիս, 1887, էջ 6-7:

² Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, աշխատասիրությամբ՝ Լ. Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 76-77, հմմտ. Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), կազմեց Վ. Հակոբյան, Կ. Բ, Երևան, 1956, էջ 152:

բանցիկ այդ ուղին միմյանց հետ կապում էր Պարտավ, Շամախի, Շարվան, Ղուբա և Դերբենդ քաղաքները: Արաբ պատմիչ Մուքադասիի հաղորդած տեղեկության համաձայն՝ «Շամախին նախալեռնային քաղաք է: Ծինությունները կառուցված են քարից և գիպսից: Այդտեղ կան հոսուն ջրեր, այգիներ և զբոսանքի համար հաճելի վայրեր»¹: Մշտապես այս քաղաքն էին գալիս ռուս, իրանցի, հնդիկ և այլ ազգերի վաճառականներ: Ժամանակակցի բնորոշմամբ՝ «Քանզի գիտել եւս արժան է յաղագս փարթամութեան քաղաքիս այսորիկ Շամախու... և զի էր պանտար Կասպիական ծովուն և յամենայն կողմանց վաճառականացն տեղիք բնակութեան, և վաճառի, և շահաւետութեան ի Հնդկաց և ի Հոռոմոց, ի Ջուղայու, ի Ռուսաց, և յամենայն երկրէ. և այսպէս լի էր ամենայն ստացուածովք և գանձիւք»²: Դրա շնորհիվ Շամախին եղել է մետաքսի, արվեստի և վաճառականության, քաղաքական ու մշակութային կապերի կարևոր հանգույց և տարբեր պետությունների ռազմական ու դիվանագիտական զանազան միջոցառումների մշտական ելակետ: Այս կարևոր բնաշխարհագրական հատկանիշներով Շամախին ունեցել է երկրամասի հարմարավետ վայրի դերը, որի շուրջը հիմնականում խմբավորվել են հայկական գյուղերը:

XV-XVI դդ. պարբերաբար կրկնվող պատերազմների և բնակչության տեղաշարժերի հետևանքով փոփոխվել է շամախահայերի թիվը: Եվրոպացի ճանապարհորդները տարբեր սովյալներ են թողել այդ ժամանակաշրջանում Շամախիում եղած հայ բնակչության թվի մասին: Այս առումով ուշագրավ տեղեկություն է հաղորդում XV դարի երկրորդ կեսի իտալացի դիվանագետ, ճանապարհորդ ու վաճառական **Ջոզեֆո Բարբարոն**, որը 1471-1473 թթ. եղել է Վենետիկի դեսպանը Իրանի այդ

¹ Караулов Н., Сведения арабских писателей о Кавказе, Армении и Азербейджане: Ал-Мукаддаси (Сборник материалов для описания местностей и племен Кавказа), вып. 38, Тифлис, 1908, с. 8).

² Եսայի Հասան-Ջալալեանց, Պատմութիւն համառոտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, ի տպարանի Առաքելական Աթոռոյ Ս. Յակովբեանց, 1868, էջ 33:

ժամանակվա տիրակալ Ակ-կոյունլու Ուզուն-Հասանի արքունիքում: Վենետիկ վերադառնալու ճանապարհին Բարբարոն Թավրիզից հետո լինում է նաև Շամախիում և Դերբենդում: Ակարագրելով Շամախի քաղաքը՝ նա գրում է. «...Շամախի, մի քաղաք Մարաստանում¹... որի իշխանը կոչվում է Շիրվան Շահ, որ քաղաքը ի պահանջել հարկին կարող է տալ ինը եւ տասը հազար ձիավոր: Գտնվում է դեպի Բագվի ծովը վեց օրվան ճանապարհ հեռու... Այս շատ լավ քաղաք է, ունի չորս հազարից հինգ հազար տուն եւ շինում է մետաքս, կտավ եւ ուրիշ բաներ - իրենց եղանակով: Գտնվում է Մեծ Հայաստանում², եւ բնակիչների մեծ մասը հայ են»³: Կասկածից վեր է, որ Շամախին գտնվում է Կուրի միջին հոսանքի ձախափնյակում և, բնականաբար, չէր կարող լինել Մեծ Հայքի սահմաններում: Ենթադրելի է, որ Ջ. Բարբարոյին շփոթեցրել է Շամախի քաղաքում ստվար հայության առկայության հանգամանքը, ուստի և քաղաքը ներկայացրել է Մեծ Հայքում: Ուշագրավ է նաև անգլիական «Ռուսական» ընկերության գործակալ, ճանապարհորդ ու վաճառական Անթոնի Ջենկինսոնի՝ Շամախիում 1563 թ. ապրիլի 10-ին կատարած գրառումներից հետևյալ հատվածը. «...այս քաղաքը (Շամախին - Գ. Ս.) ծովից ուղտով յոթը օրվան ճանապարհ հեռու է, բայց հիմա շատ ավերակ է, բնա-

¹ Շամախին տեղադրելով Մարաստանում՝ Ջ. Բարբարոն ամենայն հավանականությամբ նկատի է ունեցել այն հանգամանքը, որ Շիրվանը նշված ժամանակաշրջանում գտնվում էր Իրանի տիրապետության տակ:

² Կասկածից վեր է, որ Շամախին գտնվում է Կուրի միջին հոսանքի ձախափնյակում և, բնականաբար, չէր կարող լինել Մեծ Հայքի սահմաններում: Ենթադրելի է, որ Ջ. Բարբարոյին շփոթեցրել է Շամախի քաղաքում ստվար հայության առկայության հանգամանքը, ուստի և քաղաքը ներկայացրել է Մեծ Հայքում: Նշենք, որ Ջ. Բարբարոյի տեքստի այդ հատվածը աղբրեջանցի կեղծարար հեղինակները միտումնավոր դուրս են բողել "Путешественники об Азербайджане, под ред. Э. Шахмалиева, т. I, сост. З. Ямпольский. Баку, 1961, с. 74" գրքում:

³ Հակոբյան Հ., Ուղեգրություններ, Աղբյուրներ Հայաստանի և Անդրկովկասի պատմության, հ. Ա, ԺԳ-ԺԶ դարեր, Երևան, 1932, , հ. Ա, էջ 199:

կեցված գլխավորապես հայերից... (ընդգծումը մերն է - Գ. Ս.)»¹: Ավելին՝ Շամախիի հայ առևտրականներին էր պատկանում քաղաքի հում մետաքսի արտահանման առաջնայնությունը. հումքը վաճառահանվում էր Եվրոպա, Միջին Ասիա, Հալեպ, - Իրան և Արևելյան երկրներ²:

Շամախի քաղաքի՝ XVII դարի սկզբների հայ բնակչության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է թողել ռուս վաճառական Ֆեոդոր Կոտովը, որը, երկարամյա շփումներ ունենալով հայերի հետ, սովորել էր նաև հայոց լեզուն: 1623 թ. Իրան մեկնելու ճանապարհին, կանգ առնելով Շամախիում, ճամփորդական իր նոթերում գրել է. «Շամախին կառուցված է բարձր լեռների միջև՝ թեքության վրա, բերդը քարից է, բնակավայրն էլ է քարից... Ե՛վ բնակավայրը, և՛ կրպակների շարքը, և՛ քարավանատները կառուցված են բերդից դուրս: Շամախիում կան յոթ քարավանատներ. բոլորն էլ կառուցված են քարից և գտնվում են կրպակների շարքերի միջև. կան տաճկական, հայկական, ուր առևտուր են անում նաև ռուսները, լեզգիների, գիլանցիների և այլ քարավանատներ, և քաղաքն ընդարձակ է»:

Շամախահայերի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է թողել Իրան ուղևորվելու ճանապարհին 1636 թ. դեկտեմբերի 30-ից 1637 թ. մարտի 27-ը Շամախիում հանգրվանած Սաքսոնիայի թագավոր Ֆրիդրիխ Շլեզվիգ-Հոլշտինացու դեսպանության քարտուղար Ադամ Օլեարիուսը³: Երկրորդ անգամ Ա. Օլեարիուսը Շամախիում լինում է հետդարձի ճանապարհին 1638 թ. փետրվարի 20-ից մարտի 30-ը: Նրա հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Շամախին այդ շրջանում ուներ

¹ Նույն տեղում, էջ 372, տե՛ս նաև *Английские путешественники в Московском государстве в XVI веке. пер. с англ. Ю. В. Готье, Ленинград, 1937, с. 205.*

² Տե՛ս նաև *Հակոբյան Հ.*, նշվ. աշխ., հ. Ա, էջ 412:

³ Ադամ Օլեարիուսը ծագումով սաքսոնացի է: Ավարտել է Լայպցիգի համալսարանը: Ունեցել է փիլիսոփայության մագիստրոսի գիտական աստիճան:

5000 տուն ազգաբնակչություն՝: Ուշագրավ է Շամախիի հայ բնակչության վերաբերյալ Օլեարիուսի այն վկայությունը, որում նա գրում է, որ Շամախիում եղած ժամանակ խանը ցուցադրել էր ավելի քան 2000 մարդուց բաղկացած իր հետևակը, որի մեծագույն մասը հայեր էին²:

Արհեստներն ու առևտուրը շամախահայերի համար - համարվում էին կենսաապահովման հիմնական աղբյուր: Շամախիի հայ առևտրականները զբաղվում էին մեծածավալ առևտրով և կապ էին պահպանում հեռավոր երկրների հետ. իրենց ձեռքին էին կենտրոնացրել տարանցիկ առևտուրը: Նրանց գործունեության սահմանները տարածվում էին Ռուսաստանից, Իրանից, Եվրոպայից մինչև Կենտրոնական և Միջին Ասիայի երկրներ: Շամախիուհայ վաճառականների առևտուրը այլ վաճառատների հետ չէր սահմանափակվում լոկ հում մետաքսով և մետաքսե կտորեղենով: Նրանք առևտրական կենտրոններ էին հասցնում արևելյան ամենաբազմապիսի ապրանքներ (օրինակ՝ համեմունքներ, կաշվեղեն, բուսական ներկեր, գորգեր և այլն), իսկ ներկրում էին տնային իրեր, պերճանքի զանազան առարկաներ և այլն³: Շամախիի հայ տորոնավաճառները կարմիր ներկի համար տորոն (բույսի արմտիք) էին մատակա-

¹ См и Подобное описание путешествия Геллингского посольства в Московию и Персию в 1633, 1636 и 1639 годах: составленное секретарем посольства **Адамом Олеарием**. Москва, 1870, с. 553.

² См и նույն տեղում, с. 526.

³ Շամախիի հայ վաճառականների՝ միջազգային առևտրի մասնակցության վերաբերյալ ուշագրավ է հետևյալ փաստը: Շամախիում 1915 թ. ամռանը շրջագայած կովկասագետ Ա. Ֆրտունիի տեղեկացմամբ՝ Շամախիի բնակիչ Գրիգոր Գուրգենյանի տանը պահպանվում էին Չինաստանից բերված հախճապակյա սպասքի երկու շքեղ պարագաներ: Վերջինիս տեղեկացմամբ պրանք իրեն են հանձնել շամախեցի հնարնակ Ներսիսյանները, որոնց պատմելով այդ սպասքերը սերնդեսերունդ փոխանցվելով արդեն մի քանի հարյուր տարի է ինչ գտնվում է իրենց մոտ (տե՛ս **Фигуни А.**, История последней столицы Оггвана (историко-этнографический очерк), Известия Азербайджанского комитета охраны памятников старины, искусства и природы, вып. 3, Баку, 1927, с. 102).

րարում Մոսկվայի, Մարսելի, Մանչեստրի մանուֆակտուրային արդյունաբերողներին¹։

Հոծ հայ բնակչություն ունեցող Շամախի քաղաքն էր Արևելյան Այսրկովկասի այն հանգուցակետը, որտեղ վաղ ժամանակներից օտարերկրյա վաճառականների հետ գործածար կապեր էին հաստատում տարբեր վայրերից այդտեղ ժամանող հայ վաճառականները։ Այսպես՝ XVII դ. բանաստեղծտաղասաց Ստեփանոս Թոխաթեցին, «Ողբ ի վերայ Եվդոկիա մեծի քաղաքին» բանաստեղծության մեջ նկարագրելով Եվդոկիայի երբեմնի բարգավաճ կյանքն ու ավերումը, տեղի առևտրականների ծավալած գործունեության մասին հայտնում է, որ իրենց առևտրական գործերով նրանք լինում էին նաև Շիրվանում և Շամախիում²։ Որ Շամախիի շուկայում անգլիացիների համար անցանկալի մրցակիցներ էին տեղի, այդ թվում նաև հայ վաճառականները, վկայում է 1568 թ. սեպտեմբերի 1-ին Շամախի այցելած անգլիացի առևտրական Լոուրենս Չեփմենը։ Նա հայտնում է, որ Շամախիում շուկան այնքան լավ էր ապահովված ամեն տեսակ ապրանքներով, որ նրանք չկարողացան վաճառել իրենց կտորեղենը³։

1640-ական թվականների կեսերին Շամախի այցելած Սպահանում կապուցիների միսիայի առաջնորդ հայր Ռաֆայել դյու Մանը (Ժակ Դյուտերտր) արձանագրում էր, որ քաղաքն ուներ սովարաթիվ հայ բնակչություն⁴։ 1683 թ. հունվարին Շամախի այցելած գերմանացի բնագետ և բժիշկ Էնգելբերտ Կեմպֆերը վկայում է, որ Շամախիի եկեղեցում պահվում էր Նոյյան

¹ Ի՞նչ Շелинский С., Описание города Шемаха, Тифлис, 1896, с. 31-32.

² Տե՛ս Ալիշան Ղ., Հայապատում, հ. Բ, Վենետիկ, 1901, էջ 608:

³ Հակոբյան Հ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 414-415, տե՛ս նաև Английские путешественники..., с. 239.

⁴ Etat de la Perse en 1660, par le père Raphaël du Mans, supérieur de la mission des capucins d'Ispahan. Publiée avec notes et appendice par Ch. Schéfer. Paris, 1890, p. 3.

տապանի փայտի մի կտոր, որի վրա պատկերված էր խաչ¹: XVII դարի երկրորդ կեսի իսպանացի քահանա **Պեդրո Կուբերո Մեբաստիանին**, որը որպես միսիոներ էր արևելյան ուղղությամբ կատարել էր շուրջերկրյա ճանապարհորդություն, նույնպես վկայություն է թողել Շամախիի հայերի մասին՝ նրանց հիշատակելով որպես հավատավոր քրիստոնյաներ²:

Շամախի քաղաքի ազգաբնակչության բնական աճի վրա խիստ բացասական ազդեցություն էին թողնում հաճախակի կրկնվող ավերիչ երկրաշարժերը: 1668 թ. հունվարի 4-ին տեղի ունեցած երկրաշարժով: Երկրաշարժի պատճառած վնասները դեռևս չէին վերականգնվել 1671 թ. սեպտեմբերին՝ Շամախի այցելած հոլանդացի ծովային **Յան Ստրեյսի** այցելության ժամանակ: Վերջինս վկայությամբ՝ քաղաքն ուներ հինգ դարպաս, փողոցները նեղիկ էին, տները ցածրիկ և հողաշեն, ազգաբնակչությունը բաղկացած էր մահմեդականներից և քրիստոնյաներից: Վերջիններս հիմնականում հայեր էին³: Քաղաքի ազգաբնակչության թվակազմի վերաբերյալ ուշա-գրավ հիշատակություն է թողել 1686 թ. Շամախի այցելած ֆրանսիացի Հիսուսյան քարոզիչ **Ֆիլիպ Ավրիլը**, որի հաղորդումը որոշ պատկերացում է տալիս քաղաքի էթնիկական և դավանական կազմի մասին: Ըստ **Ֆ. Ավրիլիի**՝ մոտ 50-60-հազարանոց բնակչություն ունեցող Շամախիում «Բացի հայերի մեծ թուից, որ կարելի է հասցնել 30000-ի, կան նաև հնդիկներ, մոսկովիտներ, վրացիներ, յոյներ, թուրքեր, չերքեզներ եւ բազմաթիւ այլ ժողովուրդներ...»⁴: Ինչպես տեսնում ենք, այս տեղեկության մեջ հայերը կազմում

¹ St u **Kempfer E.** Amoenitatum Exoticarum Politico-Phisico-Medicarum, Fasciculi V, Lemgoviae, 1712, p. 264, 428.

² St u **Погосян (Халбакян) Г., Погосян (Халбакян) Г.**, Армяне Шамахи в упоминаниях некоторых западноевропейцев, ч. I (XV-XII вв.), Ереван, 2013, с. 40.

³ St u **Стрейс Я.**, Три путешествия, перевод Э. Бородиной, Москва, 1935, с. 246, 253-254.

⁴ **Philippe Avril**, Voyage en divers etats d'Europe et d'Asie. Paris, 1962, p. 114, տե՛ս նաև **Թաշիրյան Է., Կոռնելի լը Բրյուսինի** «Ուղեգրությունը» որպես աղբյուր հայ զարթոթյալների պատմության, «Իրան-նամե», Երևան, 1993, սեպտեմբեր, № 4, էջ 21:

են քաղաքի խառը բնակչության կեսը և, ամենակարևորը, համարվում են հիմնական բնակիչները: Այն, որ Ավրիլը չափազանցված թվեր չէր բերում քաղաքի հայերի թվաքանակի հարցում, դրանք հաստատվում են Շամախիում տարբեր ժամանակներում հանգրվանած եվրոպացի մյուս ճանապարհորդների թողած տեղեկություններով: Այսպես՝ 1703 թ. օգոստոսին Շամախի ժամանած հոլանդացի նկարիչ և ճանապարհորդ **Կոռնելի լը Բրյուինը** վկայում է, որ քաղաքում հայերը մեծ թիվ էին կազմում: Քաղաք մտնելուց հետո Բրյուինն իր խմբով հայ ուղեկիցների հետ իջևանել էր հայկական քարվանսատանը, ուր մի հայ վաճառական առատորեն հյուրասիրել էր նրանց¹:

XVIII դարի սկզբների շամախահայերի քաղաքային կյանքի վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Պետրոս Ա-ի Կասպիական արշավանքի մասնակից **Յոհան Գուստավ Գերբերը**: Նա գրում է, որ մահմեդականներն անհանդուրժողականություն էին ցուցաբերում հայ բնակչության նկատմամբ և ենթարկում էին ամեն տեսակի հալածանքների ու ստորացումների: Մահմեդականներին չխանգարելու համար քաղաքում հայերն ունեին առանձին փողոցներ և հավաքատեղիներ: Նույնիսկ մահմեդականներից տարբերվելու համար, խանի հրամանով հայերն ու հրեաները հագուստի վրա՝ կրծքի շրջանում, կրում էին տարբերակիչ նշան՝ դեղին մահուղից լաթիկ: Ըստ Գերբերի՝ այդ արվում էր նրա համար, որպեսզի «մահմեդականը այդօրվա և անհավատ մարդկանց (իմա՝ քրիստոնյաներին - Գ. Ա.) տեսնելիս չբարևեր մահմեդական ձևով, և դրանով իսկ խուսափեր մեղք գործելուց»: Գերբերը վկայում է, որ շատ հայեր կրոնական հալածանքներից փրկվելու միակ ճանապարհը տեսնում էին մահմեդականություն ընդունելու մեջ, որի հետևանքով «քրիստոնյա հայերի թիվը բավական բչացել էր»: Այդուհանդերձ, հակառակ այս միջոցառումներին,

¹ St u Voyage de Corneille Le Brune, par la Moscovie, en Perse, et aux Indes Orientales. t I-V, Rouen, MDCCXXV (1725), t. III, p. 484, տե՛ս նաև **Թաջիդյան Է**, նշվ. աշխ, էջ 21:

հայ բնակչության հիմնական զանգվածը, ամեն տեսակ գրկանքներ կրելով, պահպանեց իր ազգային ինքնությունն ու կրոնը՝ ազգային կյանքում առաջնորդվելով հայ եկեղեցու կանոններով: Ինչպես նշում է Գերբերը, հայերն ապրում էին քրիստոնեական օրենքներով¹:

XVIII դարի 80-ական թվականներին քաղաքի ազգաբնակչության թիվը չէր անցնում 4000-5000-ը: Նույն թվականի Շամախիի հայ բնակչության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է թողել 1780-ականների սկզբներին երկրամաս այցելած ֆրանսիացի ուղեգրող **Լուի-Ֆրանսուա Տերիեր-Սովբեֆը**: Նա գրում է, որ «Շամախիում բնակվում էին շատ հայեր»: Կովկասագետ Իվան Դրենյակինի՝ 1796 թ. կազմած տեղեկագրում նշված է, որ քաղաքում հայերն ունեին 70, իսկ իրանցիները՝ 170 տուն²:

Շամախին, որ վաղ միջնադարից ի վեր եղել է երկրամասի հայության կրթական, մշակութային, քաղաքական կյանքի և վաճառականության հիմնական կենտրոնը, XIX դարի սկզբներին նշված բնագավառներում հայ բնակչության դերի հետագա բարձրացման շնորհիվ հայության շրջանակներում դիտվել է իբրև հայկական քաղաք: «Հայերը,- գրել է անգլիացի հայագետ **Հենրի Լինչը**, - բազմաթիւ են նաև Շամախիի շրջանին և քաղաքի մէջ, որ Պաքուի արեւմտեան կողմը կիյնայ»³:

¹ Гербер И., Известия о находящихся с западной стороны Каспийского моря между Астраханью и рекой Курой народах и землях и о их состоянии в 1728 г., «Сочинения и переводы к пользе и увеселению служащих», СПб., 1760, Октябрь, с. 304-305, տե՛ս նաև Гербер И., Описание стран и народов вдоль западного берега Каспийского моря. 1728 г. (История, география и этнография Дагестана XVIII-XIX вв. Архивные материалы, под ред. М. Косвена и Х. Хашаева, Москва, 1958, с.116).

² Ferrières-Sauveboeuf L. F., Mémoires historiques, politiques et géographiques des voyages du comte de Ferrières – Sauveboeuf, faits en Turquie, en Perse et en Arabie, depuis 1782 jusqu'en 1789, tome première (t. 1), Maestricht, 1790, p. 228.

³ Լինչ Հ., Հայաստան. ուղեւորութիւններ եւ ուսումնասիրութիւններ, հ. Ա: Ռուսական Հայաստան, թարգմանիչ Լեւոն Լարենց, Կ. Պոլիս, 1913, էջ 422:

Այսպիսով, եվրոպական տասնյակ ճանապարհորդ-ուսումնասիրողների, առևտրականների և կաթոլիկ միսիոներների թողած ճանապարհորդական նոթերի տեղեկությունները փաստում են Շամախիում հայերի՝ վաղ ժամանակներից բնակեցված լինելը, ինչպես նաև քաղաքի սոցիալ-տնտեսական, կրթամշակութային կյանքի զարգացման գործում ունեցած մեծ ներդրումը:

ГЕВОРГ СТЕПАНЯН
д.и.н., проф., Ереван

ЗАРУБЕЖНЫЕ ИСТОЧНИКИ ОБ АРМЯНАХ ГОРОДА ШАМАХА В XV-XVIII ВЕКАХ (КРАТКИЙ ОЧЕРК)

РЕЗЮМЕ

Ключевые слова: Собственно Албания, левобережье реки Кура, Шамахи, Закавказье, армяне, Эггельберт Кемпфер, Себастьян Педро Куберо, Корнели Брюни.

Зарубежные источники документально подтверждают, что в различные периоды истории город Шамаха считался одним из армянонаселенных центров Восточного Закавказья. Своим творческим трудом, высоким научным и культурным уровнем местные армяне не только жили единой социально-экономической и активной культурно-образовательно жизнью, но и играли значительную роль в общем развитии региона.

GEVORG STEPANYAN
Doctor Professor of History, Armenia

FOREIGN SOURCES ABOUT ARMENIANS OF THE CITY
OF SHAMAKHI XV-XVIII CENTURIES (BRIEF REVIEW)

SUMMARY

Key words: Aghvanq major, left-bank of Kur river, Shamakhi, East Caucasus, Armenians, Engelbert Kaempfer, Pedro Cubero Sebastian, Corneli la Bruin

The bibliographic archival sources prove that in all times of history, the city of Shamakhi was considered one of the Armenian-populous centers of the East Caucasus. The local Armenians, with their creative work and high level of scientific-cultural life, not only lived an active consolidated, prosperous socio-political, educational and cultural life, but also played a significant role in the overall development of the region.

Լ.-Ֆ. ՖԵՐԻԵՐ-ՍՈՎԲԵՖԻ ՌԻՂԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԻ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՏՍՈՒԹՅԱՆ
ՄԿՋԲՆԱՂԲՅՈՒՐ (XVIII Դ. ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴ)

Հիմնաբառեր. Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովբեֆ, XVIII դարի վերջին քառորդ, ուղեգրություն, Հայաստան, հայ գաղթավայրեր, հայոց պատմություն, Իրան:

Եվրոպական երկրների՝ Արևելքի երկրների հետ ունեցած դիվանագիտական-քաղաքական առնչությունները սկսվեցին XI դարի վերջերից, այդ հայաբերությունների սկզբնավորումը սերտորեն կապված էր խաչակրաց արշավանքների հետ: Մինչ այդ եվրոպական երկրներն Արևելքի երկրների հետ ծավալել էին աշխույժ առևտրական հարաբերություններ: Մակայն եվրոպական երկրների ուշադրությունն Արևելքի հանդեպ մեծացավ հատկապես XIII դարում՝ կապված առևտրի զարգացման և վաճառականական կապիտալի սկզբնական կուտակման հետ: Հաճախակի դարձան եվրոպացիների այցելությունները դեպի Արևելք. այդ այցելությունները պայմանավորված էին ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական, առևտրային շահերով:

Արևելքում եղած եվրոպացիներն այդ երկրների մասին թողել են բազմաբնույթ հաղորդումներ և տեղեկություններ՝ դիվանագիտական զեկուցագրեր, ուղեգրություններ, հուշեր, դիտողություններ, կաթոլիկ միսիոներների զեկուցագրեր և հաշվետվություններ, պատմական երկեր և այլն:

Եվրոպացի հեղինակների ուղեգրությունները սարաբնույթ են թե՛ բովանդակության ու թեմատիկայի և թե՛ ձևի ու ծավալի առումով: Պայմանավորված ճանապարհորդությունների շարժառիթներով՝ եվրոպացի հեղինակների ուղեգրու-

թյունները կարելի է բաժանել մի քանի խմբի՝ միսիոներական, դեսպանագնացական, առևտրական, քաղաքական, երկրա-
խուզական, պատմաաշխարհագրական, գիտական, փաստա-
գրական և այլն: Եթե Եվրոպա-Արևելք հարաբերությունների
սկզբնավորումից հետո մի քանի հարյուրամյակ ուղեգրություն-
ների հիմնական մասը միսիոներական, դեսպանագնացական,
առևտրական և քաղաքական բնույթի էին, ապա հետագայում ի
հայտ եկան նաև այլ բնույթի ուղեգրական՝ երկեր: Ըստ ռուս
ակաևնավոր արևելագետ Վ. Վ. Բարտոլդի՝ XVIII դարում մենք
տեսնում ենք դեպի Արևելք կատարված եվրոպական
ճանապարհորդությունների առաջին օրինակները՝ բացառա-
պես գիտական նպատակներով՝ անկախ քաղաքական,
առևտրական կամ միսիոներական որևէ խնդիրներից: Այդ
ճանապարհորդություններից առաջինը Վ. Վ. Բարտոլդը
համարում է Ժոզեֆ դը Տուրնեֆորի ճանապարհորդությունը¹:

Ֆրանսիացի քաղաքական գործիչ և դիվանագետ Լուի-
Ֆրանսուա Ֆերիեր-Սովբեֆը, ում ուղեգրությունը կներկա-
յացնենք ստորև, XVIII դարի վերջին քառորդի հեղինակ է. նրա
ճանապարհորդության շարժառիթը դեսպանագնացական էր:

Լուի-Ֆրանսուա Ֆերիեր-Սովբեֆը ծնվել է 1750 թ.
Շամպայնի Մուլեն դ'Արնակ բնակավայրում²: Նա 1782-1789 թթ.
Լուի XVI-ի (Լյուդովիկոս XVI) կառավարության կողմից
դիվանագիտական առաքելությամբ ուղարկվում է Կ.Պոլիս և
այստեղից երկու անգամ (1784-1785 թթ. և 1787 թ.) մեկնում է

¹ См.: В.В. Бартольд, История изучения Востока в Европе и России. Сочинения, том IX, М., 1977, с. 312.

² St'v. La Grande Encyclopédie inventaire raisonné des sciences, des lettres et des arts, t. 17, p. 326; Biographie Universelle ancienne et moderne, nouvelle édition, tome septième, Bruxelles, 1843-1847, p. 367; Larousse du XX^e siècle en six volumes, Publié sous la direction de Paul Augé, tome troisième, Paris, 1930, p. 458 (այստեղ նրա ծննդյան թվական է նշված 1762 թ.):

Իրան՝ Սպահան¹: 1789 թ. վերադառնալով Ֆրանսիա՝ հարել է լակոբինյաններին, բայց որոշ բաղաքական բանտարկյալների նկատմամբ իրեն չափազանց ներողամիտ է դրսևորել և հեռացվել է ակումբից, նույնիսկ բանտարկվել Լյուքսեմբուրգում:

1799 թ. Դիրեկտորիայի կողմից գաղտնի առաքելությամբ կոմս Ֆերիեր-Սովբեֆն ուղարկվում է Ցիսալպյան հանրապետություն, բայց այստեղ իր գործունեությամբ կասկածներ է հարուցում Իտալիայում ֆրանսիական զորքերի հրամանատար, գեներալ Շերերի մոտ և արգելափակվում է Միլանի միջնաբերդում: Ազատվելով և Փարիզ վերադառնալով՝ Ֆերիեր-Սովբեֆը կրկին բանտարկվում է, այս անգամ էլ Տամպլում, որն էլ նրան առիթ է տալիս սարսավազրեր (պամֆլետներ) գրել իր հակառակորդների դեմ²: Բրյումիերի 18-ի պետական հեղաշրջումից հետո Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովբեֆը հեռանում է քաղաքական դաշտից և վերադառնում հայրենի Շամպայն: 1814 թ. ցանկանում է պալքարել օտարերկրյա ներխուժման դեմ և կազմակերպում է կամավորական ջոկատ: Սակայն շուտով Մոնտրի մի փողոցում օրը ցնրեկով սպանվում է ինչ-որ անձանոթի կողմից³:

Ինչպես վերը նշեցինք, Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովբեֆի ճանապարհորդության նպատակը դիվանագիտական էր: Նա ֆրանսիական կառավարության հանձնարարությամբ դիվանագիտական գործունեության է ուղարկվում Կ.Պոլիս, ապա

¹ Տե՛ս: М.А. Подневктов, Европейские путешественники XIII-XVIII вв. по Кавказу. Тифлис, 1935, с. 106; Մ. Կ. Ջուլայան, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, Գիրք Ա., Քաղաքական պատմություն, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 1990., էջ 62:

² Sté u L.-F. Ferrières-Sauveboeuf, Précis des lettres écrites par le citoyen F. S. pendant sa détention au Temple, au citoyen Merlin, alors président du Directoire, Paris, 1799.

³ Sté u La Grande Encyclopédie inventaire, t. 17, p. 327; Biographie Universelle, t. 7, p. 263.

նան Սպահան: Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովբեֆի՝ Արևելքում գտնվելը համընկավ ռուս-ֆրանսիական հարաբերությունների սրման ժամանակաշրջանի հետ. դա կապված էր Ռուսաստանի վարած ագրեսիվ քաղաքականության հետ. Ռուսաստանը գրավել էր սևծովյան ափամերձ շրջանները և պատրաստվում էր Կովկաս ներխուժել, որը դուր չէր գալիս Օսմանյան կայսրությանը և որին, պայմանավորված քաղաքական և առևտրա-տնտեսական շահերով, իր պաշտպանության տակ էր վերցրել Ֆրանսիան:

1784 թ. մարտի 5-ին գալով Սպահան՝ Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովբեֆը ջանում էր, որպեսզի իրանական կառավարությունը հնարավորության սահմաններում, թեկուզև՝ զենքի ուժով, թույլ չտա Ռուսաստանին ներթափանցել Այսրկովկաս¹, բացի դրանից նրա խնդիրների մեջ էր մտնում ռուս-իրանական հարաբերությունները վատթարացնել, աջակցել Կովկասում շահական Իրանի ագրեսիային, ստեղծել եռյակ (Ֆրանսիա, Իրան, Օսմանյան կայսրություն) ռազմական դաշինք՝ ուղղված Ռուսաստանի դեմ²: Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովբեֆի գործունեությունը դիվանագիտական միջադեպ հարուցեց Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև: Կայսրուհի Եկատերինա II-ը Իրանում Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովբեֆի հակառուսական գործունեության մասին բացասություններ պահանջեց Պետերբուրգում Ֆրանսիայի դեսպան Սեգյուրից, որն էլ պատասխանեց, թե իբր

¹ См. П. Г. Бутков, Материалы для новой истории Кавказа, с 1722 по 1803 год, часть вторая, Санкт-Петербург, 1869, с. 149; М. А. Полиевктов, Европейские путешественники XIII-XVIII вв. по Кавказу, с. 106; У. Ч. Зюлъян, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը, էջ 62: Ֆ. Ե. Մայիլյան, Ռուսաստանը և հայկական պետականության վերականգնման հիմնահարցը 18-րդ դարի վերջին քառորդին, (Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման առենախոսության սեղմագիր), յնագրի իրավունքով, Երևան, 1995, էջ 13:

² См.: М. А. Игамбердиев, Иран в международных отношениях первой трети XIX века, Самарканд, 1961, с. 39.

Ֆրանսիական գործակալն ինքնագլուխ կերպով խախտել է սովորական դիտորդի իր լիազորությունները, և որ Ֆրանսիական կառավարությունն ավելի լուրջ հիմքեր ունի բողոքելու Արշիպելագում (Էգեյան ծովի ավազան) ռուսական գործակալների գործունեությունից¹:

Իր հուշերում Լ.-Ֆ. Ֆերիեր-Սուվբեֆը նկարագրում է այն իրադրությունը, որում գտնվում էր Իրանը իր ժամանման շրջանում: Ըստ նրա՝ Ալի Մուրադ խանը, որը Ռուսաստանի հետ կապեր էր հաստատել և ռուսական կառավարությանը հեռուն գնացող խոստումներ էր տվել, այդ ժամանակ բացահայտ թշնամությամբ էր վերաբերվում թուրքերին. Ալի Մուրադ խանը սպառնաց Բաղդադին և Շիրազի խանին հրաման տվեց հարձակվել Բասրայի վրա: Սուլթանի ներկայացուցիչը, ով եկել էր որպեսզի Ալի Մուրադ խանին առաջարկի դաշինք, նրա (խանի-Ա.Ս.) հրամանով բանտարկվեց²: Իր հուշերում Ֆերիեր-Սուվբեֆը մանրամասն չի խոսում Իրանում իր գործունեության մասին: Սպահանում նրա քաղաքական խարդավանքների մասին վկայում է այն զեկուցագիրը, որը նա գրել էր Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Վերժենին. այդ զեկուցագրի պատճենը, որն առգրավվել էր ռուսների կողմից, պահպանվում է արտաքին գործերի Կոլեգիայի արխիվում³: Չեկուցագրի վերջում Լ.-Ֆ. Ֆերիեր-Սուվբեֆը պահանջում էր Ֆրանսիայի արտաքին

¹ Sté u M. Ségur, Mémoires ou souvenirs et anecdotes, 3 éd., tome second, Paris, M.DCCC. XVII. (1827), p. 363; О.П. Маркова, Россия, Закавказье и международные отношения в XVIII веке. Москва, 1966, с. 253.

² Sté u L.-F. Ferrières-Sauveboeuf, Mémoires historiques, politiques et géographiques des voyages du comte de Ferrières-Sauveboeuf, fait en Turquie, en Perse et en Arabie, depuis 1782 jusqu'en 1789, Maestricht, 1790, tome premier, p. 202-203 (այսուհետև՝ Mémoires).

³ См.: АВПР, Персидские дела, д. N 8, лл. 108-124 (цит. по: А.Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах XVIII столетия, Ереван, 1990, с. 141).

գործերի նախարարությունից իրեն ուղարկել դրամական միջոցներ, ինչպես նաև նվերներ Ալի Մուրադ խանին՝ խոստանալով հասնել Ֆրանսիայի, Օսմանյան կայսրության և Իրանի միջև պաշտպանական և հարձակողական դաշինքի ստեղծմանն ընդդեմ Ռուսաստանի¹: Այս բոլորն ունենում է իր հետևանքը. Ալի Մուրադ խանը գտնելով, որ աննպատակահարմար է դաշնակցել ռուսների հետ ի վնաս թուրքերի, ազատ արձակեց սուլթանի նամակն իրեն բերած թուրք գործակալին, շոայլ նվերներով ճանապարհեց նրան և սուլթանին բարեհաճ պատասխան ուղարկեց, որ իբր հրաժարվում է ռուսներին տված իր նախկին խոստումներից և նոր, զաղտնի հրահանգներ է ուղարկում Ռուսաստան մեկնած իր ներկայացուցիչներին. միաժամանակ Դերբենտի Բաբա-Ֆաթի-Ալի խանին հրամայեց խզել ռուսների հետ ամեն տեսակի կապերը²: Սակայն, ինչպես իրավամբ նշում է Ա. Ռ. Հովհաննիսյանը, առանց լրացուցիչ փաստերի տվյալների դժվար է գրել Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովրեֆի առաքելության իրական արդյունքների մասին:

1788 թ. սեպտեմբերի 18-ին Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովրեֆը մեկնում է Կ.Պոլսից դեպի Ֆրանսիա և հոկտեմբերի 15-ին ասի իջնում Տուլոնում: Վերադառնալով Փարիզ՝ նա Արևելքում ճանապարհորդական իր հիշողությունները հրատարակում է 1790 թ. Մաաստրիխտում (2 հատոր), ապա նաև Փարիզում (1790 թ., 2 հատոր): Մաաստրիխտի հրատարակությունից մեկ օրինակ պահվում է Հայաստանի Ազգային գրադարանում, իսկ Փարիզյան հրատարակությունից մեկ օրինակ կա Մատենադարանում (օրինակը պակասավոր է, մի քանի էջեր չկան): Այս

¹ См.: А.Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение, с. 141; У. Ч. Ջուլայան, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը, էջ 241:

² См. и Л.-Ф. Ferrières-Sauveboeuf, Mémoires, т. 1, р. 203-204; А.Р. Иоаннисян, Россия и армянское освободительное движение, с. 142; У. Ч. Ջուլայան, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը, էջ 241-242:

երկու հրատարակությունների միջև էական տարբերություններ չկան: Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովրեֆի ուղեգրությունը երրորդ անգամ հրատարակվում է Փարիզում, 1807 թ. “Voyages faits en Turquie, en Perse et en Arabie” վերնագրով, 2 հատորով:

Ուղեգրության XXI-XXIV գլուխները նվիրված են Հայաստանի, Վրաստանի, Դաղստանի, Շիրվանի, Ատրպատականի և Թավրիզի նկարագրությանը: Հեղինակը տեղեկություններ է հաղորդում տարբեր բնակավայրերի, այցելած երկրների քաղաքական, տնտեսական դրության, բնական հարստությունների, արտադրողական ուժերի, բնակչության էթնիկական կազմի, սովորույթների ու հավատալիքների, պատմական ու ռազմական անցուղարձերի մասին: Մ. Պոլիսկտովը կասկածանքով է վերաբերվում Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովրեֆի՝ Կովկասում գտնվելուն, գրելով, որ նրան, իմիջիայլոց, տեղեկություններ կարող էին տրամադրել իր հետ Իրանում գտնվող փոխգնդապետ Անջելին, ով նախկինում ռուսական ծառայության մեջ էր, բայց 1774 թ. դավաճանության մեղադրանքով վտարվել էր Ռուսաստանից¹ և կապիտան Լամբրո-Կաչոնին, ովքեր 1785 թ. Իրանից մեկնեցին դեպի Կովկասյան գիծ²: Մ. Զուլայանը, հակառակ կարծիքն ունենալով, գրում է, որ Լ.-Ֆ. Ֆերիեր-Սովրեֆը «լինում է Անդրկովկասի հայաշատ քաղաքներում, որոնց թվում՝ Թբիլիսիում ու Շամախիում և այլն»³:

Իր ուղեգրության մեջ Ֆերիեր-Սովրեֆը նշում է հետևյալ հեղինակներին, թեև նրանց աշխատություններից ուղղակի մեջբերումներ չի կատարում. Ժ.-Բ. Տավերնիե, Ժ. Շարդեն, Կ.-Ֆ. Վոլնեյ, Մ.-Գ. Շուազել-Գուֆիե, Սավարի, աբբա Ժ. Բոշան (M. l'Abbé de Beauchamp), Շ. դը Պեյսոնել⁴:

¹ ՏՄ.: П. Г. Бутков, Материалы для новой истории Кавказа, часть вторая, с. 149.

² ՏՄ.: М. А. Полиевктов, Европейские путешественники XIII-XVIII вв. по Кавказу, с. 107. ...

³ Մ. Կ. Զուլայան, Հայ ժողովրդի XIII-XVIII դարերի պատմության հարցերը, էջ 62:

⁴ Peyssonel Charles de. Ֆր. գրող (1727 թ. Մարսել – 1790 թ. Փարիզ), եղել է հյուպատոս Ղրիմում (1753 թ.), Կրետեում (1757 թ.), Զմյուռնիայում (1763 թ.), գրել է մի շարք աշխատություններ:

Ամփոփենք: Ֆրանսիացի քաղաքական գործիչ և դիվանագետ Լուի-Ֆրանսուա Ֆերիեր-Սուվբեֆը XVIII դարի վերջին քառորդի հեղինակ է նրա ճանապարհորդության շարժառիթը դասպանագնացական եր: Նա 1782-1789 թթ. Լյուդովիկոս XVI-ի կառավարության կողմից դիվանագիտական առաքելությամբ ուղարկվել է Կ.Պոլիս և այստեղից երկու անգամ (1784-1785 թթ. և 1787 թ.) մեկնել է Իրան՝ Սպահան:

Վերադառնալով Փարիզ՝ նա Արևելքում ճանապարհորդական իր հիշողությունները հրատարակում է 1790 թ. Մասստրիխտում (2 հատոր), ապա նաև Փարիզում (1790 թ., 2 հատոր): Մասստրիխտի հրատարակությունից մեկ օրինակ պահվում է Հայաստանի Ազգային գրադարանում, իսկ Փարիզյան հրատարակությունից մեկ օրինակ կա Մատենադարանում (օրինակը պակասավոր է, մի քանի էջեր չկան): Այս երկու հրատարակությունների միջև էական տարբերություններ չկան: Լ.Ֆ. Ֆերիեր-Սուվբեֆի ուղեգրությունը երրորդ անգամ հրատարակվում է Փարիզում, 1807 թ. “Voyages faits en Turquie, en Perse et en Arabie” վերնագրով, 2 հատորով:

Լ.-Ֆ. Ֆերիեր-Սուվբեֆի ուղեգրությունը թեպետև հետաքրքիր է և արժեքավոր, քանզի այն գրված է նկարագրվող դեպքերին մասնակից և ականատես. երբեմն նաև ականջալուր հեղինակի կողմից, այնուամենայնիվ նրա հաղորդած տեղեկություններին պետք մոտենալ խիստ զգույշ և քննադատաբար:

Եվրոպացի հեղինակների թույած ուղեգրությունները, ի շարս դրանց նաև Լ.-Ֆ. Ֆերիեր-Սուվբեֆի ուղեգրությունը, որոնք հայոց պատմության արժեքավոր սկզբնաղբյուրներ են, միանգամայն արժանի են հատուկ ուսումնասիրության, ինչպես նաև առանձին առանձին թարգմանվելու և ներկայացվելու հայ գիտական հասարակությանն ու ընթերցող լայն շրջաններին:

ARMAN MALOYAN

Ph.D., Armenia

THE TRAVEL NOTES OF L.-F. FERRIÈRES-SAUVEBŒUF
AS A PRIMARY SOURCE OF THE HISTORY OF ARMENIA AND
ARMENIAN COMMUNITIES
(LAST QUARTER OF THE 18TH CENTURY)

SUMMARY

Keywords: L.-F. Ferrières-Sauvebœuf, last quarter of the 18th century, travel notes, Armenia, Armenian communities, Armenian history, Iran.

Louis-Francois Ferrières-Sauvebœuf was a French politician and diplomat of the last quarter of the 18th century. In 1782-1789 the government of Louis XVI sent him on a diplomatic mission to Constantinople, and from there to Iran, Isfahan for two times (1784-1785 and 1787).

Returning to Paris, he published his memories of his travels in the East in 1790. First in Maastricht, then in Paris (1790, in 2 volumes). One copy of the Maastricht edition is kept in the National Library of Armenia, and one copy of the Parisian edition is kept in the Matenadaran. There are no significant differences between the two editions. In 1807, the travel notes of L.-F. Ferrières-Sauvebœuf entitled "Voyages faits en Turquie, en Perse et en Arabie" was published in 2 volumes.

Chapters XXI-XXIV of the travel notes are devoted to the description of Armenia, Georgia, Dagestan, Shirvan, Atropaten (Atrpatakan) and Tabriz. The author presents information about various communities, the political and economic situation of the countries he visited, about their natural resources, productive forces, ethnic composition, customs and beliefs, historical and military events.

Although travel notes of L.-F. Ferrières-Sauvebœuf are interesting and valuable because they were written by a participant and an eyewitness of the events, but, nevertheless, the information he reports should be approached very carefully and critically. Travel notes left by European authors, including L.-F. Ferrières-Sauvebœuf, are a valuable source in the history of Armenia and certainly deserve special study, as well as separate translation and presentation to the Armenian academic community and a wide range of readers.

АРМАН МАЛОЯН

к.и.н., Армения

**ПУТЕВЫЕ ЗАМЕТКИ Л.-Ф. ФЕРЬЕР-СОВБЕФА КАК
ПЕРВОИСТОЧНИК ИСТОРИИ АРМЕНИИ И АРМЯНСКИХ
ОБЩИН (ПОСЛЕДНЯЯ ЧЕТВЕРТЬ XVIII В.)**

РЕЗЮМЕ

Ключевые слова: Л.-Ф. Ферьер-Совбеф, последняя четверть XVIII века, путевые заметки, Армения, армячские общины, армянская история, Иран.

Луи-Франсуа Ферьер-Совбеф - французский политический деятель и дипломат последней четверти XVIII века. В 1782-1789гг. правительство Людовика XVI отправило его с дипломатической миссией в Константинополь, а оттуда - дважды (1784-1785гг. и 1787г.) в Иран, Исфахан.

Вернувшись в Париж, он опубликовал в 1790 году свои воспоминания о путешествии по Востоку, сначала в Маастрихте, затем и в Париже (1790, в 2 томах). Один экземпляр маастрихтского издания хранится в Национальной библиотеке Армении; экземпляр парижского издания - в Матенадаране. Существенных различий между этими двумя изданиями нет. В 1807 году в Париже

в третий раз были опубликованы путевые заметки Л.-Ф. Феррьер-Совбефа в 2-х томах под названием «Voyages faits en Turquie, en Perse et en Arabie».

Главы XXI-XXIV путевых заметок посвящены описанию Армении, Грузии, Дагестана, Ширвана, Атропатена (Атрпатакана) и Тавриза (Тебриза). Автор представляет сведения о различных населенных пунктах, политическом и экономическом положении посещенных им стран, об их природных богатствах, производительных силах, этническом составе, обычаях и верованиях, исторических и военных событиях.

Хотя путевые заметки Л.-Ф. Феррьер-Совбефа интересны и ценны тем, что написаны участником и очевидцем событий, но, тем не менее, к сообщаемым им сведениям следует подходить очень внимательно и критически. Путевые заметки, оставленные европейскими авторами, в том числе Л.-Ф. Феррьер-Совбефом, являются ценным источником по истории Армении и безусловно заслуживают специального изучения, а также отдельного перевода и представления армянскому научному сообществу и широкой читательской аудитории.

ՄԻ ԱՂԱՍԱՆԴԻ ՊԱՏՈՒԹՅՈՒՆ

Հիմնաբառեր. Նոր Ջուղայի առևտրային ցանց, աղամանդ, փոխանակագրեր, վարկային փաստաթղթեր, Շեհրիմանյաններ, Գերաքներ, Գրիգոր Աղդրլո:

Երասիական առևտրաշրջանառության մեջ ԺԷ.-ԺԸ դդ. հայկական վաճառականական ցանցերի գործունեության ընթացքում կարևոր տեղ է զբաղեցրել թանկարժեք ապրանքների վաճառքը: Դրանց մեջ յատկապես ուշագրաւ է թանկ արժեցող քարերի շրջանառութիւնն ու վաճառքը, որն, ի տարբերութիւն միւս ապրանքատեսակների, եւ չնայած իր փոքր չափերին ու տեղափոխելու առերեւոյթ թուացող դիւրութեանը, ուներ իր իւրայատուկ բարդութիւնները¹: Թա՛նկարժեք քարերի վաճառքը, ուրիշ ապրանքատեսակների համեմատութեամբ (հում մետաքս, համեմունքներ, լեղակ, բրինձ եւ այլն), երկարատեւ գործընթաց էր եւ յաճախ տառիների հետեւողականութիւն ու փաստաթղթաւորում էր պահանջում:

Ստորեւ հրատարակուող փաստաթուղթը, որը վերաբերում է մի քանի երկրների հայ գաղթօջախների ջուղահայ վաճառականների մասնակցութեանը վաճառքին, անդրադառնում է ընդամենը մէկ աղամանդի վաճառքի որոշակի դրուագի: Յայտնի է քարի տէրը, քարաբերը, քարի երթուղին, ինչ անձնաւորութիւններ էին ներգրաւուած քարի վաճառքի

¹ ԺԷ. - ԺԸ. դդ. միջազգային առևտրում հայ վաճառականական ցանցերի կողմից թանկարժեք քարերի շրջանառութեանն ու վաճառքին է նուիրւած փիլիսոփայութեան դոկտոր Սոնա Թաֆիրեանի աւարտածաոր (տես Sonja Tajirian, *The Early Modern Global Trade of Diamonds and Gems: An Armenian Family Firm on the Crossroads of Caravan and Maritime Trade* (ca. 1670-1750), University of California, Los Angeles, 2020):

կազմակերպման գործում: Փաստաթղթի 22 տողերը բացայայտում են գործարքի ողջ բարդությունը, փաստաթղթային բազմազանությունն ու այն ժամանակը, որ պահանջում էր քարի վաճառքը նախապատրաստելու համար:

Փաստաթղթում քննութեան առարկայ ադամանդը պատկանում էր նորջուղայեցի Գերաքի որդի քալանթար Պարոն Յակոբին: Քարը, ենթադրելի է Նոր Ջուղայից (A կետ)՝ ուղարկուել է Բասրա (B կետ), մեր կարծիքով, Գերաքեան գերդաստանի գործակալ Փափուկենց Յակոբջանի որդի պարոն Պողոսին: Վերջինս, ունենալով քալանթարի արտօնութեան գիրը (օրդինէ), 1741 թ. հոկտեմբերին այն պետք է ուղարկեր Վենետիկ՝ վաճառելու: Փափուկենց Յակոբջանի որդի պարոն Պողոսը ադամանդը, «փոխցայ» անելով, ուղարկում է Հալէպ (C կետ): Հալէպում, Ըմպրումաւոյի որդի Գերաքը, ստանալով քարը, որպէս առաջին գործ, կարգաւորում է ադամանդի տեղափոխման հետ կապուած բոլոր փաստաթղթային հարցերը՝ Բասրայի եւ Հալէպի գործակալներին (Փափուկենց Յակոբջանի որդի պարոն Պողոսին եւ այլոց) վճարելով քարի երթեւեկի բոլոր ծախսերը (փոխցայ) եւ այն հասցնում է Վենետիկ (D կետ):

Քարի հասցեատերը Վենետիկում արդէն յայտնի նորջուղայեցի վաճառական Գրիգոր Աղդոլոն է, որին վստահաբար քալանթարն անձամբ ճանաչում էր եւ կամ գիտեր վերջինիս՝ նման գործարքներին տիրապետելու հմտութեան եւ առեւտրական աւելի լայն ցանցի տրիապետելու մասին: Հաշուի էին առնուած նաեւ Աղդոլոյի միջազգային առեւտրատնտեսական լայն կապերը եւ թանկարժէք իրերի վերաբերեալ նրա իմացութիւնները: Աղդոլոն պետք է վաճառեր ադամանդը, քալանթարի իրեն ունեցած պարտքը փակեր եւ աւելացած փողն ուղարկեր Նոր Ջուղա: Սակայն Վենետիկից Աղդոլոյի բացակայութիւնը (դիւանագիտական առաքելութեամբ՝ «էլչութեամբ»՝ գտնուում էր «Մոսկովի երկիրն») առաջացնում է նոր խնդիրներ: Վենետիկ հասած քարի ողջ պատասխանատու-

թեան տակ յայտնում է փաստաթղթի բուն հեղինակը՝ Ընթրումի որդի Գերաքը, որը գործի դնելով իր վաճառակա-նական հմտութիւնները Հալէպում աղամանողը գրաւադրում է («ալմագն դրի պուտիկատին») Արիստակէս դի պարոն Գաբրիէլի մօտ համապատասխան տոկոսադրոյքով, որպէսզի վերջինս այն ուղարկի Վենետիկ՝ իր հօրը՝ Գաբրիէլին: Քանի որ քարի արժէքը 1200 դուկատից աւելի չի բարձրանում, վարկի տոկոսադրոյքը (100-ին 18%) ձեռնտու չի լինում Գերաքին, իսկ Գաբրիէլն իր դրամը պահանջում է: Այսպիսով քարի արժէքը գնալով բարձրանում է (1200 դուկատի փոխարէն 1357 դուկատ)՝ 31 օր ապահով պահելու ակնկալութեամբ: Այստեղ եւս մի հետաքրքիր անդրադարձ. աղամանդն իր փաստա-թղթաւորմամբ Գերաքից առաջ է հասնում Վենետիկ: Գերաքն արդէն 1743 թ. ապրիլի ութին Վենետիկում տեսնում է քարը եւ Գաբրիէլի հետ միասին «թլաշ» են անում՝ վերաքննելով քարի իսկութիւնն ու կրկին արժեւորելով այն: Քարին 1200 դուկատից աւելի դրամ չեն տալիս մասնագէտները: Այս ընթացքում Վենետիկ է հասնում նաեւ Գրիգոր Աղդոյն, կրկին են ճշտում քարի արժէքը եւ հասկանում, որ Գաբրիէլի մօտ վատամարդ են դուրս եկել («բէլինթ ելանք»), ուստի Գերաքը ստիպուած է լինում Գաբրիէլին վճարել անելորդ գումարը «աճդ, (104) տուկատ կօրէնք»՝ պայմանով, որ Նոր Զուղայի քալանթարը կամ Պարոն Պօղոսը այդ գումարն անելացնեն աղամանդի վաճառքի համար Գերաքին տրուած արտօնութեան (օրդնի) վրայ: Ենթադրելի է, որ այս գործարքներն անկասկած եւս փաստաթղթաւորուած պէտք է լինեն:

Փաստաթղթի վերջում հեղինակը դիմում է Վենետիկի համայնքին («բարեպաշտ ջումիաթին»)՝ իրենց վկայութեամբ հաստատելու այս գործարքների իսկութիւնը: Վկայութիւն տուող եւ փաստաթուղթը իրենց ստորագրութիւններով հաս-տատող անձինք Վենետիկում յայտնի, մեծահարուստ նորջուղայեցի գերդաստանների ներկայացուցիչներն են՝

Շեհրիմանեանները, Գերաքները, Աղղոլոն եւ այլոք, որոնց առեւտրական գործարքների եւ հասարակական գործունեութեան մասին յայտնի են նմանատիպ հազարաւոր փաստաթղթեր¹: Ի դէպ, ստորագրելուց առաջ նրանք պարտաւորուում են տեսնել քարը եւ ծանօթանալ համապատասխան փաստաթղթերի հետ, քանի որ բացի բարոյականից՝ ստանձնում էին նաեւ իրաւա-ֆինանսական պարտաւորութիւն:

Սոյն աղամանդին վերաբերուող փաստաթղթային ամբողջական նիւթի բացակայութեան պատճառով մեզ անյայտ է մնում յիշեալ աղամանդի վաճառքի ճակատագիրը. այն անդրադառնում է վաճառքի ընթացքի միայն մէկ փուլին: Սակայն բացայայտում է քարի վաճառքի հետ կապուած փաստաթղթային բազմազանութեան ողջ կարեւորութիւնը եւ թանկարժէք ապրանքի վաճառքի շատ ու շատ բարդութիւնները: Ստորեւ հրատարակում ենք Վենետիկի պետական դրւանի, 1744 թ. դեկտեմբերի 28-ով թուակիր, «Հայոց առեւտրական փաստաթղթեր» վերտառութեամբ 1-ին թղթապանակում գտնուող այս փաստաթուղթը².

[Տեղեկագիր մի ապամանդի վաճառքի գործընթացից]

«Զօրութիւն գրոյս այս է, որ Պատրու Փափուկէնց Յակոբջանի որդի

¹ Փաստաթղթում յիշատակուած անձինք առկայ են Վենետիկի 1750 թ. հայերի պաշտօնական ցուցակներում (տե՛ս Կարապետեան Մ., «Հայեր Վենետիկում 1750 թուին (Ա)», - «Հանդիս Անսօրեայ», 2008, էջ 211-226):

² Տե՛ս Archivio di Stato di Venezia, Documenti Armeni Mercantile, Busta 1 Շտրիակարային են յայտնում Սօնա Թաքիրեանին մեր ուշադրութիւնը այս փաստաթղթի վրայ կրախրելու համար: Պահպանել ենք փաստաթղթի ուղղագրութիւնը, կատարել ենք միայն կետադրական փոփոխութիւններ, փաստաթղթի լեկալուծի աւելի մատչելի դարձնելու համար: (•) տրում է ըստ հետևեալ հաշուարկի՝ $r = \frac{1}{3} x^2$, կամ $0,75 x^2$ (տե՛ս Kévonian K., *Numération, calcul, comptabilité et commerce, in Les Arméniens dans le commerce asiatique au début de l'ère moderne*, sous la direction de Chaudhury S. et Kévonian K., op cit., p. 318):

պարոն Պողոսն¹ Ա. դանայ քաշնայ զՈ (6½) դիրեթ² ավագ էր աղարկել Յալապ իմ Ըմպրումադէ որդի Գերաքիս³ ձեռն, եւս գրում թիվն փոքր⁴ ԱՃԻՁ (1741) Թիրայ ԻՁ-ումն (իմա հոկտեմբերի 12) թէ էս ա դանայ⁵ ավագն Գերաք Ադէ որդի քալանթար պարոն Յակոբինն այ⁶, որ օրդնի այ⁷ տվել պարոն Պողոսին ձէ (85) թուման⁸ ավագիս վերայ պոլիցայ⁹ առի որ էս Յալապ ավագն տիրեմ եւ աղարկեմ Վենետիկն պարոն Գրիգոր Ադգոլումն¹⁰, ծախել պարթքն տայ եւ ինչ եւելանայ աղարկի

¹ Ջուղայեցի Փափուկէնց ընտանիքի անդամները յիշատակում են 1764 թ. յուլիսի 19-ով թուագրուած եւ Սուրպօում գրուած մի յիշատակարանում: Չուազրի եւ գրիչը (Աստուածատուր Գրիգորի որդի) եւ ստացողը («հանգուցեալ Տէր Յոհանիսի որդի Տէր Ռսկանը») Ջուղայեցի Փառուկէնց ընտանիքից են: Վերջինս յիշատակարանում խնդրում է «յիշուայիք գիօրս սլապն եւ հանիքն ի Քրիստոսի հանգուցեալք Յակոբջանին եւ Մադադէ...» (տե՛ս *Յուզակ հայերէն ձեռագրաց Կոր Ջուղայի Կենսաիրկի փանրի*, հատոր Ա, կազմեց Սմբատ Տր-Կենտիսեան, Վիեննա, 1970, էջ 490):

² Դիրեթ - կարստ, յարգ:

³ Ըմպրում աղան Գրիգոր եւ Չարսը, Գերարենկի եղբայրն է:

⁴ Իմա՝ Ազարիս Ջուղայեցու տոմարը:

⁵ Դանա - տան (օսմ.) - հատ:

⁶ Քալանթար Յակոբ («որդի Գերաք աղ») - Կոր Ջուղայի մեզ յայտնի քալանթարենկի ցանկերում վերջինիս անունը բացակայում է, չեմք բացատրում երա կարճաժամկէտ պաշտօնավարումը: Ըստ Կոր Ջուղայի տարեկրի «Գերաք որդի Ադայ Յակոբայ երեւելի էր ի վաճառականութեան, որոս ստոր եւ ստորթեանն բազուկ ձգեալ կայր յԵրուսիայ, եւ ի կողմն Ասորայստայ եւ Գիլանայ: Եղևն կորա երկու որդիք, անուն միոյն Յակոբ, ...» (տե՛ս Տէր Յովհաննէնց, էջ. աշխ., էջ 140: Գերաքեան-Միրճանեան ընտանիքի մասին աւելի մանրամասն տե՛ս Ալիշան Ղ. Հ., Հայ-Վենետ. Վեներտիկ 1896, էջ 501: *Յովհաննէս Տէր Դաթեան Ջուղայեցու հաշուստմարք*, աշխատաւ. Լ. Ս Խոսիկեանի եւ Յ. Դ. Փափազյանի, էջ 10-13, Sebouh David Aslanian, A Ship with Two Rudders Gregorio di Girach Mirman of Venice Global Armenian Trade Networks and Religious Ambiguity in the Age of Confessionalization - Art and Religion in Medieval Armenia, NY, 2022, p. 85-108, 123-133):

⁷ Իտալ. ordine - կարգ, հրաման, կարգադրութիւն:

Մկր. տոման - պարսկական ոսկեդրամ, որ հասար 1 10,000 դիւարի (տե՛ս Խոսիկեան Ճ., Շահվադ որդի Սարիադի հաշվամատեանը, Երևան, 1994, էջ 173)

⁸ Իտալ. polizza - բեռնագիր, մուրհակ, ապրանքագիր:

⁹ Գրիգոր Ադգոլ - Կորջուղայեցի այս վաճառականը երիտասարդ հասակից զորճ ունեւորիւն է, ծաւալել Երուսայի տարբեր երկրներում: Ունեցել է արժ. քան որ

Սպահան, վերայ քալանթար պարոն Յակոբին կամ պարոն Պողոսին, որովհետև ավագս եկավ Յալայ իմ Գերաքիս ձեռն գարայ¹ ձբ (82) թուման պօլիցէն, որ կառի առգճկզ, (1366) չուն կարելի չէր ողջին քարսագին² լինէր ավագիս վերայ առաճօզ, (1150) մառչիլէն եւէլ փող չտվին: Մապլուս³ վեռի Պասրոյ պարոնին արարած պօլիցէն տվի, եւ մնացեալն իւր պօլիցայ գրովն յետ աղարկեցի որ Պասրայ ամլայ⁴ լինեն, եւ ա դանայ ավագիս Յալայ ինչ խալճ⁵ էր ելէլ Պասրու պարոնին խետ ամլայ ելանք: Եւս ավագիս համար օրդնին եւ էր, որ աղարկյէս պարոն Գրիգորին ձեռն, Պարոն Գրիգորն Իտալիա չէր, գնացել էր Մօսկովի յերկիրն էլչութեան⁶, եւս առաւել վերոյ առաճօ, (1150) մառչիլ պարոն Արիստակէս դի պարոն

կտաների երկու ցուցարահ Վենետիկում եւ Ֆլորենցիայում: Նրա ջանքերով 1750-1752 թթ. առևտրա-տնտեսական միջպետական պայմանագիր է ստորագրուել Վենետիկի հանրապետության, Սաքսոնիայի եւ Լեհաստանի միջև՝ նոյնականացնելով մաքսային պայմանները. այն գործել է տասնեակ տարիներ: Այս պայմանագիրը ընդլայնելու նպատակով 1742 եւ 1743 թթ.. Ադոլֆոն, մի խումբ հայ վաճառականների հետ, այցելել է նաև Մոսկվա եւ Ս. Պետերբուրգ՝ Ռուսական կայսրությանը եւս յիշեալ պայմանագրի մէջ ներգրաւելու միտումով, որը նրան չի յաջողուել, (այս մասին աւելի մանրամասն տե՛ս **Էլիզաբեթ Թաջիրեան, Մարկիզ Գրեգորիո դ'Արյոյո**, - Ակ. Վ. Բարխուդարեանի 90-ամեակին նուիրում զիտաժողովի նիւթերի ժողովածոյ, Երևան, 2019, էջ 168-186: **Corti Gino**, The Aghdollo Collection of Paintings: An Inventory of 1741: - "The Burlington Magazine", Vol. 120, N° 904, (Jul. 1978), p. 442. **Gardner Elizabeth.**, The Agdollo collection of paintings: the last chapter, - "The Burlington Magazine", Vol. 128, N° 995, (JFeb.. 1986), pp. 144-146. **Cecchini Isabella**, Gregorio Agdollo [Isfahan 1707 - Venezia 1789], - **Borean I., Mason S.**, Il collezionismo d'arte a Venezia. Il Settecento, ed. Marsilio - Padova, 2009, p. 236. **Մխիթար Աբբա, Եսմսկսկսի**, հատոր Բ, կամակներ N° N°423, 445, 463, 471, 603, 625: **E. Corsch**, *Meriten und Machenschaften des Gregorio Agdollo*, - «Annales Mercanturæ», Band 3, 2017, SS. 107-133).

¹ Պարսկ. zīrā - որովհետև:

² Քարսագի - քնարսագ(ի) - յարմար հս մնապատասխան:

³ Արաբ. mablagh - որոշ չափով դրամ, գումար:

⁴ Արաբ. 'amal - որեւէ գործի կատարում, իրականացում:

⁵ Արաբ. khardjī - ծախսի փող,

⁶ էլչութիւն - դեսպանութիւն, էլչի - դեսպան:

Գաբրիէն վեռի արմազն դրի ուր պուտիկ[ա]տին¹ ներքէն, որ արարկեմք իւր հայր պարոն Գաբրիէին ձեռն, եւ վերոյ առաճծօ, (1150) որպէս ջուքամի² կամայի³ այ, ճ (100)-ին՝ ժը (18) շախ տւի սարմայովն⁴ ջամն⁵ էլաւ առգճճէ (1357) դուկատ կորէնք¹:

¹ «Ջուղահայերի շրջանում լայնօրէն տարածուած փոխարժէքի մեկ այլ տեսակ էր, այսպէս կոչուած *ջուկամի* [*ջովքամի*] *տվակր*, որն իրականում *պպսիսպպուսած մոյիսակն* է: *Ջուկամի տվակի* դէպքում փոխառութիւնն ապահովագրուել է փոխառուի գոյքի դիմաց՝ արժէթուղթ *ջուկամը* կամ *փոյթիքպոյթ*, որպէս կանոն, թանկարժէք քարեն են կամ մետաքս: Նման փաստաթղթերում վարկառուների դէրում հանդէս եկող անձինք յաճախ այն առեւտրականներն են, ուրբեր թանկարժէք ապրանքներ էին ձեռք բերել իրենց գործընկերներին կամ գործակալներին հետագայ առեւտրի համար փոխանցելու նպատակով: Քանի որ նրանցից կարող էր երկար ժամանակ պահանջուել առք ու վաճառքը կատարելու համար գումարը վերադարձնելու համար, նրանք օգտագործում էին այս օրէնքը (մն թողը) ժամանակ շահելու եւ միևեկ գործողութեան աւարտը գումարն ամբողջացնելու նպատակով» (Տէւ Ս. **Khatchikian Sh.**, *The Bill of Exchange in the Milieu of New Julfan Armenian Merchants.- Les Arméniens dans le commerce asiatique au début de l'ère moderne, sous la direction de Chaudhury S. et Kévonian K.*, Paris, 2007, p. 279: Հմմտ. **Խաչիկեան Շ.**, Շահիւելու որդի Սարխաղի հաշվեմատեանը, Երևան, 1994, էջ 179):

² Հնդ. djokhām, - զրաւ դրուած ապրանք կամ վտանգի ենթարկուած հարստութիւն, ունեցուածք: Մի վայրից մյուսը դրամական փոխադրումների ժամանակ, երբ գումարը այդ ժամկետում վտանգի ենթակայ էր համարուում, միաժամանակ համարժէք որելէ: ապրանք եւս ուղարկուում էր նոյն հասցեով, որպէսզի երբ ապրանքը տեղ հասնէր, նոր միայն պայմանաւորուած գումարը հատուցուէր ըստ պատկանելոյն: Այդ ապրանքը կոչուում էր «ջուքամ»: Իսկ եթէ դրամի փոխադրումը կատարուում էր առանց այդ պայմանի, այն կոչուում էր «բիջուքամ» - առանց ջուքամի (տե՛ս Յովհաննէս Տէր Դաւթեան Ջուղայեցու հաշուետումարը, աշխատասիրութեամբ Լ. Ս. Խաչիկեանի եւ Յ. Դ. Փափագեանի, Երևան, 1984, էջ 405: **Խաչիկեան Շ. Լ.**, Նոր Ջուղայի հայ վաճառականութիւնը եւ նրա առեւտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ, XVII-XVIII դդ., Երևան, 1988, էջ 186):

³ Իտալ. *cambio* - փոփոխութիւն, հատուցանել զլշիռն, փոխանակութիւն, դրամափոխութիւն եւ շահ դրամափոխութեան (փոյիցա), փոխանակագիր (*lettera in cambio*) (տե՛ս Ջախջախեան Մ., Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի տաճիկ, Վենետիկ, 1804, էջ 85):

⁴ Պարսկ. *sarmāya* - դրամագլուխ, հիմնադրամ:

⁵ «Չամ՝ էր կոչվում հարկերի հաշվառման այն ձևը, երբ որելէ հարկատու օրինկտից ... գանձուող բոլոր պետական հարկերը մանրամասնութեամբ հաշուում էին եւ ... հարկային մատեաններու գրանցուելուց յետոյ ի մի էին բերում եւ, ի վերջոյ, դրամական արտայայտութեամբ արձանագրում, թէ տուեալ օրինկտը ընդհանուր գումարով որքան հարկ պէտք է վճարի ...» (տե՛ս Փափագեան Յ. Դ.,

Ելմագս Վենետիկ խասանելէն յետ, լա (31) օր վաղայ՞ որ մեր խերիաթին՝ համար խերով ծախսին յետեի: Եւ ես Գէլասքս թին 1743 ապրելի Ը (8)-ումն եկի Վենետիկն սեսի արմագն կենումայ եւ մինչեւ ներքոյ թարեղս՝ պարոն Գաբրելովն յետեւեցինք եւ շատ թլաշ՝ արարինք որ թէ արմագն ծախենք մուքին՝ չելավ, որ աոքճ00 (1200) էն եւել գին չտվին, եւ օր զօր շախն վերայ գոլով պարտքս եւելամնայ, եւ պարոն Գաբրելն եւս նւր փողն ուզում այ, ինչ խօյ ձեռնայտու չէր որ քարսագին առի, եւ արմագիս վերայ փող տվող չընկավ որ գրավ դնի, փող վեռի տի պարոն Գաբրելին, եւ պարոն Գրիգորն Մօսկովէն եկավ, իրիթն՝ էսպէս տեսինք: Վերոյ արմագն քանի ջուհայիրչու՞՞ նշանց տանք ինչ գին դնեն էնպէս տանք պարոն Գաբրելին: Գին դնել տվինք աոքճ (1200) տուկատէն եւել գին չդրին, պարոն Գաբրելին բելինք՝ էլանք աոքճօօ, (1300) տուկատ ուրս թանխալ՝ տվինք մնաց թալապ՝ իւր սարմայէն ծէ, (57) տուկատ մինչեւ օրս մուղաթովն՝ կատի խէ, (47) բ դաֆայ՝ շամն էլավ աճղ, (104) տուկատ կորէնթ, որ ես տվի պարոն

Ստանեւողարանի պարսկերէն վարերագրերը. I, Հրովարտակնու, պր. առաջին (ԲԷ.-ԲԷ. դդ.), Երևան, 1956, էջ 103)

¹ Դոսպ. corrente - ընթացիկ (դրամ)

² Արար. va'da - պայմանաժամ, ժամկետ:

³ Կարս. kharid - գնում, առք:

⁴ Արար. tārīkh - թուական, թարեղս - սոյն թվականից առաջ:

⁵ Արար. talāshī - խու գարկող բնիչ. Ալաաեղ՝ վերագնահատել:

⁶ Մուքին - մուքին կամ վերակացոյին արուող վարձ:

⁷ Գրսկ. kharid - գնում, առք

⁸ Ջուհայիրչի (ճվախիրճի), - գոհարեղէի, թանկագին քարերի մասնագետ, եսնս վաճառական:

⁹ Էլինթ - պլիյարթ, պլիյելթ, «վատամարդ դուրս եկանք» իմաստով I գործածում:

¹⁰ Դարս. tankhāh - որևէ իրի կամ ապրանքի համարժէքը:

¹¹ Ե՛ալապ - թալէպ - խնդրումք, պահանջ:

¹² Արար. musdāt - ժամանակ, ժամկետ, փոխ տրուած կամ փոխադրուած գումարի ետեւայ ժամկետի ընթացքում գոյացած տոկոսը:

¹³ Դաֆայ - տէֆա - դարձեալ, անգամ. այստեղ՝ «կրկնակի անգամ» իմաստով I գործածում:

Գաբրիելին, որ Սպահան կամ Պասրայ վերոյ քալանթար պարոն Յակոբն կամ պարոն Պողոսն տան իմ Գեղաքիս օրդնուս. Կաղաչեմ Վենետիկս եղեալ բարեպաշտ ջումիաթին¹, ով ոք որ բանիս գիտակ այ, ի փառս Յիսուսի, ուր վկայութիւնն գրե եւ սրիչ²:

Եղեւ ... ԱՌԷՃԽԳ (1743) նոյեմբերի .. Վենետիկ

Գիրս Գ-այ, Ա-ըն՝ մագբուն³, Ա-ըն՝ պարոն Գաբրիելին խետ այ, Ա-ըս՝ իմ Գեղաքիս խետ այ, Ա-ըն՝ աղարկեցի պարոն Պողոսին. վկայեմ.

Վերոյ Ա. դանայ ալմագն առգճօօ (1300) տուկատ ...

Գաբռէլ դի Աղալարին թանխայ տվեցին ջամն. Ըստեֆօ Շերմանըս⁴ վկայեմ.

Վերոյ գրեալին եւ Նագերի Յարութիւն դի Աւետ վկայեմ.

Վերոյ Ա դանայ ալմագըն առգճ (1300) տուկատ պարոն Գափռէլին թանխայ տվին. Գրիգոր Աղոջուս վկայեմ.

Վերոյ յիշեալ մին դանայ ալմագն, որ Գաբրիելին մօտն սյուտիկատ էր, տեսի եւ գիտեմ որ շատ յետեւեցի առքճ (1200⁵) տուկատ եվէլ տուղ չկէր. Գաբրիէլն փողն ուզում էր պարոն Գերաբն ասմ էր՝ ձեռնտու չէ ինձ փող տալն, դայիլ⁶ կացաւ որ յիշեալ ալմասն, ուր թանխայ տայ մին հազար երեք հարուր տուկատ, ուր թալապ կոմպանիոն թէ վնեց, Մանուէս Շերիման⁶ վկայեմ (կնքադրոշմ).

Ինչպէս վերոյ պարոն Մանուէլ Շերիմանըն գրել այ, հաստատ այ, եւ ըս վկայեմ. Հակոբ Սարիատ Շերիմանէնց՝

¹ Ջումիաթ - ճեմաթ - խումբ, հասարակութիւն, համայնք:

² Պարս. mohr - կնիք, միրկ - կնիկ:

³ Մագբուն - մագպոթ (թրք.) - հաստատուն, արձանագրեալ, յայտնի: Այստեղ օգտագործուած է *թիօրիխակ* իմաստով:

⁴ Յարութիւն Ստեփանի Շերիմանեանի մասին տես Aslanian S. D., From the Indian Ocean to the Mediterranean, pp. 151-156).

⁵ Արար. kalil - քիչ, մի քիչ, պակաս:

⁶ Սա հուկ Շերիմանեանի մասին տես Aslanian S. D., op. cit., pp. 151-156.

⁷ Հակոբ Սարիատ Շերիմանէնցը Սարիաղի որդի Նագարի որդին I (տես Aslanian S. D., op. cit., pp. 151-156).

Վերոյ զըրեալն հաստատ այ եւ ճշմարիտ Մարգարէ
Շերիմանս՝ վկայեմ.

Վերոյ զըրոյսլն հաստատ այ Խաչիկ դի Յակոբս² վկայեմ»:

* * *

Գործածուած բառարաններ

- Գեորգ Պալատեցի (Տէր-Յովհաննէսեան), Բառարան
Պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից, Կ. Պոլիս,
1826:
- Ջախջախեան Մ., Բառարան յիտալական լեզուէ ի հայ եւ ի
տաճիկ, Վենետիկ, 1804
- Պետրոս Զէքի Կարապետեան, Մեծ բառարան օսմաներնէ
հայերէն, Կ. Պոլիս, 1912:
- Քիւփէլեան Հ. Ա. վրդ., Բարգիբք երեքլեզուեան, Վիեննա,
1883:
- Յովհաննէս Տէր Դաւթեան Ջուղայեցու հաշուետումարը,
աշխատասիրութեամբ Լ. Ս. Խաչիկեանի եւ Յ. Դ.
Փափագեանի, Երեւան, 1984:
- Խաչիկեան Շ., Շահվելու որդի Սարհադի հաշուեմատեանը,
Երեւան, 1994:
- Փափագեան Յ. Դ., Մատենադարանի պարսկերէն
վաերագրերը. I, Հրովարտականեր, այր. առաջին (ԺԵ.-ԺԶ.
դդ.), Երեւան, 1956:
- Օհանեան Հ. Վահան, Բառարան իտալերէն - հայերէն,
Վենետիկ, 1995:

¹ Մարգարէն Էմանուէլ Շերիմանի որդին է (Aslanian S. D., op. cit., pp. 151-156):

² Մահտեսի Յակոբի որդի Խաչատուրը եւ իր հայրը յիշում են որպէս Վենետիկում
գրուած «Մասունք Աստուածաշնչի» ստացողներ (տե՛ս Յուզակ հայերէն ձեռագրաց
Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հտ. Ա., Վիեննա, 1970, էջ 20):

2

Handwritten text in a cursive script, likely a letter or a manuscript page. The text is dense and fills most of the page. It appears to be a personal communication, possibly a letter of introduction or a report, given the context of the adjacent page.

Handwritten text, possibly a list or a set of instructions. It includes several lines of text, some of which are indented. The script is consistent with the rest of the document.

Handwritten text, possibly a list or a set of instructions. It includes several lines of text, some of which are indented. The script is consistent with the rest of the document.

Handwritten text, possibly a list or a set of instructions. It includes several lines of text, some of which are indented. The script is consistent with the rest of the document.

ELIZABET TAJIRYAN
Armenia

THE STORY OF ONE DIAMOND SUMMARY

Keywords: New Julfan trade network, diamond, bills of exchange, letters of credit, Chehrimanians family, Geraks family, Grigor Aghdolo.

The document under discussion (1743) relates to the preparation of a sale of a 6.5 carat diamond by different representatives of the New Julfan trade network dispersed across multiple countries. The transfer of the diamond from one country to another required time, use of different types of binding agreements and documents, such as bills of exchange and letters of credit, as well as attestation by reputable Armenian merchants of the time.

ЭЛИЗАБЕТ ТАДЖИРЯН
Армения

ИСТОРИЯ ОДНОГО БРИЛЛИАНТА РЕЗЮМЕ

Ключевые слова: Армянская торговая сеть Новой-Джулфы, бриллиант, переводные бумаги, аккредитивы, Шейриманлы, Гераки, Григор Агдоло.

Обсуждаемый документ (1743 г.) касается подготовки продажи алмаза весом 6,5 карата различными представителями торговой сети Новой-Джулфы, рассредоточенной по нескольким странам. Перевозка бриллианта из одной страны в другую требовала времени, использования различных видов обязывающих договоров и документов, таких как переводные бумаги и аккредитивы, а также заверения авторитетными армянскими купцами того времени.

**ԻՐԱՆԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՆ ԻՐԱՆԱՀԱՅ
ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հիմնաբառեր՝ Իրան, իրանական մամուլ, իրանահայ գործիչներ, ճարտարապետներ, շենք-շինություններ, գեղանկարիչ, պարսկերեն հրապարակումներ, իրանական հասարակություն:

Հայ համայնքն իրանական հանրությանը ծանոթացնելու առաքելությամբ զբաղվում է Թեհրանում գործող Հայկական հարցերի ուսումնասիրության կենտրոնը՝ ՀՈՒՄԿ-ը: Այդ նպատակով վերջինս կազմակերպում է տարբեր միջոցառումներ, դասախոսություններ և ցուցահանդեսներ: 2002 թվականի ՀՈՒՄԿ-ի կազմակերպած ծրագրերից են եղել գեղանկարիչ Քլարա Աբգարի և բարեգործ Արսեն Մինայանի հանրահռչակումը, ինչպես նաև հայազգի երեք ճարտարապետներին նվիրված ձեռնարկի անցկացումն՝ Իսլամական Ազատ համալսարանի հայերենագիտական ամբիոնի պարսիկ ուսանողների մասնակցությամբ:

2002 թվականի նոյեմբերի 15-ին ՀՈՒՄԿ հանձնախմբի կազմակերպմամբ տեղի է ունեցել իրանահայ երեք ճարտարապետներ Գաբրիել Գևրեկյանին, Փոլ Աբգարին և Վարդան Հովհաննիսյանին՝ նվիրված հուշ-երեկո և նրանց ճարտարապետական գործերի պատկերների ցուցահանդես Թեհրանի Հայոց թեմի Թեմական խորհրդի հովանավորությամբ և Իրանի Արվեստագետների տան համագործակցությամբ:

Նշված ճարտարապետները իրանական ժամանակակից ճարտարապետության հիմնադիրներն են, որոնց գործերը

¹ St. u Իրանահայոց հանրագիտարան, Կազմող Ժանետ Տ. Լազարյան, Եր., «ՎՄԿ-Պրինտ», 2012, էջ 234, 239, 240:

զարդարում են Թեհրան քաղաքը: 1940-ական թվականներին նրանք եվրոպական մոդեռն ճարտարապետությունը բերել են Իրան՝ առաջնորդելով տեղի երիտասարդ ճարտարապետներին: Մեծ եղեռնից մազապուրծ փրկված Գաբրիել Գևրեկյանի ընտանիքը հաստատվել է Թեհրանում, որտեղ էլ նա ստացել է իր ուսումը, ապա կրթությունը շարունակել Վիեննայում:

Իրանի ճարտարապետների միության անդամ Բեհռուզ Փաքդամանի խոսքով՝ «*Թեհրան քաղաքի ճարտարապետական տեսքը խոշոր տոկոսով պարտական է հայ ճարտարապետներին, որվհետև հետագա տարիներում առնվազն նրանք, որոնք նախանձախնդիր էին քաղաքի շինարարական ոճի նկատմամբ, կրեցին նրանց ազդեցությունը, սակայն ապագա տարիներում դա չպահպանվեց ըստ արժանվույն*¹:

Ի դեպ, Բեհռուզ Փաքդամանը Վարդան Հովհաննիսյանին նվիրված գիրք է հրատարակել, իսկ տիկին Մանդանա Յազդանշենաս Հաշեմին ծավալուն ուսումնասիրություն է կատարել Գաբրիել Գևրեկյանի մասին:

Ուշագրավ է, որ ՀՈՒՄԿ հանձնախմբի նախագահ Ալեն Ասատրյանն ընդգծել է. «*Մտադիր ենք նաեւ յիշեալ երեք ճարտարապետների կառուցած շէնքերը գրանցել տալ Մշակութային ժառանգութեան կազմակերպութեան ցանկում*»²:

Հիրավի, Գաբրիել Գևրեկյանի հայտնի գործերից են Իրանի Արդարադատության, Արտաքին գործերի նախարարությունների և Սպաների ակումբների շենքերը: Ինչ վերաբերում է Վարդան Հովհաննիսյանին, ապա բավական է նշել, որ հենց նա է հիմնադրել Իրանի ճարտարապետների միությունը և նրա միջոցով է սկսել հրատարակվել «Արշիթեքթ» պարբերականը, իսկ տարիներ անց հրատարակել է «Մերմարիե նովին» («Արդի ճարտարապետություն») ամսագիրը: Նրա գործերից են Սաադաբադ պալատը, «Մետրոպոլ» և «Դիանա» կինոթատրոն-

¹ Տե՛ս «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 16.11.2002, թիւ 245 (18746):

² Տե՛ս «Ալիք», 14.11.2002, թիւ 244 (18745):

ների շենքերը, Դարբանդի և «Ֆերդոսի» հյուրանոցները և «Մեփահ» բանկի կենտրոնական շենքը:

Թեև Փոլ Աբգարը զբաղվել է առանձնատների շինությամբ, սակայն նրա գործերից են նաև «Նիագարա» կինոսրահը, Իրանի առաջին ռադիոկայանը, Հայ կաթողիկե համայնքի եկեղեցին, խուլուհամր երեխաների «Բաղշեբան» դպրոցը և այն առանձնատունը, որը ծառայում է որպես Իրանում ՀՀ դեսպանության շենք:

Նույն թեմայի շրջանակներում 2007 թվականի Թեհրանում լույս տեսնող «Համշահի» օրաթերթը «Քրիստոնյա ճարտարապետների հիշատակները» խորագրով հոդվածում անդյադարձել է Իրանում հայ ճարտարապետների կառուցած շենքերին և կոթողներին, որը թարգմանաբար ներկայացրել է «Ալիք» օրաթերթը: Հոդվածագիր Ռամթին Ֆարգադը գրում է. *«Քրիստոնյա ճարտարապետները կառուցել են ոչ միայն Թեհրանի, այլ նաև ուրիշ քաղաքների կարևոր շինությունների մեծ մասը: Թավրիզի կենտրոնական պողոտան, որն այսօր կոչվում է Էմամ Խոմեյնիի անունով, նախագծել է Ավետիս Ահարոնյանը՝ մի երևանցի ճարտարապետի զավակ, որը Իրան եկավ Հայաստանի խորհրդայնացումից հետո»¹:*

Ֆարգադը գրում է նաև Թեհրանի «Մարմար» պալատի կառուցման վերաբերյալ, որ դրա հատակագիծը կազմել է 1925-1941 թվականների Իրանի շահ Ռեզա Փահլավին, բայց այդ գործի համար հրավիրված շինարար վարպետները շատ չանցած աշխատանքից հեռացվել են, և գործի շարունակությունը հանձնվել է ճարտարապետ Լևոն Թադևոսյանին, որը գործն իր ավարտին է հասցրել: Փաստորեն, հայազգի ճարտարապետը նախ վայելել է իրանական միապետի վստահությունը, ապա ունեցել է մասնագիտական մեծ համբավ:

Փոստի հոյակապ շենքը ծնունդով Սպահանից Էլզալ Գալստյանցի գործն է: Այս կառույցը 1928 թվականին դրվում է

¹ Տե՛ս «Ալիք», 07.11.2007, թիւ 230 (20130):

աճուրդի, որը շահում է ճարտարապետ Նիկոլայ Մարկովը, սակայն շենքը կառուցում է Գալստյանը:

Թեհրանի «Մաշո» հրապարակում գտնվող Արտաշին գործերի նախարարության շենքը ևս հայազգի երկու ճարտարապետների գործն է: Հասակագիծը կազմել է Գաբրիել Գերեքյանը, որը ծնվել է Ստամբուլում և նույն 1900 թվականի քնտանիքի հետ տեղափոխվել Իրան՝ վախենալով տեղում քրիստոնյաների դեմ սկիզբ առած բռնություններից, որոնք ի վերջո, հանգեցին 1915 թվականի ապրիլի դեպքերին: Իրանի Արտաշին գործերի նախարարության շենքի նախագիծը ներկայացրել է Գաբրիել Գերեքյանը, իսկ էլզալ Գալստյանը հանձն է առել դրա շինությունը: Նրանք երկուսով մի այնպիսի կառույցի հիմքը դրեցին, որ այսօր էլ այն համարվում է Թեհրանի լավագույն և ամենից գործնական կառույցներից մեկը: Դատական ուժի պալատի գծագրությունը ևս, որ համարվում է այդ նույն շրջանի կարևորագույն շինություններից մեկը, պատկանում է Գաբրիել Գերեքյանին:

Բացի այդ նրանից մնացել է ճարտարվեստի նախարարության շենքը «Գոլեսթան» պալատին կից և մի քանի առանձնատներ: Դրանք են Փանահի, Խոսրավանի, Նեզամ-Մաֆի, Մալեք-Ասլանի և Ֆիրուզ: Հարկ է նշել, որ Թեհրանում երբեմնի առանձնատների շարունակական վերացման հետևանքով որոշներն ավերվել են:

Այնուհետև հողվածագիրը հանգամանորեն ներկայացնում է այլ շինություններ, որոնք կառուցել են հայերը և եզրակացնում. *«Իրանի որն է կետում, որ քրիստոնյաներ են ապրել, այնտեղ կառուցել են առնվազն մեկ արժեքավոր կոթող: Վերջին 100-ամյակում ավելի քան 150 հայ ճարտարապետ աշխատել է Իրանում»¹:*

Այսպիսով, իրանական ճարտարապետության մեջ իրենց ուրույն տեղն ունեն անվանի հայ ճարտարապետները.

¹ Տե՛ս «Ալիք», 07.11.2007, թիվ 230 (20130):

որոնց թողած ժառանգությունը մեր օրերում էլ շարունակում է զարդարել իրանական քաղաքները և դրանց հրապարակները: Այդ մասին ժամանակ առ ժամանակ անդրադարձում է իրանական մամուլն իր էջերում՝ գնահատելով անվանի հայերի վաստակը ու երախտիքի խոսքեր գրելով նրանց հասցեին:

Վերոնշյալից զատ որոշակի հետաքրքրություն են սերկայացնում իրանական մամուլում հրապարակված այն նյութերը, որոնք վերբերում են մշակույթի այլ բանագու-վառներում հաջողություններ ունեցած մի շարք անվանի հայերի: 2008 թվականին «Ֆարհանգե աշթի» թերթն իր հերթական համարում «Երաժշտություն» բաժնի հավելվածում, անդրադարձել է իրանահայ անվանի ջութակահար Զավեն Եղգարյանցին: Նա համարվում է Իրանում ակադեմիական և դասական երաժշտության առաջատարներից մեկը: Թերթն անդրադարձել է Զավեն Եղգարյանի կենսագրական տվյալներին՝ նշելով, որ նա ծնվել է 1914 թվականի Թավրիզ քաղաքում և փոքր տարիքից սկսել է նվագել ջութակ¹:

Հաջորդ հայ անվանի գործիչը, որին անդրադարձել է իրանական մամուլը, լուսանկարիչ Արման Ստեփանյանն է: Թեհրանում հրատարակվող «Շարդ» օրաթերթն իր 2003 թ. նոյեմբերի 6-ի համարում Շահրուզ Նազերի ստորագրությամբ մի հոդված է ներկայացրել Արման Ստեփանյանի լուսանկար-ների ցուցադրման առիթով: Այդ նյութը որոշ հապավումներով թարգմանել և տպագրել է Վ. ստորագրությամբ «Ալիք» օրաթերթը²: Հաշվի առնելով թեմայի կարևորությունը որոշ մեջբերումներ կատարենք այդ հոդվածից, որը վերաբերում է նաև հայ համայնքին. *«Ապրում ենք բո կողքին, բայց քեզ նման չեն, փոքրաթիվ հասարակություն են, սակայն չպիտի նրանց փոքրամասնություն անվանել, միշտ պնդում են իրենց ազգային պատկանելության մասին, բայց մեզանից են, մեզ*

¹ Տե՛ս «Ալիք», 09.07.2008, թիվ 136 (20311):

² Տե՛ս «Ալիք», 27.11.2003, թիվ 251 (19034):

իրանցիներին համար ոչ հյուր են, ոչ հարևան, նրանք մեր մի մասն են: Մարդկանց հարաբերությունների ներհակություններն ու կանոնները չպիտի փնտրել օրենքի գրքերում, այլ մանր առևտրականի ու հաճախորդի, հարևանի ու ընկերոջ շփումների ծայքերում»:

Ակնհայտ է, որ հայ համայնքը խնդիր է համարում «կրոնական փոքրամասնություն» բառը, որն ըստ էության իրանական իշխանությունների կողմից ամրագրվել է նաև իրավական ձևակերպումներում: Մինչդեռ այն չի արտահայտում հայության՝ որպես ազգային հավաքականության փաստը:

Այնուհետև հողվածագիրն իրավացիորեն գրում է, որ հայության ներկայությունն առավել զույն է գտնում նախասահմանադրական շրջանի նորարարական ու առաջադիմական հոսանքների մեջ: Խոսքը վերաբերում է 1905-1912 թվականների պարսկական հեղափոխության ընթացքում հայերի կողմից ազատական և ժողովրդավարական գաղափարների ներմուծմանն իրանական հասարակական կյանք¹:

Ինչ վերաբերում է մշակույթի մյուս բնագավառներում հայ փոքրամասնության ներկայացուցիչներին, ապա ընդունվում է, որ նրանք ակնառու և ուշադրության արժանի ներդրում են ունեցել գրականության, կինոյի, երաժշտության, ճարտարապետության, թատրոնի, կերպարվեստի մեջ: *«Այս հավաքականության ծանոթությունը զարգացող Եվրոպայի լեզվին, խոսակցական ոճին, մշակույթին ու կենցաղին նրանց վերածել*

¹ Տե՛ս Միմոնյան Հ., 1905-1912 թթ. պարսկական հեղափոխությունը և հայերը, Եր., ԵՊՀ հրատ., 2017, 606 էջ: Բայբուրդյան Վ., Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Եր., «Լուսակն» հրատ., 2013 թ., 212 էջ. Յուշարձան նուիրուած Սօցիալ դեմոկրատ հնչակեան կուսակցութեան քառասնամեակին, Ս.Դ. Հնչակեան կուս. հրատ., Փարիզ, Յ. Բ. Թիւրապեան տպ., 1930, 288 էջ: Berberian H., "History, Memory and Iranian-Armenian Memoirs of the Iranian Constitutional Revolution", Critique: Critical Middle Eastern Studie:, Vol. 17, No. 3, Fall 2008, pp. 261-292.

էր մի տեսակ միջնորդի՝ արևմտյան մշակույթը մեզ փոխանցելու գծով ու չնայած հայերը այլևս այդ շրջանի պէս չունեն մշակութային նման պարտականություն, բայց և այնպէս ներկայումս էլ մշակույթի ոլորտում նրանց մասնակցության տոկոսը բարձրագույնն է Իրանի մյուս հասարակությունների համեմատությամբ: Այդուհանդերձ, իրանական արվեստաբանության մեծագույն սխալը այն է, որ գեղեցկությանը նայում է ազգային պատկանելության դիտանկյունից, ինչ որ նաև ես եմ արել այս գրության սկզբում, գործը պիտի քննարկել իր տեսողական կադապարում՝ անկախ դրա ստեղծողի արտաքին վկայակոչումից ու հայտնաբերումից: Սակայն միթե կարելի է Ստեփանյանի գործերին մոտենալ անկախ նրա այլ կրոնի, հավատալիքների ու ցեղի գիտակցության թելադրանքից: «Լալե» պատկերասրահում տեղի ունեցած «Իրանշահր» խմբի հավաքական ցուցահանդեսում Ստեփանյանը ակնառու տարբերություններ ուներ խմբի մյուս լուսանկարիչների հետ: ... Նա անցյալի պէս ջանում է մի գաղթական ժողովրդի ոչնչացման և տառապանքի հիշողությունները փոխանցել մեզ, և այն, որ Ստեփանյանի լուսանկարների մարդկանց արմատները հեռու են նրանց ներկա բնակավայրից, իսկ դրանք բոլորը այն բաներն են, որ մեզ չեն հետաքրքրում մեր մեծամասնություն լինելու պատճառով: Սակայն մի թե հայությունը մեզ համար մի փոքրամասնություն ու գաղթականների մի խումբ է միայն»¹:

Փաստորեն, հոգվածագիրը ընդունում է, որ իրանական հանրությունը լիովին չի կարողանում ձերբազատվել որոշ կարծրատիպերից ու հայությանն ընդունել այնպիսին, ինչպիսին կա իրականում:

Արժեքավոր հրապարակմամբ է հանդես եկել «Վահդաթ» դահլիճի և Իսլամական մշակույթի ու առաջնորդության երաժշտական կենտրոնի համագործակցությամբ հրատարակ-

¹ Տե՛ս «Ալիք», 27.11.2003, թիւ 251 (19034):

վող «Արեգու» մշակութային պարսկերեն շաբաթաթերթը, որի 2002 թվականի երկրորդ համարն ամբողջությամբ նվիրված է իրանահայ անվանի կոմպոզիտոր և խմբավար Լորիս Ճգնավորյանին: Այդ բացառիկ համարի նյութերում ճգնավորյանի մասին հիացմունքով են արտահայտվել պարսիկ անվանի երաժիշտներ Շահին Ֆարիաթը, Նովին Աֆրուզը, Շահրամ Նազերին և ուրիշներ¹:

Ի դեպ, վերոնշյալի շրջանակներում նշելի է, որ 2003 թվականին «Սալես» հրատարակչությունը լույս է ընծայել «Իրանի երաժշտական դպրոցների պատմությունը» վերնագրով գիրքը, որը կազմել և տպագրության է պատրաստել ավանդական երաժշտության վաստակավոր հետազոտող, բանասեր Հաբիբոլլահ Նասիրիֆարը: Գրքում ներկայացված են երաժշտության բնագավառում զգալի ներդրում ունեցած հայերը՝ Լորիս Ճգնավորյան, Մարսել Ստեփանյան, Վարուժան Հախբանդյան, Տիգրան Սուքիասյան և ուրիշներ²:

Հարկ է նշել, որ իրանցի ընթերցողին հայ անվանի գործիչների մասին ներկայացնում են նաև հենց իրենք՝ իրանահայերը: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

Պարսկերենով լույս տեսնող «Թատերական» պարբերաթերթը 2001 թվականի թիվ 6 և 7 համարում անդրադարձել է Հայ Ռաումնասիրաց «Չհարմահալ» միության «Գեղարդ» թատերախմբի գործունեությանը: Նյութի հեղինակն է Անդրանիկ Հովվոլյանը³:

2001 թվականի հոկտեմբերի 10-ի համարում «Իրան» օրաթերթը «Կինոթատրոն» հավելված բաժնի «Ներկայացման աշխատանոցի հիմնադիրը» խորագրով հոդվածում անդրադարձել է իրանահայ անվանի բեմադրիչ Արբի Հովհաննիսյանի

¹ Տե՛ս նույն տեղում, 22.01.2003, թիվ 16 (18799).

² Տե՛ս նույն տեղում, 14.12.2003, թիվ 265 (19048):

³ Տե՛ս նույն տեղում, 15.05.2001, թիվ 94 (18316):

գործունեությանը և իրանական թատերարավեստում նրա սերդորումին¹:

2003 թվականի դեկտեմբերին «Ֆասլնամեյե թեաթը» («Թատերական եռամսյա») պարսկերեն պարբերականն իր թիվ 18-19 միասնական համարում հրատարակել է Անդրանիկ Հովույանի հեղինակությամբ «Հ. Մ. Արարատ կազմակերպության թատրոն» վերնագրով մոտ 70 էջից բաղկացած հոդվածը՝ նկարներով և աֆիշներով: Հեղինակն անդրադարձել է այդ կառույցի անցյալին ու նրա թատերական խմբերի 60-ամյա գործունեությանը²:

Թեհրանում լույս տեսնող «Մինեմա» («Կինո») պարսկերեն հանդեսը իր 2001 թվականի սեպտեմբերի 26-ի թվակիր համարում Իրանի կինոյի պատմության մնայուն ու մեծ վաճառք ունեցած ժապավենների քննարկում և վերլուծում հոդվածաշարի որպես 7-րդ մաս, մեծ տեղ է հատկացրել իրանահայ անվանի կինոռեժիսոր Սամուել Խաչիկյանի պատրաստած «Փորձանքների քառուղին» ֆիլմի ծանոթացմանն ու վերլուծմանը: Հատուկ անդրադարձել է այդ ֆիլմում հաջող խաղացած իրանահայ հայտնի դերասան Արմանին (Արամայիս Հովսեփյան)³: Ուշագրավ է, որ «Մինեմա» թերթի գլխավոր խմբագիր Ֆերեյդուն Ջեյրանիի նշված հոդվածը վերաբերել է 1950-60-ական թվականների մշակութային կյանքում իրանահայ անվանի գործչին: 1954 թվականին Իրանի կինոյի առաջին «Գոլրիզան» փառատոնում նշված ֆիլմը ստացել է լավագույն բեմադրիչի (Ս. Խաչիկեան) և լավագույն տղամարդ դերասանի (Արմանի) մրցանակները:

Թեհրանում հրատարակվող «Ֆիլմ» պարսկերեն ամսագիրը 2003 թվականի հերթական համարում հրատարակել է դոկտոր Հ. Քավուսիի գրությունը՝ իրանահայ անվանի

¹ Տե՛ս նույն տեղում, 29.11.2001, թիվ 253 (18475):

² Տե՛ս նույն տեղում, 07.12.2003, թիվ 259 (19042):

³ Տե՛ս նույն տեղում, 24.10.2001, թիվ 223 (18445):

երգիչ Վիզենի՝ մահվան կապակցությամբ: Նա գրում է. «... 50 տարի դու և քո անբաժան ընկերը՝ կիթառը, շունչ ու ոգի պարզևեցիք երաժշտասեր երկու սերնդի: Ինչ ծառայություն տրանից ավել քո երկրի երաժշտությանն ու ժողովրդին: Դեռ կենդանության ժամանակ առասպել դարձար: Իբրև միջ՝ կմնաս այս երկրի երաժշտության միջոլոգիայում...»²:

Թեհրանում լույս տեսնող պարսկերեն «Էրթեմար» օրաթերթը 2003 թվականի փետրվարին երեք շաբաթ անընդմեջ կիրակի օրերի իր 6-րդ էջում տպագրել է «Համվաթան» («Հայրենակից») խորագրով մի սյունակ, որի նպատակն էր իրանցի հասարակությանը ծանոթացնել հայ հայրենակիցներին: Սյունակներում տպագրվել են տեղեկություններ նաև իրանահայ անվանի գեղանկարիչ Երվանդ Նահապետյանի մասին³: Նշված աշխատանքը կատարել է ՀՈՒՄԿ-ի հովանավորությամբ լույս տեսնող «Պայման» հանդեսի անձնակազմը:

Այսպիսով, իրանական մամուլն իրանահայ գործիչների մասին ժամանակ առ ժամանակ հանդես է եկել որոշ հրապարակումներով, որոնք վկայում են իրանական հասարակության մի մասը կազմող հայության հանդեպ հետաքրքրվածությունը: Դրանց մի մասն ունի պատմական, մի մասը հայ անվանի գործիչներին ու մշակույթի երախտավորներին գնահատելու և արժևորելու, իսկ մյուս մասն էլ պարզապես հիշելու ազնիվ նպատակներ:

Հարկ է նշել, որ գործիչների մասին ներկայացնելիս

¹ Վիզեն Տերստեյան ծնվել է 1929 թ., Համադանում, մահացել՝ 2003 թ., Լոս Անջելեսում ԱՄՆ: Իրանահայ էստրադային երգիչ և դերասան, հայտնի էր որպես «Իրանական փոփի արքա» և «Ջազի սուլթան»: Հայտնի է եղել ամբողջ Մերձավոր Արևելքում: Վիզենը երգել է պարսկերեն և հայերեն: Կյանքի վերջին տարիներն անցկացրել է ԱՄՆ-ում: Մանրամասն տե՛ս http://news.bbc.co.uk/2/hi/middle_east/3218885.stm դիտումը 07.10.2022:

² Տե՛ս «Ալիք», 14.12.2003, թիւ 265 (19048):

³ Տե՛ս նույն տեղում, 23.02.2003, թիւ 40 (18823):

հաճախ իրանցի մտավորականները ակամայից անդրադարձել են նաև հայ համայնքին, նրա անցյալին ու ներկայի խնդիրներին, իրանական հասարակական-քաղաքական կյանքում հայության ունեցած դերակատարության հարցին: Ուշագրավ է այն կարևոր հանգամանքը, որ հայության հանրահռչակման գործում մասնակցում են նաև համայնքային կառույցները, ինչպիսին՝ Թեհրանում գործող Հայկական հարցերի ուսումնասիրության կենտրոնը և առանձին անհատներ, ինչպիսին Անդրանիկ Հովույանն է:

KAREN MKRTCHYAN
Ph.D. in History, Armenia

THE IRANIAN PRESS ABOUT IRANIAN ARMENIAN FIGURES

SUMMARY

Keywords: Iran, Iranian press, Iranian-Armenian figures, architects, buildings, painter, Persian publications, Iranian society.

The Iranian press has from time to time made some publications about Iranian-Armenian figures, which prove their interest in Armenians, who are a part of Iranian society. Some of them have historical goals, some of them have noble goals of evaluating and appreciating famous Armenian figures and people of culture, and the other part of them is simply to remember.

It should be noted that when presenting about figures, Iranian intellectuals often unintentionally referred to the Armenian community, its past and present problems, and the role of Armenians in Iranian social and political life. It is noteworthy that community structures, such as the Center for the Study of Armenian Issues operating in Tehran, and some individuals represented by Andranik Hovuyan also participate in the popularization of

ИРАНСКАЯ ПРЕССА ОБ ИРАНО-АРМЯНСКИХ ДЕЯТЕЛЯХ

РЕЗЮМЕ

Ключевые слова: Иран, иранская пресса, ирано-армянские деятели, архитекторы, здания, художники, персидские издания, иранское общество.

В иранской прессе время от времени появляются публикации об ирано-армянских деятелях, что свидетельствует об их интересе в армянам, являющимся частью иранского общества. Часть из них преследует исторические цели, часть - благородные цели оценки и признания известных армянских деятелей и деятелей культуры, а часть - просто память.

Следует отметить, что, приводя деятелей, иранские интеллектуалы часто непреднамеренно ссылались на армянскую общину, ее прошлые и настоящие проблемы, роль армян в иранской общественно-политической жизни. Примечательно, что в популяризации армянства участвуют и общественные структуры, такие как действующий в Тегеране Центр изучения армянских вопросов, и отдельные лица в лице Андраника Овуяна.

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ
ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՋԱՎԱԽՔԻ ՎՐԱ
(1991 – 2021 ԹԹ.)

Հիմնաքառեր՝ Վրաստան. տեղական ինքնակառավարման համակարգ. պրեֆեկտ. համամասնական և մեծամասնակցություն տրակարգեր, վարչական միավորներ, ժողովներ, Ջավախքի ազգաբաշխական պատկեր, հայեր, վրացիներ

Պրեֆեկտուրայի ինստիտուտի ձևավորումը Վրաստանում

Անկախացման գործընթացին զուգահեռ 1991 թ. հունվարի 29-ի իր հերթական նիստում Վրաստանի Գերագույն և խորհուրդն (այսուհետ՝ ԳԽ) ընդունեց տեղական ինքնակառավարման մասին օրենք¹: Այդ օրենքի համաձայն՝ հանրապետական ենթակայության քաղաքներում և շրջաններում այսուհետև կառավարման գործառույթներն իրականացնող անձ էր լիսելու պրեֆեկտը, որը կենսագործելու էր վերադաս մարմինների որոշումները:

Պրեֆեկտուրայի ինստիտուտի ձևավորումը կտրուկ ազդեցություն ունեցավ Ջավախքի հայաբնակ շրջանների տեղական ինքնակառավարման վրա՝ տեղիք տալով հասարակաեան բուռն զարգացումների, այլազգի (հույն, վրացի) պրեֆեկտների նշանակումը 1991 թ. ողջ ընթացքում (մինչև նոյեմբերի 11-ին ջավախահայության պահանջների բավարարումը և հայազգի պրեֆեկտի նշանակումը)²՝ մեծ հուզումներ առաջացրեց հայաբնակ Ջավախքի շրջաններում: Չընդունելով

¹ Օրենքը պաշտոնապես կոչվում էր «Անցումային ժամանակաշրջանում տեղական կառավարման մասին» Վրաստանի Հանրապետության օրենք (տե՛ս «Վրաստան», 14.03.1998):

² «Աւսւնջակ», 04.12.1991, թիվ 12:

պրեֆեկտուրայի իշխանությունը՝ 1991 թ. մարտին Ջավախքում ձևավորվեց մի յուրօրինակ «ժամանակավոր կառավարություն»՝ Ժողովրդական Լիազորների խորհուրդ անվամբ¹: Վրաստանի իշխանությունների այս քաղաքականության պատճառով Ջավախքում դեռ 1991 թ. փետրվարից ծայր առան հուզումներ:

1991 թ. մարտի 31-ին՝ ԽՍՀՄ պահպանման հանրաքվեի օրը, Վրաստանում (անցումային փուլում) առաջին անգամ անցկացվեցին տեղական ինքնակառավարման մարմինների՝ տեղական Ժողովների (Սակրեբուլոնների) ընտրությունները²: 1992 թ. իշխանափոխությունից հետո պրեֆեկտուրայի ինստիտուտը վերացվեց, և տեղերում ամբողջ իշխանությունը փոխանցվեց շրջանային վարչության նախագահներին:

1993 թ. հոկտեմբերից սկսվեց պետության ղեկավարների լիազորների և երկրամասային վարչությունների ինստիտուտի ձևավորումը: 1993-1995 թթ. ստեղծվեցին առաջին մակարդակի վարչական միավորները. երկիրը բաժանվեց 9 տարածաշրջանի, 2 ինքնավարության (Աբխազիա, Աջարիա) և մայրաքաղաք Թբիլիսիի: Յուրաքանչյուր տարածաշրջանում նշանակվեց պետության ղեկավարի (հետագայում՝ նախագահի), լիազոր-ներկայացուցիչ (նահանգապետ)³: Ի

¹ Մարգսյան Վ. Դ., Սամցխե-Ջավախք-Թոեղըը հայ-վրացական հարաբերությունների հոլովություն (1980-ական թթ. վերջ – 1990 –ական թթ.), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ինստ. հրատ., 2006, էջ 88-98): Փաստորեն, վերոնշյալը մի յուրատեսակ «ժամանակավոր կառավարություն» էր. ժողովրդի կամքն արտահայտող շրջանային իշխանություն Ժողովրդական Լիազորների խորհուրդ անվամբ, որի կազմի մեջ մտնում էին 26 հոգի (տե՛ս «Ազգ», 30.03.1991):

² Անկախացման գործընթացով անցնող Վրաստանում 1991 թ. ընդունվեցին տեղական ինքնակառավարման ոլորտը կանոնակարգող 3 օրենք և 1 որոշում:

³ Վրաստանի նոր վարչատարածքային բաժանմամբ՝ Հարավային Օսեթիայի նախկին ինքնավար մարզի տարածքները ներառվեցին 4 նորաստեղծ նահանգների մեջ:

տարբերություն ՀՀ-ի՝ Վրաստանում չլուծարվեցին նախկին սովետական շրջանները, և դրանք, որոնք թվով շուրջ 7 տասնյակ էին, որպես տեղական ինքնակառավարման 2-րդ մակարդակի միավորներ, առանձին շրջանների (քաղաքապետարաններ, մունիցիպալիտետներ) տեսքով ներառվեցին նորաստեղծ նահանգների մեջ: Երկու ինքնավար հանրապետություններում՝ Աջարիայում և Աբխազիայում,¹ ևս պահպանվեցին նախկին սովետական շրջանները, փոխարենը՝ Հարավօսեթական ինքնավար մարզի լուծարման և դրա տարածքը 4 նորաստեղծ նահանգների մեջ բաշխելու հետ մեկտեղ լուծարվեցին նաև նրա 4 շրջանները:

Էդուարդ Շևարդնաձեի՝ 1994 թ. հուլիսի 31-ի թիվ 237 հրամանագրով կազմավորվեց նաև Սամցխե-Ջավախքի նահանգը: Սամցխե (Ադիգենի, Ախալցխայի և Ասպինձայի շրջաններ) և Ջավախք (Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջաններ) պատմական գավառների հետ մեկտեղ այս նահանգի մեջ ներառվեց նաև գերակշիռ մասով վրացաբնակ Բորժոմի շրջանը: Ընդհակառակը, նահանգից դուրս մնաց հիմնականում հայերով և հույներով բնակեցված մեկ այլ շրջան՝ Ծալկայի շրջանը (պատմական Թոեղք գավառը)²:

1995 թ. օգոստոսի 24-ին ընդունվեց Վրաստանի Սահմանադրությունը: Եվ քանի որ դեռևս չէին կարգավորված Աբխազիայի և Հարավային Օսեթիայի հետ հարաբերությունները (դրանք փաստացի սևկախ էին), Սահմանադրու-

¹ Վրաստանի դե յուրե փաստաթղթերով Աբխազիայում պահպանվել են խորհրդային 6 շրջանները՝ Գագրայի, Գուդաութի, Մուխոմի, Գուլրիփշի, Օչամչիրայի և Գալիի: 1994 թվականին Օչամչիրայի և Գալիի որոշ տարածքներում Աբխազիայում ձևավորվեց 7-րդ՝ Տովարչելի շրջանը: Աբխազիայի այս նոր վարչաբաժանումը չի ճանաչվել Վրաստանի կողմից:

² Խնդիրն առավել մանրամասնորեն տես Սարգսեան Վ. Դ., Ջալախքը յետխորհրդային Վրաստանի վարչատարածքային բաժանման գործընթացներում, Հայկագեան հայագիտական հանդես, թիվ 38, Պեյրուք, 2018, էջ 487-508:

թյան մեջ երկրի տարածքային կարգավորման հարցը բաց մնաց: Սահմանադրության 2-րդ հոդվածի 3-րդ կետում նշված էր, որ «*Վրաստանի պետական-տարածքային կառուցվածքը սահմանվելու է սահմանադրական օրենքով երկրի ամբողջ տարածքի վրա Վրաստանի իրավասության վերականգնումից հետո լիազորությունների սահմանափակման սկզբունքի հիման վրա*»¹: Հետևաբար, փաստացի գոյություն ունեցող երկրամասային բաժանման իրավաբանական ձևակերպումը չկայացավ: Այս հարցը նույն պատճառներով չի կարգավորված մինչ օրս:

1997 թ. վերջին մշակվեց և 1998 թ. հունիսի 25-ին Վրաստանի նախագահի կողմից ստորագրվեց «*Տեղական ներկայացուցչական մարմինների ժողովների ընտրությունների մասին*» Վրաստանի օրենքը²: Նույն թվականին ընդունվեց նաև «*Տեղական ինքնակառավարման և կառավարման մասին*» Վրաստանի օրգանական օրենքը³: Նշված օրենքներով (Վրաստանի Սահմանադրության 2-րդ հոդվածի 3-րդ կետի համապատասխան)՝ մինչև Վրաստանի տարածքային պետական կառուցվածքի մասին սահմանադրական օրենքի ընդունումը (որը, ինչպես բազմիցս նշել ենք, մինչև այսօր էլ չի ընդունված), սահմանվում էին

¹ 2018 թ. մարտի 23-ին ստորագրված Վրաստանի N 2071 սահմանադրական օրենքով վերաիմբրացված նոր Սահմանադրության մեջ նշված ձևակերպումը տեղափոխվել է 7-րդ հոդվածի 3-րդ կետ և ստացել հետևյալ տեսքը. «*Վրաստանի պետական-տարածքային կառուցվածքը վերանայվելու է Վրաստանի սահմանադրական օրենքով երկրի ամբողջ տարածքի վրա Վրաստանի իրավասության լիակատար վերականգնումից հետո լիազորությունների սահմանափակման սկզբունքի հիման վրա*»:

² Закон Грузии "О выборах местных представительных органов - Собраний", Тбилиси, 25 июня, 1998 г., N 1476-ІІс (личный архив автора). Սույն օրենքով ուժի կորցրած ճանաչվեց 1991 թ. Զվիաղ Գամսախուրդիայի օրոք ընդունված «*Վրաստանի Հանրապետության տեղական իշխանությունների մարմինների ժողովների ընտրությունների մասին*» օրենքը:

³ Օրենքն ամբողջությամբ տե՛ս «**Վրաստան**», 14.03.1998:

տեղական ինքնակառավարման և կառավարման մարմինների ստեղծման և գործունեության հիմունքները:

1998 թ. նոյեմբերի 15-ին Վրաստանում թվով 2-րդ ՏԻՄ ընտրություններն անցկացվեցին այս օրենքներով¹: Նշենք նաև, որ մինչ այս ընտրությունները, 1995 թ. Սահմանադրության ընդունումից հետո երկրամասում փաստացի դադարեցված էին Ջվիաղ Գամսախուրդիայի օրոք (1991 թ.) ընտրված տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, իսկ նոր Սահմանադրությանը համաձայն օրենքների ընդունման դրանով իսկ՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ձգձգման պատճառով մի քանի տարի տեղում չէր կարգավորված ժողովրդական լայն զանգվածների տեղական ներկայացուցչական մարմինների մաս կազմելու գործընթացը, որն էլ, իր հերթին, երկրամասում առաջացնում էր բարոյահոգեբանական անառողջ մթնոլորտ²:

1998 թ. հունիսի 25-ին ընդունված վերոնշյալ օրենքով եթե տվյալ բնակավայրում ընտրողների թիվն անցնում է 2000-ից, և այդտեղ առաջադրվող թեկնածուն չէր պատկանում որևէ

¹ 1998 թ. հունիսի 25-ին ընդունված «Տեղական ներկայացուցչական մարմինների Ժողովների ընտրությունների մասին» Վրաստանի օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն «տեղական ներկայացուցչական մարմինների (Ժողովների) առաջին ընտրությունները չեն անցկացվում Աբխազիայի ինքնավար հանրապետության և նախկին Հարավային Օսեթիայի ինքնավար մարզի այն տարածքներում, որտեղ չի տարածվում Վրաստանի պետական բարձրագույն մարմինների իրավասությունը»: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն «տեղական ներկայացուցչական մարմինների (Ժողովների), առաջին ընտրություններին չեն մասնակցում այս ընտրողները, որոնք բռնի տեղահանված վտարված են Աբխազիայի ինքնավար հանրապետությունից և նախկին Հարավային Օսեթիայի ինքնավար մարզից»:

² Տե՛ս այդ մասին Ջավախքի «Ակունք» կազմակերպության ներկայացուցչուհի Մ. Թոթոյանի և Դ. Ռեստակյանի ստորագրությամբ և 19.07.1998 թ. թվագրությամբ կազմած փաստաթուղթը «Վրաստանի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների մասին» վերտառությամբ (հեղինակի անձնական արխիվ):

կուսակցության, իրավունք չունեք առաջադրվելու: Այստեղ առկա էր քաղաքացու և՛ ընտրելու, և՛ ընտրվելու իրավունքի խախտում: Մա՛ մի կողմից: Մյուս կողմից՝ սույն օրենքով խախտվում էր արդարությունը Սամցխե-Ջավախք-Ծալկայի հայաբնակ շրջաններում: Բանն այն էր, որ նախ և առաջ այս շրջաններում չէր գրանցված հայկական ոչ մի կուսակցություն, և ընտրությունների ժամանակ իրենց գործն էին տեսնելու վրացական կուսակցությունները, իսկ մեծամասնական ընտրակարգով ընտրելու և ընտրվելու հնարավորությունից օգտվելիս առաջ էր գալիս ևս մեկ օրինախախտում, որը պարզապես անհնար էր դարձնում մեծամասնական ընտրակարգով ընտրելու և ընտրվելու հնարավորությունը: Դա կապված էր այն բանի հետ, որ այս շրջաններում տեղական «Ժողովները» ձևավորված էին մի քանի գյուղերից, ինչն էլ իր հերթին, «ապահովում էր» ձայների՝ 2000-ից ավելի լինելը, իսկ մեկ «Ժողովը» համարվում էր մեկ ընտրատարածք¹:

Այս ամենի հետ մեկտեղ, երկրի դեկավար Է. Շևարճնաձեն իրեն վերասպահեց շրջանների գործադիր

¹ Ջավախքում հայոց լեզվին իրավական կարգավիճակ չտրամադրելու պայմաններում փորձ արվեց խնդիրը կարգավորել 1998 թ. հունիսի 25-ին ընդունված «Տեղական ներկայացուցչական մարմինների՝ Ժողովների ընտրությունների մասին» Վրաստանի օրենքի 37-րդ հոդվածով, որով երկրի ոչ վրացաբնակ շրջաններում անհրաժեշտության դեպքում թույլատրվեց քվեաթերթիկները տպագրել նաև այն լեզվով, որը հասկանալի է տվյալ ընտրատարածքի բնակչության մեծամասնությանը. «Տեղական ներկայացուցչական մարմինների Ժողովների առաջին ընտրությունների ժամանակ համապատասխան ընտրատարածքային հանձնաժողովն ապահովում է քվեաթերթիկների պատրաստումը պետական լեզվով, իսկ անհրաժեշտության դեպքում նաև ընտրատարածքի բնակչության մեծամասնությանը հասկանալի այլ լեզվով» (հոդված 37):

մասնական ընտրակարգով անցկացվող ընտրությունների հիման վրա: Նշվում էր նաև, որ Թբիլիսիում տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմնի՝ Սակրեբուլոյի (Ժողովի) ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով: Իսկ քաղաքում, որտեղ ընտրողների թիվը 500-ից ավելի է, և շրջանի կազմի մեջ չմտնող քաղաքում, բացառությամբ Թբիլիսիի և Փոթիի, կառավարիչն (գործադիր մարմնի ղեկավար, գամգերելի) ու քաղաքապետն ընտրվում են մեծամասնական ընտրակարգով¹:

Այդուհանդերձ, 2002 թ. ՏԻՄ ընտրությունները կրկին արտացոլեցին Ջավախքի շրջանների՝ ազգաբաշխական պատկերին անհամահունչ Շրջանային ժողովների (Սակրեբուլոների) ձևավորմանն առնչվող խնդիրները²: Այսպես՝ Ախալքալաքի շրջանում բոլոր վրացաբնակ գյուղերը (օրինակ, Հոկամ՝ 443 ընտրող, Չունչխա՝ 243, Պրտենա՝ 216, Գոգաշեն՝ 299, Կոթելխա՝ 315 և այլն) ունեին առանձին Գյուղական ժողովներ, այն դեպքում, երբ հայաբնակ գյուղերի պարագայում «Ժողովները» ձևավորվում են մի քանի գյուղերից: Փաստենք նաև, որ հայաբնակ այդ գյուղերից յուրաքանչյուրն, առանձին վերցված, ավելի շատ ընտրող ուներ, քան նշված վրացական գյուղերը: Այս անարդարությունը բերում էր նրան, որ, օրինակ, Ախալքալաքի Շրջանային ժողովում հավասար ձայներով էին ներկայացված 10.000 բնակիչ ունեցող Ախալքալաք քաղաքը, 6.000 բնակիչ ունեցող Կարտիկամի գյուղական «Ժողովը» և 400 բնակիչ ունեցող վրացական Չունչխա գյուղը: Արդյունքում՝ ստացվում էր այնպես, որ 96 % հայերով բնակեցված Ախալքալաքի շրջանային ժողովի 22 մեծամասնական տեղերից 5-ը ազգությամբ վրացիներ էին զբաղեցնում, մինչդեռ, ըստ համամասնության, Ախալքալաքի շրջանի վրացական

¹ Վրաստանի ընտրական օրենսդրության վերլուծություն, առանց հրատարակման վայրի և թվականի, էջ 73-80:

² Ստեփանեսև Խ. Ռ., Ջաւախքը մէկ տարում, «Դրօշակ», Ե., 2002, թիւ 4, էջ 47 - 56:

ხამაყნპრ ჯრჯანაყინ ძოგოვიომ აყსაპ ლ ნუნუნაპ 1
ნერკაყაგოიგჩყ:

სეგასან ინუნასკათაყარმან მასინ ბყროყასკან
იაროთიასინ ყრასოთანბ მჟანსოიღ [ყრასოთანღ სეგასან
ინუნასკათაყარმან მასინ ბყროყასკან იაროთიან (1985 ზ.
ხოკოსნდრერი 15, სოროაყროგ) სოორაგრელ ლ 2002 ზ.,
ყაყლერაგრელ 2004 ზ.: აყნ ბრკრბ თარაბჰრომ ნოძბ მდღ მთაყ
2005 ზ. ააყრბბ 1-ბგ] სოპ ბრასყბდაკ ჰბლყორბგ ბრკრომ:
ოაყმანასაყროყად აყო ბროგოიყაბდ მჯაკყდგ ს 2005 ზ. ყლერბინ
ყრასოთანბ ბოპბროგარანბ კოფბგ გნგონყდგ სბს სოპ
ოტუნპრ², ნრბ ხბნპბ ყრა 2006 ზ. აჯანანღ ყრასოთანოი მბღბ
ნუნბგან მბღასკან ინუნასკათაყარმან სოპ (ჯოპრობღ)
გნოპოიბოინბბრღ:

სოპ ოტუნპნ არმასოასკანოტუნბ ყბბსგ ბრკრომ აოკა
ინუნასკათაყარმან ხამასკარგღ: სბღბ ნუნბგაყ გოიოიბონ
ნუნბგოღ ინუნასკათაყაროიმბბერი ბოჯოპრაგოი, ს მბნჯ აყო
გოპბბღ ინუნასკათაყარმან ბერობღ მასკარგასკბ 1004
მჟაყობრბ (საბსკბინ სოყბბოასკან გოიოგასკან ბოპბოპოტბბბრღ
ხბმანასკანოი გარბბლ ლბნ მბღასკან ინუნასკათაყარმან
ათანბბინ მჟაყობრბბრ ბოგოიყბბრ) ყბბბარბნ ბსაყობყდგ
გნგამბნღ 68-ღ: ლსოპყდგბინ მჟაყნ ჯრჯანაყინ გნღბანოპ
ინუნასკათაყარმან მარამბინბბრ, აყბბნპნ ბრჯანაყინ
ძოგოიყბბრ (სასკრბბოიყბბრ), გრანგ ხბნპბ ყრა ჯრჯანაყინ

¹ ჯაყასოთანღ სეგასან ინუნასკათაყარმან მასინ ბყროყასკან
იაროთიან ყაყლერაგრელ ლ 2002 ზ.ყასკანბინ:

² საქართველოს ორგანული კანონი ადვოკატობრივი თვითმმართველობის
შესახებ, თბილისი, 2005 წლის 16 დეკემბერი, №2304-რს (სეგასან
ინუნასკათაყარმან მასინ ყრასოთანბ ორგანოასკან ოტუნპ, 2005 ზ. 16
გესკოსნდრერი, №2304-რს),

https://matsne.gov.ge/ka/document/view/27802?publication=36&fbclid=IwAR1soOSrEBXrMkocIuiA85aMZAcj0d6oFO8yh0iclmKsSThr5rVUUHCQwfo%23part_14#!

სოყნ ოტუნპბ 68-ბო ხოღყადბ 3-ბო კბბბ ხოიმადაყნ ნოღ კოპგრაბ ბანასყდგ
1998 ზ. გნგონყად «სეგასან ინუნასკათაყარმან ს კათაყარმან მასინ»
ყრასოთანბ ორგანასკან ოტუნპღ:

վարչություն (գործադիր մարմին): Շրջանային ժողովը, փաստորեն, դարձավ մի յուրօրինակ խորհրդարան: Շրջանային վարչությունը շրջանի կազմի մեջ մտնող բնակավայրերում կամ բնակավայրերի խմբում նշանակեց լիազորներ, այսինքն՝ իր գործառույթներն իրականացնող անձանց: Սակրեբուլոն՝ Շրջանային ժողովը, ընտրվեց հետևյալ սկզբունքով. շրջաններում համամասնական ընտրակարգով ընտրվեց 10 անդամ, իսկ շրջանի կազմի մեջ մտնող նախկին Սակրեբուլոներից (գյուղական, թեմական ժողովներ)՝ մեկական մեծամասնական: Մեծ քաղաքների ինքնակառավարվող սակրեբուլոյում ընտրվեցին համամասնական կարգով՝ 10 և մեծամասնական կարգով՝ 5 անդամներ:

Օրինակ՝ Ախալքալաքի շրջանում ձևավորվեց մեկ ժողով, որը համալրվեց կուսակցական ցուցակներով (համամասնական ընտրակարգ) ընտրված 10 և Ախալքալաքի շրջանի կազմի մեջ մտնող ինքնակառավարումների (դրանք 22-ն են) մեկական մեծամասնական պատգամավորով, այսինքն՝ Շրջանային ժողովի պատգամավորների ընդհանուր թիվը կազմեց 32: Գյուղական հիմնախնդիրները, ըստ օրենքի, կարգավորվում էին ինչպես ընտրված պատգամավորների, այնպես էլ գործադիրի (որը ժողովի կողմից, ըստ օրենքի, օժտված է լինելու տեղում ծառայություններ իրականացնելու լիազորություններով) միջոցով: Ինքնակառավարման մարմնի գործադիր օրգանը հանդիսացավ վարչությունը: Նոր օրենքով վարչության նախագահին (քաղաքապետին) ընտրում էր Շրջանային ժողովը (այսինքն՝ ընտրությունը դարձավ անուղղակի):

Չավախքի պարագայում կարելի է ասել, որ նոր օրենքն իրավիճակի վրա չունեցավ էական ազդեցություն: Թեև գյուղական շրջաններում ժողովները շատ աղքատ էին, բայց փոխանակ դրանք հզորացվեին, ընդհանրապես վերացվեցին, և ինքնակառավարման մարմինն էլ ավելի հեռացավ ժողովրդից, չնայած, ըստ Եվրոպական խարտիայի, որքան ինքնակառա-

վարումը մոտ է ժողովրդին, այնքան ավելի լավ որակի է: Շրջանային ժողովներում ազգային կազմի անարդարացի հարաբերակցությունը դարձյալ մնաց նույնը: Օրինակ Ախալքալաքի շրջանի սակրեբուլոյի 32 անդամից 10-ը, ըստ օրենքի, կուսակցությունների հայեցողությամբ ներկայացված անձինք էին, հինգը՝ ազգությամբ վրացի, և միայն 17-ը հայազգի: Նույն պատկերը ձևավորվեց նաև 2010 թ. տեղի ունեցած 5-րդ ՏԻՄ ընտրությունների արդյունքում:

2011 թ. վերջին Վրաստանում ընդունվեցին նոր *Ընտրական*¹, 2014 թ. *Տեղական ինքնակառավարման մասին* նոր օրենսգրքերը², որոնք, ենթարկվելով մի շարք փոփոխությունների, գործում են մինչ օրս: Այս օրենքների հենքի վրա 2014, 2017 և 2021 թվականներին անցկացվեցին, համապատասխանաբար, տեղական ինքնակառավարման մարմինների 6-րդ, 7-րդ և 8-րդ ընտրությունները Վրաստանում:

Սկսած 2014 թվականից՝ բացի Շրջանային ժողովներից, ընտրովի դարձան նաև Վրաստանի շրջանների (քաղաքապետարաններ, մունիցիպալիտետներ) ղեկավարները: Միաժամանակ՝ 7-ով ավելացվեց ինքնավար կարգավիճակ ունեցող քաղաքների թիվը (Վրաստանի «*Տեղական ինքնակառավարման մասին*» 2005 թվականի օրգանական օրենքով այդպիսիք էին **Թբիլիսին, Ռուսթավը, Բուքայիսը, Փոթին և Բաթումը**). ՏԻՄ նոր օրենքով ինքնակառավարվող քաղաքի

¹ Տեղափոխված սահմանափակ տեղեկություններ, 2011 թ. 27 դեկտեմբեր, № 5636-Ր (Վրաստանի Ընտրական օրենսգրք, Թբիլիսի, 2011 թ. դեկտեմբերի 27, № 5636-ՌՄ), <https://matsne.gov.ge/ka/document/view/1557168?publication=70#!>:

² Տեղափոխված սահմանափակ տեղեկություններ, 2014 թ. 5 օգոստոս, N 1958-Ու (Վրաստանի օրգանական օրենք, Տեղական ինքնակառավարման օրենսգրք, 2014 թ. փետրվարի 5, № 1958-Ու), https://matsne.gov.ge/ka/document/view/2244429?publication=59&fbclid=IwAR14NNEUJXpx66kE86Ormy5NxDXKqbTbWJ_E9uPzAumZawiin7F9qsiOBiE:

կարգավիճակ ստացան նաև Թելավը, Օգուրգեթը, Ջուզդիդը, Գորին, Ամբրուլաուրը, Մցխեթան և Ախալցխան: Այդուհանդերձ, հետագա փոփոխություններով վերստին ինքնակառավարվող քաղաքներ մնացին միայն առաջին խմբի 5 քաղաքները Թբիլիսին, Ռուսթավը, Քութայիսը, Փոթին և Բաթումը (հոդված 151, 152):

2021 թ. ՏԻՄ ընտրությունները Վրաստանում

Տեղական ինքնակառավարման մարմինների վերջին (8-րդ) ընտրությունները Վրաստանում տեղի ունեցան 2021 թ. հոկտեմբերի 2-ին, որին մասնակցեց 48 ուժ: Մինչ այդ՝ 2020 թ. հոկտեմբերի 31-ի կայացած խորհրդարանական ընտրություններից հետո Վրաստանում սկսված քաղաքական ճգնաժամի հաղթահարման փորձ էր 2021 թ. ապրիլի 19-ին «Վրացական երազանքի» և ընդդիմադիր կուսակցությունների միջև ստորագրված համաձայնագիրն¹ այն մասին, որ, եթե 2021 թ. հոկտեմբերին Վրաստանում Տեղական ինքնավարության մարմինների ընտրություններում Վրացական երազանքը ստանա 43%-ից սլակաս ձայն, ապա 2022 թ. ընթացքում պետք է տեղի ունենան արտահերթ ընտրություններ: Արտահերթ ընտրություններ անցկացնելու հարցի վերաբերյալ սույն համաձայնագիրը ներկայացվեց Եվրոպական խորհրդի նախագահ Շարլ Միշելի առաջարկով²: Այդուհանդերձ, 2021 թ. հուլիսի 28-ին «Վրացական երազանքի» նախագահ Իրակլի Կոբախիձեն հայտարարեց, որ կուսակցությունը դուրս է գալիս ապրիլի 19-ի համաձայնագրից, քանի որ, ըստ նրա, համաձայնագրի ստորագրումից նույնիսկ 100 օր անց, ընդդիմադիր պատգամավորների կեսից ավելին այն չեն ստորագրել: *«Ակնհայտ է, որ այն սպառել է իրեն և ուստի այն չեղյալ է հայտարարվել»*:

¹ Համաձայնագրի տեքստը տե՛ս

https://ceas.europa.eu/sites/default/files/mediacia_samomavlo_gza_sakartvelostvis.pdf:

² Новое предложение Евросоюза по преодолению политического кризиса в Грузии, <https://civil.ge/ru/archives/413928>.

Համաձայնագրին միակողմանի հավատարմությունը վիրավորական է մեր կուսակցության համար, և մեր ընտրողները չեն ների մեզ», - հայտարարել էր Ի. Կոբախիձեն¹:

2021 թ. աշնանը կայացած ՏԻՄ ընտրությունները տեղի ունեցան երկու փուլով: Հոկտեմբերի 2-ին կայացած առաջին փուլի արդյունքերով «Վրացական երազանք-Դեմոկրատական Վրաստան» իշխող ուժը ստացավ 824.755 ձայն կամ 46.747%-ը²: Ընտրությունից մի քանի օր անց՝ հոկտեմբերի 6-ին, Եվրախորհրդարանի պատգամավորները համատեղ հայտարարություն հրապարակեցին, ըստ որի՝ ընդունում են Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) հրապարակած տվյալները, ըստ որոնց «Վրացական երազանք»-ի թեկնածուները հավաքել են ձայների ավելի քան 46%-ը և հաղթահարել 43%-ոց ընտրաշեմը, որը սահմանված էր սուպրիլի 19-ի Շառլ Միշելի պայմանագրով³:

Հոկտեմբերի 30-ին Վրաստանում տեղի ունեցավ ՏԻՄ ընտրությունների երկրորդ փուլ: Քաղաքացիներն ընտրեցին 15 շրջանների (մունիցիպալիտետներ կամ քաղաքապետարաններ) և 5 ինքնակառավարվող քաղաքների Թբիլիսիի, Բաթումի, Քութաիսի, Փոթիի, Ռուսթավի քաղաքապետերին, քանի որ նշված տեղերում թեկնածուներից ոչ մեկը չէր կարողացել բավարար ձայներ (50%-ից ավելի) հավաքել առաջին փուլում հաղթելու համար: (Փաստենք, որ հենց առաջին փուլում 44 շրջանների ղեկավարների ընտրություններում հաղթել էին իշխող թիմի թեկնածուները): Երկրորդ փուլում Վրաստանի 24 ընտրատարածքներում ընտրություններ տեղի ունեցան նաև 42 մեծամասնական պատգա-

¹ Грузинская мечта выходит из Соглашения от 19 апреля.

<http://civil.ge/ru/archives/434279>.

² მუნიციპალიტეტის ორგანოთა 2021 წლის 2 ოქტომბრის არჩევნები <https://results.cec.gov.ge/#/ka-ge/election/45/dashboard>.

³ Եվրախորհրդարանը ճանաչել է Վրաստանում կայացած ընտրությունների արդյունքները. <https://jnews.ge/am/?p-64965>:

მავლიერნი (ჯრჯანაჲინ ძოღოქნიერი ანღანნიერი) ენთრო-
ქონნიერ (ღრანჲ ჯეჲალ ღინ ოანსაჯქელ თაჲერი
სჲათოანნიერი):

ერიკოროქ ფიოლიოთ ხიანსაკან რიკოი მრგსკიგ ნოძერი ღინ
ხქუოღ «წრასგსკან რეაოანჲე» ნ ენღეჲიმაღეჲრ შԱჯ-ე: რიოქ
5 ხიანსაკანოაქარქოღ քაოღჲენრიოთ ხაოღჲეგ ხქუოღ ნოძე: 2-
როქ ფიოლიოთ ჲქოქ 15 ჯრჯანნიერიოთ სს ხიანსაკან მრგსკიგ
ნოძერიღ ხქუოღ «წრასგსკან რეაოანჲე» ნ ენღეჲიმაღეჲრ შԱჯ-ნ
ღინ: აჲსთეღ სს ხაოღჲანსაკეღ გრეჲე ამრეოღეოქოაქე ხქუოღ
ნოძინს ჲე²:

ოაქაქჲეღ` 2021 ჲ. შრუ ენთროქონნიერი ნაქოქოქსქინ

2021 ჲ. ხოქთემრერიხს კაჲსგსო შრუ ენთროქონნიერი
ნაქოქიხს ხერიჲსკან ფიოქოქოქოქან ნიჲარქქღე წრასთანხი
ენთრასკან იქენსაღეჲეღ, ს ფიოქოქოქოქონნიერიგ მქელი
რადმარქიქ თღერიოთ მქაქოქიქეგინ ჯრჯანნიერი (მონიგე-
აქაქთენნიერი) 3-როქ მსკაროქსქი ხიანსაკანოაქარქოღ
მქაქოქიქი ხენჲი ქრს ოსაქოქად მნოამასნსკან
ენთრასთარაოძენრიღ, ხიჯე არეოქონნიერი ღ, იქინსკ, აქაქ-
ქაქაქი ჯრჯანაჲინ ძოღოქიოთ სქადღეგ მნოამასნსკან
ენთრასკარგოქ ენთრქად აქათგამაქოქიქი ჲიქეღ` 24-იგ
ღანსაქოქ 14: ფოქარენღ` აქაქქაქაქი ჯრჯანაჲინ ძოღოქი
აქათგამაქოქიქი ჲიქეღ 38-იგ ღაროაქ 42` ხამამასნსკან
სკარგოქ ენთრქად აქათგამაქოქიქი ჲიქი აქელაღმან
ხაჯქინ (14-ი ქოქარენს ღაროაქ 28)³:

¹ მუნიციპალიტეტიზ ორგანოთა 2021 წლის 30 ოქტომბრის არჩევნები - II
ტური, თვითმმართველი ქალაქის მერი, https://results.cec.gov.ge/#/ka-ge/election_46/dashboard:

² მუნიციპალიტეტიზ ორგანოთა 2021 წლის 30 ოქტომბრის არჩევნები - II
ტური, თვითმმართველი თემის მერი, https://results.cec.gov.ge/#/ka-ge/election_46/dashboard.

³ საქართველოს ორგანული კანონი საქართველოს ორგანულ კანონში
„საქართველოს საარჩევნო კოდექსი“ ცვლილებიზ შეტანის შესახებ, თბილისი,
28 ივნისი 2021 წ., N703-ვრს-ჯოძ, (წრასთასქი იქანსკან იქენჲე

Մեծամասնական ընտրատարածքների միավորումը դրական ազդեցություն ունեցավ Ախալքալաքի շրջանում, և մեծամասնական կարգով ընտրված հայ և վրացի պատգամավորների՝ 13/1 հարաբերակցությունն ինչ որ տեղ արտացոլեց շրջանի ազգաբաշխական պատկերը (2014 թ. դրությամբ՝ շուրջ 42.000 հայ և 3.000 վրացի)։ Այդուհանդերձ, միավորման նույն գործընթացը էական բացասական ազդեցություն թողեց Ջավախքի մեկ այլ՝ Ախալցխայի շրջանի վրա, որտեղ Շրջանային ժողովում մեծամասնական ընտրակարգով ընտրվող 13 պատգամավորից ընդամենը 3-ն են սագությամբ հայ (1-ը՝ Ախալցխա քաղաքից, 2-ը՝ գյուղերից), որն այնքան էլ չի արտահայտում Ախալցխայի շրջանի ազգաբաշխական պատկերը. 2014 թ. մարդահամարի արդյունքներով՝ 26.400 վրացի և 12.000 հայ ազգաբնակչություն ունեցող Ախալցխայի շրջանում հարկ էր, որ մեծամասնական կարգով ընտրվեք առնվազն 4 հայ:

Ինքնակառավարվող համայնքներում տեղական մեծամասնական ընտրատարածքների միավորումից մեկով նվազել է նաև Սամցխե-Ջավախք նահանգի Բորժոմի Շրջանային ժողովում մեծամասնական կարգով ընդգրկվող հայության թիվը (Տաբաձորի, Մուլիթ, Չխարուլա, Բալանթա գյուղերի հենքի վրա ձևավորված նախկին 2 ընտրատարածքի փոխարեն այժմ 1-ն է), քանի որ Բորժոմում այլ միավորումներ չեն եղել: Ասայինձայում 1 (Դամալա գյուղ) ընտրատարածքը, հետևաբար 1 հայազգի պատգամավորի տեղը պահպանվել է, փոխարենը միավորվել են վրացաբնակ գյուղերի առանձին ընտրատարածքներ: Նինոծմինայի պարագայում փոփոխություն տեղի չի

«Վրաստանի ընտրական օրենսգիրք» օրգանական օրենքում փոփոխություններ կատարելու մասին, Թբիլիսի, 2021 թ. հունիսի 28, № 703-VՌՍ-ՄՄ),

<https://matsne.gov.ge/ka/document/view/5200931?publication=0#DOCUMENT:1.>

¹ Վ. Նահատակյան, Ջավախքի հիմնահարցերը (մաս 1), «Դրօշակ», հունվար, 2020, թիվ 1, էջ 13:

ունեցել, իսկ Ծալկայի շրջանում միավորվել են թե՛ հայաբնակ գյուղերով կազմված նախկին ընտրատարածքները (հայաբնակ բոլոր 13 գյուղերն այժմ կազմում են 4 ընտրատարածք), թե՛ նախկին հունաբնակ, այժմ՝ աջարներով և սլաններով բնակեցված գյուղախմբերով կազմված ընտրատարածքները: Ջավախքի Ախալքալաքի շրջանում ՏԻՄ ընտրությունների մասնակցեց 12 ուժ¹: Ջավախքի մեկ այլ Նինոծմինդայի շրջանում ՏԻՄ ընտրությունների մասնակցեց 9 կուսակցություն և մեկ նախաձեռնող խումբ²:

Ջավախքի մյուս շրջաններում Ախալցխայում, Ասպինձայում, Աղիզենում և Բորժոմում պայքարել է 15 քաղաքական ուժ: Այս շրջաններում համամասնական ցուցակներով առաջադրված 1.012 թեկնածուներից միայն 53-ն են եղել ազգությամբ հայեր, որից 25-ը՝ Ախալցխայում, 5-ը՝ Աղիզենում, 8-ը՝ Ասպինձայում, 20-ը՝ Բորժոմում: Իսկ մեծամասնական ընտրակարգով առաջադրված 137 թեկնածուներից միայն 12-ը, որից 7-ը՝ Ախալցխայում, 1-ը՝ Ասպինձայում, 4-ը՝ Բորժոմում³: Կուսակցությունների ցուցակներում առաջադրված հայ թեկնածուների զբաղեցրած տեղերը խիստ տարբեր էին, որից ելնելով էլ շատ դեպքերում գրոյական էր հավանականությունը, որ նրանք տեղ կզբաղեցնեին այս կամ այն շրջանի ՏԻՄ-ում:

Փոխարենը բոլորովին այլ պատկեր էր Ախալքալաքում և Նինոծմինդայում՝ ազգությամբ վրացիների առաջադրման առումով: Այս շրջաններում 12 քաղաքական ուժի համամասնական ցուցակներով առաջադրած 524 թեկնածուներից 107-ը ազգությամբ վրացի էին. Ախալքալաքում տարբեր ուժերի

¹ Ախալքալաքում ՏԻՄ ընտրություններին մասնակցում է 12 կուսակցություն, <https://inews.ge/am/?p=63556>:

² Նինոծմինդայում ՏԻՄ ընտրություններին մասնակցում է 9 կուսակցություն և նախաձեռնող խումբ, <https://inews.ge/am/?p=63560>:

³ Չայեր, որոնք Ախալցխայում մասնակցում են ՏԻՄ ընտրություններին, <https://inews.ge/am/?p=63965>:

կողմից առաջադրված 346 թեկնածուներից ազգությամբ վրացի էին 79-ը, իսկ Նինոծմինդայում՝ 178 թեկնածուից՝ 28-ը¹:

2021 թ. ՏԻՄ ընտրությունների արդյունքները Ջավախքում²

Փաստենք, որ Ջավախքի բոլոր 7 շրջաններում, ներառյալ գերազանցապես ադրբեջանաբնակ Քվեմո Քարթլի նահանգի մեջ ներառված Ծալկայի շրջանը, հենց առաջին փուլով թե՛ շրջանի ղեկավարի, թե՛ Երջանային ժողովի՝ մեծամասնական և համամասնական կարգով ընտրվող պատգամավորների պարագայում ջախջախիչ հաղթանակ է տարել իշխող «Վրացական երազանք – ժողովրդավարական Վրաստան» կուսակցությունը: Նշված շրջաններում ընտրությունների հոկտեմբերի 30-ին անցկացված 2-րդ փուլում որևէ կարգով սահմանված ընտրություն տեղի չի ունեցել: Արդյունքում, բոլոր շրջանների Երջանային ժողովներում 50%-ից ավելի սուավելություն է ստացել նույն ուժը, իսկ շրջանների ղեկավարներն (մունիցիպալիտետի ղեկավար կամ քաղաքապետ) ընտրվել են «Վրացական երազանքի» առաջադրած

¹Մեծամասնական ընտրակարգով առաջադրված 79 թեկնածուներից միայն 6-ն էին ազգությամբ վրացի (4-ը Ախալքալաքում, 2-ը Նինոծմինդայում), քանի որ համապատասխանաբար 93 և 95.1 %-ով հայաբնակ Ախալքալաքի և Նինոծմինդայի՝ ընամենը մի քանի վրացաբնակ գյուղերի՝ հայաբնակ գյուղախմբերի հետ մեկ ընտրատարածքի մեջ ներառելու պարագան նվազեցնում էր ազգությամբ վրացիների ընտրվելու հնարավորությունը:

² Վրաստանի այլ նահանգների (այդ թվում՝ մայրաքաղաքի) ՏԻՄ-երում հայաթյան ներգրավվածության խնդրի քննարկմանը կանդիդատները լրացուցիչ: Մինչ այդ փաստենք, որ բազմազգ Թբիլիսիի 2021 թ ձևավորված նոր Քաղաքային ժողովում (Սակրեբուլոյում), որտեղ 2014 թ. Վրաստանի պաշտոնական մարդասահմանի տվյալների համաձայն ապրում է շուրջ 53.000 հայ չկա որևէ հայազգի պատգամավոր (տե՛ս տბილისის საკრებულო 2021. საკრებულოს წევრები. http://tbsakrebulo.gov.ge/index.php?m=338&faction_id=1-84&fbclid=IwARISEdV8cqL9IXOcSOx99YMMXdMAFTgQWqkEMhdYR_V4TCApC_noAHADps0):

ազգային շարժում» 17-ը՝ իշխող «Վրացական երազանք» ուժերից)¹: 2014 թ. մարդահամար – վրացի՝ 3.100 (6,9 %), հայ՝ 41.900 (93 %): Անհամաչափությունն ակնհայտ է (պետք է լիներ առնվազն 39 հայազգի պատգամավոր):

3. Ասպինձայի Երջանային ժողով - 30 պատգամավոր (10 մեծամասնական, 20 համամասնական ընտրակարգով), որից 2-ը՝ ազգությամբ հայ (1-ը՝ մեծամասնական, 1-ը՝ համամասնական ընտրակարգով, բոլորը՝ իշխող «Վրացական երազանքից»): 2014 թ. մարդահամար – վրացի՝ 9.000 (86,8 %), հայ՝ 1.400 (13,5 %): Անհամաչափությունն ակնհայտ է (պետք է լիներ առնվազն 4 հայազգի պատգամավոր):
4. Ախալցխայի Երջանային ժողով - 39 պատգամավոր (13 մեծամասնական, 26 համամասնական ընտրակարգով), որից 5-ը՝ ազգությամբ հայ (3-ը՝ մեծամասնական, 2-ը՝ համամասնական ընտրակարգով, բոլորը՝ իշխող «Վրացական երազանքից»): 2014 թ. մարդահամար – վրացի՝ 26.400 (67,9 %), հայ՝ 12.000 (30,9 %): Անհամաչափությունն ակնհայտ է (պետք է լիներ 12-13 հայազգի պատգամավոր):
5. Բորժոմի Երջանային ժողով - 33 պատգամավոր (11 մեծամասնական, 22 համամասնական ընտրակարգով), որից 2-ը՝ ազգությամբ հայ (2-ն էլ՝ մեծամասնական ընտրակարգով, 1-ը՝ իշխող «Վրացական երազանքից», 1-ը՝ ընդդիմադիր ՄԱՇ-ից): 2014 թ. մարդահամար – վրացի՝ 22.000 (87,3 %), հայ՝ 2.200 (8,7 %): Անհամաչափությունն ակնհայտ է (պետք է լիներ առնվազն 3 հայազգի պատգամավոր):
6. Աղիզենի Երջանային ժողով - 33 պատգամավոր (11 մեծամասնական, 22 համամասնական ընտրակարգով): Ժողովում հայ պատգամավոր չկա: 2014 թ. մարդահամար

¹ Ո՞վ կմտնի Ախալքալաքի Սակրեբուլո, <https://jnews.ge/am/?p=64846>:

– վրացի՝ 16.000 (97,2 %), հայ՝ 400 (2,4 %): (Պետք է գոնե 1 հայազգի պատգամավոր լիներ ներկայացված):

Ասպինձայի և Ախալցխայի Շրջանային ժողովներում նախագահի տեղակալ են ընտրվել հայազգի պատգամավորները, ինչը պետք է արձանագրել որպես դրական փաստ:

Այսպիսով, անկախացման գործընթացին զուգահեռ և հետագա 30-ամյակի ընթացքում (1991-2021 թթ.) Վրաստանի տեղական ինքնակառավարման ոլորտն անցավ կայացման բարդ ուղի: Երկիրը ղեկավարած բոլոր իշխանությունների Օ. Գամսախուրդիայի, Էդ. Շևարձնաձեի, Մ. Սահակաշվիլու և «Վրացական երազանք» քաղաքական ուժի օրոք ընդունվեցին տեղական ինքնակառավարման ոլորտը կարգավորող բազմաթիվ օրենքներ, որոշումներ, ընտրական օրենսգրքեր, կատարվեցին օրենսդրական բազմաթիվ փոփոխություններ, որոնք իրենց ուղղակի ազդեցությունն էին թողնում նաև երկրի տեղաբնիկ ժողովուրդների, մասնավորապես՝ Ջավախքում ապրող հայության վրա: Չնայած հետագա տարիների օրենսդրական բարեփոխումներին, այդուհանդերձ, Վրաստանում տեղական ինքնակառավարումն այդպես էլ չարտացոլեց երկրի հայաբնակ շրջանների իրական շահերը: Վրաստանում 2021 թ. կայացած տեղական ինքնակառավարման մարմինների 8-րդ ընտրությունները որոշակի դրական առաջընթաց ապահովեցին 3-րդ մակարդակի միավորների ձևավորման գործընթացում, որոշակիորեն բարելավվեց նաև տեղական ինքնակառավարման 2-րդ մակարդակի միավորներում հայության տեսակարար ներկայությունը:

ВЫБОРЫ В ОРГАНЫ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В ГРУЗИИ В
2021 ГОДУ И ИХ ВЛИЯНИЕ НА ДЖАВАХК
РЕЗЮМЕ

Ключевые слова: Грузия, система местного самоуправления, префект, пропорциональная и мажоритарная избирательные системы, административные единицы, собрания, Джавахк, этнографическая картина, армяне, грузины.

Параллельно с процессом обретения независимости и в течение дальнейших 30 лет (1991-2021 гг.) сфера местного самоуправления в Грузии прошла сложный путь становления. Во времена управления всех правительств, во главе З. Гамсахурдиа, Э. Шеварднадзе, М. Саакашвили, а также в период деятельности политической силы «Грузинская мечта» были приняты многочисленные законы, постановления, избирательные кодексы регулирующие сферу местного самоуправления, были внесены многочисленные законодательные изменения, которые оказали непосредственное влияние на коренные народы страны, в частности на армян, проживающих в Джавахке.

Несмотря на законодательные реформы последующих лет, тем не менее, местное самоуправление в Грузии не отражало реальных интересов районов страны, населенных армянами. На основании новых законодательных изменений в 2021 году были проведены 8-е выборы в органы местного самоуправления, которые обеспечили определенный положительный прогресс в формировании единиц 3-го уровня и несколько улучшили присутствие армян в единицах 2-го уровня местного самоуправления.

VAHE SARGSYAN
Ph.D. in History, Armenia

ELECTIONS OF LOCAL SELF-GOVERNMENT BODIES IN GEORGLA IN 2021 AND THEIR IMPACTS ON JAVAKH

SUMMARY

Key words: Georgia, local government system, prefect, proportional and majoritarian electoral systems, administrative units, assemblies, Javakhk, ethnic image, Armenians, Georgians.

In parallel with the process of independence and the upcoming 30 years (1991-2021) the sphere of local self-government of Georgia passed a difficult path of establishment. Of all the authorities that ruled the country, i.e. Z. Gamsakhurdia, Ed. Sharnadze, M. Saakashvili's and the "Georgian Dream" political force, numerous laws, decisions, electoral codes regulating the sphere of local self-government were adopted, numerous legislative changes were made, which had a direct impact on the indigenous peoples of the country, particularly the Armenians living in Javakhk. Despite the legislative reforms in the following years, nevertheless, the local self-government in Georgia did not reflect the real interests of the Armenian-populated regions of the country. On the basis of new legislative changes in Georgia in 2021 the 8th elections of local self-government bodies provided some positive progress in the process of building 3rd level units, and the presence of Armenians in the 2nd level units of local self-government improved to some extent.

ՆՈՒՍԷՅՊԻՆԷՆ (ՄԾԲԻՆԷՆ) ԶԱԼԻՆ/ ԳԱՄԻՉԼԻ

Հիմնաբառեր - Ժողէֆ Ասմար Մալքի, Մծբին, սուրիական ճեզիրէ, մշակութային ժառանգութիւն, Առաքելական, Կաթողիկէ, Առաջնորդական Փոխանորդութիւն, կրօնական համայնք, ազգային կեանք

Ներածութիւն

«Նուսէյպինէն (Մծբինէն) Զալին (Գամիշլի)»¹ աշխատութիւնը հեղինակած է սուրիացի արաբ գրող Ժողէֆ Ասմար Մալքին²: Ծնած է Հալէպ: Բարձրագոյն ուսումը ստացած է Պէյրութի Արաբական համալսարանի արաբական գրականութեան բաժինէն, ուրկէ եւ վկայուած: 1992թ.-էն սկսեալ իր կեանքը նուիրած է ասորական լեզուին, մշակութային ժառանգութեան ուսումնասիրութեան: Այս առումով կատարած հետազոտութիւններու ընթացքին բազմիցս այցելած է աշխարհի տարբեր երկիրներու մէջ ձեւաւորուած ասորական համայնքներուն եւ մօտէն ծանօթացած անոնց նիստ ու կացին, լեզուին եւ այլ հարցերուն:

«Մծբինէն Զալին (Գամիշլի) աշխատութիւնը բաղկացած է 254 էջէ գրուած արաբերէն լեզուով եւ լոյս տեսած 1995 թ.-ին, Դամասկոսի մէջ: Համապարփակ սկզբնաղբիւր է այն դէպքերու

¹ جوزيف أسمر ملكي، من نصيبين إلى زالين (القامشلي)، دمشق، 1995.

² Յետոյստու, Ժողէֆ Ասմար Մալքի, «Նուսէյպինէն Զալին (Գամիշլի), Դամասկոս, 1995:

² Ժողէֆ Ասմար Մալքի, ծնած է Հալէպ 1946 թ.-ին. բնակութեան վայրը Գամիշլի: Վկայուած է Պէյրութի Արաբական համալսարանի արաբական գրականութեան բաժինէն: Հիմնական զբաղմունքը ասորերէն լեզուի ուսումնասիրութիւնն է, զոր սկսած է 1992?-ին:

վերաբերեալ, որոնք տեղի ունեցած են Սուրիական Ճեզիրէ՛ւ կոչուած տարածաշրջանին մէջ՝ թաթարական արշաւանքներու տակումնէն մինչեւ նորագոյն դարաշրջանին: Աշխատութեան մէջ հարուստ եւ հետաքրքիր տեղեկութիւններ կան այդ շրջանի վրաստիճանակ տեղաբնիկներու կայացման, Թուրքիոյ, Սուրիոյ եւ Երաքի սահմաններու սահմանագատումէն ետք շրջանը թափանցող բազմաթիւ գաղթականներու հետեւանքով քաղաքաշինութեան զարգացումին՝ ու համայնքներու ձեւաւորումին. ինչպիսիս Հասաբէն /Հասիչէն/¹ եւ Գամիշլին՝²:

Հեղինակի մենագրութիւնը մեծ մասամբ կանգ կ'առնէ տեղական համայնքներու, յատկապէս Ասորի (ուղղափառ եւ կաթողիկէ) համայնքներու առաջացման վրայ՝ եւ այդ ամէնու կապը թուրքական քաղաքականութեան հետ: Հետագօտողը ժանրամասն կ'անդրադառնայ Ասորի (ուղղափառ եւ կաթողիկէ) համայնքի Նուսէյպիւնէն /այսինքն՝ պատմական Մօթիսէն/ մինչեւ Գամիշլի գաղթի ճանապարհի, ֆրանսական իշխանութեան վարած քաղաքականութեան շրջանի փոքրամասնութիւններու նկատմամբ, Գամիշլի նորաջէն քաղաքի երկմտադրման, Գամիշլի եւ Հասաբէ բառի եւ այլ տեղանուններու ստուգաբանութեամբ, Գամիշլիի մէջ ասորի ուղղափառ համայնքի եւ թեմի գոյութեան, դպրոցներու, քարտէսիական, կրօնական, մարզական, մշակութային հաստատութիւններու հիմնադրման եւ անոնց գործունէութեանց մասին:

Գամիշլին թրքական սահմանին մօտ, պատմական

¹ Սուրիական Ճեզիրէ կոչուող շրջանը, որ կը տարածուի Եփրատ եւ Տիգրիս գետերու միջեւ, կը զբաղեցնէ Սուրիոյ հիւսիս-արեւելքի շրջանը: Ան հիւսիսէն սահմանակից է Թուրքիոյ, արեւելքէն՝ Իրաքի, հարաւէն՝ Տէր Զօր նահաւիզին, իսկ արեւմուտքէն Բազզա նահանգին. <https://www.marefa.org/>.

² Հասիչէ կամ Հասաբէն՝ նահանգ /մարզ/ Սուրիոյ հիւսիս-արեւելքը. վարչական կէտրոնը՝ Հասաբէ /Հասիչէ/ քաղաքը:

³ Սուրիոյ քաղաքներէն է Գամիշլին: Ան կը գտնուի Սուրիա-Թուրքիա սահմանին եւ վարչականօրէն մաս կը կազմէ Ալ Հասաբէ նահանգին /մարզին/:

Նուսեյպին՝ Մծրին քաղաքէն 500 մեթր հարաւ, Ճաղճաղ գետիս վրայ կանգնած նորակառոյց քաղաքը քսաներորդ դարու առաջին քառորդին դարձած էր բազմազգ բնակավայր մը, ուր եղեռնէն եւ յատկապէս 1923-ի Լոզանի դաշնագիրի կնքումէն ետք, այդտեղ կայք հաստատած էին ասորի ուղղափառները (եւագուպեաններ), ասորի կաթողիկէներ, քաղղէացիներ, աշուրներ (նեստորականներ), մերտինցիներ, արաբ քրիստոնէաներ, ինչպէս նաեւ հրեաներ, սիննի արաբ /մահմետական/, քիւրտ չէրքեզ եւ այլ ցեղեր ու ազգեր:

Հեղինակի աշխատութիւնը հարուստ է ասորի կաթողիկէ, քաղղէացի, նեստորական, աւետարանական, հայ առաքելական եւ հայ կաթողիկէ յարանուանութիւններու մասին համառօտ, բայց արժէքաւոր տեղեկութիւններով:

Մեր զեկոյցը «Նուսեյպինէն Զալին /Գամիշլի/ աշխատութեան այն հատուածն է, որ կը վերաբերի Գամիշլիի հայութեան. Սուրիացի գրող Ժոզէֆ Ասմար Մալքի իր մենագրութեան մէջ տեղեկութիւններ կը փոխանցէ յատկապէս Գամիշլիի հայ առաքելական եւ հայ կաթողիկէ յարանուանութիւններու մասին:

Անդրադառնալով՝ Գամիշլիի Հայ առաքելական համայնքին հեղինակի կը գրէ, որ առաքելական համայնքի զաւակները իրենց պատուիրակութեան հետ Թուրքիայէն գաղթած են Սուրիա Ա. Աշխարհամարտի ցեղասպանութիւնն ու ահասարսուռը կանգ առնելէն ետք, 1921-էն սկսեալ օսմանեան կառավարութեան կողմէ կրօնական եւ ցեղային փոքրամասնութիւններու դէմ իրագործուած բարբարոսութիւններու հետեւանքով: Անոնք գաղթելով Սուրիա արաբ ևղբայրներու կողմէ արժանացան են ջերմ հիւրընկալութեան: Մէկ մասը բնակութիւն հաստատած են Գամիշլի, ուր ունիւն ւպիսկոպոսութիւն, որուն հետեւորդներն են, Ճեզիրէի եւ Եփրատի շրջակայ բոլոր քաղաքներու եւ աւաններու հայերը՝

¹ Տե՛ս. ժոզէֆ Ասմար Մալքի, նշ. աշխ., էջ 217

1925-ին կը կառուցեն հողածածկ ցեխով եւ փայտեայ առաստաղով եկեղեցի մը, որ զայն կը կոչեն սուրբ Յակոբ: Աւելի ուշ կը վերանորոգուի. 1940 թ.-ին երկրորդ վերնորոգումը տեղի կ'ունենայ: 1943 թ.-ին կը կառուցուի առաջնորդարանը, որ մինչ օրս կանգուն է¹:

Համայնքի դպրոցներու մասին խօսելով՝ հեղինակը կը նշէ, որ «սկզբնական շրջանին հայերը իրենց երեխաներուն կը սորվեցնէին տուներուն մէջ»²: 1933 թ.-ին կը հիմնեն հողակառոյց նախակրթականը, 1941-ին կը բացուի մանկապարտէզը: 1959-1960թթ. կը հիմնեն միջին դպրոցը եւ զայն կը կոչեն Ազգային Միացեալ Միջնակարգ վարժարան³, որ մինչ օրս կը գործէ⁴: Հեղինակը մեծ կարեւորութեամբ կը նշէ, որ Գամիշլի արուարձաններու շատ մը գիւղերը կառուցուած եղած են հայ առաքելական եկեղեցոյ զաւակներու կողմէ. օրինակ՝ Թէլ Պրաք, Խուճա, Հիսօ եւ այլն, ուր ապրած են մինչեւ Մեծ հայրենադարձութիւն 1947թ. եւ «երկրորդ» ներգաղթ 1965-1966թթ.: Կը յիշատակէ եպիսկոպոսներու անունները, որոնք հովուած են այդ շրջանը Առաջնորդական փոխանորդութիւն հիմնուելէն ետք⁵. կը յիշատակուի նաև քահանայական ծառայութիւն մատուցած հոգեւորականներու անունները⁶:

Հեղինակի փոխանցած տեղեկութիւններէն կ'իմանանք որ

Հեղինակի՝ առաքելական համայնքի եպիսկոպոսութիւն ունենալու եւ եկեղեցի կառուցելու մասին տեղեկութիւնները կը վերաբերին աւելի ուժ ժամանակներու, որովհետեւ 1942 թ.-էն ետք է որ շրջանը կ'օժտուի Առաջնորդական փոխանորդով:

¹ Ժողէֆ Ասմար Մալքի, նշ. աշխ., էջ 217:

² Ժողէֆ Ասմար Մալքի, նշ. աշխ., էջ 219:

³ Չոլաքեան կը նշէ, որ Գամիշլի 1970թ.-ին կ'ունենայ միջնակարգ բաժին. Ազգային միացեալ անունով (արաբերէն՝ Էլ-Ֆուրաթ: Տե՛ս Չոլաքեան Յակոբ, Սուրիահայ դպրոցի պատմութիւն, Բ. հատոր, Երեւան, 2021, էջ 277:

⁴ Ժողէֆ Ասմար Մալքի, նշ. աշխ., էջ 219:

⁵ Առաջնորդական եօթը փոխանորդներու անունները 1942-էն 1995թթ., տե՛ս Ժողէֆ Ասմար Մալքի, նշ. աշխ., էջ 219:

⁶ Ժողէֆ Ասմար Մալքի, նշ. աշխ., էջ 220:

Առաքելական եկեղեցին Գամիշլիի մեջ ունեցած է կրօնական, ընկերային, բարեսիրական, մարզական, մշակութային բազմաթիւ հաստատութիւններ, որոնցմէ առաջինը

1-Թաղական խորհուրդը,

2-Հոգաբարձական կազմ,

3- Համազգային Մշակութային ընկերակցութիւնը,

4-Հայ կարմիր խաչ կանացի կազմակերպութիւն /Մուրիահայ Օգնութեան Խաչը/,

5-Հայկական բարեգործական ընդհանուր միութիւնը՝ հիմնադրուած 1956,

6- Ս. Յակոբ եկեղեցւոյ աղքատախնամ յանձնախումբը,

7-Ճինիշեան Յիշատակի Ձեռնարկի (ՃՅՁ) Գամիշլիի մասնաճիւղը.

Ճինիշեանը կը վայելէ Հայ առաքելական, կաթողիկէ եւ աւետարանական յարանուանութիւններու հովանաւորութիւնը,

8-Գարակեօզեան բարեսիրական հաստատութիւնը, որ նոյնպէս կը վայելէ Հայ առաքելական, կաթողիկէ եւ աւետարանական յարանուանութիւններու հովանաւորութիւնը,

9- Հայ Օերսնոցը, մեծահասակներու համար, որ բաղկացած է

10 եւ յարակից սենեակներէ: Կը նշէ վերջիններուն հիմնադրման թուականները¹:

Գամիշլիի Մարզական միութեան սկիզբը դրուած է 1931թ.-ին, սակայն հիմնականօրէն կառուցուած է 1935 թ.-ին, ՀՍԸՄ անունով ակումբը կը գլխաւորէր հայր Յովսէփ Լեւոնեան, որ հայ կաթողիկէ եկեղեցւոյ զաւակ էր: Պետական սահմանափակումներու պատճառով 1961-ին կը փակուին ասորիներու Միջազետք եւ առաքելականներու ՀՍԸՄ ակումբները²:

Սկաուտական շարժումը 1931 թ.-ին, որ յետագային կոչուեցաւ սկաուտական 6-րդ վաշտ, հիմնադրուած 1935 թ.-ին:

¹ Նոյն տեղը, էջ 220-221:

² Նոյն տեղը, էջ 227-228:

Հեղինակի տուեալներով, 1995 թ.-ին Գամիշլիի եւ գիւղերու հայ առաքելական եկեղեցին կը հաշուէր շուրջ 1100 ընտանիք, մօտաւորապէս 6000 մարդ¹:

Գամիշլիի Հայ կաթողիկէ եկեղեցւոյ զաւակները, մեծ մասամբ Մարտինէն գաղթած եւ Գամիշլի՝ 20-րդ դարու երկրորդ քառորդին, կը գրէ հեղինակը: 1935 թ.-ին կը կառուցեն հողածածկ եւ փայտաշէն եկեղեցին Ս. Յովսէփ անունով: 1936-ին Հայր Ժոզէֆ Լեւոնեան² կը կառուցէ հողաշէն մանկապարտէզ եւ նախակրթարան մը զայն կը կոչէ, նոյնպէս Ս. Յովսէփ անունով: 1937-ին եկեղեցին կը վերանորոգուի. կը պատմուի որ այս եկեղեցւոյ շէնքի վերակառուցման համար քարերը բերուած են Թուրքիոյ պատմական Մծրին քաղաքի Սուրբ Յակոբ վանքէն, սալայն քարտաշները զայն յղկելով կորսնցուցած է անցեալի հմայքը եւ պատմական նշանակութիւնը³: 1938 թ.-ին Հասիչէի /Հասաքէի/ մէջ կը հիմնուի Հայ կաթողիկէ առաջնորդարան /իրականութեան մէջ՝ Պատրիարքական Փոխանորդութիւն է/ եւ կը յանձնուի հայր Կիւրեղ եպիսկոպոս Զոհրապեանին⁴, որուն իրաւասութեան

¹ Նոյն տեղը, էջ 228:

² Հայր Ժոզէֆ Լեւոնեան հիմնած է Գամիշլիի առաջին նուազախումբը, 1935թ.-ին. իսկ 1936թ.-ին՝ Սկաուտական խումբ: Տե՛ս նոյն տեղը, էջ 238:

³ Ժոզէֆ Աամար Մալքի, նշ. աշխ., էջ 229:

⁴ 1938 Նոյեմբեր 21-ին Կիւրեղ եպս.նամակ մը կը ստանայ Գերերջանիկ Հոգեւոր Տէր Գրիգոր Պետրոս ԺԵ. Աղաճանեանէն, ուր կըսէր. «Ճանչնալով Ձեր կազմակերպչական կարողութիւնները եւ գոհոգութեան նետուելու պատրաստակամութիւնը, ստանալով Սուրբ Ժողովի արտօնութիւնը՝ կը հրաւիրենք Ձեզ հնարատրինս շուտով գալ Պէյրութ. Աթենքի Առաջնորդարանի տնօրէնութիւնը յանձնելով Ձեր յաջորդին, որովհետեւ Ձեզի կը վստահինք նոր Թեմի մը կազմակերպումը ճեզիրէի մէջ: Կը նշանակենք Ձեզ ճեզիրէի Պատրիարքական Տեղապահ, եպիսկոպոսական իրաւասութիւններով: Համապատասխան վրճարագիրը պիտի յանձնուի Ձեզի հազիւ Պէյրութ հասնիք»: Տե՛ս Յուշեր Կիւրեղ եպս. Զօհրապեան, Ս. Ղազար. Վենետիկ, 2007, էջ 162:

տակ կը գտնուէին Ճեզիրէի եւ Եփրատի շրջանի քաղաքներու եւ գաւառակներու հետեւորդները, ինչպէս նաեւ Մարտինի եւ Մուսուլի հաւատացեալները: Դպրոցն ու առաջնորդարանը կը վերնորոգուի 1952 թ.-ին: 1962 թ.-ին կը կառուցուի նոր դպրոց, կը գրէ հեղինակը¹:

Իսկ Հայ կաթողիկէ Անարատ յղութեանց քոյրերու աղջկանց վարժարանը /ներկայիս՝ ալ Կատիսիէ/ պարզապէս ունէր մանկապարտէզ եւ նախակրթարան բաժիններ. (նախապէս, այսինքն՝ ֆրանսական իշխանութեան օրերուն), կառոյցը պատկանած էր Տոմինիկեան քոյրերուն: 1945 թ.-ին կեդրոնը կը փակուի: Հայր Կիւրեղ Ձոհրապեան կը գնէ կառոյցը եւ կը յանձնէ Անարատ յղութեան հայ քոյրերուն²: 1967 թ.-ին կ'ազգայնացուի վարժարանը. Կրթութեան նախարարութիւնը պետականացնելէ ետք, Անաղարտ քոյրերու վարժարանը կը վերածուի երկրորդական /աւագ/ դպրոցի եւ զայն կ'անուանեն Ալ-Կատիսիէի աղջկանց երկրորդական վարժարան. Իսկ եկեղեցին, վանքը եւ մնացած տարածքը կ'անցնի կաթողիկէ համայնքին³:

1972թթ. Հայր Անդրանիկ Այվազեանի Կաթողիկէ համայնքի առաջնորդի ջանքերուն շնորհիւ, կը գրէ հեղինակը, կը վերաբացուի մանկապարտէզ, նախակրթարան եւ միջնակարգ Մեսրոպեան- /Ալ-Մալամ/ /Խաղաղութիւն/ անուանով: 1978-ին կը կառուցուի հայ կաթողիկէ վանքը հաւատացեալներու եւ բարեկամներու նիւթական աջակցութեան: 1977-ին կը հիմնեն թերաձներու յատուկ կեդրոն, ուր իրենց բժշկական աջակցութիւնը կը ցուցաբերեն Գերմանիայէն եւ Հոլանտայէն մասնագէտներ⁴:

1985թ.-ին Հայր Անդրանիկ նուէր ստացած հողամասին

¹ Ժողէֆ Ասմար Մալքի, նշ. աշխ., էջ 229, 230:

² Տե՛ս Չոլաքեան Յակոբ, Սուրիահայ դպրոցի պատմութիւն, Բ. հատոր, Երեւան, 2021, էջ 279:

³ Ժողէֆ Ասմար Մալքի, նշ. աշխ., էջ 229, 231:

⁴ Ժողէֆ Ասմար Մալքի, նշ. աշխ., էջ 229, 231:

վրայ կը կառուցէ «Խաղաղութեան» կեդրոն, ուր բոլոր համայնքներու գաւակներուն կ'արտօնուի իրենց հասակակիցներուն հետ օգտաշատ ժամերը անցընել այդտեղ¹: Մալքի իր աշխատութեան մէջ կը թուարկէ թեմին ծառայած հոգետր հայերու անուններն ու անոնց վարած աշխատանքները: (Վարդապետներ, որոնք հովուեցին Ճեզիրէ շրջանը մեծ մասամբ Զմմառի պատրիարքարանի եւ կամ Մխիթարեան հայրերու կողմէ եկած էին)²:

Հեղինակը տեղեակ է, որ Կաթողիկէ համայնքի Հայր Անդրանիկի շնորհիւ 1977թ.-էն սկսեալ Գամիշլիի հայ համայնքէն տարբեր գաղափարական երիտասարդներ իրենց ուսումնառութիւնը կրցած են ձրիաբար շարունակել Հայաստանի³ պետական համալսարաններէն ներս, ինչ որ անհնար էր այդ օրերուն⁴:

Բացի առաքելական եւ հայ կաթողիկէ յարանուանութեան յիշատակութենէն, աշխատութեան մէջ անդրադարձ չկայ Գամիշլիի հայ աւետարանական համայնքի գոյութեան մասին: Իրականութեան մէջ Գամիշլիի մէջ ձեւաւորուած արաբ աւետարանական համայնքին մաս կազմած են հայ աւետարանականները, որոնք բազմիցս փորձած են անկախանալ եկեղեցիէն եւ ունենալ իրենց սեփական դպրոցը, սակայն չեն յաջողած⁵:

Աւարտին, ուսումնասիրելով հեղինակի օգտագործած գրականութեան ցանկը, կը սպարգուի այն որ այնտեղ ոչ մէկ յիշատակութիւն կայ հայ համայնքի պատմութիւնը շարադրելու նախատեսուած ոչ արխիւային նիւթեր եւ ոչ ալ գրականութիւն. յստակ չէ թէ ուրկէ քաղած է վերոյիշեալ

¹ Նոյնը, էջ 229, 234:

² Նոյնը, էջ 241:

³ Գիրքին մէջ հեղինակը Հայաստանի փոխարէն կը նշէ Խորհրդային Միութիւն բառակապակցութիւնը, նոյն տեղը էջ 237:

⁴ Ժողէֆ Ասմար Մալքի, նշ. աշխ., էջ 237:

⁵ Նոյնը, էջ 237-238:

տեղեկությունները:

Եզրակացություն

Ժողէֆ Ասմար Մալքիի «Նուսէյպինէն Չալին (Գամիշլի)» աշխատութիւնը կարելոք աղբիւր կրնայ հանդիսանալ այդ շրջանի փոքրամասնութիւններու, յատկապէս հայերու գոյութեան, համայնքային, կյաթական ու մշակութային գործունէութեան մասին: Սակայն գիրքը ունի բացթողումներ եւ այնտեղ կան տեղեկութիւններու անճշդութիւնը¹, որոնց ճշգրտութեան համար մենք ուսումնասիրողներս, կարիքը կը զգանք զայն համեմատելու արխիւային այլ փաստաթուղթերու հետ: Այսուհանդերձ, տեղ գտած անճշդութիւնները չեն թերագնահատեր Ժողէֆ Ասմար Մալքի յոյժ այժմէական եւ քաղաքական նշանակութիւն ունեցող աշխատութիւնը, որովհետեւ այսօր եւս Թուրքիոյ եւ մեծ տէրութիւններու վարած քաղաքականութեան հետեւանքով տարածաշրջանը նոր ցնցումներ կ'ապրի եւ շուրջ հարիւր տարուան կեանք ունեցող համայնքները կը դիմագրաւեն անմարդկային դժուարութիւններ, որոնց հետեւանքը ուժացումն է:

¹ Օրինակ՝ 1) 1925 թ.-ին դեռ հայերու մեծ հոսք չէր թափանցած Ճեզիրէ, յատկապէս Գամիշլիի շրջանը, ուստի իրաւացի չէ հեղինակի այն տեղեկութիւնը, որ հայ առաքելական եկեղեցին ունեցած է եպիսկոպոսութիւն: Գուցէ խօսքը Գամիշլիի Հայ Կաթողիկէ Թեմի (կամ Բարձր Ճեզիրէի Թեմ) մասին է, զոր շփոթած է հեղինակը: Հայ Կաթողիկէ Թեմի (կամ Բարձր Ճեզիրէի Թեմի) կազմաւորումը կը սկսի 1915 թուականէն ետք, երբ Մարտիսէն, Թելէրսէնէն եւ Տիարպեթիսէն հայեր կը հասնին այս շրջանները: 1940-ական թուականներու սկիզբը կը հիմնուի Առաքելական եկեղեցոյ Առաջնորդական փոխանորդութիւնը: 2) 1925-ին կը կարողեն հողածածկ եւ փայտեայ առաստաղով եկեղեցի սը, որ զայն կը կոչեն Ս. Յակոբ: Գամիշլիի Ս. Յակոբ եկեղեցին 1932 թուականին կը հիմնուի սուրիական Ճեզիրէ ապաստանած հայերու կողմէ եւ ի յիշատակ Մծբնայ հայրապետին՝ կ'անուանուի Սուրբ Յակոբ: Կը յիշուի թէ եկեղեցին օծուած է այդ օրերու Առաջնորդ Արտաւազդ Արք. Սիւրմէանի ձեռամբ՝ 4 Նոյեմբեր 1934 թուականին:

ИЗ НУСАЙБИНА (МЦБИНА) - В ЗАЛИН (КАМЫШЛЫ)

РЕЗЮМЕ

Ключевые слова - Жозеф Асмар Малки, Нусайбин, Сирийский Джебзире, культурное наследие, апостольская община, католическая община, религиозная община, жизнь армянской общины.

Работа Жозефа Асмара Малки «От Нусейбина (Мцбина) в Залин (Камышлы)» (1995) является всеобъемлющим источником о событиях, происходивших в регионе Джебзире (Сирия) с древнейших времен до 1990-х гг. В работе содержится богатая и интересная информация о жителях-кочевниках этого региона, о развитии городов в результате чего в регион приехали многочисленные мигранты и сформировали такие поселения, как Хасаке и Камышлы.

В своей работе исследователь подробно рассматривает путь миграции ассирийской (православной и католической) общины из Нусайбина в Камышлы, политику французского правительства в отношении меньшинств, основание новопостроенного города Камышлы, историю ассирийской православной общины Камышлы, а также армянской апостольской и католической общин, епархий, строительства школ, создания благотворительных, религиозных, спортивных, культурных учреждений и их деятельности.

FROM NUSEYBIN (MTSBIN) TO ZALIN (KAMISHLI)

SUMMARY

Keywords: Mtsbin, Syrian Jezire, cultural heritage, Apostolic community, Catholic community, religious community, Armenian community life.

Joseph Asmar Malki's "From Nuseybin (Mtsbin) to Zalin Kamishli" (1995) is a comprehensive source for the events that took place in the Jezire region of Syria from ancient times until 1990-s. The work contains rich and interesting information about the establishment of tent-dwelling locals in the region, the development of urban planning, and the formation of communities as a result of the large number of immigrants to the region. like Hasake and Kamishli.

In the work, the researcher looks in detail at the migration path of the Assyrian (Orthodox and Catholic) community from Nuseybin to Kamishli, the policy of the French government towards minorities, the foundation of the newly built city of Kamishli and its existence, about the Assyrian Orthodox community of Kamishli, as well as Armenian Apostolic and Catholic communities, dioceses, construction of schools, creation of charitable, religious, sports, cultural institutions and their activities.

ՀՆԴԿԱԶԱՅ ՄԵՐ ԴՍԱԿԱՆ ԳՈՐԾԸ (THE GREAT ARMENIAN
CASE) ԿԱՍ ՄԵՐ ՀԱՅՏԻՈՐԻ ԴԱՏԸ ԿԱՍ ՀԱՅ
ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՋ ՄԵՐ ԴԱՏԸ

*Հիմնարարներ. Հնդկահայ վաճառականներ, Խոճա Գեորգ
(Լազար, Ժառանգություն, բրիտանական-հնդկական դատարաններ,
դատական գործ, «Հնդկաստանի ժամանակները», օրաթերթ:*

Մուտք

Հնդկաստանի առասպելական բնական հարստությունը ժամանակ առ ժամանակ, յուզած եւ գրգռած է ոչ միայն աշխարհի տիրակալներու նուաճողական ախորժակը, այլև հրապուրած է նաեւ հայ վաճառականները, որոնք տարբեր հանգամանքներու բերումով հարկադրաբար կը հեռանան իրենց հայրենիքէն կամ ծննդավայրէն՝ ապաստան ու բախտ որոնելու հիւրընկալ Հնդկաստանի ափերը: Պատմական յայտնի փաստ է նաեւ, որ երբ եւրոպացիները (յատկապէս բրիտանացիները) դեռեւս ոչ մէկ յարաբերություն ունէին Արեւելքի երկիրներուն հետ, հայերը, մանաւանդ վաճառականական դասակարգը, կ'իրականացնէին շատ շահաբեր առեւտուր այս երկիրին (Հնդկաստան) հետ պարսկական ցամաքային ճամբով¹: Այսպէտով հայերը կը հաստատուին Հնդկաստանի մէջ դեռեւս 16-17-րդ դարերուն եւ հայկական խոշոր ու ծաղկուն համայնքներ կը ստեղծեն տարբեր քաղաքներուն մէջ: Համայնքները կը ստուարանան յատկապէս 17-18-րդ դարերուն, երբ քազմաթիւ պարսկահայեր Շահ Ապպասի մահէն ետք, կ'ենթարկուին հալածանքներու եւ հարկադրաբար կ'ուղղուին տարբեր երկիրներ ներառեալ

¹ Mesrovb J. Seth, History of the Armerians in India From the Earliest Times to the Present Day, Calcutta, India, 1983, p. 49.

Հնդկաստանը, որոնք արդեն 17-րդ դարու երկրորդ կեսին, գերազանցութեան կը հասնին շնորհիւ իրենց նուիրուածութեան, եւ տքնաջան աշխատանքին:

Ահա այս յաջողակագոյն վաճառականներէն մէկն էր Խոճա Գեորգ Ղազարեանը, որու մահէն ետք, իր առասպելական ժառանգութիւնը տասնեակ տարիներով զբաղեցուցած է ոչ միայն Հնդկաստանը, այլեւ Մեծն Բրիտանիոյ դատական-առեւտրական շրջանակները տարբեր ժամանակներուն¹:

Ներկայ յօդուածի վերոյիշեալ վերնագիրները կը սլափանան մէկ դատական գործի, որ ինչպէս վերը նշեցինք, աւելի քան հարիւր-յիսուն տարիներէ ի վեր, հնդկական, ինչպէս նաեւ բրիտանական դատարաններուն զլիսաւոր եւ անչափ հետաքրքրաշարժ գործերէն մէկն էր:

Խնդրոյ առարկայ թեման հետեւեալն է.

1881 թուականի Ապրիլ 21-ին «*Հնդկաստանի Շամանակները*» – *The Times of India* օրաթերթի վերոյիշեալ համարին մէջ ծաւալուն յօդուած մը կը հրատարակուի հոշակաւոր մեծահարուստ Խոճա Գեորգ Ղազար Գրիգորեանի ժառանգութեան մասին տարիներով շարունակուող դատական նիստին վերաբերեալ²:

Իր ժամանակակից բազմաթիւ հայ վաճառականներուն օրինակով, տուեալ անձը, Խոճա Գեորգը իր եղբօր Մովսէս Աստուածատուրին հետ 1742 թուականին կը գաղթէ Հնդկաստան, ուր իրենցմէ առաջ 1740 թուականին գաղթած էին

¹ 17-րդ դարու սկիզբը՝ 1600 թուականը, շրջադարձային էր Հնդկաստանի եւ Բրիտանիոյ պատմութեան մէջ: Անգլիացիները մեծ ազդեցութիւն ունէին Հնդկաստանի վրայ եւ 18-րդ դարու վերջը անոնք կը ջախջախեն այնտեղ հաստատուած այլ եւրոպական գաղութատէրերը (Փորթուգալիա, Հոլանդա, Ֆրանսա, Իսպանիա) եւ կ'ամրանան իրենց գաղութներուն մէջ: Հնդկաստանը անկախութիւն կը ստանայ 1947 թուականին: Տե՛ս *Հնդկաստանի Եւրոպական գաղութացում*, www.m.wikipedia.org: Այցելութիւն կայքին 21.02.2023:

² *The Times of India* օրաթերթը առաջին անգամ լոյս կը տեսնէ 03 Նոյեմբեր 1838 թուականին եւ կը շարունակուի ցայսօր:

ծնողները՝ Վանեն, Գանձակեն, Վանանդեն նախ դեպի Պաղտատ, Պասրա, Եգիպտոս, Լոնտոն եւ այնուհետեւ շնդկաստան, վերջնականապես հիմնաւորուելով այնտեղ: Սակայն, ինչ-ինչ պատճառներով եւ տարբեր հանգամանքներու բերումով, ծնողքը կը վերադառնայ Պասրա:

Յայտնի է արդէն, որ 17-18-րդ դարերուն Միջագետքի եւ շնդկաստանի հայ վաճառականները փոխադարձ առեւտուրով կը զբաղէին: Առեւտուրը կը կայանար հնդկական համեմունքներու, բամպակի ներմուծմամբ իսկ կ'արտահանուէր Պարսկաստանի մետաքսը եւ Պարսից Ծոցի մարգարիտը, որուն մենաշնորհն ունէին հայ վաճառականները մինչեւ անգլիացիներու ներթափանցումը շնդկաստան¹:

Արեւելահնդկական Ընկերութիւնը,² որ արդէն կը հանդիսանար գլխաւոր մրցակիցը հնդկահայ վաճառականներուն, 1639 թուականին կը գնէ Մադրասպատնամ (Madraspatnam) գիւղը եւ մէկ տարի ետք կը հիմնէ Ֆօրթ Ս. Գեորգ գործակալութիւնը, որ կը հանդիսանար նախընթացը

¹ Հայ վաճառականներուն սեփական նաւերը, ինչպէս՝ «Փաղրոնի», «Սանթա քրոչէ», «Սանթա քրոզ», «Հոփուէլ», «Սենթ Մայքըլ», «Արշակ» եւ այլն, կը գործէին Պասրայի եւ շնդկաստանի ջուրերուն վրայ Պարսից Ծոցի ուղիով: Վարդան Մելքոնեան, *1930-1955 Մարզիլի Հայ Ազգային Վարժարանի քսանհինգ ամեակ*, Պէրոյթ, 1955 էջ 64. Նաեւ Ashin Das Gupta, *Indian Merchants and the Decline of Surat*, Manohar Publishers and Distributors, New Delhi, 1994, p. 136.

² Արեւելա-հնդկական Ընկերութիւնը – East India Company or British East India Company – հաստատուած էր 1600 թուականին՝ անգլիացի վաճառականներուն եւ բրիտանական ագուական դասին պատկանող անհատներու կողմէն, բրիտանական պետութեան արքայական կանոնադրութեամբ: Ընկերութիւնը իր ներկայացուցիչները ունէր Պարսկաստանի, այնուհետեւ Միջագետք(Իրաք)ի նաւահանգիստներուն մէջ, որոնք նաև քաղաքական հանգամանք ունէին: Սկզբնական շրջանին անոր գործունէութիւնը կը կայանար աֆրոնի, բամպակի, աղի, պղպեղի եւ այլ համեմունքներու առեւտուրով: Տարիներու ընթացքին ընկերութիւնը իր ուշադրութիւնը կը դարձնէ արեւի շահաւէտ նիւթերու վրայ, ինչպէս՝ հնդկական թէյ եւ պարսկական մետաքսը, որ կը հանդիսանար հայ վաճառականներուն մենաշնորհը: Ընկերութիւնը կը լուծարուի 1874 թուականին:

Մադրասի Նախագահութեան¹, յէւեւ այս թուականէն առաջ 1600-ականներուն սկիզբը վերոյիջեալ գաղութարար ընկերութիւնը գործակալական գրասենեակներ ունէր Մաշիվաթնամ եւ Արմագոն բնակավայրերուն մէջ: Մադրասը նախագահութիւն կը ստանձնէ 1684 թուականին եւ աւելի ուշ 1785 թուականին կը հանդիսանար մէկը այն չորս նահանգներէն զոր հիմնեց Արեւելա-հնդկական ընկերութիւնը²:

Վերոյիջեալ թերթի յօդուածագիրը կը նշէ. որ Խօճա Գէորգն ու իր եղբայրը երբ կը ժամանեն Հնդկաստան, *Փազոդայի³ ծառը կարելի էր թափ տալ եւ ստանալ առատ ոսկեղրամ, այսինքն հարստանալ անհաւատալիօրէն շատ կարճ ժամանակուայ ընթացքին...⁴:*

Հնդկաստանի մէջ ծաւալելով առեւտրային աշխոյժ գործունէութիւն. Խօճա Գէորգ կը տիրանայ հեքիաթային հարստութեան, ումանք կը նշեն այն իբր չորս միլիարդ անգլիական ֆունդ սթերլինգ, ոչ միայն կանխիկ այլ բազմաթիւ անշարժ գոյք-կալուածներու հողատարածքներու տէր կը դառնայ Բենգալի, Բիհարի, Օրիսսայի, Մադրասի, Պոմպէյի, Սուրաթի, Համեղաբադի, Կալկաթայի մէջ եւ այլուր⁵:

Ինչպէս վերը նշուեցաւ, այս դատական գործը տարիներու ընթացքին հնդկական ինչպէս նաեւ բրիտանական մամուլի էջերուն մեծ տեղ գրաւած էր: Իր մահէն աւելի քան հարիւր տարիներ անց, պայքարը ենթադրեալ հարազատներուն միջեւ տիրանալու Գէորգի ժառանգութեան ողողած էր յատկապէս հնդկական թերթերը⁶:

https://en.m.wikipedia.org/wiki/Madras_Presidency Այցելութիւն կայքին 18.02.2022.:

¹ Մադրաս քաղաքը այժմ կը կոչուի *Չինայ*.

² Փազոդայ-ն ոսկեղրամ էր. որ շրջանառութեան մէջ էր դրուած Մադրասի նախագահութեան ժամանակաշրջանին մինչեւ 1818 թ.:

³ *The Times of India*, 21st April 1881. www.britishnewspaperarchive.co.uk այցելութիւն կայքին Սեպտեմբեր 27, 2022:

⁵ Ibid.

⁶ Liz Chater, Liz@chater-genealogy.com – email on September 2022.

Այս առնչութեամբ, բազմաթիւ մարդիկ հանդէս գալով կը պնդէին, որ մեռնողի հարազատներն են: Դատարանը բնականաբար, կասկածով կը վերաբերէր իւրաքանչիւր ինքնահռչակ ժառանգորդին: Պահ մը եղաւ, որ հանդէս եկողներուն թիւը անցեր էր 50-ը: Դատական նիստերէն մեկուն ընթացքին դատաւորներէն մէկը կը յայտարարէ, որ իր կարծիքով, իսկապէս շատ տարօրինակ է որ վերոյիշեալ «ժառանգները» հրապարակ գալով, կը պնդեն Գէորգի մահէն 60 տարիներ ետք միայն, աւելցնելով, որ շատ հաւանական է որ դրդապատճառը հանգուցեալի ժառանգութեան անհաւատալի շարքի մասին է: «...Չեմ կարծեր, որ ես հանդիպած ըլլամ Հնդկաստանի հետ առնչուող հայերու աւելի բարդ ծագումնաբանութեան, ուր կալուածքն ու ամբողջ ունեցումաձքը վիճարկուած ըլլայ այդքան երկար ժամանակ եւ այդքան բազմաթիւ, հեռաւոր երկիրներու մէջ բնակող, ինքնակոչ «ժառանգներու» կողմէն, կ'ըսէ ծագումնաբանութեան փորձագետ Լիզ Չէթըրը, որ երկար տարիներ է վեր կը գբադի հնդկահայոց ծագումնաբանութեամբ: Ըստ վերջինիս ուսումնասիրութեան, 7 Ապրիլ 1788-ին Կալկաթայի Գերագոյն Դատարանին ներկայացուած հաշիւները ցոյց կուտան, որ միայն Կալկաթայի մէջ գտնուող Գէորգի ունեցումաձքը 61.437 ռուպիի էր.....:

Ինչպէս վերը նշեցինք, Գէորգի ընտանիքը բազմանդամ էր. ծնողները, եղբայրները՝ Սովսէս, Բարադամ, Յովսէփ, Ռաֆայէլ, Սառա եւ այլն եւ վերջիններուս զաւակները: Գէորգ ամուսնացած էր եւ ուներ երեք որդիներ՝ Սիմոն, Խաչիկ եւ Արդիլվապի եւ մէկ դուստր՝ Ջիփայա (թերեւս Ջեփիտ): Վերջինս, իր հերթին դիմած էր դատարանին իր եղբօր՝ Սիմոնի որդուն դէմ դարձեալ ժառանգութեան խնդիրներով¹:

Պատմութենէն յայտնի է, որ 18-19-րդ դարերուն հնդկաց ովկիանոսի նաւահանգիստ-քաղաքներուն մէջ յաճախակի կը

¹ The Times of India, April 21st, 1881.

մոլեզներ ժանդախտի համաճարակը, յատկապես Պասրայի եւ Պաղտատի մէջ, իլելով հազարաւոր կեանքեր: Իրաքի կամ Միջագետքի բնակավայրերը ամենաշատը կը թիրախաւորուէին այս մահաբեր հիւանդութենէն ինչպէս Պասրան, որ նաւահանգիստ էր եւ իր յարակից բնակավայրերը Սաբխան¹, Գարմաթ Ալիի ճահճուտները², ինչպէս նաեւ Զուբէյր, Խոռ Արդուլլահ, Ֆաօ³ եւ անապատի երթելեկելի ճամբաներուն գոյութիւն ունեցող գիւղերն ու քաղաքները, յատկապէս երբ Շիա իսլամները իրենց ննջեցեալներուն ըստ իրենց կրօնական սուանդոյթներու եւ սովորութեան, անպայմանօրէն յուղարկաւորելու էին (եւ են) իրենց սրբատեղի՝ Նաճաֆի եւ Քերպալայի⁴ մէջ: Այսպէսով, համաճարակը կը տարածուէր անարգել իր հետ տանելով հազարաւոր զոհեր, որոնց մէջն էին նաեւ Խօճա Գէորգի ծնողները եւ ընտանիքի անդամներէն շատեր:

Ուրեմն, Գէորգ, երբ կը լսէ իր ընտանիքին հետ պատահած դժբախտութիւնը, անմիջապէս լիազօրագիր մը կը յանձնէ իր եղբօր՝ Սովսէս Աստուածատուրին, յանձնարարելով վերջինիս տնօրինել Հնդկաստանի մէջ իր բոլոր ունեցուածքը՝ բազմաթիւ շէնքեր, հողատարածքներ եւ այլն: Այնուհետեւ, Middleton անունով նաւ մը վարձելով եւ բեռնելով զայն իր շարժուն ունեցուածքով ճամբայ կ'իյնայ Կալկաթայէն դէպի Պասրա, ուր կը բնակէր իր ընտանիքը: Դժբախտաբար, նաւը կը խարսխէ նշուած նաւահանգիստը առանց զայն վարձողին, քանզի Խօճա Գէորգ 1774 թուականին մահացած էր նախն վրայ: Պասրա հասնելուն, բրիտանացի հիւպատոս շէնրի

¹ Սաբխա՝ Պասրայի արուարձաններէն:

² Այստեղ կը միանան Տիգրիսն ու Եփրատը՝ կազմելով Շաթ ուլ Արաբ գետը, որ 204 քմ անցնելով կը թափուի Պարսից Ծոց:

³ Այս երեք բնակավայրերը կը գտնուին Պասրայի հարաւը:

⁴ Նաճաֆ եւ Քերբալա-ն Շիա իսլամներու ամենաարբազան քաղաքներն են, ուր համապատասխանաբար թաղուած են Իմամ Ալի իբն Էբի Տալըբը եւ իր նահատակ որդին Տուսէյն իբն Ալի:

Մուրը (Henry Moore)¹ կը գրաւէ մահացածին պատկանող որոշ ապրանքները՝ ապահով խնամակալութեան նպատակով մինչեւ ցնօր տնօրինութիւն: Ապրանքները ի վերջոյ կը վաճառուին եւ կը վերածուին կանխիկ դրամի: Յաջորդ տարին հիւպատոսը կը մեկնէ Պոմպէյ, ուր իրեն (պարոն Մուրին) կը տրուի ժառանգութիւնը տնօրինելու կամ ըստ օրէնքի շարժուն կամ անշարժ կալուածներն ու գոյքերը բաժնելու լիազօրագիրներ Պոմպէյի քաղաքապետական դատարանին կողմէն: Իր եղբայր Մովսէսը հետագային կը դիմէ վերոյիշեալ դատարանը բողոքարկելու այդ վճիռը, որ սակայն կը մերժուի նշուած դատարանին կողմէ: Իսկ անշարժ գոյքը կը գտնուէր Բենգալ, Բիհար, Օրիսսա, Կալկաթա, Մուրաթ եւ այլուր:

Եղբայրը՝ Մովսէս, այնուհետեւ կը խնդրէ յանձնաժողով մը կազմել Պասրայի մէջ եւ այլուր ապացոյցներ վերցնելու իր եղբօր կտակի առկայութեան համար: Սակայն, քաղաքապետարանի դատարանը կը որոշէ, որ ենթադրեալ կտակը ժամանակաւոր բնոյթ ունի, եւ այն, որ Գէորգը մահացած էր առանց օրինաւոր կտակ ձգելու: Այս որոշումը կը բեկանուի Վերաքննիչ Դատարանին կողմէն: Իսկ դատարաններուն վճիռն իր հերթին կը բեկանուի Ջօրջ Էրրորդ արքայի կազմած Խոհուրդներուն կողմէն, այնպէս որ խնդրոյ առարկայ ունեցուածք-կալուածները տակաւին պիտի մնային առկախ դէպքան Մուրի մահէն ետք, որ պատահեցաւ Ապրիլ 1780 թուականին: Իսկ գործը տնօրինելու համար այն կը ստանձնէ

¹ շենքի Նեվիլ Մուր - Henry Neville Moore. Արեւելա-հնդկական ընկերութեան ներկայացուցիչն էր Պասրայի մէջ 18-րդ դարու երկրորդ կեսին, երբ Պարսկաստանէն Քարիմ Խան Ջընդ արշաւեց եւ պաշարեց Պասրա քաղաքը 11 ամիս մինչեւ վերջինիս անձնատուութիւնը: John Perry, *Karim Khan Zand. A History of Iran (1747-1779)*, Chicago, 1979 - An article by Bushra Kadhim Odah. "The Political Role of the British Agency in Basra (1763-1779)" -Department of History, College of Education, University of Qadisiyah, Ministry of Higher Education and Scientific Research, Iraq, 17 (3) (2020). <https://archives.palarch.nl/index.php/jae/ar>. Այցելութիւն կայքին 19.02.2023.

Մուրի կամակատարներէն մէկը, որ 1782-ին հաշիւ կը ներկայացնէ զումարի մնացորդը՝ ցոյց տալով այն իբր (82.564-1-44) ռուփիի չափով, վճարելով այն Պոմպէյի նախագահին եւ խորհուրդներու անդամներուն ի հաշիւ Խոջա Գէորգ Ղազարի կալուածներուն: Այնուհետեւ, հետագայ դատական գործընթացները կը շարունակուին: 23 Մայիս 1798 արքայի խորհուրդները կը հրահանգեն Պոմպէյի դատարանին ձեռնարկելու անկտակ վախճանեալի կալուածներու բաժանումը: Սակայն, այդ միջոցին կը մահանայ Խօճա Գէորգի եղբոր Մովսէս Աստուածատուրի փաստաբանը: 1803 թուականին դատարանի գրանցողէն (Ռեջիսթրար)էն կը պահանջուի պատրաստել Խօճա Գէորգի ծագումնաբանութեան ծառը, ցոյց տալու համար ովքեր իրաւունք ունէին ժառանգելու տուեալ գոյքը: Այնուհետեւ, հինգ տարիներ ետք, 1807 թուականին, տուեալ պաշտօնեան կը յայտնէ, որ որոշ յայտարարութիւններէ եւ հարցադրումներէ ետք, ան չէ յաջողած բաւարար ապացոյցներ հայթայթել այն մասին, թէ ովքեր են ժառանգութեան իրաւունքը ստացեր որպէս ժառանգատուի անմիջական յաջորդ ազգականը: Այնուհետեւ, խնդիրը առկախ կը մնայ եւ ոչինչ կը կատարուի մինչեւ 1850 թուականը

1859 թուականին, Պոմպէյի կառավարիչ Լօրդ Ֆոլքլըր, կ'առաջարկէ յաջորդ անմիջական ազգականը կամ մերձաւորը իր ներկայացուցիչը առաքել Պոմպէյ դատին վերջնական լուծում մը տալու համար: Խնդիրը ժառանգութեան երեք հինգերորդ բաժինը հաւասար բաժնելու մասին էր, որ դատարանի իրաւասութեան ներքոյ կը գտնուէր եւ տարեկան կուտակումներէ ետք, այս զումարը հասած էր մինչեւ 2.22.155 ռուփիի: Սակայն, անյալտ կամ միտումնաւոր պատճառներով բաժանումը կ'ուշանայ եւ այդ ընթացքին նշուած բարեհաճ դատաւորն ալ կը մահանայ: 1859 թուականին իր յաջորդը կը հրաժարի իր համաձայնութիւնը տալ առաջարկուող

միջոցներուն բաշխմանը առանց Գերագոյն Դատարանի հրահանգին:

Յիշատակութեան արժանի է, որ այս ժամանակամիջոցին քանի մը այսպէս կոչուած «*շահառուներ*» կը հերքեն այն տեղեկատուութիւնը, որ իբր Խօճա Գեորգին մօտիկ ազգականներէն մին Լօնտոնի մէջ օսմանեան դեսպանէն ստացած ուղեգիրով մը ներկայացեր է Բրիտանիոյ արսուաքին գործոց նախարար Լորդ Րասըլին, որպէսզի խնդրոյ առարկայ կալուածքը դրուի Բ. Դրան տնօրինութեան ներքոյ, որն ալ իր պատասխանատուութիւնը կրելու է անգլիական օրէնսդրութեան համաձայն՝ վերականգնելու համար նշուած կալուածքի օրինական ժառանգներուն օրինական իրաւունքները:

...Եւ ահա ճակատագրի հեգնանքը ... 11 Յունիս 1863-ին Լօնտոնի մէջ օսմանեան դեսպան Սուգուրուս փաշան, հայ վաճառականի քրտնաջան աշխատանքով վաստակած գումարէն ինչ ինչ պատճառներով կը ստանայ 1.33,392-0-4.1/2 ռուբլի, որ հաւասար էր Պոմպէյի կառավարութեան մօտ եղած գումարի երեք հինգերորդը: Վերջինիս մօտ կը մնար 88.928-3 ռուբլի վերջին գումարի կուտակումներով:

4 Սեպտեմբեր 1868 թուականին դատարանը կը հրահանգէ յանձնախումբ մը կազմել հետաքննելու համար Կ. Պոլսոյ, Վենետիկի, Վիեննայի եւ այլուր գտնուող վկաներուն ճշմարտացիութիւնը, փոխանակ այդ յանձնախումբը Պասրա առաքելու, ուր յաւելեալ խնդրարկուներ նոյնպէս պահանջ ներկայացուցած էին 20 Մարտ 1873-ին եւ մերժուած 8 Յունիս 1874-ին:

Այս ամէնը սակայն, ապացոյցներ կը պահանջէր դատարանին եւ հանրութեանը գոհացում տալու եւ, ինչու ոչ նաեւ՝ անմիջապէս շահագրգիռ անձանց, որոնք հետաքրքրութեամբ կը սպասէին այս անսովոր դատավարութեան աւարտը: Բացի այդ, Բրիտանիոյ թագաւորի եւ իր ստեղծած Խորհուրդներու կողմէն, հրաման մը կ'արձակուի, որ ով համոզիչ ապացոյցներ ներկայացնէ իբր Գեորգ Ղազարի

օրինաւոր ժառանգորդ, այն ալ կը ժառանգէ նաեւ Ռաֆայէլ Իսկինդէր Գրեգորեոյի թողած ժառանգութիւնը եւս, որ մահացած էր Լոնդոնի մէջ՝ այնտեղ թողնելով իր ողջ ունեցուածքը բրիտանական կառավարութեան:

Իսկ Խօճա Գեորգ Ղազարի ունեցուածքը (մինչեւ 1881 թուականը) տակաւին կը մնար Հնդկաստանի դատական մարմիններուն իրաւասութեան ներքոյ, ինչպէս նաեւ իր եղբոր՝ Մովսէս Աստուածատուրի նոյնպէս ահեղի ունեցուածքը:

Եզրակացնելով՝

Հարկաւոր է այստեղ հարցադրում մը ընել. Եթէ այս եւ միւս միլիարդատէր հայ վաճառականները իրենց բազմամիլիոններէն բաժին հանէին Արեւելեան կամ Արեւմտեան Հայաստանի ազատագրութեան արդար դատին, արդեօք կարելի չէր **ԳՆԵԼ** Հայաստանի անկախութիւնը, մանաւանդ, որ Օսմանեան կայսրութիւնը իր հիւանդագին կեանքը երկարաձգելու համար երոպական երկիրներէ դրամական փոխառութեան գործընթացի մէջ էր: Տարական Ռուսաստանի օրինակը վկայ, երբ վաճառեց Ալեասքան ընդամենը 7.2 միլիոն դոլարով...:

SEDA D. OHANIAN
Ph.D in History, Armenia

THE GREAT ARMENIAN CASE

SUMMARY

Keywords; Indian Armenian Merchants, Khoja Gevorg Ghazar. Inheritance, British-Indian Courts, Court Case, "The Times of India". Daily Newspaper.

The famous Khoja Gevorg Ghazar died a very wealthy man. However, he died intestate. His inheritance was valued about four million pound sterling and was therefore, the center of attention of

his so-called "relatives". The fight between these people carried on for more than 150 years and made its appearance in many newspapers especially "The Times of India". The outcome of the court proceedings did not prove the sincerity of any of the "relatives" and therefore Khoja Gevorg's inheritance remained in India.

СЕДА ОГАНЯН
к.и.н., Армения

ВЕЛИКИЙ АРМЯНСКИЙ СУДЕБНЫЙ ПРОЦЕСС

РЕЗЮМЕ

Ключевые слова: индийские армянские купцы, Ходжа Геворг Газар, наследство, британо-индийские суды, судебное дело, ежедневная газета «Таймс оф Индия».

Знаменитый армянский купец из Индии, Ходжа Геворг Газар скончался, оставив большое наследие. Однако ушел он из жизни без завещания. Его наследство оценивалось примерно в четыре миллиона фунтов стерлингов, и поэтому оно оказалось в центре внимания его так называемых родственников. Ссора между этими людьми продолжалась более 150 лет и была опубликована во многих газетах, особенно в «Таймс оф Индия».

В итоге судебного разбирательства не была доказана честность ни одного из «родственников» и поэтому наследство Ходжи Геворга осталось в Индии.

ԵՎՐՈՊԱ ԵՎ ԱՄՆ

ԷՂՄՈՆՂՈ ՂԵ ԱՄԻՉԻՍԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻ ՀԱՅԵՐԻՄԱՍԻՆ

Հիմնաբառեր. Էդմոնդո Ղե Ամիչիս, «Կոստանդնուպոլիս», պոլսահայեր, ազգային առանձնահատկություններ, հայրենիների գեղեցկություն, հագուկապ, շիրմաքարեր:

Իտալացի գրող Էդմոնդո Ղե Ամիչիսը (De Amicis) (1846–1908) համաշխարհային հռչակի է արժանացել 1886-ին հրատարակած «Սիրտը» մանկական վիպակով, որը մի քանի ամսում տպագրել են ավելի քան քառասուն իտալական հրատարակչություններ և թարգմանվել է տասնյակ լեզուներով (հայերեն՝ 1888-ին¹): Ղե Ամիչիսը հայտնի է նաև «Օվկիանոսում» ակնարկների գրքով (1889), կրթության հարցերին նվիրված «Ուսուցչի սիրավեպը» (1890) վեպով և բարոյախրատական մի շարք պատմվածքներով: 1908 թ. առաջադրել է գրականության Նոբելյան մրցանակի:

Ղե Ամիչիսը ծանոթ է եղել հայ ընթերցող հանրությանը արևելահայ թե արևմտահայ: Սկսած 1879 թվականից նա քազմիցս թարգմանվել է հայերեն, հիմնականում ֆրանսերենից, գերմաներենից և ռուսերենից (բացառյալ Մխիթարյանների թարգմանությունները բնագրից)²: 1889 թ. «Բազմավեպը»

¹ Տես Միրո, Դարոցական տարտյ մը պատմութիւնը Եդմոնդ Տէ Ամիչիսի, «Բազմավեպ», հատոր ԽԶ, 1888, էջ 76-85, 125-140, հատոր ԽԷ, 1889, Յունուար-Մարտ, էջ 50-63, Ապրիլ, էջ 116-120, մայիս, էջ 145-147, Յունիս, էջ 176-181:

² Տես Եդմոնդոյ ղէ Ամիչիս, Ուկիանու վրայ գաղթականաց նաւամուտքն, «Բազմավեպ», 1889, էջ 190-193: Միրո: Աշակերտի յիշատակարանը, ֆրանս. թարգմ. Փ. Վարդանեան: Թիֆլիս, 1889, Փոքրիկ թմբկահարը: Զրոյց, Թիֆլիս, 1889: Տղաքներուն համար: Թարգմ. Հ. Ար. Քասգանտիլյան, Վենետիկ: Ս. Ղազար, 1899, «Սիրտ» գրքից ինը պատմութիւն, գերմ. թարգմ. Քամալեանց, Թիֆլիս, 1906, Հիւանդապահ որդին, թարգմ. Բիւրեղ, Թիֆլիս, 1910,

նրա մասին գրել է. «Արդէն ծանօթ է ազգիս իտալացի նշանաւոր հեղինակն Էդմոնդ Դե Ամիչիս իւր Կ.Պոլիս և Միրտ գրութեամբք, որոնք թարգմանուելով՝ հայ հասարակութեան մէջ մեծ ընդունելութիւն գտան»¹: Հայերէն են թարգմանվել նաև Դե Ամիչիսի որոշ հոդվածներ²: Նրա մի քանի պատմվածքներ ընդգրկված էին խորհրդահայ դպրոցական դասագրքերում:

Ինչպես նշված է վերը կատարված մեջբերման մէջ, Դե Ամիչիսից առաջինը հայերէն թարգմանվել է նրա «Կոստանդնուպոլիս» (Constantinopoli) ճամփորդական գիրքը և որոշ կրճատումներով լույս տեսել «Բազմավէպում» (1879–1881)³: Այս երկն առանձնակի տեղ է գրավում Դե Ամիչիսի գրական ժառանգության մէջ: 1874 թվականին գրողը որպէս իտալական մամուլի թղթակից կարճատև ուղևորություն է կատարել Պոլիս ընկերակցությամբ իր նկարիչ ընկեր Էնրիկո Յունկկի (1849–1978), որը գծանկարներ է կատարել ծրագրված պատկերագարդ հրատարակության համար: Դե Ամիչիսն ուսումնասիրել է օսմանյան մայրաքաղաքը, նրա մասին ստեղծված գրականությունը և ամենից առաջ Թեոֆիլ Գոթյեի

Ֆլորենտացի գրագիրը: Թիֆլիս, 1911, «Միրտ» գրքից ծնողների նամակները: Գերմ. թարգմ. Քամալեանց, Թիֆլիս, 1912: Գնացք ազատող աղջիկը; թարգմ. Ս.Ս., Վաղարշապատ, 1913, Փոքրիկ հերոսներ, թարգմ. Ս.Ս., Վաղարշապատ, 1914, Էդմոնդո դե Ամիչիսի երեք խօսքը աշակերտ-աշակերտուհիներին թարգմ. Ս. Քամալեանց; Թիֆլիս, 1918, Անձուլեր տղան: Թարգմ. Բ. Մար. Մոսկվա, 1926, Կարմիր մեխակ, Պատմածք, թարգմ. Բ. Վարդանեան, Թեհրան, 1952, Ապենիններից մինչև Անդեր (պատմվածքներ), Երևան, 1956, ռուս. թարգմ. Ս. Այունց, Միրտը: Աշակերտի հուշատետրը, Երևան, 1969, ռուս. թարգմ. Ս. Այունց: Կա վկայություն, որ «Միրտը» լույս է տեսել նաև 1912 և 1927 թթ. Ալեքսիս Հովսեփյանի թարգմանությամբ (տես Ստեփանյան Գ., Կենսագրական բառարան, հ. Բ, Երևան, 1981, էջ 223):

¹ «Բազմավէպ», 1889, էջ 290:

² Տես Էդմոնդ Դե Ամիչիս, Կոստանդ Գորլեն, «Բազմավէպ», 1885, հատոր ԻԳ, էջ 161-166, 274-279, 1886, հատոր ԽԴ, էջ 45-52:

³ Կոստանդնուպոլիս, Էտմոնտոյ տէ Ամիչիս իտալացոյ, հատոր ԼԷ, 1879, էջ 238-254, 289-308, 1880, էջ 17-37, 165-183, 274-285, 373-382, հատոր ԼԷ, 1881, էջ 238-, 289, ԼԸ, էջ 17-, 166-, 274-, հատոր ԼԹ, էջ 174-, 259-:

«Կոստանդնուպոլիսը» (1852): Դե Ամիչիսի գիրքը հրատարակվել է 1877–1878 թթ., Միլանում, անմիջապես հաջողություն գտել ընթերցողների շրջանում և թարգմանվել է եվրոպայան հիմնական լեզուներով: Եղել են նաև այն քննադատողներ (օրինակ, Ռեմիջիո Ջենան «Զբոսանավով Ջենովայից Կոստանդնուպոլիս» գրքույկում, 1887). 2005 և 2007 թթ. հատորը վերահրատարակվել է կրճատված՝ իտալացի նշանավոր գրող Ռևերտո Էկոյի ներածությամբ, որտեղ վերջինս Դե Ամիչիսի նկարագրությունը համարել է քաղաքի մասին ամենից կինեմատոգրաֆիստական գրվածքը: Իսկ թուրք գրող Օրհան Փամուրն այդ ստեղծագործությունը համարել է 19-րդ դարում Ստամբուլի մասին գրված լավագույն գիրքը:

Դե Ամիչիսի «Կոստանդնուպոլիսն» ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է աշխարհի հնագույն և հարուստ պատմություն ունեցող քաղաքներից մեկը, որը նա չի վարանել անվանել «*համընդհանուր և ինքնիշխան գեղեցկություն... երկրագնդի ամենագեղեցիկ վայրը՝ ողջ աշխարհի դատելով*»¹: Այն անգնահատելի աղբյուր է 19-րդ դարի Կոստանդնուպոլիսի ճարտարապետության, տարբեր ազգությունների, բնակչության առօրյա կյանքի և բազմաթիվ իրողությունների վերաբերյալ:

«Կոստանդնուպոլիս» գրքում 50-ից ավելի անգամ հիշված են հայերն ու հայկական իրողությունները: Այդ հիշատակումները կներկայացվեն սույն հաղորդման մեջ գրքի 1388 թ. հրատարակության հիման վրա՝ համապատասխան էջերը նշելով շարադրանքում, փակագծերի մեջ:

Կոստանդնուպոլիսը Դե Ամիչիսն անվանել է «*ազգերի և կրոնների ծիածանային խճանկար*» (35), ուստի նա հայերին մեծ մասամբ հիշել է այլ ազգությունների շարքում՝ բոլորի ազգային առանձնահատկությունները թվարկելիս: Սակայն նա հայ մարդուն առաջին անգամ հիշատակել է տակավին քաղաք

¹ Edmondo De Amicis, Costantinopoli, Treves, 1888, p. 3.

ուոք չդրած, նշելով, որ նավում, ի թիվս տարբեր ազգերի ներկայացուցիչների, եղել է նաև մի «*հայ վաճառական, որն իր մատնների մեջ սահեցնում էր արեւելյան համրիչի գնդիկները*» (6): Հաջորդ հային, ավելի ճիշտ հայերին, Դե Ամիչիսը հանդիպել է արդեն նավից իջնելուս պես, երբ նրանց «*վրա են տվել*» թուրք, հույն, հայ և հրեա բեռնակիրները (70): Այնուհետև նկարագրելով քաղաքի ճարտարապետական կառույցները հիշել է «*հունական, կաթոլիկ, հայկական եկեղեցիները, մեկը մյուսի վրա, կարծես միմյանց հաղթելու համար լինեին*» (29):

«Կամուրջը» գլխում Դե Ամիչիսը շատ գուննդ նկարագրել է Ասիան Եվրոպային կապող կամրջի վրայով երթեւեկող բազմազգ հանրությունը, «*հույների, թուրքերի և հայերի խառնակ ամբոխը*» (34), որոնց մեջ առանձնացրել է նաև մի հայ տիկնոջ. նրա գլուխը դուրս է ցցվել սաղափով և փղոսկրով զարդարված գահավորակի միջից. կնոջ երկու կողմերում եղել են սպիտակ ծածկոցով փաթաթված երկու բեդլին (34): Քիչ անց նկարագրելով տարբեր ազգերի կանանց, նա հիշել է նաև «*Տրապիզոնցի հայուհուն ամբողջովին սև և քողածածկ ինչպես թաղումի ուրվական*» (35): Գրելով պոլսեցիների կոշիկներ հագնելու ազգային նախընտրությունների մասին գրողը նշել է, որ թուրքերի մաշիկները դեղին են, հայերինը կարմիր, հույներինը փիրուզագույն, հրեաներինը սև (36): Շարունակելով պատկերել կամրջով երթեւեկողներին հիշատակել է նաև «*հայ բեռնակիրների մի գունդ, որ անցնում էր ուսերի վրա կրելով երկու երկար ձողեր, որոնցից վաճառքի անհամաչափ բեռներ են կախված*» (36): Հայ բեռնակիրներին նա հիշել է նաև Բերայի հրդեհին նվիրված գլխում, երբ աղետի ժամանակ զգացվել է բեռնակիրների պակաս, քանի որ «*նրանց մեծագույն մասը նույն օրը գնացել էր հայ ազգային հանդեսին, որ տոնում էին Բելքոզում*» (36⁹): Բեռնակիրներից հետո Դե Ամիչիսի ուշադրությունը գրավել են կրոնավորները, որոնց մեջ «*հայ քահանայի սեւ քողն է ծածանվում*» (38): Եվ Կոստանդնուպոլսի բոլոր ազգերն էլ

պատրաստ են ծառայել հյուրին. «*հայր՝ մորուքդ սափրելու, հրեան՝ կոշիկներիդ փայլեցնելու, թուրքը՝ նավակը տանելու, սեւամորթը բաղնիքում մերսելու, հույնը սուրճ տալու համար*» (67): Նա հիշել է նաև, որ իրենց իջևանած հյուրանոցում հաճախ իրենց դնում էին նկարիչների տեղ և երեկոյան նկարիչների համար բնորդուհիներ առաջարկողները կիսաձայն հարցնում էին, թե ի՞նչ են ցանկանում՝ «*թրքուհի՞, հելլենուհի՞, հայուհի՞, հրեուհի՞, սևամորթ կին*» (65): Սակայն կարելի է ենթադրել, որ նման ծառայություն առաջարկողներն ավելի շուտ եղել են կավատներ՝ մարմնավաճառների տերեր:

Էդմոնդո Դե Ամիչիսը, շարունակելով իր «պտույտը Պոլսո թաղերուն մեջ», ամենուրեք հանդիպել է հայերի, «*հունական և հայկական սրճարանների*» (70), լսել հայ ջրկիրի թուրքերեն բացականչությունը (71), ապա հայտնվել մի գերեզմանատանը, որի լայն ճանապարհներին «*հայեր և հույներ են քայլում*» (79): «Մեռյալների մեծ դաշտը» գլխում Դե Ամիչիսն առաջին ուշագրսավ դիտարկումն է կատարել հայկականի, տվյալ դեպքում՝ տառերի վերաբերյալ: «*Կանգ առանք հայկական գերեզմանատանը: Տապանաքարերը բոլորն էլ խոշոր և հղկված էին, ծածկված արձանագրություններով՝ հայոց լեզվի կանոնավոր և բարեձև տառերով*» (79): Հազվադեպ է պատահել, որ օտարականը գնահատի մեսրոպյան տառերի գեղեցկությունը. գրչի մարդ Դե Ամիչիսի աչքից չի վրիպել այդ հանգամանքը, որի աչքին հայոց տառերը կանոնավոր են և բարեձև (բնագրի լեզվով՝ «regolare ed elegante»): Շարունակելով հայկական տապանաքարերի նկարագրությունը՝ նա նշել է, որ դրանցից «*գրեթե յուրաքանչյուրի վրա մի պատկեր էր քանդակված, որ հանգուցյալի արհեստը կամ հավատն էր ներկայացնում: Մուրճեր, սղոցներ, գրիչներ, արկղեր, վզնոցներ. լումայափոխը ներկայացված է կշեռքով, քահանան՝ գլխանոցով, վիրաբույժը՝ նշտարով: Մի քարի վրա մարմնից անջատված գլուխ տեսանք, մարմնից արյուն էր կաթում. սպանվածի կամ գլխատվածի գերեզման էր: Այնտեղ*

մոտակայքում մի հայ խոտի վրա պառկած, երեսը դեպի երկինք՝ քնած էր» (79-80): Դե Ամիչխսի նկարագրած շիրմաքարերի նմանօրինակ նմուշներ այսօր էլ կարելի է տեսնել Ստամբուլի հայկական գերեզմանատներում:

Այնուհետև հունական Տատառլա թաղամասում Դե Ամիչխսը և իր ընկերը մտել են մի ճաշարան: *«Մտանք մի քիչ քաշվելով, քանի որ այնտեղ ստորին խավի հույների և հայերի մի խումբ կար. վախենում էինք, որ մեզ հեզնական հետաքրքրությամբ կնայեն, բայց մեզ ոչ ոք հայացքի չարժանացրեց» (84-85): Այստեղ առաջին անգամ Դե Ամիչխսը թույլ է տվել «քաղաքականապես ոչ կոռեկտ» արտահայտություն իր տեսած ազգությունների հանդեպ, քանի որ մինչ այդ, խոսելով բեռնակիրների և թվացյալ «ստորին» զբաղմունքների տեր մարդկանց մասին՝ երբեք նրանց չէր դատել: Ճաշարանում գտնվողներից անտեսվելը նա բացատրել է այն հանգամանքով, որ պոլսեցիներն *«աշխարհի ամենաքիչ հետաքրքրասեր մարդիկ են. պետք է առնվազն սուլթան լինես կամ խենթի պես մերկ քայլես Բերայի փողոցով, որ ինչ-որ մեկը գիտակցի, որ գոյություն ունես աշխարհում» (85):**

Հալլըջը օղլու թաղամասում Դե Ամիչխսի ուշադրությունն են գրավել *«սիկնոջական կերպարանքով գեղեցիկ հայուհիներ և հեզասահ թրքուհիներ, որոնք նայել են քողի միջից. լսվում է հունարեն, հայերեն և իսպաներեն՝ հրեաների իսպաներենը» (96): Հայուհիներին որպես գեղեցիկ և բարետես նա հիշել է նաև հույներին նվիրված գլխում (219): Պոլսեցի հայուհիների գեղեցկությունը մեկ անգամ չէ, որ արժանացել է եվրոպացի այցելուների ուշադրությանը. հիշենք մեկը: Ֆրանսիացի հոչակավոր գրող Պրոսպեր Մերիմեն իր «Կրկնակի սխալ» նովելում հերոսուհու այն հարցին, թե ինչպիսին է կանանց դրությունն Օսմանյան կայսրությունում, պատասխանել է. *«Օ, դա ամենավատն է: Թուրք կանանց մասին չարժե խոսել: Ինչ վերաբերում է հույն և հայ կանանց, ապա ամենաշատը, որ**

կարելի է ասել հոգուտ նրանց, այն է, որ նրանք չափազանց զեղեցիկ են¹:

«Մեծ բազարը» գլխում Դե Ամիչխը նկարագրել է մինչ օրս Ստամբուլում գործող ձկան շուկան, որտեղ խոսելով Մարմարա ծովի ոստրենների մասին, նշել է, որ միայն հույներն ու հայերը գիտեն դրանց պատրաստման ձևը (103): Տեղին է նշել, որ բրնձով լցունած ոստրեն (ուլնականջ կամ միդիայի տուլմա), նաև թոփիկը և անուշապուրը, Թուրքիայում ճանաչված են որպես տեղի հայերին բնորոշ կերակրատեսակ:

Նույն «Մեծ բազարում» Դե Ամիչխը, նկարագրելով բազմազգ վաճառականներին, նախ հիշել է հույնին, ապա նշել է, որ «Հայը, հավասարապես խելացի, սակայն արտաքնապես սովելի համեստ, հորդորում է շողորորթաբար» (109): Հիշատակել է նաև «հունական, հայկական և չերքեզական հագուստները» (112): Հայերենն այլ լեզուների հետ մեկտեղ Կոստանդնուպոլսի առևտրի լեզուներից է. «Եթե հունարեն գիտես թուրքերեն են խոսում, եթե թուրքերեն գիտես՝ հայերեն են խոսում, եթե հայերեն գիտես՝ իսպաներեն են խոսում, բայց մի կերպ միավորվում են և խաբում են քեզ» (117): Եվ ապա, մեծ ջուկայի փակվելուց առաջ՝ «հույներն ու հայերը աղաղակելով ընթանում են ճամփաներով՝ թեններին մի շալ կամ մի գորգ» (134):

«Կոստանդնուպոլիս» գրքում հայկականի այլ եիշատակություններ տարտղնված են այլ էջերում ևս, ինչպես, քաղաքի տոների առթիվ հիշվել են նաև «հունական և հայկական տոնացույցի անհամար սրբերը» (179) և կամ «բուլղար և հայ բանվորների խմբերը, որոնք աշխատում էին Եզհիպտոսի գրանիտի և Փարոսի մարմարի կտորներով մզկիթներ բարձրացնելուի» (212): Սակայն մի զուգուս ամբողջովին վերնագրված է «Հայերը» (214-216), որտեղ արդեն Դե Ամիչխան

¹ Prosper Mérimée, La double Méprise (La Guzla). Calmann-Lévy, 1912, p. 91.

ասես ընդհանրացնում է իր պատկերացումները Պոլսի այդ հայատուակ-ռայա ժողովրդի մասին:

«Գրեթե միշտ գրադված լինելով թուրքերով ևս ժամանակ չունեի, ինչպես յուրաքանչյուրը կարող է հասկանալ. շատ ուսումնասիրել մյուս ազգերին՝ հայերին՝ հույներին և հրեաներին, որոնք կազմում են ռայա բնակչությունը. մյուս կողմից, երկար քննության կարիք կա, քանի որ այդ ժողովուրդներից յուրաքանչյուրը պահել է իր հատուկ բնույթը. երեքի արտաքին կյանքը թուրքական գույնը որպես բողոսրկություն է առել, որ ուրիշ կողմից եվրոպական բաղադրակրթության երանգի տակ զնայով կորչում է. ուստի ներքին էլ դժվար է քննել, որպես շարժուն և հարափոփոխ մի պատկեր: Մասնավորապես հայերը «հոգով և հավատով քրիստոնյա են, իսկ ծնունդով և մարմնով՝ ասիացի մահմեդականներ», և ոչ միայն դժվար է նրանց ներսից քննել, այլ՝ թուրքերից տարբերել, քանի որ նրանց մեջ այն մասը, որ եվրոպական զգեստ չի առել, թուրքերի պես է հագնվում, բայց չնչին տարբերություններով, և գրեթե այլևս չի գործածում թափքե մեծ զլխարկ, որ մի քանի մասնավոր գույներով ժողովրդի որոշիչ նշանն էր: Եվ տեսքով էլ շատ չես տարբերվում թուրքերից: Մեծ մասամբ բարձրահասակ ես, կորովի, հաղթանդամ, բաց մաշկով, քայլվածքով և շարժումներով՝ ծանր, և իրենց բնությանը հատուկ երկու հատկությունները դեմքի վրա ցույց են տալիս, համարձակ, զվարթ. հնարամիտ, հաստատուն հոգին, որի պատճառով զարմանալի կերպով հարմար են վաճառականության համար, և այն հանդարտությունը, որով ոմանք ցանկանում են կոչել ծառայական փափկություն, որով հաջողեցրին ամեն տեղ իրենց համար բույն դնել Հունգարիայից մինչև Չինաստան, և իրեսց ընդունելի դարձրին մասնավորապես թուրքերի մեջ, որոսց վստահությունը շահեցին որպես հլու հպատակներ և մեծարող բարեկամներ: Ոչ արտաքնապես, ոչ ներքնապես մարտական և դյուցազնական բան չունեն: Թերևս բուն ասիական երկրում.

որտեղից որ եկան, այսպիսին չէին, և իրավամբ ասում են, որ այնտեղ բնակվող իրենց եղբայրները միշտ շատ տարբեր են, բայց նրանք, որոնք Բոսֆոր փոխադրվեցին, իսկապես հանդարտ և խոհեմ ժողովուրդ են, կյանքում համեստ, ուշադրությունը միայն ունեցի իրենց առևտուրը, և Կոստանդնուպոլսի մյուս ժողովուրդների մեջ ամենաանկեղծ հավատացյալներն են համարվում: Թուրքերը նրանց անվանում են «պետության ուղտերը», իսկ եվրոպացիներն ասում են, որ ամեն հայ հաշվապահ է ծնվում. այս երկու խոսքը մեծ մասամբ ճիշտ են, որովհետև հենց իրենց նյութական ուժեղությամբ և հաջողակ ու սուր իմացականությամբ, բացի ճարտարապետների, ճարտարագործների, բժիշկների հանճարեղ և համբերատար արհեստավորների մեծ թվից, իրենք կազմում են Կոստանդնուպոլսի բեռնակիրների և լուսնայափոխների մեծ մասը. բեռնակիրներ, որ բեռներ են կրել և լուսնայափոխներ, որ առասպելական հարստություն են դիզում: Մակայն ոչ ոք նախապես չի իմանա, որ Կոստանդնուպոլսում հայեր կան, այնչափ որ, ինչպես առակն է ասում, տունկն առել է հողի գույնը: Նույնիսկ կանայք, որոնց պատճառով հայի տունը փակ է օտարի առջև, գրեթե նույնչափ խստությամբ, որքան մահմեդականների առջև, հագնում են թրքուհիների հագուստ, և շատ փորձառու աչք է պետք, որ նրանց ճանաչի մահմեդական կանանց մեջ: Նրանք էլ մեծ մասամբ սպիտակամորթ և գիրուկ են, և արևելյան կիսադեմքերի արծվային գիծն ունեն՝ մեծ աչքերով և երկար հոնքերով. շատերը բարձրահասակ և տիկնավայել լինելով, եթե տուրքանով պսակված լինեին, ամենագեղեցիկ շեյխեր կկարծվեին, և գրեթե բոլորն էլ ազնվական և միանգամայն համեստ կերպարանքով են, որոնց եթե մի բան է պակասում, հոգու լույսն է, որ հույն կնոջ դեմքի վրա փայլում է» (214-216):

Հայերի՝ հաջող վաճառական լինելու և մինչև Չինաստան գործելու վերաբերյալ հատվածն արձագանքում է Էմանուիլ Կանտի հայտնի բնորոշմանը («Մեկ այլ քրիստոնյա

ժողովրդի՝ հայերի մեջ իշխել է հատուկ տեսակի ինչ-որ անտրական ոգի, ավելի որոշակի՝ նրանք զբաղվել են փոխանակությամբ, ոտքով ճանապարհորդելով Չինաստանի սահմաններից մինչև Գվինեական ափի Կորսո հրվանդանը...»¹), որին Դե Ամիշյաը կարող էր ծանոթ լինել:

Հաջորդ հույներին նվիրված ենթազվիտում Դե Ամիշյան ասել է. «Որչափ որ դժվար է աչքով հային ճանաչելը, այնչափ հեշտ է հույնին ճանաչելը» (217): Հայերին թուրքերից և այլ ազգերից չզանազանելու մասին նրա հավաստիացումը կանխակալ չէ. այս ժամանակաշրջանի օսմանյան հայ հպատակների փորագրանկարներից կարելի է դատել, որ իսկապես էական տարբերություններ չկան հայերի և մյուս օսմանցիների միջև՝ առնվազն հագուկապի առումով, իսկ նիստուկացի առումով նույնությունն էլ վկայել են այլ ժամանակակիցներ ևս²:

Հաջորդ շարադրանքում հայերն ու հայկականը Դե Ամիշյաը հիշատակել է տարբեր համաբնագրերում, հիշատակել, որ Բերայի մեծ հրդեհի էաջորդ օրերին «Տատառայի բարձունքներն ու հայոց մեծ գերեզմանատունը ծածկված էին ճամբարներով» (382), հիշել «Քել նավահանգստի թաղամասի հունական և հայկական փոքրիկ տները» (427), Բերայի փողոցներում շրջող «իտալացի, ֆրանսիացի, հույն, հայ ընտանիքները» (376), որ «Օրթաբյոյում ապրել են շատ հայ, ֆրանսիացի և հույն բանկիրներ» (556) և որ «Հյունքյար-Իսթելեսի փոքրիկ գյուղը մնում է Կոստանդնուպոլսի հարուստ հայերի սիրած վայրը» (571): Նա կատարել է ուշագրավ ընդհանրացումներ. «Թուրքը հանդուրժում է հային, արհամարհում է հրեային, ասում է հույնին, չի փստահում

¹ Immanuel Kant, *Anthropology from a Pragmatic Point of View*, Cambridge Texts in the History of Philosophy, ed. by Robert B. Louden, 2006, p. 222.

² Այսպես, ըստ Կոստանդնուպոլսում Եվեդիայի դեսպան Կառլ Գուստավ Լովենհիելմի (1790–1858), հայերի սովորությունները շատ նման են թուրքերին (տես Greve Carl Gustaf Löwenhielms *Minnen*, II, Stockholm, 1927, էջ 42):

ելրոպացուն» (548): Խոսելով Դոլմաբահչե պալատի մասին՝ իտալացի գրողը հիշել է, որ այն հայ ճարտարապետի կառուցածն է, սակայն չի տվել Կարապետ Պայանի անունը (*Թվում է, թե դրա առաջին նախագիծը պետք է հանգիստ հայ ճարտարապետինը չլիներ»*, 271): Ուշագրավ է նաև, որ Դե Ամիչիսը հայերին հիշել է նաև Կոստանդնուպոլսի վերաբերյալ պատմական ակնարկներ կատարելիս: Գրելով 1453-ի գարնանը Մեհմեդ Բ-ի քաղաքի գրավման մասին՝ նա նշել է, որ հարյուր հազարավոր մարդիկ *«Պեշիկթաշի ծոցից 200 ցոկանավ էին քաշում, որ հայ հանքագործների բանակները գետնի խորքն էին տանում»* (397): Իսկ բյուզանդական հին պալատի մասին զլխում հիշատակել է պատմական դեմքեր, որոնց մեջ է եղել նաև այն *«հաղթանդամ հայուհին, որն Իբրահիմին հիմնարացրեց սիրով, երբևէ չի՞ ընկղմել իր խոշոր սպիտակ բագուկն այս աղբյուրի ջրի մեջ»* (488): Դե Ամիչիսը նկատի ունի օսմանյան սուլթան Իբրահիմի (թագավորել է 1640–1648 թթ.) յոթերորդ հասերի (կին) Շիվեքար Սուլթանին (1627–1647), որը եղել է հայ մեծահարուստ վաճառականի դուստր՝ Մարիամ անունով¹:

¹ 1644 թվականին Իբրահիմը հրամայել է գտնել Կոստանդնուպոլսի «ամենագեր կնոջը» և ի վերջո Սկյուտարում գտել են Մարիամին, որը դարձել է սուլթանի հարձը Շիվեքար (շաքարի կտոր) անունով: Եղել է քաղաքականապես ակտիվ: Երբ Իբրահիմը հոգեկան հիվանդություն է ստացել, Շիվեքարն օգնել է նրան մեղմել հիվանդությունը: Դամասկոսի բոլոր կալվածքները նվիրաբերվել են Շիվեքար Սուլթանին: Որոշ պատմաբանների կարծիքով՝ Շիվեքարն է եղել Իբրահիմի հարեմի 280 կանանց մահվան պատճառը: Նա իբրև բամբասանք տարածել է, թե սուլթանի մի հարձը սիրային կապի մեջ է պալատից դուրս գտնվող մեկի հետ: Իբրահիմը հավատացել է նրան և տանջել հարեմի կանանցից շատերին՝ փորձելով կորզել նրա անունը: Արդյունքի չհասնելով՝ սուլթանը հրամայել է իր բոլոր 280 հարձերին Բոսֆորը նետել խնայելով միայն հասերի սուլթաններին: Ողջ է մնացել միայն մեկ հարձ, որին փրկել է անցնող մի նավ: Սուլթան Ահմեդ Ա-ի կին Քոսեմ Սուլթանն իմալով այդ մասին՝ սպանել է Շիվեքարին՝ թունավորելով նրան, իսկ սանձախոս Իբրահիմին ասել է, թե իբր Շիվեքարը մահացել է բնական մահով (տես <https://en.wikipedia.org/wiki/%C5%9EivekarSultan4> մուտք 9.04.2022):

Էդմոնդո Դե Ամիչիսի «Կոստանդնուպոլիս» գրքում պոլահայերի մասին վկայությունները մեծապես լրացնում են հայ ժողովրդի այդ հատվածի վերաբերյալ առկա հարուստ տեղեկատվությունը: Անկասկած է, որ օսմանյան մայրաքաղաքը, նրա պատմությունն ու ներկան խորապես ուսումնասիրած իտալացի գրողը, ի թիվս մյուս «միլեթների» բավականաչափ ճանաչել է նաև կայսրության «հավատարիմ միլեթ» համարվող հայության այդ հատվածին, գնահատել նրա «*համարձակ, զվարթ, հնարամիտ, հաստատուն հոգին*», նրա կանանց գեղեցկությունը, նրա տառերի կանոնավոր և բարեձև լինելը, նրա հագնվելու կերպը եւ այլն: Հատկապես ուշագրավ է Դե Ամիչիսի այն դիտարկումը, որ իր տեսած հայերը տարբեր են բնօրրանում ապրողներից, որ մայրաքաղաքաբնակները դարձել են թուրքերի «*հլու հպատակներ և մեծարող բարեկամներ*» (նրանց հանդուրժած «*պետության ուղտերը*»): Իսկ որ «*բուն ասիական երկրում, որտեղից որ եկան*» նրանք այդպիսին չեն եղել, որ այնտեղ արտաքնապես և ներքնապես պիտի որ «*մարտական և դյուցազնական*» լինեն: Նկատենք նաև որ հայերի բուն հայրենիքի մասին գրելիս Դե Ամիչիսը չի գործածել «Հայաստան» բառը (որպես պատմաաշխարհագրական միավոր), այլ ասիական մի անորոշ երկիր, ինչը բնորոշ է սոսկ գաղութահայության հետ շփումներ ունեցած օտարականների ընկալմանը:

Էդմոնդո Դե Ամիչիսի ավելի քան 140 տարի առաջ լույս տեսած «Կոստանդնուպոլիս» գիրքն այսօր էլ ընթերցվում է հետաքրքրությամբ և համակողմանի պատկերացում է տալիս 19-րդ դարի Օսմանյան կայսրության և մասնավորապես նրա մայրաքաղաքի ու նրա բնակիչների, ընդամենի հայերի մասին:

EDMONDO DE AMICIS ON CONSTANTINOPLE ARMENIANS

SUMMARY

Keywords: Edmondo de Amicis, "Constantinople," Ottoman millets, Constantinople Armenians, national features, beauty of Armenian women, costumes, tombstones.

The Italian writer Edmondo de Amicis (1846-1908) mentioned the Constantinople Armenians and Armenian realities more than 50 times in his book "Constantinople," published in 1877-1878. These references are reflected in current publication.

The Italian writer who visited Constantinople, made an in-depth study of its history and modern times and among other "millets" (confessional communities) got to know the local Armenians, who were considered to be the "faithful millet" of the empire and appreciated their "brave, cheerful, resourceful, persistent soul," the loveliness of their women, the beauty of their writing, the manner of dressing, etc. De Amici's observation that the Armenians of the capital differ from those living in their historic homeland is significant; according to him, in Constantinople they were "obedient subjects," honoring the Turks, unlike those "in that Asian country from which they came," they must be "militant and heroic" both externally and internally.

Edmondo de Amici's book "Constantinople" provides a comprehensive picture of 19th century Constantinople and its inhabitants, including the Armenians. The Italian writer's testimony adds much to the wealth of information about historically one of the largest ethnic minorities in the capital of the Ottoman Empire.

ЭДМОНДО ДЕ АМИЧИС ОБ АРМЯНАХ КОНСТАНТИНОПОЛЯ

РЕЗЮМЕ

Ключевые слова: Эдмондо де Амичис, «Константинополь», османские миллеты, константинопольские армяне, национальные особенности, красота армянских женщин, одежда, надгробные плиты.

Итальянский писатель Эдмондо де Амичис (1846-1908) в своей книге «Константинополь», изданной в 1877-1878 гг., более 50 раз упоминались константинопольские армяне и армянские реалии. Эти упоминания нашли отражение в данной публикации.

Итальянский писатель, побывавший в Константинополе, глубоко изучил его историю и современность и среди прочих миллетов (конфессиональных общин) достаточно хорошо познакомился с местными армянами, считавшихся «верным миллетом» империи, оценил их «смелую, веселую, находчивую, стойкую душу», красоту их женщин, красоту письма, манеру одеваться и т. д. Знаменательно наблюдение де Амичиса о том, что столичные армяне отличаются от живущих на исторической родине: по его словам, в Константинополе они стали «послушными подданными», почитающими турок, в отличие от тех, кто «в той азиатской стране, откуда они приехали», они должны быть «воинственными и героическими» как внешне, так и внутренне.

Книга Эдмондо де Амичиса «Константинополь» дает исчерпывающее представление о Константинополе 19-го века и ее жителях, в том числе, об армянах. Свидетельства итальянского писателя во многом дополняют богатые сведения об исторически одного из крупнейших этнических меньшинств столицы Османской империи.

ԲՈՒՂԱՐԱԿԱՆ «ՊՈՒՍՈՂ» ԹԵՐԹԸ 1941 Թ-ԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՏԵՂԱՑԻ ՀԱՅԵՐԻՆ

Հիմնաքառեր՝ հայեր, Բուլղարիա, Սոֆիա, Պրովիփ, Շումեն, Վառնա, Բուրգաս, Ռուսե, Սիլիստրա, Դոբրիչ, Պագարջիկ, Սիլվեն, Ստարա Զագորա, Այթոս, Պրովադիա, Անդրանիկ Օզանյան, Գարեգին ՆՅդեհ, Երանոս Երանոսյան, Պաղոս Էլմասճյան, Հովհաննես Սվաճյան, Պաղոս Պողոսյան, Կարապետ Վարդապարտյան, Գրիգոր Գրիգորյան, Հովհաննես Պողոսյան, պատմություն, գորգագործ, հայկական կամավորական վաշտ:

Դարեր շարունակ, պատմական տարբեր հանգամանքների հետևանքներով հայերը ներկա են եղել Բալկանյան թերակղզում. ըստ բուլղար գիտնականների՝ սկսած 7-8 դարերից, իսկ ըստ հայ պամիչների 5-6 դարերից:

1396 մինչև 1878 թվականը Օսմանյան տիրապետության մաս կազմող ներկայիս Բուլղարիայի տարածքներում հիմնականում 1610-1673 թվականներին տարբեր շրջաններից գալիս և հաստատվում են հայեր՝ Սիլիստրա, Ռուսե, Դոբրիչ, Պրովիփ, Պագարջիկ, Շումեն, Վառնա, Սիլվեն, Պրովադիա Սոֆիա, Այթոս քաղաքներում: Բոլոր բնակավայրերում, չնայած տարածված օսմանյան կարգի՝ քրիստոնյա եկեղեցիներ չպետք է հիմնվեին, այլ միայն վերանորոգվեին, հայերը հասցնում են կառուցել իրենց աղոթատները, որի շնորհիվ գոյատևում է գաղութը մինչև 1877-1878 թվականների ռուս-թուրքական պատերազմի ավարտը: 1878 թվականի մարտի 3-ին ստորագրված «Սան Ստեֆանոյի» պայմանագրով բուլղարները ստանում են ազատություն և հիմնում իրենց պետությունը:

Ներկայիս Բուլղարիայի կայացման և զարգացման ընթացքում աչքի են ընկնում մեր անվանի հայրենակիցները

իրենց գրադացրած պաշտոնի, հնարամտության և աշխատանքի շնորհիվ:

1896 թվականին համիդյան ջարդերի հետևանքով, բավական շատ հայեր ապաստան են գտնում Բուլղարիայի տարբեր քաղաքներում: Ինչպես նկարագրում է բուլղար բանաստեղծ Պեյո Յավորովը իր «Հայեր» բանաստեղծությունում «մերկ ու ոտաբոքիկ» փախստականները հաստատվելով այստեղ նոր ուժ են տալիս տեղի հայկական համայնքներին: 1922-1923 թթ., խուսափելով հերթական ջարդերից, մոտավորապես 22000 հայ փախստականներ հաստատվելով վերը նշված քաղաքներում, ինչպես նաև Յամբոլում, Խասկովոյում, Ստարա Ջագորայում, Բուրգասում, Կարնոբաստում հիմնում են դպրոցներ, ակումբներ, թատերախմբեր, միություններ՝ վարելով աշխուժ հայկական համայնքային կյանք: Առօրյայում համայնքից դուրս, հայերը հայտնի են դառնում իրենց աշխատասիրությամբ, համեստությամբ, ազնվությամբ և մանավանդ վարպետությամբ լինելով արհեստավորներ, վաճառականներ, գործարարներ:

Հայերին համակրող բուլղար մտավորականները որոշ հակիրճ նյութեր են հրապարակվում բուլղարական մամուլի էջերում:

Բուլղարիայում բնակվող հայերի վերաբերյալ բավականին պատմական, բովանդակալից նյութեր են տպագրված «Պոխոդ» («Արշավ» «Поход») թերթում: «Բուլղարական գրականություն» հանձնաժողովի շաբաթական 2 էջով լույս տեսնող այս պարբերականը 1941 թվականի ապրիլի 27-ի թերթի 56-63 համարները միավորելով ամբողջությամբ նվիրում է հայերին: 16 էջում լուսաբանվում են հայերի ներդրումները Բուլղարիայի ազատագրման և սոնտեսական զարգացման հարցերում: Թերթի խմբագիրները Կոստա Դինուովը և Կիրիլ Ստոյևը, համագործակցելով Թագվոր Բապուլյանի (բուլղ. Таковор Пабулян) հետ՝ ընթերցողներին ներկայացվում են հայոց պատմության, եկեղեցու, մշակույթի,

երաժշտության և լեզվի մասին հողվածներ: Ներկայացված է նաև հայոց գրականությունը, ինչի քաջ գիտակն է Կոստա Դինոլովը՝ լինելով «Հայոց թախիժ» (Арменски тѣги) բանաստեղծությունների ժողովածուի հեղինակ:

Պատմական արժեքավոր նյութեր են Բուլղարիայի Ազատագրման օրերին Կավարնա և Պազարջիկ քաղաքների փրկությունը ներկայացնող հողվածները **Երանոս Երանոսյանը**¹ (բուլղ. Еранос Ераносян, 04.04.1844-22.07.1877) Բալչիկ քաղաքի հեռագրիչը, հասկանալով, որ Կավարնայի շրջանի սպասամբների դեմ ուղղվում են թուրք բաշիբոզուկներ, իր դեկավարությունից թաքուն հեռագիր է ուղարկում Կոնստանդնուպոլիս արտերկրյա դեսպաններին բուլղար բնակչությանը ոչնչացումից փրկելու կոչով: Անձամբ հասնում է Կավարնա օգնություն ցուցաբերելու, որտեղ որ սպանվում է **Հովհաննես Սվաճյանը** (բուլղ. Ованес Съваджян/Саваджян 1844-1906) ռուս-թուրքական ազատագրական պատերազմի ամիսներին լինելով Պազարջիկ քաղաքի կայարանի վարիչը, 1877 դեկտեմբերի 29-ին, գիտակցելով, որ միակն է, ով տիրապետում է Սորգեի այբուբենին, փոխում է Կոստանդնուպոլսից ստացված հեռագրի բովանդակությունը ճիշտ հակառակ իմաստով: Փաշան, զարմանալով որ սովորությանը հակառակ, առանց բնակչությանը ոչնչացնելու պետք է նահանջի, բարկացած կատարում է հեռագրով ստացած հրամանը: Սվաճյանը դառնում է քաղաքի առաջին

¹ Երանոս Երանոսյանը համարվում է Կավարնայի փրկիչը: Նրա անունով կա փողոց: 2007 թ. դեկտեմբերի 14-ին Կավարնայում տեղադրվել է նրա արձանը Ս. Մանասարյանի 22 դեսպանի, Ա. Շելկունովի Վարնայի ռուս հյուպատոսի, Ա. Ազարյանի հայ համայնքի նախագահի ներկայությամբ: 2012 թ. նոյեմբերի 6-ին քաղաքապետարանի նիստին Երանոսյան փրկչին հետմահու շնորհվել է «պատվավոր քաղաքացու» կոչումը ծոռան Արտյուն Երինազովի ներկայությամբ: https://bg.wikipedia.org/wiki/Еранос_Ераносян

ժամանակավոր քաղաքապետը: Հետագա 30 տարիներին զբաղեցնում է բարձր պաշտոններ բուլղարական պետական երկաթուղիներում՝ պարզևատրվելով վեց շքանշաններով: Պագարջիկի քաղաքապետարանը 1925 ապրիլի 6-ին «Արմենակա» փողոցը վերանվանում է Հովհաննես Սվաճյանի անունով:

«Պոխոդ» թերթի էջերից հայտնի է դառնում մեր հայրենակիցների՝ դեռևս Օսմանյան կայսրության տարիներին բարձր պաշտոն զբաղեցնելու և հոգուտ բուլղարների ծավալած գործունեությունը:

Պլովդիվում 1842 թվականին ծնված **Կարապետ Թագվորյանը** (բուլղ. Гарабед Такворян) դեռևս 1865 թվականին նշանակվում է որպես պաշտոնյա Պլովդիվի շրջանային կառավարությունում՝ 1875 հասնելով Պլովդիվի մյութեսարիֆի գլխավոր քարտուղարի պաշտոնին: 1877 թ., լինելով դատական քննիչ, կախաղանից փրկում է շատ բուլղարների: Ազատագրումից հետո Արևելյան Ռումելիայի (Իգտոշնա Ռումելիա) նահանգապետների նամակագրության գլխավոր քարտուղարն է մինչև իր մահը 1895 թվականը:

Պլովդիվցի **Պողոս Էլմասճյանը** (բուլղ. Божос Елмасджян. 1860-1932) շատ հայտնի է համաքաղաքացիներին իր բարի գործերով: Աշխատելով տեղվի հեռագրա-փոստային տանը՝ ռուս-թուրքական պատերազմի օրերին նրան տեղափոխում են այլ բնակավայր: Ճանապարհին պատանի Էլմասճյանը միանում է ռուսական բանակին որպես կամավոր և ծառայում է որպես զինվորական հեռագրիչ: Հետագայում դառնում է իշխան Բատեմբերգի անձնական հեռագրիչը, ապա վարում այլ պաշտոններ: Ըստ արժանվույն ստանում է բարձր պետական շքանշաններ, իսկ մահվան օրը Պլովդիվի բոլոր փոստի հեռագրառները չեն աշխատում՝ հարգանքի տուրք մատուցելով իրենց առաջին և սիրելի ուսուցչին:

Այս բացառիկ թերթի էջերում բավականին տեղեկություններ են տրվում նաև Բալկանյան 1912-1913 թթ.

պատերազմում բուլղարական բանակի կազմում մասնակցած հայկական կամավորական վաշտի մասին: Հատկանշական է, որ այդ վաշտը կազմված է բացարձակապես հայ կամավորներից, ոչ բուլղարական հպատակներից: Բացի այդ, կամավորների թիվը գերազանցում է վաշտի 200-225 հոգին՝ կազմելով 273 հոգի: Հայկական վաշտի հրամանատարներն են Գարեգին Նժդեհը և Անդրանիկ Օզանյանը, որոնք հետագայում պարզևատրվում են բարձրաստիճան շքանշաններով: Թերթի 8-րդ էջում տեղադրված է վաշտի ընդհանուր նկարը և վկայագիրը, որում նշված են կազմավորման (1912 թ. հոկտեմբերի 8) և լուծարման (1913 թ. մայիսի 28) ամսաթվերը, հրամանատարների անունները, հերթականությամբ վարած մարտերը թուրքերի դեմ, ծառայության համար շնորհված պարգևները: Նույն էջում Բուլղարիայում մակեդոնական ընկերությունների նախագահ Միլան Դամյանովը մանրամասնորեն նկարագրում է Բալկան-Թորեսիում հայկական վաշտի քաջաբար վարած մարտի մասին, վերջում նշելով այնտեղ տեղադրված համեստ հուշարձանի մասին, որի վրա փորագրված են նաև գոհված հայ կամավորների անունները:

Հաջորդ 9-րդ էջից տեղեկանում ենք հայ կամավորների վաշտի և հայկական բնակչության մասին այլ մանրամասներին՝ նախկինում Ռոդոստո-Գալիպոլյան շրջանի մարզպետի, դոկտոր Իվան Դիմիտրովի հողվածից: Գնդապետ Ֆիլիպովը ևս անդրադարձում է իր հուշերին՝ կապված Թուրքիայի դեմ վարած պատերազմում հայ կամավորական վաշտի մասնակցությանը:

Բուլղարական բանակում ծառայող բարձրաստիճան հայազգի, բայց բուլղարահպատակ զինվորականների հերոսությունները ընդգծված են հակիրճ առանձին հողվածներում: Բուլղարիայում հնուց հաստատված հայ հայտնի ընտանիքների զավակների՝ գնդապետ Պողոս Պողոսյանի (բուլղ. Божос Божосян), փոխգնդապետ Կարապետ Վարդազարմյանի (բուլղ. Карабед Вартазармян), լեյտենանտ Գրիգոր Գրիգորյանի (բուլղ.

Крикор Крикорян) նվիրվածությունը և հաղթանակների համար ցուցաբերած քաջությունը երևի թե միայն այստեղ են նշված..

Այս թերթը կարևոր աղբյուր է նաև մի այլ ոլորտում մեր հայրենակցի հիմնարար ներդրման մասին: Մանրամասնորեն ներկայացվում է վանեցի Հովհաննես Պողոսյանի (բուլղ. Ованес Бохосян) պատմությունը, որը 1891 թ. հաստատվում է Պանագյուրիշտև քաղաքում և հիմնում գորգագործարան: Հետագայում մրցանակներ շահելով միջազգային ցուցահանդեսներում և վաճառելով իր գորգերը Ամերիկայում Բուլղարիան դասվում է որակավոր գորգարտադրող երկրների շարքին:

Ուսումնասիրելով բուլղարահայության պատմությունը և լճակույթը խիստ գնահատելի է «Պոխոդ» թերթի 16 էջանոց համարը. նախ, քանի որ տեղեկությունները տալիս են բուլղար մտավորականները (այլ ոչ թե հավաքագրված են հայերի հուշերով) և երկրորդ, որ այն հանդիսանում է փաստավավերագրական տվյալների աղբյուր:

ГОАР ХНКАНОСЯН
к.и.н., Болгария

БОЛГАРСКАЯ ГАЗЕТА «ПОХОД» В 1941 ГОДУ
ПРЕДСТАВЛЯЕТ БОЛГАРСКИХ АРМЯН

РЕЗЮМЕ

Ключевые слова: армяне, Болгария, София, Пловдив, Шумен, Варна, Бургас, Русе, Силистра, Добрич, Пазарджик, Сливен, Стара Загора, Айтос, Провадия, Андраник Озаян, Гарегин Нжде, Еранос Ераносян, Погос Эльмашян, Оганес Свацян, Погос Погосян, Карапел Вардазармян, Григор Григорян, Оганес Погосян, история, ковровщик, Армянская волонтерская компания.

Данная статья представляет номер 56-63 с 27.04.1941 г. болгарской газеты «Поход» как ценный источник про армян

проживающих в Болгарии в начале XX века. В частности на страницах газеты кроме истории Армении, армянской церкви, литературы, архитектуры, представлены армяне проживающие в стране и имеющие свой вклад в становлении и развитии Болгарии: Ераносян спасший город Каварна, телеграфист Сваджян спасший город Пазарджик, полковник Бохосян, подполковник Вартазармян, подпоручик Крикорян как болгарские граждане отличившиеся в войнах за Болгарию; важные факты об участии армянской роты из добровольцев, неграждан Болгарии участвующие в Балканской войне 1912-1913 гг. против Турции под руководством Гарегина Нждеха и Андраника Озаяна; об основателе коврового дела в городе Панагюриште – Ованеса Бохосяна.

GOHAR KHNKANOSIAN,
Ph.D. in History, Bulgaria

THE BULGARIAN NEWSPAPER “POKHOD” IN 1941 REPRESENTS THE BULGARIAN ARMENIANS

SUMMARY


Keywords: Armenians, Bulgaria, Sofia, Plovdiv, Shumen, Varna, Burgas, Ruse, Silistra, Dobrich, Pazarjik, Sliven, Stara Zagora, Aitos, Frovadia, Andranik Ozanyan, Garegin Nzhdeh, Yeranos Yeranosyan, Poghos Elmaschyan, Hovhannes Swatchyan, Poghos Poghosyan, Karapet Vardazarmyan, Grigor Grigoryan, Hovhannes Poghosyan, history, carpet maker, Armenian volunteer company.

This article presents issue 56-63 from 27.04.1941 of the Bulgarian newspaper "Pokhod" (russian поход) as a valuable source about the Armenians living in Bulgaria at the beginning of the 20th century. In particular, on the pages of the newspaper, besides the

history of Armenia, Armenian literature, architecture, etc. are represented Armenians living in the country and having their contribution to the formation and development of Bulgaria: Yeranosyan who saved the city Kavarna, telegraph operator Savajyan saved the city Pazarjik, Colonel Bokhosyan, Lieutenant Colonel Vartazaryan, Lieutenant Krikoryan as Bulgarian citizens who distinguished themselves in the wars for Bulgaria; important facts about the participation of the Armenian company (military unit) of volunteers, non-citizens of Bulgaria participating in the Balkan war of 1912-1913 against Turkey under the leadership of Garegin Nzhdeh and Antranik Ozanyan; about the founder of the carpet business in the Panagyurishte - Hovhannes Bokhosyan.

Նկաներ

1. «Պոխոդ» թերթ
2. «Պոխոդ» թերթ, էջ 8, հայկական կամավորական վաշտ
3. Երանոս Երանոսան
4. Հովհաննես Սվաջյան, հուշատախտակ
5. Հովհաննես Սվաջյան, արձան





ԼԵՀԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ XVI-XVII ԴԱՐԵՐԻ
ՎԱՐՇԱՎԱՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմնաբառեր՝ Ռեչ Պոսպոլիտա, Վարշավա, հայ համայնք, քաղաքաբնակներ, վաճառականներ, դիվանագետներ, պալատական նկարիչներ:

Նախաբան

XVI-XVII դդ. Վարշավայի հայկական գաղթօջախի մասին ժամանակակից Լեհաստանի հանրապետությունում սյահականվում են մեծ քանակությամբ ձեռագրեր, հնատիպ գրքեր, Արևելյան Կրեսների հայ կաթողիկե եկեղեցիների ծխական մատյաններ և այլ նյութեր, որոնք լուրջ ուսումնասիրության կարիք ունեն: Դրանց զգալի մասը տեղ է գտել լեհ պատմաբան Էդվարդ Տրիյարսկու «Հայերը Վարշավայում. պատմական նյութեր» աշխատությունում¹, որն այսօր էլ ծառայում է որպես հետազոտությունների ուղենիշ: Վարշավայի հայության գործունեության տարբեր ոլորտներին և Լեհաստանի մայրաքաղաքում լեհահայերի ներդրմանն է նվիրված Կրակովի Յագելոնյան համալսարանի պրոֆեսոր Քշիշտոֆ Ստոպկայի, Անջեյ Զիեբայի, Արմեն Արտվիխի և Լեոնիկա Ագոպսովիչի հեղինակած «Հայոց Վարշավան» ալբոմը²: Հեղինակներն իրավացիորեն ընդգծում են, որ մինչ օրս լեհահայերի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում կարևորվում են հատկապես Լվովի, մասամբ նաև Ստանիսլավի և Պոկուտիայի հայ համայնքները, իսկ

¹Տե՛ս Edward Tryjarski. Armenians in Warsaw/Ormiane w Warszawie. Materiały do dziejów . Warszawa, 2001.

²Տե՛ս K. Stopka, A. Zięba, A. Artwich, M. Agopsowicz. Ormianska Warszawa. Հայոց Վարշավա Armenian Warsaw. Warszawa. 2012.

Վարչական մի տեսակ մղվում է երկրորդ պլան: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Վարչական համեմատաբար փոքր հայ համայնք ունեւր ու լեհահայերը բնակություն հաստատելու տեսանկյունից քաղաքն ընկալում էին որպէս ծայրամաս: Ալբոմի հեղինակները նոր աղբյուրների ուսումնասիրությունից հանգել են այն հետևության, որ լեհական պատմագրությունում ամրագրված այս կարծիքը անհրաժեշտ է վերանայել: Նրանց կարծիքով «Վարչական յուրօրինակ մագնիս էր, որը ձգում էր առավել նախաձեռնող և տաղանդավոր հայերին, ինչպէս Ռէչ Պոսպոլիտայից, այնպէս էլ նրա սահմաններից դուրս»¹: Լեհական աղբյուրները վկայում են, որ լեհահայերը, սկսած XV դարից, զանգվածաբար բնակություն են հաստատել Ռէչ Պոսպոլիտայի հարավային սահմաններում Թուրքիայի դէմ պայքարը շարունակելու համար², իսկ XVI-XVII դդ. Վարչավայի հայերը գործուն մասնակցություն են և կարևոր դերակատարում ունեցել ունեցել Ռէչ Պոսպոլիտայի քաղաքական, տնտեսական, ռազմական և մշակութային կյանքում³:

XVI դարի վարչավահայերը

Ըստ լեհական աղբյուրների հայերը Վարչավայում հիշատակվում են սկսած XIV դարի երկրորդ կեսից, երբ վարչավացի և հայ առևտրականները միմյանց հետ առնչվել են ռուսական քաղաքների շուկաներում: Նրանց առաջին շփումները տեղի են ունեցել Լվովում, երբ Կազիմեժ III թագավորը 1356 թ. Լվովին մագդեբուրգյան իրավունք տալու ժամանակ հայերին նույնպէս հնարավորություն տվեց օգտվել այդ իրավունքից կամ ստեղծել իրենց դատարանները ազգային իրավունքի կիրառման հիման վրա⁴: Մինչև 1526 թ. Վարչական

¹ Ormianska Warszawa, s. 12:

² M. Zakrzewska-Dubasowa. Ormianie zamojscy i ich rola w wymianie handlowej i kulturalnej wiedzy Polską w Wschoden. Lunlin, 1965, s. 14-15.

³ Տե՛ս Ժակ դը Մորգան, Հայ ժողովրդի պատմութիւն, Պոսքըն, 1947, էջ 369-370:

⁴ Stopka Krzysstof. Ormianie w Polsce dawnej i dzisiejszej. Krakow, 2000. s. 19.

ծայրամասային նահանգ հանդիսացող և ժամանակավորապես ազատ համարվող Մազովցեի իշխանության մայաքաղաքն էր:

Վարշավայի պատմության մեջ առաջին հայկական ազգանունները հանդիպում են XVI դ. 30-ական թվականներին: Լեհական աղբյուրները հիշատակում են մի քանի լեհահայեր՝ Ջադիկ Միխնովիչ, Ջախնո Ստեչկովիչ, Գլուշկո և Իվաշկո Խոձենկովիչներ, Ստեֆան Պոպովիչ և այլք, որոնք բուլոն էլ Լվովի բնակիչներ էին: Ծագումով հայ պատմիչ քահանա Սադոկ Բարոնչը հիշատակում է նաև Լուցկից եկած նրանց հայրենակիցներին, որոնք հաջող առևտուր էին անում Վարշավայում: Տարվա մեջ մի քանի անգամ տեղի ունենցող Վարշավայի տոնավաճառներին Մազովիայից հարուստ գնորդներ էին գալիս, որոնք առևտրական հարաբերություններ էին պահպանում Վարշավայի ազնվական ընտանքների հետ: Լեհական աղբյուրներում հիշատակվում են նաև Յան Բարիչկան, Յորգա Բորմբախը, Աննա Բալտազարովա Բորմբախովան, Յորգա Ֆիրլանզը և ումն Գոթարդը, որոնք ապահովում էին Թուրքիայից, Իրանից, Հնդկաստանից ու Եգիպտոսից տարբեր ապրանքների ներմուծումները: Հայ վաճառականները արևելյան ապրանքներ էին մատակարարում լեհական արքունիքին և ազնվական վերնախավին: ու արտահանում դեպի Բալթիկ ծով՝ հիմնականում Գդանսկի նավահանգստով: Դրանով պայմանավորված աշխուժացավ հայերի ներկայությունը Վարշավայում, որտեղ հիմնականում Լվովից, Կամենց-Պոդոլսկից, Ջամոշչից եկած հայերը պահպանում էին իրենց եթնիկ և մշակութային ինքնատիպությունը: Առաջին վարշավահայերը քաղաքը իրենց համար ցանկալի չէին համարում, ուստի այստեղ նույնիսկ հուղարկավորություններ չէին անում: Դրա բազմաթիվ վկայություններից մեկը վերաբերում է Վարշավայում մահացած թագավորական թարգման Կժիշտոֆ Վասիլովիչին, ում աճյունը կնոջ պահան-

ջով ամփոփեցին Լվովի հայկական եկեղեցու բակում՝ տապանքարին թողնելով հայերեն արձանագրություն¹։

XVI դարում Վարշավան, որպես նահանգային մայրաքաղաք, երկրի քաղաքական կյանքում սկսեց մեծ դեր խաղալ։ Նախկին Մագոմյան ազնվատոհմիկների պալատը դարձավ լեհական թագավորների և նրանց արքայատոհմի ընտանեկան կեցավայրը։ Այդ տարիներին Ռեչ Պոսպոլիտայի տարբեր քաղաքներից Վարշավա էին գալիս մեծ թվով հայեր՝ հիմնականում Սեյմի և նորընտիր միապետների կողմից նախկինում գոյություն ունեցած լեհահայ համայնքի առանձնաշնորհումները վերահաստատելու և այդ կապակցությամբ դատական նիստերին մասնակցելու համար։

Զիգմունտ 3-րդ Վազա թագավորը, երբ սկսեց վերակառուցել պալատը, Վարշավայում վերաբնակեցման համար առանձնաշնորհումներ ընծայեց։ 1556 թ. հոկտեմբերի 25-ին Զիգմունդ Ավգուստ թագավորը Իվովսկի ավագանի Զիգմունդ Լիգունզին հրովարտակ ուղարկեց, որով Կամենեցի հայերին ազատում էր մաքսային տուրքերից և թույլատրում էր վերաբնակվել Վարշավայում։ Դա վարշավահայերին տրված առաջին թագավորական առանձնաշնորհումն է։ 1572 թ. վերջին վերաբնակեցման իրավունք ստացան Կամենեցից եկած լեհահայեր Դեմիան Բոգդասարովիչը և Միխնո Դոնուշովիչը, իսկ 1574 թ.՝ Կամենցի դատավոր Միլեկը։ Հետագայում վարշավայում վերաբնակեցման իրավունք ստացան Լվովի հայ եպիսկոպոսները, 1606 թ.՝ Կարապետը, 1623 թ.՝ Մեսրոպը և 1627 թ.՝ Միկոլայ Թորոսովիչը²։

Վարշավայի թագավորական պալատում տեղի ունեցող դատական նիստերում լեհ թագավորները առկա վեճերի վերաբերյալ վճիռներ էին կայացնում, որոնք նախադեպային իրավական ուժ էին ստանում։ Լվովի հայկական քաղաքային

¹ St' u Ormianska Warszawa, s. 134.

² St' u Ormanska Warszawa, s. 135.

դատարանի գրառումներում հիշատակվում է 1537 թ. դեկտեմբերի 20-ին Վարշավայում հայ վաճառական Ջախնո Մտեչկովիչին պարտավորագիր հանձնելը¹: Հայերի հետ առնչվող առաջին դատական գործը տեղի ունեցավ Վարշավայում, 1577 թ. ապրիլի 28-ին: Այդ օրը Շտեֆան Բատորի թագավորը պատժեց երեք հայ վաճառականների՝ Տոմաս Յուխնովիչին, Աքսենտ և Իվանիս Կիվիբեյովիչ եղբայրներին՝ պարտավորեցնելով անհապաղ ետ վերադարձնել շլախտիչ Միխալ Շեմբերգից վերցված դշամական փոխառությունը:

1589թ. Վարշավայում Զիգմունդ III-ի հրավիրած երկրորդ Սեյմի խաղաղության նիստին ներկա է եղել Կամենեցի վոյս (տեղական վարչակազմի ղեկավար) Հոլուբը: 1598 թ. մարտ-ապրիլին կայացած Սեյմի նիստերին մասնակցել է Կամենեցի հայազգի վոյս Նիկոլը՝ տեր Հանուսի որդին²:

XVII դարի վարշավահայերը

XVII դարի սկզբում լեհական արքունիքին նշանակալից ծառայություններ մատուցած առաջին երևելի հայը Սեֆեր Մուրատովիչն է, ում այդ պատճառով հաճախ անվանում էին «Լեհաստանի բոլոր հայերի առաջնորդ»: Նա ծնունդով Փոքր Ասիայի Կարահիսարից էր, լեհական արքունիքին ծառայում էր արքայական պալատը Վարշավա տեղափոխելու շրջանում: 1601-1602 թթ. Զիգմունդ Երրորդ Վազայի հրամանով նա ճանապարհորդել է դեպի Պարսկաստան, որտեղից լեհական արքունիքի համար բերել է վրաններ, շարֆեր, տարբեր զարդեր և հատուկ խնդրանքով Կաշենում գործած 6 մետաքսե ոսկենախշ գորգեր: Դրանցից երկուսի վրա պատկերված էր Ռեչ Պոսպոլիտայի զինանշանը: Զիգմունդ երրորդը դեռևս Կրակովում Ս. Մուրատովիչին սրևեյան ապրանքներ ներկրելու բացառիկ արտոնություն է շնորհել՝ պայմանով, որ դրանք առաջնահերթ պետք է հատկացվեին թագավորական պալատին:

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում:

Չիզմունդ (Միզիզմունդ) III թագավորի՝ 1605 թ. փետրվարի 24-ի արտոնագրով թագավորությանը մատուցած ծառայությունների համար շլախտիչի պատիվ և իրավունք ստացավ Կամենեց-Պոդոլսկի բնակիչ հայազգի Յան Ավագը¹: XVII դարի երկրորդ կեսին նման իրավունք ստացան նաև Յան Թորոսովիչը, Ջախարիա Ջադիկևիչը, Բերնարդ Բերնարտովիչը, Բոգդան Սեֆերովիչը և ուրիշներ²:

Վարշավայի թագավորական պալատն առաջին հերթին քաղաքականության կենտրոն էր, որը նպաստել է հայերի մեծ ներհոսքին դեպի Վարշավա: Լեհաստան էին գալիս թուրքական և թաթարական մեծաթիվ պատվիրակություններ, որոնք Լվովում և Կամենեց-Պոդոլսկում ունեին այսպես կոչված ներկայացուցչություններ՝ իրենց ուղեկցորդներով և թարգմանիչներով: Լեհաստանի հայաշատ քաղաքների թարգմանիչների պաշտոնը զբաղեցնում էին հայերը, որոնք այդ պաշտոնը հաճախ վարձակալում էին, կամ ստանում էին պետությանը մատուցած ծառայություններ համար: XVI-XVII դդ. լեհական փաստաթղթերում հիշատակվում են տասնյակ հայ թարգմանիչներ³: 1620 թ. հունվարին Վարշավայում որպես թարգմանիչ հիշատակվում է Կամենեցի քահանա Գրիգորի (Գժեգոժ) որդի Աքսենտը: Արևելքը և նրա լեզուներն իմացող գրագիրներն ու քարտուղարները մեծ պահանջարկ էին վայելում ինչպես լեհ թագավորների, այնպես էլ լեհական կենտրոնական իշխանական ապարատի համար: 1639 թ. Վարշավայում մեծ համարում ուներ Վլադիսլավ Չորրորդ թագավորի թարգմանիչ Գժեգոժ Մուրատովիչը:

Լվովցի անվանի լեհահայ վաճառական Կժիշտով Ջախնովիչը Վարշավայում զբաղվում էր առևտրական և

¹Տե՛ս J. Szaraniewicz. Ormianie na Rusi i Podolu. «Szkola», rok I, żeśzceyt 7, s. 284.

²Տե՛ս S. Barącz. Żywoty stawnych Ormian w Polsce. Lwow. 1856.

³ B. Baranowski. Znajomość Wschodu w dawnej Polsce do XVIII wieku. Lodz, 1950. s.111, 114.

քաղաքական գործունեությամբ: Նրա ծառայություններից բազմիցս օգտվել է Յան Կաժիմիեժ թագավորը: Լեհ թագավորներին ծառայում էին նաև Վարշավայում հաստատված լեհահայ Հանկիևիչները: Վերջիններս սերում էին Հանկ (Յան) Աուգուստինովիչից՝ Կրակովի համալսարանի մեզ հայտնի առաջին հայ ուսանողից: Նա մտերիմ հարաբերություններ ուներ Վարշավայի հայտնի ազնվականներից Յան Գիզայի որդու հետ: 1588 թ. Կրակովում լույս են տեսել Հանկի էպիգրամները Յան Գիզայի երգերի հետ միասին՝ ձևված Աննա Յագիելոնկային և նրա ամուսնուն՝ Շտեֆան Բատորի թագավորին: Հանկի տղան (կամ թոռը)՝ Ստեֆան Հանկիևիչը, XVII դ. կեսին լեհական արշունական դիվանում զբաղեցրել է զբազրի (metrykant) պաշտոնը, որը կոչվում էր «notarius decretorum Curiae Regni»: Նա ստացել է նաև թագավորական քարտուղարի և Կիևի, որն այդ ժամանակ Լեհաստանի կազմում չէր, քաղաքագլխի պատվավոր կոչումներ: Ստեֆան Հանկիևիչը ամուսնական սերտ կապեր էր հաստատել Վարշավայի երևելի ընտանիքների հետ: Նրա առաջին կինը՝ Աննան, հայտնի դեղագետ Լուկաշ Դրեննիի աղջիկն էր, ով 1620-1621 թթ. Վարշավայի քաղաքազուխն էր: Ս. Հանկիևիչի երկրորդ կինը՝ Յոաննան, վարշավացի մեծահարուստ իշխան Միկոլայ Պերոտի դուստրն էր: 1657 թ Ստեֆանը դարձավ Վարշավայի քաղաքային կոմունայի խորհրդի անդամ, ապա երդվյալ ատենակալ, խորհրդական, հետագայում՝ քաղաքային գանձապահ, Սբ. Յանի կոլեգիայի վերակացու: Դա Վարշավայի հայերի կողմից տեղական ինքնակառավարման ոլորտում կարիերայի առաջին դրսևորումն է: Նովոմիեյսկա փողոցի վրա գտնվող Լուկաշ Դրեննիի շքեղ տունը նրա մահից հետո անցավ Ստեֆան Հանկիևիչին: Նա 1669 թ. վերակառուցեց այդ տունը, բարեկարգեց և պետության առավին ազատվեց կոմունալ բոլոր վճարներից¹:

¹ Sl' u Ormianska Warszawa, s. 135.

Վարչավայում պալատական ծառայության էր անցել Պարսկաստանից եկած Տաղեուշ Դանիել Բարոնաբեկը: Երիտասարդ տարիքում նա մտավ ծառայության արքունական զվարդիայում և Ստեֆան Չարնեցկիի հրամանատարությամբ աչքի ընկավ շվեդների, հունգարների, կազակների և ռուսների դեմ մղած բազմաթիվ մարտերում: Նա 1662 թ. որպես պարզն ստացավ ազնվականի տիտղոս: Յան Կաթմիեժ թագավորը բազմիցս նրան վստահել է թեթևազեն հեծելազորի դրոշը կրելու պատիվը: 1671 թ. հոկտեմբերի 26-ին Տաղեուշը Վարչավայի Ար. Յանի տաճարում կնության արավ ազնվական ծագումով Կատարժինա Աննային: Թագավորական թեթևազեն հեծելազորում ծառայում էր նա մեկ պարսկահայ, ում 1656 և 1659 թթ. վարչավյան տների սեփականատերերի ցուցակում անվանում էին «պարսիկ Յեջեյ», «արքունական կազակ պարսկուհի կնոջ հետ»¹:

XVII դարի առաջին կեսին հայ վաճառականների առկայությունը դարձավ Վարչավայի տնտեսական և մշակութային կյանքի անբաժան մասը: Սա չի նշանակում, որ նրանք անմիջապես դարձան Վարչավայի լիրավ քաղաքացիներ: Բաղաքաբնակներին շնորհված իրավունքները դժվար էին տրվում բոլոր այն նորաբնակներին, ովքեր կաթոլիկ եկեղեցու հետևորդներ չէին: Լեհահայ շատ վաճառականների համար Վարչավան սոսկ տարանցիկ քաղաք էր: Լվովի, Ջամոռչի, Բրոձի, Կամենեցի լեհահայերն այստեղ էին բերում արևելյան ապրանքներ, հացահատիկ, թանկարժեք քարեր, որտեղից ուղևորվում էին դեպի հյուսիս և արևմուտք: Օրինակ՝ Լվովցի լեհահայ վաճառական Գժեգոժ Պիոտրովիչ Գլուշկովիչն փոքր տուն ուներ Վարչավայում, որտեղ ցուցադրում էր իր ապրանքները Գդանսկ ուղևորվելու ճանապարհին: Որոշ լեհահայեր Վարչավայում ավելի երկար ժամանակով էին կանգ առնում, նրանք հեշտությամբ հարմարվում էին ինչպես հին,

¹ Նույն տեղում:

այնպես էլ նոր Վարշավայի բնակիչների հետ: Կրոնական տարբերություններն ամենօրյա կյանքում որևէ խնդիր չէին հարուցում: Նորաբնակների ինտեգրումը լեհական միջավայրին՝ լեհականացումը, հաշվի առնելով լեզվական ու մշակութային առանձնահատկությունները, բավականին հեշտ էր տրվում հայերին: XVI դարավերջին, Գդանսկի բնակիչ Մարտին Գրունեվեզը իր հուշերում մի օրինակ է բերում, որը բնութագրում է լեհահայերի ուժացումը: Գրունեվեզը Վարշավայից Գդանսկ մեկնելու ճանապարհին հանդիպել է երեք վաճառականների՝ իտալացի, գերմանացի և հայ: Իտալացին հագել էր իտալական զգեստ, գերմանացին՝ գերմանական, իսկ հայը՝ լեհական:

Ի տարբերություն Վարշավայում ապրող հրեաների, հայերին հանդուրժում էին քաղաքի պարիսպների ներսում և ազնվականական տներում ընդունում էին որպես սենյակների ու կրպակների ենթավարձակալներ: Այդ մասին վկայում են քաղաքային տարբեր վճարների ու հարկերի գանձման մատյանները: 1640 թ. մատյաններում հիշատակվում են վճար կատարած հայ ոմն Անջեյը(հավանաբար Ենջեյովիչների զարմից) և Վոյչիեխ Մինաշևիչը (Մինասովիչ): Լեհական աղբյուրներում Վարշավայում այլ վայրերից հաստատված առևտրականների թվում հիշատակվում են նաև «Կոստանդնուպոլսի բնակիչ» Յակուբ Մերգիերդիշովիչը, ով 1666 թ. իր լիազոր ներկայացուցիչ նշանակեց Սևեր Ասլանովիչին, Յան Տոբիաշովիչը, Միխալ Իվանովիչը, Աստենդել և Շաֆեր Յակուբովիչները, Չախարիաշ Աբրամովիչը (Աբրահամովիչ) և բազում այլ լեհահայեր:

Այդ առևտրականներից մեկը՝ Պիոտր Բարանովիչը, Վարշավայում ներկայանում էր որպես Թաթարստանից եկած «հայ ազգի ներկայացուցիչ»: Լեհ պատմաբանների կարծիքով, հավանաբար, նա այն Բարանովիչն է, ով 1656 թ. Մոստովա փողոցի վրա ունեցել է պահեստ և տուն՝ Դլուգա փողոցի վրա: Նա իր գործընկերոջ հետ միասին ուներ ասեղնագործ

վրանների պահեստ: Հաշվի առնելով Վարշավայում վարձակալի կարգավիճակի սեզոնայնությունը, լեհահայերն այստեղ չէին բերում իրենց ընտանիքներին: Պ. Բարանովիչը կնոջը և երեխաներին թողել էր Ղրիմում՝ հայրենի Կաֆֆայում, իսկ Վարշավայում նրա տան գործերը կատարում էր ծառա Անուսին¹:

1654 թ. Վարշավան ուներ 10 հազար բնակիչ, հայերը կազմում էին 250 ընտանիք²: Նրանցից ոմանք առևտրում և այլ ոլորտներում կայացած մարդիկ էին: 1655 թ. շվեդական ներխուժման ժամանակ հին Վարշավայի շուկայի հրապարակի 11 տները պատկանում էին հայերին: 1655 թ. Վարշավան Շվեդիայի թագավոր Կառլ Գուստավին հանձնելու բանակցություններին մասնակցում էին երկու վարշավահայեր: Նրանցից մեկը քաղաքային խորհրդի անդամ Մարչին Լուկաշևիչն էր, մյուսը՝ քաղաքային կոմունայի անդամ Յան Անդրիխովիչը: Մ. Լուկաշևիչը սկզբում քաղաքային գրագիր էր, հետագայում զբաղվում էր քաղաքային կրայակների վարձակալությամբ, ապա զբաղեցնում էր պետական վերահսկողի (urząd syndyka) պաշտոնը: Լեհական արխիվային փաստաթղթերում նա բնութագրվում է. «Արժանապատիվ, առաքինի, բարեգութ և քաղաքին շատ անհրաժեշտ մարդ»: Մ. Լուկաշևիչը թաղվեց Սբ. Յանի (Հովհաննեսի) տաճարում, որտեղ նրա պատվին տեղադրվեց մարմարե շիրմաքար: Յան Անդրիխովիչը, դեղագործ էր, ապրում էր Օբսետտիի բնակարանում՝ Նովոմիեյսկա փողոցի վրա: Հետագայում նա դարձավ քաղաքագլուխ³:

Շվեդական արշավանքից հետո Վարշավայի բնակչությունը նվազեց, 1660 թ. քաղաքում մնաց ընդամենը 4 հազար բնակիչ⁴: Լեհերի հետ մեկտեղ Վարշավան լքեցին նաև

¹ St u Ormianska Warszawa, s. 135.

² Historia Poski. Tom 1, część 2, Warszawa, 1958, s. 450.

³ St u Ormianska Warszawa, s.135.

⁴ История Польши, т.1. Под ред. В. Д. Корольюка, И. С. Миллера, П.Н. Третьякова. М., 1956, с. 309.

լեհահայերը: Հարյուրավոր հայ ընտանիքներ լքեցին նաև Լվովը, Կամենեց-Պոդոլսկը, Լուցկը, Յազլովեցը, Զամոստեն, Գալիչը, Վոլինի Վլադիմիրը և Ռեչ Պոսպոլիտայի մյուս քաղաքները¹:

Հետագայում հայերի ներկայությունն ու ակտիվությունը Վարշավայում ստանում է նոր և բազմապիսի բնույթ: 1690 թ. Դանիել Զախարիաշիկիչը քաղաքային խորհրդի անունից 120 գլուխ հարկ էր գանձում հրեաներից, որպեսզի վերջիններս իրավունք ստանային բնակվել Վարշավայում՝ Սեյմի աշխատանքների ընթացքում: Լեհահայ Զախնովիչի Սուչիկ յուրիդիկան² գտնվում էր Հին Վարշավայի մագիստրատում՝ Վիսլա գետին ափին՝ Սուլեցից հարավ: Դա եկամտաբեր վարձակալություն էր, որ եկամուտ էր ապահովում պանդոկից, հողմաղացից, ջրաղացից և ֆերմայից: Զախարիաշ Վիտերնիցկին առևտուր էր անում տարբեր յուղերով և նմանատիպ «հոտոտվոդ» համեմունքներով, որոնք խայծ էին ծառայում գիշատիչ կենդանիներին թակարդը զցելու համար: Լեհահայ ընտանիքի դուստր Յադվիգա Ռաֆայովիչը, հասարակական գործիչ էր, գիտեր ֆրանսերեն, աշխատում էր մագնատներ Դենհոֆների ու Լյուբոմիրսկիների, հավանաբար նաև՝ Սոբիեսկիների մոտ: Հասուն տարիքում նա Վարշավայում բավականին մեծ կարողության տեր էր և իրեն ներկայացնում էր որպես իր գործատու հայտնի մագնատների տեղեկատվական գործակալ: Պահպանվել են նրա նամակագրությունները՝ հասցեագրված հիմնականում Լյուբոմիրսկի Շիենիավսկի տոհմի ներկայացուցիչ Էլժբիետային, ով քաղաքական մեծ հավակնություններ ունեցող կին էր:

¹ Sk. u T. Gromnicki. Ormiane w Polsce, ich historia, prawa i przywileje. Warszawa, 1889, s. 71-72. Սխմոն Լեհացի, Ուղեգրություն, տարեգրություն և յիշատակարանը, Վիեննա, 1936, էջ 143:

² Յուրիդիկալ միջանադարյան Լեհաստանում սեփականության ձև էր քաղաքամերձ շրջաններում լայն ինքնավարությամբ:

XVII դարի սկզբում լեհ թագավոր Ջիգմունդ (Սիգիզմունդ) III Վազայի պալատական նկարիչը լեհահայ Պավել Բոգուշ Դոնոշկնիչն էր: Նրա պատկերած Ջիգմունդ III-ի և թագուհի Աննա Ավստրիացու դիմանկարները գտնվում են Վավելի թագավորական պալատում¹: Պավել Բոգուշի որդի Շիմոն Բոգուշը Գեորգի Մնիշեկի պալատական նկարիչն էր: Նա նկարել է նաև Մարիա Մնիշեկին, Դմիտրի Ինքնակոչին, Մնիշեկի թագադրության կոմպոզիցիոն կտավը, «Կլուշինոյի ճակատամարտը» և այլ գործեր²: Հանրահայտ պալատական հայ դիմանկարիչներ էին Վաչեկ Կտրկովիչը և Եժի Շիմոնովիչը՝ Շտեֆան Բատորիի ընտանեկան նկարիչը³:

XVII դարում Վարշավայի ուսյալ լեհահայերը տիրապետում էին թուրքերեն և պարսկերեն լեզուներին, որոնց Ռեչ Պոսպոլիտայի թագավորները Արևելքի երկրներ դիվանագիտական առաքելություններ ուղարկելիս ընդգրկում էին որպես թարգմանիչներ⁴: Սկսած XIV դարից Ռեչ Պոսպոլիտայի քաղաքային շուկայի թարգմանիչները, որը համարվում էր դիվանագիտական պաշտոն, զբաղեցնում էին հայերը⁵: Լեհահայերին վստահում էին ոչ լիայն թարգմանիչների, այլև սուրհանդակների, դեսպանորդների, «մեծ» և «կրտսեր» դեսպանների պարտականությունները⁶:

XVII դարի սկզբում Ջիգմունդ III Վազա թագավորի

¹ Mankowski T. Lwowski cech malarzy. Lwow, 1936, s. 29; Dobrowolski J. Polskie malarstwo portretowe. Krakow, 1949, s. 80.

² Овсейчук В. А. Деятельность армянских живописцев во Львове (XV-XVIII в.) «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1966, № 2, էջ 249-252.

³ Dobrowolski J. Polskie... s. 80; Mankowski T. Sztuka Ormian Lwowskich. Krakow, 1934, s. 152.

⁴ Տե՛ս Գրոբովնիկիի В. В. Армянские поселения. В сб.: Исторические связи и дружба украинского и армянского народов. Ереван, 1961, с. 47

⁵ Տե՛ս Լիննիչենկո Ի. Ա.. Լեհաստանի և արևմտյան-հարավային Ռուսիայի հայերը, Մոսկվա, 1894, էջ 29-30:

⁶ Տե՛ս Զախարիասնիչ Ֆ. Բ., Տեղեկագիր Լեհաստանի հայերի մասին, Ս. Պետերբուրգ, 1842, էջ 123:

հանձնարարությամբ դիվանագիտական առաջին հանձնարարություն կատարած հայազգի պաշտոնյան Սեֆեր Մուրատովիչն էր: 1602 թ. նա արևելյան ապրանքներ գնելու պատրվակով ուղարկվեց Պարսկաստան և կարողացավ պարսից Շահ Աբասին վստահություն ներշնչել ու հարաբերություններ հաստատել Ռեչ Պոսպոլիտայի հետ: Վերադառնալով Կրակով՝ նա թագավորին հետաքրքիր հաշվետվություն ներկայացրեց Իրանում տիրող վիճակի մասին: Դիվանագիտական այդ հաջողության համար թագավորը նրան շնորհեց Լեհաստանի հայ գաղթօջախների վոյտի (սովագի) պաշտոնը¹:

1607-1610 թթ. Ս. Մուրատովիչը լվովյան հիշատակարաններում ներկայացվում է որպես վարձավահպատակ: Նա առաջին հայերից է, ով ստացել է նման կարգավիճակ: Սեֆեր Մուրատովիչի ճանապարհորդական հաշվետվությունը մեզ է հասել լեհերենով՝ գրված անսանուն հեղինակի կողմից: Այստեղ Մուրատովիչը պատմում է քրիստոնյանների վիճակի մասին ունեցած գրույցի, պարսից Շահ Աբասի Առաջինի արքունիքում ռուսական ինտրիգների մասին: Նա լեհական թագավորներին ներկայացնում է որպես ռուսական ցարերի վասալներ, անդրադառնում է Պարսկաստանից Լեհաստան ուղարկված պատվիրակների բանտարկությանը: Լեհ-իրանական հարաբերությունների ուսումնասիրման գործում այն բացառիկ սկզբնաղբյուրի նշանակություն ունի: Այդ ձեռագիրը առաջին անգամ լայն հանրությանը հայտնի է դարձել 1777 թ. Վարշավայում անվանի լեհահայ Յուզեֆ Եպիֆանիուշ Մինասովիչի հրատարակության շնորհիվ²:

Դարասկզբին լեհահայ դիվանագետ Բեդրոս Գրեգորովիչը լայն կապեր ուներ Ավստրիայի, Թուրքիայի և այլ երկրների արքունիքներում, զբաղվում էր առևտրական ակտիվ

¹Տե՛ս Լիննիչենկո Բ. Ա., նշվ. աշխ., էջ 42-43, 47, Զախարիասնիչ Ֆ. Բ., նշվ. աշխ., էջ 137; Տե՛ս Ormianska Warszawa, s. 136.

²Տե՛ս Ormianska Warszawa, s. 136.

գործունեությամբ¹: Միգիզմունդ III-ի և նրա որդու՝ Վլադիսլավ IV Վազայի, արքունիքի հայտնի դիվանագետներից մեկը ծագումով վրովյի Կրժիշտոֆ (Խաչատուր) Սերեբկովիչն էր: Նա կրտսեր դեսպանի կարգավիճակով կարողացավ Կ. Պոլսում թուրքական արքունիքի հետ բանակցություններում հոգուտ Լեհաստանի վերանայել 1621 թ. հոկտեմբերի 9-ին Խոտինում կնքված լեհ-թուրքական պայմանագրի ոչ ձեռնտու կետերը²: Միգիզմունդ III-ի օրոք Կ. Պոլսում դիվանագիտական առաքելություն էր իրականացնում Սերեբկովիչների գերդաստանի մեկ այլ ներկայացուցիչ՝ Ստեֆանը, ով հետագայում դարձավ Վլադիսլավ IV-ի քարտուղարը³: 1633թ. Վլադիսլավ IV-ի թագադրությանը ներկա էին Կժիշտոֆ Թումանովիչը և Դանիել Գոլուբովիչը, որոնք թագավորին հավատարմության երդում տվեցին ու ստացան լեհահայերի իրավունքների և արտոնությունների հավաստումը⁴:

1648 թ. նոյեմբերին Յան II Կազիմիրժ թագավորի հանձնարարությամբ Ուկրաինայի հետման Բոգդան Խմելնիցկու և թաթարական իսան Թուղայ բեկի հետ Լվովում, լեհական պատվիրակության կազմում, հաջող բանակցություններ վարեց հայազգի մեծահարուստ վաճառական, նկարիչ Կժիշտոֆ (Ավետիք) Չախնովիչը: 1655 թ. հոկտեմբերին նա կրկին բանակցեց Բ. Խմելնիցկու հետ, հաշտության պայմանագիր կնքելու նպատակով⁵:

XVII դ. կեսերին լեհական արքունիքի դիվանագետներից էր հայազգի Պ. Ռոմաշկնիչը, ով բազմիցս ուղարկվեց Կ Պոլիս՝ Լեհաստանին անհրաժեշտ տեղեկություններ հավաքելու համար: Նա 1650 թ. անհաջող փորձ կատարեց գերեվարությունից ազատելու հետման Միկոլա Պոտոցկու որդի:

¹Տե՛ս Բժշկեան Մ., նշվ. աշխ., էջ 142:

²Տե՛ս Լիննիչենկո Բ. Ա., նշվ. աշխ., էջ 84:

³Տե՛ս Չախարիասկիչ Ֆ. Ք., նշվ. աշխ., էջ 142:

⁴ S. Barancz. Rus dxejow ormiańskich. Ternopol, 1869, s. 121-122.

⁵Տե՛ս История Польши, т. 1, с. 288-290.

Ստեֆանին, որի համար ձեռքակալվեց ու բանտարկվեց, իսկ առատ արձակվելուց հետո կատարեց տարաբնույթ հանձնարարություններ:

Յան III Կազիմիրժ թագավորի օրոք՝ 1668 թ., Իրանում դեսպան նշանակվեց Վրաստանի Գորի քաղաքում, հայ Սոաքեյի ընտանիքում, ծնված Բոզդան (Աստվածատուր) Գուրդին (Գուրդեցկի): 1672 թ. նա դիվանագիտական առաքելություն իրականացրեց Ռուսաստանում նպատակ հետապնդելով Թուրքիայի դեմ ստեղծել խմբավորում Ռուսաստան, Իրան, Լեհաստան կազմով: Նրա եղբայր Փարսադան Գուրդեցկին մասնակցել է լեհ-ռուս-իրանական տնտեսական ու քաղաքական համագործակցությանը, զբաղվել Հայաստանի ազատագրության խնդիրներով¹:

1674 թ. Մոսկվա մեկնած լեհական դիվանագիտական խսբի կազմում էր Գասպար Շիմանսկին: Պարսկաստան մեկնելիս դեսպանության ղեկավար Յուրի Գրիչը մահացավ և դեսպանությունը գլխավորեց Գ. Շիմանսկին: Վերադառնալուց հետո Յան Կազիմիրժ II-ը նրան նշանակեց Լվովի գլխավոր թարգման:

XVII դարի երկրորդ կեսի հայտնի դիվանագետներից էր ծագումով սեբաստացի կաթոլիկ հայ Սալոմոն կամ Սոլիման Կոնստանտին դը Սիրին, ով լեհ ազնվական դառնալուց հետո ստացել էր Զգուրսկի ազգանունը: Նա Վարշավայում ներկայանում էր որպես պորտուգալական արքունիքում ծառայող աշտոնյա: Լեհ պատմաբան Քշիշտոֆ Ստոպկայի կարծիքով Սալոմոնը հավանաբար լեհահայ հայտնի Մինասովիչների ընտանիքի ազգականն էր, որոնք նույնպես սերում էին ոմն Սիրիից, հավանաբար նրանց նախահայրը նույն Սիրին էր՝ Սալոմոն դը Սիրին Լեհաստանի դեսպանն էր Վիեննայում, իսկ

¹Իսխայինյան Ա., Հայագի զործիյներ, Երևան, 2002, էջ 185:

²St. u Ormianska Warszawa, K.Stopka. Syri(Siri, Siricki de Syri) Zgorski Salomon Konstantyn. «Polski stownik biograficzny» XLVI, Warszawa-Krakow, 2009, s. 285-288.

հետագայում դիվանագիտական բազմաթիվ պատասխանատու հանձնարարություններ կատարեց Ռուսաստանում, Թուրքիայում, Իրանում: 1678թ. Մոսկվայում նա Յան III Սոբեսկու հանձնարարությամբ ռուսաց ցար Ֆյոդոր Ալեքսեիչին առաջարկեց վերահաստատել 1667 թ. հունվարի 30-ին Անդրուսովում կնքված ռուս-լեհական զինադադարը: 1688թ. նա պարսից շահին փորձեց համոզել ներգրավվել հակաթուրքական դաշինքում¹:

1670թ. Վարշավայում հաստատվեց լվովցի հայ քահանա Գաբրիել Ջախնովիչը. Նա երկար ժամանակ թագավորական պալատում և պապական նունցիատուրայում ղեկերում էր. որպեսզի համոզեր Լվովի Սբ. Խաչ եկեղեցու կից տարածքը տրամադրվեր հայ կաթոլիկների համար վարժարան կառուցելու նպատակով: Հայտնի է, որ նա լեհական կաթոլիկ եկեղեցիներում քրիստոնեություն է քարոզել ազնվականության շրջանում²:

Լեհահայերը մեծ ընդունելություն ունեին հատկապես Յան III Սոբիեսկի թագավորի օրոք³: Նրա պալատական նկարիչը ծնունդով լվովցի լեհահայ Եժի Շիմոնովիչն էր: Յան Սոբիեսկու 1672 թ. հունիսի 3-ի թագավորական ուղերձում հիշատակվում են բազմաթիվ փաստեր և անուններ, որոնք վկայում են լեհահայերի մատուցած ծառայությունները, նրանց պայքարը Լեհաստանի անկախության համար պայքարում⁴: 1683թ. սեպտեմբերի 12-ին Վիեննայի պարիսպների տակ. թուրքական մեծ վեզիր Կարա Մուստաֆա փաշայի բազմահազար զորքերի դեմ Յան Սոբիեսկու բանակի կազմում հաջողությամբ կռվում էին հայկական երկու գնդեր, մոտ 5

¹ Տե՛ս Աբրահամյան Ա.Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1964, էջ 220:

² Տե՛ս Ormianska Warszawa, էջ 141.

³ Տե՛ս S. Bącz. Sobieski a Ormianie. Dzoennik litercki. Lwow, 1854, № 21, 22.

⁴ Antoni J. Roll. Zamieczki podolskie na kresach. Lwow, 1879, s. 125.

հազար լեհահայեր¹: Ըստ Արշակ Ալպոյաճյանի՝ Յան Սոբիեսկին Վիեննայում տարած հաղթանակից հետո Թուրքիայի թիկունքում ծրագիր է ունեցել վերականգնելու հայոց պետականությունը: Նա Ամենայն Հայոց կաթողիկոս Նահապետ I Եղեսացուն փորձում էր համոզել դաշինք կնքել Հռոմի հետ²: Հայ պատմիչները Յան Սոբիեսկուն համարել են «հայերի մեծ բարեկամ»³:

Ժամանակակից լեհ պատմաբանները գրում են, որ Յան Սոբիեսկին Վիեննայի հաղթանակից հետո Վարշավայի հայերին առատաձեռն պարգևատրեց, բայց նրանք խնդրեցին թագավորին՝ օգնել հայությանն ազատագրվելու Թուրքիայի տիրապետությունից: Թագավորը խոստացավ օգնել հայերին, բայց առաջարկեց ցույց տալ այն ճանապարհը, որով իր գորքը կարող էր հասնել Թուրքիա: Լեհական աղբյուրները վկայում են, որ Յան III Սոբիեսկին այդ ուղղությամբ որոշ քայլեր ձեռնարկել է: Նա ցանկություն ուներ վերականգնել հայկական անկախ թագավորություն ի հակակշիռ Թուրքիայի: Թագավորի առաջին գործընկերն այս հարցում Հակոբ IV Ջուղայեցի կաթողիկոսն էր: Այս հարցով Յան Սոբիեսկու հետ համագործակցում էր Սալոմոն դը Սիրին և թագավորի մոտ հատուկ այդ նպատակով ծառայության անցած Յազլովցի հայ Աստվածատուր Սեֆեր-որդին՝ Բոգդան Սեֆերովիչ Սպենդովսկին⁴:

1681 թ. հոկտեմբերին լեհահայոց կաթոլիկ թեմի առաջնորդ Նիկոլ Թորոսովիչի մահից և նրան հաջորդած Վարդան Հունանյանին Հայաստանում բանտարկելուց հետո, Վարշավան դարձավ կրոնական վեճի թատերաբեմ: Հռոմի պապի նվիրակ Օպիցիո Պալլավիչինին փորձեց թույլ չտալ

¹Տե՛ս «Wielika encyklopedia powszechna», Serya II, t. V-VI, Warszawa, 1908, s. 400.

² Ալպոյաճեան Ա., Մոսքելութին ի Հապէշստան ԺԷ դարուն, Գահիրէ, 1946, էջ 64:

³Տե՛ս Արքահամյան Ա.Գ., նշվ. աշխ., էջ 216:

⁴К. Stopka, Spendowski (Seqeczyk, Seqerowiez, Szeqiczny) Bogdan. «Polski stownik biograficzny» XLI, Warszawa-Kraków, 2002, s. 68-70.

Ամենայն հայոց կաթողիկոսի նշանակած եպիսկոպոսի կողմից Լվովի հայոց թեմի ղեկավարումը: 1682 թ. պապական նվիրակը հրամայեց վարչավահայերին՝ Սուրբ Ծնունդը նշել ղեկտեմբերի 25-ին, և ոչ թե հունվարի 6-ին: 1683 թ. մարտի 19-ին Վարչավայի իր մասնավոր մատուտում նա ձեռնադրեց երեք կաթոլիկ հայ սարկավագների՝ Զլոչովի ապագա ծխական քահանա Միխալ Սուրատովիչին, թեմի ապագա նոտար Գժեգոժ Դերսիմոնովիչին և Զախարիաշ Մեֆերովիչին: Հայ քահանա Դեոդատ Ներսեսովիչը հրապարակային կաթոլիկ դավանանք ընդունեց և 1684թ. սեպտեմբերի 27-ին ձեռնադրվեց Թրսկիայի Տրայանապոլսի եպիսկոպոս: 1696 թ. հունվարին Վարչավայում հայ ազնվական Միկոլայ Հաջինիչը, ով սերտ հարաբերություններ ուներ Յան Երրորդ Սոբիեսկի թագավորի հետ, Լվովի հայ մեծամեծերի խնդրանքով թագավորին միջնորդեց Ներսեսովիչին թեմի առաջնորդի կարգավիճակ չջնորհել¹:

1686 թ. փետրվարի 13-ի հրամանագրով Յան Սոբիեսկին հայ ավագներին պաշտոնապես անվանեց հայ ազգի դատավորներ: Հաջորդ տարիներին պաշտոնավորող 6 հայ դատավորների ազատեց հարկերից և նրանցից մեկին թույլատրեց մասնակցել քաղաքի ֆինանսական գործերի քննարկմանը²: Յան III Սոբիեսկին 1686թ. հոկտեմբերի 29-ի հրովարտակով իր տոհմական տիրույթ Զոլոչն քաղաքում Դաւիթել Ծառուկովիչի գլխավորությամբ վերաբնակեցված հայերին 20 տարով ազատեց մի քանի հարկերից և թույլատրեց ամեն տարի ընտրել վոյտ, որն օժտված էր դատական իշխանությամբ³: 1696թ. հունիսին Յան Սոբիեսկին հայոց կաթողիկոս Նահապետ I Եղեսացու մոտ ուղարկեց իր

¹ Sk. 'u Ormianska Warszawa, էջ 141.

² A. Crolowski. Pogląd na organizację i działalność dawnych władz miasta Lwowa do roku 1848. Lwow, 1896, s. 36.

³ L. Charewiczowa. Dzieje m Złoczowa. Złoczow, 1929, s. 58, 180.

քարտուղար, հայտնի աստվածաբան ու փիլիսոփա լեհահայ Շիմոն Բեդրոսովյուշին: Նա թագավորի կողմից ուներ կոնկրետ առաջարկություն կաթոլիկություն ընդունելու պայմանով Հայաստանն ազատագրել և հայ «ժողովրդի թագավորությունը վերականգնել»: Այս առաջարկությունը էջմիածնում չքննարկվեց, որովհետև Շ. Բեդրոսովյուշի ճանապարհվելուց մեկ շաբաթ անց թագավորը մահացավ¹:

Յան Սոբիեսկու հետնորդները նրա նման համարձակ մտահղացումներ չունեին Արևելքի նկատմամբ, քանի որ նրա մահից հետո Ռեչ Պոսպոլիտան կորցրեց իր հզորությունը: 1697թ. Ավգուստ II թագավորի պալատ եկավ պարսիկների կողմից հալածվող նորջուղայեցի Փիլիպոս Ջազլին (Ֆիլիպ դը Ջազլի)՝ նպատակ ունենալով բանակցություններ վարել հայերի՝ Լեհաստան արտագաղթելու հարցով²: XVIIդ. երկրորդ կեսին, կապված Լեհաստանի տնտեսական անկման և լեհահայերի կաթոլիկացման շաղաքականորթյան հետ, հայերն սկսեցին աստիճանաբար հեռանալ Ռեչ Պոսպոլիտայի հարավային սահմաններից³:

Եզրակացություն

Լեհական աղբյուրները վկայում են, որ XVI-XVII դդ. Ռեչ Պոսպոլիտայի տարբեր քաղաքներից Վարշավա եկած լեհահայերը հարմարվել են՝ որպես պայմաններին և ժամանակի ընթացքում ձեռք բերել քաղաքաբնակի կարգավիճակ: Նրանք ակտիվ դեր են խաղացել ոչ միայն Վարշավայի, այլև Լեհաստանի ներքին և արտաքին առևտրում: Վարշավահայերը

¹St. u S. Barącz. Sobieski a Ormianie. «Dziennik Literacki», 3, 1854, № 21, s. 161-162, № 22, s. 169-173; M. Chowaniec, Z dziejow polityki Jana III na Bliskim Wschodzie 1683-1686, «Kwartalnik Historyczny», XI, 1926, № 2, s. 151-160; M. Zakrzewska-Dubašowa, Ormianie w dawnej Polsce, Lublin 1982, s. 287-309.

²St. u Acta Nuntiatore Polonea, XXXVII, giovani Antonio Davia(1696-1700), 2, izd A. Kąder, Cracoviaę, 2010, s. 133, 192, 252, 372.

³Tadeusz Gromnicki. Ormianie w Polsce, ich historia, prawa i przywileje. Warszawa, 1889, s. 71-72.

ճառայել են լեհ թագավորիներին որպես առևտրականներ, զինվորականներ, թարգմանիչներ, նկարիչներ և դիվանագետներ:

FELIX MOVSISYAN

Doctor of historical sciences, professor, Armenia

POLISH SOURCES ABOUT POLISH ARMENIANS IN WARSAW IN THE XVI-XVII CENTURIES

SUMMARY

Keywords: *Rec Pospolita, Warsaw, Armenian community, townspeople, merchants, diplomats, court painters.*

According to Polish sources the first contacts of Armenians with Varsovians were established in Russian towns, in the second half of the 14th century. The first Armenian surnames in Warsaw were mentioned in the 30s of the 16th century. In the 1550s. the Armenians who came to Warsaw from different cities and towns of Poland were granted the rights to resettle there by the proclamation of King Sigmund August. They were also granted the privilege of establishing active trade relations with the noble families of Warsaw. In the 17th century, the position of Armenians in Warsaw was strengthened due to the trade cooperation and their role in the Royal Palace. Sefer Muratowicz, Krzysztof Zakhnowicz, Grzegorz Piotrowicz Glushkowicz, Piotr Baranowicz and some others had an exceptional commercial role. Marcin Lukaszowicz, Daniel Zachariaszowicz were members of the Warsaw City Council, and Jan Andrychowicz was a member of the City Commune. Pavel Bogusz Donoshkowicz, Vachek Kevorkowicz and Jerzy Shimonowicz were painters of the Royal Palace; Jadwiga Rafalowicz was a well-known public figure.

The translators in the diplomatic missions with the countries of the East were mostly Polish Armenians living in Warsaw. They simultaneously performed the duties of messengers, as well as "big" and "small" ambassadors. In the 17th century, Sefer Muratowicz, Bedros Gregorowicz, Krzysztof (Khachatur) and Stefan Serebkowicz, Krzysztof (Avetik) Zakhnowicz, Bogdan Gurdy (Gurdecki), Gaspar Szymanski, Salomon Constantin de Sirin and others provided diplomatic services to the Polish kings.

ФЕЛИКС МОВСИСЯН

д. и.н., профессор, Армения

ПОЛЬСКИЕ ИСТОЧНИКИ XVI-XVII ВВ. О ВАРШАВСКИХ АРМЯНАХ

РЕЗЮМЕ

Ключевые слова: Речь Посполитая, Варшава, армянская община, горожане, негоцианты, дипломаты, дворцовые художники.

Согласно польским источникам, первые контакты армян с варшавянами произошли во второй половине XIV века в русских городах. Первые армянские фамилии в Варшаве упоминаются в 30-х годах XVI века. В 1550-х годах армяне, прибывшие в Варшаву из разных польских городов, получили право на переселение согласно манифесту короля Зигмунда Августа. Они получили привилегию от короля, установили активные торговые отношения с дворянскими родами Варшавы. В XVII веке присутствие армян в Варшаве усилилось благодаря торговому сотрудничеству и их роли при дворе короля. Исключительная роль в торговле принадлежала Сеферу Муратовичу, Кшиштофу Захновичу, Гжегожу Петровичу Глушковичу, Петру Барановичу и другим. Марчин Лукашевич,

Даниэл Захариашевич были депутатами Варшавского городского совета, Ян Андрыхович – членом городской коммуны. Среди художников королевского двора можно отметить Павла Богуша Доношкевича, Вачека Кеворковича и Ежи Шимоновича. Известным общественным деятелем была Ядвига Рафалович. Переводчиками дипломатических миссий в странах Востока были в основном варшавские армяне. Они одновременно выполняли обязанности гонцов, посланников, «больших» и «малых» послов. В XVII веке дипломатические услуги польским королям оказывали Сефер Муратович, Бедрос Грегорович, Кшиштоф (Хачатур) и Стефан Серебковичи, Кшиштоф (Аветик) Захнович, Богдан Гурдий (Гурдецкий), Гаспар Шиманский, Солсмон Константин де Сири и другие.

ՀԵՆՐԻ ՄԱՏԻՆՅԱՆ
ՎՊՀ պատմության ամբիոնի ասպիրանտ,
Հայաստան

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՅՈՇ ՀԱՅ-
ԼԵՀԱԿԱՆ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1991-2018 ԹԹ.**

*Հիմնաբառեր. Հայաստան, Լեհաստան, Թուրքիա, Մեծ Եղևնի,
կոտորած, միջազգային ոճիր, հոլոքոստ, ճանաչում, դատապարտում:*

Մինչ 1998թ. Հայաստանի իշխանությունները Թուրքիայի հետ հարաբերություններում ցուցաբերում էին խիստ զգուշավոր քաղաքականություն՝ զերծ մնալով Հայոց ցեղասպանության վերաբերյալ հրապարակային ելույթներից ու կոչերից: Իրավիճակը փոխվեց 1998 թ. իշխանափոխությունից հետո, երբ Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը դարձավ արտաքին քաղաքական առաջնահերթություն: Վերը նշված պատճառով, հայ-լեհական պաշտոնական առնչություններում Հայոց ցեղասպանության վերաբերյալ առաջին քննարկումները սկսվում են 1998 թվականից: Այս հարցում կարևոր նշանակություն ունեւր գոյություն ունեցող լեհ-թուրքական հարաբերությունների համապարփակ ուսումնասիրությունը: 1997 թ. հոկտեմբերի 13-18-ը Վարշավայում գտնվող ՀՀ ԱԳՆ պատվիրակության հետ հանդիպմանը լեհերն այդ հարաբերությունները որակեցին որպես ռազմավարական¹: Թուրքիան առաջիններից էր, որ խրախուսում էր Լեհաստանի մուտքը Հյուսիսատլանտյան դաշինք, իսկ Լեհաստանը Թուրքիայի ԵՄ անդամ դառնալու համոզված կողմնակից էր²: Ըստ Լեհաստանի արտաքին գործերի

¹ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, Ելույթային երկրների վարչություն, երկկողմ հարաբերությունների երկրորդ բաժին, ցուցակ 2, գործ № 113, էջ 156:

²Թուրքիայի ԱԳՆ պաշտոնական կայք https://www.mfa.gov.tr/relationstbetween-turkiye-ancdoland-en.mfa?fbclid=IwAR3av9tr3FOalXx8ymPeFiaHvOztFN7Bg8l25Xpbhl_K27oiaqog2OCS27Q

նախարար Ադամ Դանիել Ռոտֆելդի, Թուրքիան Լեհաստանի համար կարևոր գործընկեր էր և կարող էր իր նպաստը բերել ընդհանուր եվրոպական անվտանգությունն ապահովելու գործում՝ դառնալով ԵՄ լիիրավ անդամ¹: Այդուհանդերձ, լեհերին անձանթ չէր հայ ժողովրդի ցավը, քանի որ երկու ժողովուրդներին միավորում էր բախտորոշ անցյալի և վերապրած արհավիրքների պատմական ընդհանրությունը: Կարևոր նշանակություն ունեւր նաև Լեհաստանի հայ համայնքի դերը: Ըստ Լեհաստանի նախկին նախագահ Լեի Կաչինսկու, լեհ ժողովուրդը լավ էր հասկանում 20-րդ դարում հայ ժողովրդի կրած ծանր կորուստները, լեհերն ու հայերը ունեն ընդհանրություններ, քանի որ երկու ժողովուրդներն էլ ազատության և անկախության համար պայքարում վերապրել են ազգային ողբերգություններ, «թեպետ հայերի վերապրածն անհամեմատ ավելի ծանր է եղել»²:

1998 թ. Հայաստանում տեղի ունեցան նախագահական ընտրություններ, որին հաջորդեց Լեհաստանում ՀՀ դեսպանության բացումը նույն թվականի ապրիլի 10-ին³: Արտաքին քաղաքական փոփոխություններով պայմանավորված՝ 1998 թ. ապրիլի 26-ին Հայոց Մեծ Եղեռնի 83-ամյա տարելիցի կապակցությամբ, Լեհաստանում ՀՀ դեսպանության և Վարշավայի Հայ մշակութային ընկերության նախաձեռնությամբ Վարշավայի կենտրոնական գերեզմանոցում հարգանքի տուրք մատուցվեց լեհ գրող և հրապարակախոս Բոգդան Գեմբարսկու հիշատակին⁴: Սա նորանկախ Հայաստանի Հանրապետության անունից կազմակերպված պաշտոնական առաջին միջոցառումն էր Լեհաստանում՝ նվիրված Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին: Ընթերցելով ՀՀ նախագահի

¹ ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, ցուցակ 11, գործ № 25, էջ 138:

² Նույն տեղում, ցուցակ 12, գործ № 36, էջ 32:

³ Նույն տեղում, ցուցակ 3, գործ № 213, էջ 60:

⁴ Նույն տեղում, ցուցակ 3, գործ № 213, էջ 73:

ուղերձն՝ ուղղված հայ ժողովրդին, ՀՀ գործերի հավատարմատար Աշոտ Հովակիմյանը նշեց, որ թեև Լեհաստանում չկա Եղեռնի զոհերին նվիրված հուշարձան, Գեմբարսկու գործն ու անձնագոհությանը՝ ի պաշտպանություն հայ ժողովրդի ոտնահարված իրավունքների, իրենով ուրույն հուշարձան է դարձել¹: Ելույթով հանդես եկան նաև Վարշավայի հայ մշակութային միության վարչության անդամ Մաչեկ Բոգոսևիչը, Գեմբարսկու դուստրը՝ Զոֆիա Յարկուլսկա-Գեմբարսկան և Վարշավայի հրեական համայնքի վարչության անդամ Ռիշարդա Զախարիաշը²:

1998 թ. հունվարից Լեհաստանն ստանձնել էր ԵԱՀԿ նախագահությունը³: Այս շրջանակներում որոշված էր ԵԱՀԿ հերթական վեհաժողովնանցկացնել Ստամբուլում, որտեղ նախատեսվում էր ընդունել Եվրոպայի ընդհանուր և համապարփակ անվտանգության խարտիան («Ստամբուլյան խարտիա»)⁴: Վեհաժողովը Թուրքիայում անցկացնելուն, ինչպես և խարտիան «Ատամբուլյան» կոչելուն, որպես ԵԱՀԿ անդամ երկիր, առարկություն էր ներկայացրել Հայաստանի Հանրապետությունը, որի հիմնական պատճառը Հայոց ցեղասպանության հարցում Թուրքիայի ժխտողական կեցվածքն էր: ԵԱՀԿ անդամ հիսունչորս երկրներից Հայաստանը միակն էր, որ խոչընդոտել էր այս հարցի վերաբերյալ կոնսենսուսը⁵: Այս հանգամանքը, որ խորապես մտահոգում էր ԵԱՀԿ նախագահությանը, 1998 թ. մայիսից հայ-լեհական պաշտոնական հարաբերությունների կիզակետում էր: 1998 թ. մայիսի 14-ին Լեհաստանում ՀՀ գործերի հավատարմատար Աշոտ Հովակիմյանը Վարշավայում հանդիպում ունեցավ ԵԱՀԿ համակարգող գրասենյակի ղեկավար Յեժի Նովակի և

¹Նույն տեղում:

²Նույն տեղում:

³Նույն տեղում, ցուցակ 2, գործ № 113, էջ 151:

⁴Նույն տեղում, ցուցակ 3, գործ № 213, էջ 97-98:

⁵Նույն տեղում, ցուցակ 3, գործ № 214, էջ 35:

Մինսկի խմբում Լեհաստանի ներկայացուցիչ դեսպան Ստանիսլավ Պշիգոդսկու հետ¹: Լեհերի կարծիքով, բազմաթիվ երկրներ միմյանց միջև ունեին խնդիրներ, որը չէր խոչընդոտում միջազգային հարաբերությունների զարգացմանը, ինչպես Հունաստանի և Կիպրոսի պարագայում, որոնք համաձայնել էին վեհաժողովի անցկացմանը Թուրքիայում: Բացի այդ, Լեհաստանը վեհաժողովը համարում էր ևս մեկ հնարավորություն Թուրքիայի վրա ճնշում գործադրելու և եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու առումով: Ընդգծվում էր նաև առաջինն ընդառաջ քայլ անելու կարևորությունը: ՀՀ գործերի հավատարմատարն, իր հերթին, ներկայացնելով ՀՀ պաշտոնական առարկության հիմնավորումները, այն չէր մեկնաբանում որպես զուտ երկկողմ խնդիր, այլ պաշտոնական Թուրքիայի կողմից վարվող քաղաքականության ու պահվածքի հարց: Խնդիրը համեմատելով սերբ-ալբանական հակամարտության հետ՝ Հովակիմյանը նկատեց, որ նման տրամաբանությամբ, Սերբիայի վրա ոչ թե ճնշում էր գործադրվելու, այլ վեհաժողով պիտի անցկացվեր Բելգրադում, ինչպիսի փորձ Սերբիան ուներ: Իսկ առաջին քայլն անելու առնչությամբ նշեց, որ միայն 1998 թ. իշխանափոխությունից հետո է բարձրացվել Ցեղասպանության ճանաչման հարցը, մինչդեռ նախորդ տարիներին ոչինչ չէր խանգարում Թուրքիային մերձեցմանն ընդառաջ քայլ կատարել²: Այս հարցը ևս մեկ անգամ քննարկման առարկա դարձավ Նովակի ու Պշոգոդսկու և Աշոտ Հովակիմյանի միջև 1998 թ. հուլիսի 15-ին տեղի ունեցած հանդիպմանը, սակայն հայկական դիրքորոշումը մնաց անփոփոխ³: Նույն օրը Յեժի Նովակին էր հանդիպել նաև Թուրքիայի դեսպանը, որ ոչ պաշտոնական զեկույց («non paper») էր հանձնել լեհ

¹Նույն տեղում, ցուցակ 3, գործ № 213, էջ 97:

²Նույն տեղում, ցուցակ 3, գործ № 213, էջ 98:

³Նույն տեղում, ցուցակ 3, գործ № 213, էջ 118:

պաշտոնյային՝ արտահայտելով իր երկրի անհանգստությունը ՀՀ կառավարության ու Մփյուռքի կողմից Յեղասպանության ճանաչման ուղղությամբ կատարվող քայլերի վերաբերյալ¹: Ըստ թուրք դիվանագետի, այդպիսի քայլերի նախանշաններ կային նաև Լեհաստանում՝ լեհական մամուլում տեղ էին գտել հրապարակումներ Եղեռնի տարելիցին ընդառաջ: Այս ամենը Թուրքիայի դեսպանը կապում էր ՀՀ դեսպանության բացման և պաշտոնական Երևանի կողմից լեհահայ համայնքը գրգռելու ցանկության հետ²: Իր հերթին, ՀՀ գործերի հավատարմատարը, լեհ գործընկերոջ հետ հանդիպմանն այս հարցի առնչությամբ տեղեկացրեց, որ յուրաքանչյուր երկրի գիտակից մարդիկ իրենք են որոշում իրենց դիրքորոշումը առանց կողմնակի ազդեցության, իսկ Վարշավայում ՀՀ դեսպանության քաղաքական գործունեության հիմնական ուղղություններից էր լինելու Յեղասպանության ճանաչման վերաբերյալ բացատրական աշխատանքը³: Ստամբուլի վեհաժողովի վերաբերյալ հարցը, որին անմիջականորեն շաղկապվում էր Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը, պարբերաբար քննարկվում էր երկկողմ պաշտոնական հանդիպումների շրջանակում, այդ թվում՝ ԵԱՀԿ գործող նախագահող Լեհաստանի արտաքին գործերի նախարար Բրոնիսլավ Գերեմեկի՝ 1998 թ. նոյեմբերի 24-25-ը Երևան⁴, ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի պատվիրակության՝ 1999 թ. հուլիսի 13-15-ը Լեհաստան կատարած⁵ այցերի ընթացքում:

Լեհաստանում Հայոց ցեղասպանության ճանաչման գործում կարևոր նշանակություն ունեւր լեհ կաթոլիկ եկեղեցու հանրային դիրքորոշումը: 1998 թ. օգոստոսի 7-ին

¹Նույն տեղում, ցուցակ 3, գործ № 213, էջ 119:

²Նույն տեղում:

³Նույն տեղում:

⁴Նույն տեղում, ցուցակ 3, գործ № 214, էջ 60: ցուցակ 7, գործ № 60, էջ 4: ցուցակ 9, գործ № 26, էջ 18:

⁵Նույն տեղում, ցուցակ 5, գործ № 32, էջ 69:

Լեհաստանում ՀՀ գործերի հավատարմատար Աշոտ Շովակիմյանն ու երկրորդ քարտուղար Հ. Բիշարյանը հյուրընկալվեցին Լեհաստանի կաթոլիկ եկեղեցու առաջնորդ Նորին Սրբություն կարդինալ Յոզեֆ Գլեմպի նստավայրում¹: Հայ դիվանագետները Լեհաստանի պրիմասին ներկայացրին Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ կատարված աշխատանքներն՝ ակնկալելով այդ հարցում լեհ կաթոլիկ եկեղեցու աջակցությունը: Լեհ հոգևորականը, ով 1960-ական թվականներին եղել էր Հայաստանում, որպես երիտասարդ հոգևորական, հանդիպել Վազգեն Ա-ի հետ, չափազանց դրականորեն արձագանքեց բարձրացված հարցին՝ անթույլատրելի համարելով առաջին քրիստոնեական ժողովրդի և երկրի բնաջնջումը մոռացության մատնելը²: Ըստ Լեհաստանի հոգևոր առաջնորդի, աշխարհում խոսվում էր միայն հրեական հոլոքոստի մասին, մինչդեռ հայերի ցեղասպանությունն «իսկական ցեղասպանություն» էր և դարաշրջանի առաջին ոճիրը³: Հրեաների կոտորածի հետ համեմատությունն ու Հայոց ցեղասպանության վերաբերյալ նման վերաբերմունքը որոշ չափով պայմանավորված էր նաև այդ շրջանում բորբոքված լեհ-հրեական վեճի հետ՝ կապված «Աուշվից» հուշահամալիրի մոտ լեհերի կողմից խաչ տեղադրելու հանգամանքի հետ⁴:

Որևէ ինքնիշխան սուբյեկտի կողմից միջազգային հանցագործությունը ճանաչող կամ մեկ այլ երկրին դատապարտող բանաձևի ընդունումը հաճախ պայմանավորվում է քաղաքական նպատակահարմարությամբ: 1990-ականների վերջերին և 2000-ականների սկզբին Լեհաստանը դատապարտում էր Ռուսաստանի գործողությունները չեչենների դեմ՝ հստակ որակումներ տալով ռուսների գործողու-

¹ Նույն տեղում, ցուցակ 3, գործ № 215, էջ 8

² ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, ցուցակ 3, գործ № 215, էջ 9:

³ Նույն տեղում, ցուցակ 3, գործ № 215, էջ 8:

⁴ Նույն տեղում, ցուցակ 3, գործ № 215, էջ 11:

թյուններին: Լեհական մամուլում բազմաթիվ էին հրապարակումները ռուսների կողմից չեչեններին ցեղասպանելու վերաբերյալ, ինչպես՝ «Ցեղասպանություն Չեչնիայում¹», «Մամաշկայում տեղի ունեցած ջարդերի հեղինակները հարբած զինվորներն են²», «Դադարեցնել ցեղասպանությունը Չեչնիայում³», «Ընտրություններ և ցեղասպանություն Չեչնիայում⁴», «Վերջ ցեղասպանությանը Չեչնիայում⁵» և այլն: Դատապարտող հայտարարություններ էին արվում նաև պաշտոնապես: Մասնավորապես՝ ԼՀ Սենատի մարշալ Ալիցյա Գժեշկովիակը հանդես էր գալիս այն հայտարարությամբ, թե Ռուսաստանը ցեղասպանության է ենթարկում չեչեն ժողովրդին և Չեչնիայի հարցն այլևս չէր կարող համարվել Ռուսաստանի ներքին հարցը⁶: Այս կապակցությամբ՝ 2000 թ. փետրվարի 22-ին ՀՀ գործերի հավատարմատար Աշոտ Հովակիմյանը, հանդիպելով Ալիցյա Գժեշկովիակի հետ, կարևորեց Լեհաստանի օրենսդիր մարմնում Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի ընդունումը: Հայ դիվանագետին մտահոգիչ էր թվում այն հանգամանքը, որ ԼՀ Սենատը, քաղաքական նկատառումներից ելնելով, ցեղասպանություն էր որակում ռուսների գործողությունները չեչենների դեմ, մշտապես հանդես գալիս դատապարտող հայտարարություններով, բայց երբեք օրակարգի հարց չէր դարձնում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հարցը՝ անտեսելով հայերի անուրանալի ավանդը Լեհաստանի պատմության ու մշակույթի մեջ⁷:

2004 թ. մայիսի 23-ին Լեհաստանի Սեյմի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նիստում Հայաստանի

¹Rzeczpospolita: Ludobójstwo w Czechenii, 3.01.1995:

²Rzeczpospolita: Pijani żołnierze sprawcami masakry w Samaszkach, 14.04.1995:

³Gazeta Wyborcza: Dostyc ludobójstwa w Czechenii, 31.07.1996:

⁴Rzeczpospolita: Wybory i ludobójstwo w Czechenii, 7.10.2003:

⁵Gazeta Wyborcza: Stop ludobójstwu w Czechenii, 22.04.2006:

⁶ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, ցուցակ 7, գործ № 60, էջ 28-29:

⁷Նույն տեղում, ցուցակ 7, գործ № 60, էջ 66:

Հանրապետությունում Լեհաստանի արտակարգ և լիազոր դեսպանի հավակնորդ Տոմաշ Կնոտեի թեկնածության լուումների ժամանակ վերջինս, Հայոց ցեղասպանության վերաբերյալ հարցին պատասխանելով, հայտարարեց, որ, անկասկած, տեղի ունեցածը եղել է ցեղասպանություն՝ Թուրքիայի կողմից իրականացված դիտավորյալ և կանխամտածված գործողություն¹: Հայաստանում Լեհաստանի ապագա դեսպանը, ելույթն ամփոփելով, նշեց, որ այդ գործողությունները պետք է խստորեն քննվեն պատմության կողմից: Միաժամանակ հավելեց, որ չի կարելի լինել պատմության գերին, պետք է նայել դեպի ապագան և չմոռանալ պատմությունը, քանի որ դա է մերձեցման ճանապարհը²:

2004 թ. Կրակովի արքեպիսկոպոս կարդինալ Ֆրանցիշեկ Մախարսկու թոյլտվությամբ և օրհնությամբ, չնայած Թուրքիայի դեսպանության և ԼՀ արտաքին գործերի նախարարության հանդիմանությանը, Կրակովում տեղադրվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը հավերժացնող խաչքար³: 2005 թ. հունվարի 11-ին՝ Հայոց ցեղասպանության 90-ամյակի կապակցությամբ Կրակով քաղաքում՝ Մալոպոլսկի վոյևոդության հանրային գրադարանի մեծ սրահում, տեղի ունեցավ «Ոչնչացվող ժառանգություն. հայերը Արևելյան Թուրքիայում» լուսանկարչական ցուցահանդեսի բացումը⁴: Այն ներկայացնում էր Վանում, Էրզրումում, Կարսում, Անիում և այլ հայկական բնակավայրերում գոյություն ունեցած հայկական հարուստ ժառանգությունը և այդ ամենի ոչնչացմանն ու փաստերի կեղծմանը միոված թուրքական զեղծարարությունը: Ցուցահանդեսի բացման արարողության ժամանակ տեղի ունեցավ նաև լեհ պատմաբան, Պոզնանի համալսարանի

¹Նույն տեղում, ցուցակ 10, գործ № 52, էջ 61:

²Նույն տեղում:

³Նույն տեղում, ցուցակ 11, գործ № 25, էջ 27:

⁴Նույն տեղում, ցուցակ 11, գործ № 25, էջ 116:

գեկտոր Գժեզոժ Կուխարչիկի «20-րդ դարի առաջին երկրորդ տարիները» գրքի շնորհաստեղծը¹: 2005 թ. նոյեմբերի սկզբին Վարշավայի «Ֆրոնդա» հրատարակչությունը հրատարակեց այդ մենագրությունը, որին աջակցեց լեհահայ գործարար Բուքեն Եսայանը²: Այն առաջին լեհերեն մեծածավալ աշխատությունն էր նվիրված Հայոց ցեղասպանությանը³: Գիրքը բաղկացած է 220 էջից և 3 մասից, որոնք վերաբերում են հայերի դրությանը 1908 թ. երիտթուրքական հեղափոխությանը նախորդած շրջանում, 1915-1916 թթ. հայերի դեմ իրականացված ցեղասպանական գործողությունների ներկայացմանը, հետագա հետապնդումներին ու ճշմարտության հերքմանը: Գրքում զետեղված են նաև Ցեղասպանության ականատեսներ Արմին Վեգների և Ջոն Էլդերի լուսանկարները⁴:

2005 թ. ապրիլի 10-ին պատմության մեջ առաջին անգամ Լեհաստանի մայրաքաղաք Վարշավայում Սբ Հովհաննես Մկրտչի տաճարում, տեղի ունեցավ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված Սուրբ պատարագ Լեհաստանի կաթոլիկ եկեղեցու հովվապետ կարդինալ Յուզեֆ Գլեմպի ձեռամբ, ով հատուկ այդ ապատակով մի քանի օրով վերադարձել էր Վասիլկանից⁵: Վերջինս ներկաներին ուղղված իր խոսքում դատապարտեց Հայոց ցեղասպանությունը և կոչ արեց հայ ժողովրդին պահպանել ոգու ամրությունը: Պատարագին մասնակցում էին նաև Վարշավայի, Կրակովի և Գդանսկի հայ կաթոլիկ հոգևոր օժանդակները, ներկա էին Լեհաստանի Սահմանադրական դատարանի նախագահը, Վարշավայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Հովակիմյանը, լեհ պաշտոնյաներ, Մեյմի պատգամավորներ, դիվանագետներ, օտարերկրյա

¹Նույն տեղում, ցուցակ 11, գործ № 25, էջ 4:

²Նույն տեղում, ցուցակ 11, գործ № 25, էջ 170:

³Նույն տեղում, ցուցակ 11, գործ № 25, էջ 169-170:

⁴Kucharczyk Grzegorz: Pierwszy holocaust XX wieku; Warszawa, 2012.

⁵ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, ցուցակ 11, գործ № 25, էջ 69:

դեսպաններ և այլք: Պատա-բազին աղոթք բարձրացվեց նաև Հովհաննես Պողոս Բ Հռոմի պապի հիշատակի համար, ով 2001 թ. այցելել էր Հայաստան և դատապարտել Հայոց ցեղասպանությունը¹:

Հայոց ցեղասպանության ճանաչման գործում հայլեհական առնչություններում արձանագրված կարևորագույն հաջողությունը կարող ենք համարել Լեհաստանի Սեյմի կողմից դատապարտող բանաձևի ընդունումը: 2005 թ. ապրիլի 19-ին Սեյմի կողմից ընդունված բանաձևում նշվում է. «Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Թուրքիայում հայ ժողովրդի նկատմամբ իրականացված Ցեղասպանության 90-րդ տարելիցին Լեհաստանի Սեյմը հարգանքի տուրք է մատուցում Առաջին աշխարհամարտի ժամանակ Թուրքիայում հայ ժողովրդի նկատմամբ իրականացված Ցեղասպանության գոհերի հիշատակին: Այդ հանցագործության գոհերի հիշատակը հարգելը և դատապարտումը համայն մարդկության, բոլոր երկրների և բարի կամքի տեր բոլոր մարդկանց բարոյական պարտականությունն է»²: Հայտարարության տեքստը հոտնկայս ընթերցեց Սեյմի նախագահը, որի ընթացքում ոտքի կանգնեցին Սեյմի բոլոր անդամները և մեկ րոպե լռությամբ հարգեցին Եդեսնի գոհերի հիշատակը³: Տեքստի նախագիծը Սեյմի նախագահությանը համատեղ ներկայացրել էին ընդդիմադիր «Քաղաքացիական պլատֆորմ» և «Իրավունք և արդարություն» կուսակցությունները⁴: Ըստ Լեհաստանի նախկին նախագահ Լեխ Կաչինսկու, ԼՀ Սեյմի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի ընդունումն առաջին

¹Նույն տեղում:

²Տե՛ս բանաձևի տեքստը ԼՀ Սեյմի պաշտոնական կայքում http://www.orka.sejm.gov.pl/proc4.nsf/uchwaly;3918_u_hun#:text=1%20Wojny%20oC5%9Awarotowci+UCHWA%20oC5%81A%20Seimu%20Rzeczypospolitej%20Polskiej%20z%20dnia%2019%20kwietnia%202005%20r.Turcji%20podczas%20Pierwszej%20Wojny%20oC5%9Awarotowci

³ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, ցուցակ 11, գործ N° 25, էջ 78:

⁴Նույն տեղում:

հերթին բարոյական պարտքի հատուցում էր անմեղ գոհերի հիշատակին¹: Հայտարարությունից հետո Թուրքիայի արտաքին գործերի նախարարությունը նամակ հղեց Լեհաստանի արտաքին գործերի նախարարությանը, որտեղ Սեյմի ընդունած բանաձևը որակեց որպես անպատասխանատու արարք և լեհ-թուրքական ավանդական հարաբերություններին հակասող²: Թուրքիայի նախագահ Աբդուլահ Գյուլը հայտարարեց, թե 90-ամյա վաղեմության խնդիրները պետք է լինեն ոչ թե քաղաքագետների, այլ պատմաբանների հետաքրքրության կենտրոնում³: Որպես բողոքի նշան՝ Թուրքիայի խորհրդարանը չեղարկեց մայիս ամսին նախատեսած լեհ պատգամավորների հետ հանդիպումը: Ի պատասխան՝ Լեհաստանի արտաքին գործերի նախարարը նշեց, թե Սեյմի ընդունած հայտարարությունն ունի միայն բարոյական բնույթ և որևէ կերպ չի կարող խոչընդոտել լեհ-թուրքական հարաբերությունների զարգացմանը⁴: Սեյմի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի փոխնախագահ Տադեուշ Իվինսկին նկատեց, թե Թուրքիայի արձագանքը միանգամայն հասկանալի էր, միաժամանակ ափսոսանք հայտնելով, որ հայտարարության տեքստը նախապես չի քննարկվել և համաձայնեցվել իրենց հանձնաժողովում⁵: Մինչդեռ «Քաղաքացիական պլատֆորմ» կուսակցությունը ներկայացնող պատգամավոր Կոմորովսկին պնդեց Թուրքիան չպետք է դժգոհեր, որ իրենք պաշտպանեցին տուժածներին: «Ոչ մի հանցագործություն չպետք է մոռացվի», - եզրափակեց պատգամավորը⁶: Սեյմի մարշալ Զիմոնիչը, պատասխանելով Թուրքիայի դժգոհությանը, նշեց, որ Սեյմի պատգամավորներն,

¹Նույն տեղում, ցուցակ 12, գործ № 36, էջ 33:

²Նույն տեղում, ցուցակ 11, գործ № 25, էջ 84:

³Նույն տեղում:

⁴Նույն տեղում, էջ 84-85:

⁵Նույն տեղում, էջ 85:

⁶Նույն տեղում, ցուցակ 11, գործ № 25, էջ 85:

ընդունելով հայտարարությունը, գիտակցել են, որ Թուրքիայի կառավարությունը չի ցանկանում պաշտոնապես կրել պատասխանատվություն հայերի ջարդերի համար: Բայց քանի որ այդ դեպքերն իսկապես տեղի են ունեցել, ողջ պատասխանատվությունն ընկնում է թուրքերի վրա: Չիմոռչնիչը հավելեց նաև, որ այդ հայտարարությունը որևէ հակաթուրքական երանգ չէր պարունակում, իսկ Թուրքիայի ռեակցիան լոկ զգացմունքային բռնկում էր և որևէ ազդեցություն չէր կարող ունենալ երկկողմ հարաբերությունների վրա¹: Հետագա իրադարձությունների ընթացքը ցույց տվեց, որ լեհ պաշտոնյան չէր սխալվում. լեհ-թուրքական հարաբերություններն այդ բանաձևի ընդունումից հետո ևս շարունակեցին զարգացում ապրել: Բավ է նշել միայն, որ բանաձևի ընդունումից մեկ ամիս չանցած 2005 թ. մայիսի 16-17-ին, ԵՄ երրորդ գագաթաժողովին մասնակցելու նպատակով Վարշավա ժամանած Թուրքիայի վարչապետ Էրդողանը և ԼՀ վարչապետ Բեյկան մասնակցեցին «Մաքսիմուս» առևտրային կենտրոնի բացման արարողությանը, որի շրջանակներում քննարկվեցին երկկողմ մեծածավալ ներդրումային ծրագրեր²:

Պաշտոնական Լեհաստանը Մեյմի կողմից Հայոց ցեղասպանությունը դատապարտող բանաձևի ընդունումից հետո հանդես էր գալիս հայ-թուրքական հարաբերությունները կարգավորելու նախաձեռնությամբ: Մասնավորապես ԼՀ արտաքին գործերի նախարար Շտեֆան Մելլերի 2006 թ. Թուրքիա կատարած այցի ժամանակ առաջին անգամ լեհ պաշտոնյայի կողմից առաջարկ էր արվել Վարշավայում կազմակերպել Հայաստանի և Թուրքիայի պատմաբանների հանդիպումներ՝ նվիրված Հայոց ցեղասպանությանն առնչվող վիճելի հարցերի քննարկմանը³: 2006 թ. ապրիլի 20-ին

¹Նույն տեղում:

²Նույն տեղում, ցուցակ 11, գործ № 25, էջ 95:

³Նույն տեղում, ցուցակ 12, գործ № 36, էջ 67-68:

Լեհաստանում ՀՀ դեսպան Աշոտ Գալոյանը հանդիպեց նախարար Մելլերին: Վերջինս, կարևորելով Լեհաստանի ունեցած փորձը հարևանների հետ ունեցած բարդ պատմական և քաղաքական խնդիրները կարգավորելու առումով (Ուկրաինայի և Գերմանիայի հետ), հայտնեց իր երկրի պատրաստակամությունը հանդես գալ որպես չեզոք միջնորդ Հայաստանի և Թուրքիայի միջև երկխոսություն ծավալելու համար¹: Ըստ ԼՀ արտգործնախարարի, Լեհաստանը նման նախաձեռնություն հանդես էր բերել ԱՄՆ պետքարտուղար Քոնդոլիզա Ռայսի և ԵՄ գլխավոր քարտուղար Խավիեր Սոլանայի հետ ունեցած խորհրդակցությունների արդյունքում²: Հաջողություններ մաղթելով Լեհաստանին՝ ստանձնած առաքելության գործում՝ դեսպան Գալոյանը՝ նշեց, որ պատմական փաստերի քննարկումը հնարավորություն կտար կասկածի տակ դնել պատմական անհերքելի իրողությունները, որն անընդունելի էր, ինչպես անընդունելի կլինեի կասկածի տակ դնել «Օսվինցիում» համակենտրոնացման ճամբարում տեղի ունեցած սպանողը: ՀՀ դեսպանն այս կապակցությամբ ավելի նպատակահարմար համարեց քննարկել արդիական այնպիսի հարցեր, ինչպիսին հայ-թուրքական փակ սահմանի բացումն էր, քանի որ անթույլատրելի էր, որ ԵՄ անդամության ձգտող երկիրը փակ սահման ունենար ԵՍ անդամ երկիր հարևանի հետ³: 2006 թ. հուլիսի 17-18-ը համանման առաքելությամբ լեհական պաշտոնական պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ նաև Երևանում⁴: Ընդ որում Լեհաստանի շահագրգռվածությունն այս հարցում պայմանավորված էր առաջին հերթին Թուրքիայի համար ԵՄ մուտք գործելու նախապայմանները հաղթահարելու անհրաժեշտու-

¹Նույն տեղում, ցուցակ 12, գործ № 37, էջ 14:

²Նույն տեղում:

³Նույն տեղում, ցուցակ 12, գործ № 37, էջ 14-15:

⁴Նույն տեղում, ցուցակ 12, գործ № 36, էջ 68:

թյամբ՝ իբրև փոխհատուցում Թուրքիայի կողմից՝ Հյուսիսատլանտյան դաշինքին անդամակցության հարցում Լեհաստանին ցուցաբերած աջակցության:

Հայ-լեհական պաշտոնական քննարկումներում Հայոց ցեղասպանության և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման թեման, ի թիվս այլ հարցերի, քննարկման առարկա դարձավ նաև 2006 թ. նոյեմբերի 5-7-ը Լեհաստանի Սենատի մարշալ Բոգդան Բորուսևիչի¹, 2007 թ. հունվարի 26-ին՝ ԼՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Պավել Կովալի² և 2007 թ. փետրվարի 26-ին՝ ԼՀ արտաքին գործերի նախարար Աննա Ֆոտիզայի զլխավորած³ պատվիրակությունների հետ Երևանում տեղի ունեցած հանդիպումների շրջանակներում: 2010 թ. մարտի 9-ին ՀՀ վարչապետ Տիգրան Մարգարյանի և ՀՀ-ում Լեհաստանի նորանշանակ դեսպան Ջջիսլավ Ռաչինսկու միջև տեղի ունեցած հանդիպմանը, լեհ դիվանագետը, հաշվի առնելով հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման հանգամանքն ու հնարավոր ընթացակարգերի համապատասխանեցման անհրաժեշտությունը ԵԱ ընթացակարգերին, հայտնեց լեհական կողմի պատրաստակամությունը Լեհաստանում կազմակերպել հայ սահմանապահների վերապատրաստման դասընթացներ, որ կարող էին սկսվել արդեն իսկ 2010 թ. աշնանը⁴: Սակայն հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն ուղղված հայկական նախաձեռնության տապալումից հետո լեհական բոլոր առաջարկությունները մնացին թղթի վրա: Ավելին երկար ժամանակ Հայոց ցեղասպանության ճանաչման և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ երկկողմ պաշտոնական հանդիպումներում, համաձայն ՀՀ

¹ ՀՀ ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվ, ցուցակ 15, գործ № 37, էջ 24:

² Նույն տեղում, ցուցակ 15, գործ № 37, էջ 24-25:

³ Նույն տեղում, ցուցակ 15, գործ № 37, էջ 26:

⁴ Նույն տեղում, ցուցակ 16, գործ № 42, էջ 9-10:

ԱԳՆ պատմադիվանագիտական արխիվի նյութերի, էական ոչինչ չի քննարկվել՝ բացառությամբ գոյություն ունեցող իրողություններն ու փաստերը ի միջի այլոց արձանագրելը:

Նշենք, որ Լեհաստանի Սեյմի կողմից 2005 թ. դատապարտող բանաձևի ընդունումից հետո հայ դիվանագիտական կորպուսը հետամուտ աշխատանք էր տանում Սենատի կողմից դատապարտող բանաձևի ընդունման համար: Լեհաստանում ՀՀ դեսպանության և լեհահայ համայնքի կողմից հատկապես լուրջ աշխատանք էր տարվում 2013 թվականից սկսած՝ Ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ նման հայտարարություն կամ բանաձև ընդունելու նպատակով¹: 2014 թ. սկզբին Լեհաստանում ձևավորվել էր Ցեղասպանության 100-ամյա տարելիցի միջոցառումները համակարգող տարածաշրջանային հանձնաժողով², որ նույն տարվա վերջին հաստատեց 2015 թ. համատեղ միջոցառումների ծրագիրը³: Բնավ նպատակ չունենալով պնդել, թե նմանատիպ հայտարարության հրապարակումը որոշիչ դեր կունենար Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում, հարկ է նշել, որ ձախողման պատճառները բազմաբևեռ էին, որոնցից կարող ենք առանձնացնել երկուսը.

- լեհ-թուրքական հարաբերությունները թևակոխել էին ռազմավարական-գործընկերային աննախադեպ համագործակցության փուլ, որի պարագայում հակաթուրքական որևէ փաստաթուղթ ընդունելը լեհ լայն շրջանակների կողմից աջակցություն չէր ստանում,

- լեհահայ համայնքը պառակտված էր, իսկ այն միավորելու արտաքին գործերի և սփյուռքի նախարարությունների, Լեհաստանում ՀՀ դեսպանության և Հայ Առաքելական Եկեղեցու փորձերը ոչ միայն ձախողվեցին, այլև

¹Նույն տեղում, ցուցակ 19, գործ № 58, էջ 113:

²Նույն տեղում, ցուցակ 20, գործ № 47, էջ 14-17:

³Նույն տեղում, ցուցակ 20, գործ № 47, էջ 69-72:

ավելի խորացրին պառակտումը: Ասվածի ակնառու վկայություն կարող ենք համարել Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի միջոցառումները համակարգող հանձնախմբի ղեկավարի կազմում Սփյուռքի նախարարության կողմից նախ Լուկաշ Աբգարովիչին, ապա Հրայր Բոյաջյանին նշանակելու հանգամանքը¹, որ հավելյալ վեճ առաջացրեց լեհահայ համայնքում այդ կարևոր տարելիցի նախօրեին:

Արդյունքում 2015 թ. մայիսի 13-ին Լեհաստանի Սեյմի Ազգային և էթնիկ փոքրամասնությունների հարցերի մշտական հանձնաժողովում տեղի ունեցավ Հայոց ցեղասպանությանը նվիրված քննարկում, սակայն որևէ դատապարտող բանաձև չընդունվեց²:

Ինչպես Ցեղասպանության 100-ամյա տարելիցին³, այնպես և մինչ 2018 թ. Հայոց ցեղասպանությանը նվիրված տարաբնույթ միջոցառումներ տեղի ունեցան ողջ Լեհաստանով մեկ⁴, սակայն հայ-լեհական առնչություններում Հայոց ցեղասպանության ճանաչման, ինչպես և հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման հարցը աստիճանաբար դուրս մղվեց պաշտոնական քննարկումներից:

Ամփոփում

Հայոց ցեղասպանության վերաբերյալ հայ-լեհական առնչությունները սկիզբ առան 1998 թվականից: Այս հանգամանքը պայմանավորված էր Հայաստանի նորընտիր իշխանությունների առաջ քաշած արտաքին քաղաքական փոփոխություններով: 1998 թ. ապրիլին Վարշավայում բացվեց ՀՀ դեսպանությունը: Նույն թվականին տեղի ունեցան Լեհաստանի տարածքում Ցեղասպանության զոհերի հիշատակին՝ Հայաստանի Հանրապետության անունից կազմա-

¹Նույն տեղում, ցուցակ 20, գործ № 47, էջ 14-18:

²Նույն տեղում, ցուցակ 21, գործ № 5, էջ 1-2:

³Նույն տեղում, ցուցակ 21, գործ № 5, էջ 3-5:

⁴Նույն տեղում, ցուցակ 23, գործ № 6, ՄՕՀ, էջ 20-23:

կերպովոյ առաջին պաշտոնական միջոցառումները: Լեհաստանն, իբրև ԵԱՀԿ նախագահող երկիր առաջարկում էր իր միջնորդությունը հայ-թուրքական խնդիրները լուծելու հարցում, սակայն անարդյունք: Ցեղասպանության հարցում հայ-լեհական առնչություններում արձանագրված կարևորագույն իրադարձությունը 2005 թ. Սեյմի կողմից դատապարտող բանաձևի ընդունումն է:

HENRI MATINYAN

PhD student of VSU, Armenia

THE ISSUE OF RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE IN ARMENIAN-POLISH RELATIONS IN 1991-2018

Key words: Armenia, Poland, Turkey, Mets Yeghern, massacre, international crime, holocaust, recognition, condemnation.

SUMMARY

Armenian-Polish relations regarding the Armenian Genocide started in 1998. This was conditioned by the foreign policy changes put forward by the newly elected authorities of Armenia. In April 1998, the Embassy of the RA started operating in Warsaw. In the same year, the first official events organized in the name of the Republic of Armenia in memory of the victims of the Genocide took place on the territory of Poland. Poland, as the OSCE presiding country, offered its mediation in solving the Armenian-Turkish problems, but to no avail. The most important event recorded in Armenian-Polish relations regarding the Genocide was in 2005. It is the adoption of a condemnation resolution by the Seim.

Генри Матинян
аспирант ВГУ, Армения

ВОПРОС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН В АРМЯНО-ПОЛЬСКИХ ОТНОШЕНИЯХ 1991-2018 ГГ.

Ключевые слова: Армения, Польша, Турция, Мец Ехерн, резня, международное преступление, холокост, признание, осуждение

РЕЗЮМЕ

Армяно-польские отношения в связи с Геноцидом армян начались в 1998 году. Это было обусловлено внешнеполитическими изменениями, предложенными новоизбранными властями Армении. В апреле 1998 года в Варшаве начало действовать посольство РА. В том же году на территории Польши состоялись первые официальные мероприятия, организованные от имени Республики Армения в память о жертвах Геноцида. Польша как страна-председатель ОБСЕ предлагала свое посредничество в решении армяно-турецких проблем, но безрезультатно. Важнейшее событие, зафиксированное в армяно-польских отношениях в связи с Геноцидом, произошло в 2005 году. Это принятие Сеймом осуждающей резолюции.

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ՈՒ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԸ
ՅԻՐԻ ՀԱՆՁԵԼԿԱՅԻ ԵՎ ՄԻՐՈՍԼԱՎ ՋԻԿՍՈՒՆԿԻ
ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒ ԱՐԽԻՎՆԵՐՈՒՄ**

Հիմնադրամեր. Հայ-չեխական հարաբերություններ, Միրոսլավ Ջիկմունդ և Յիրի Հանզելկա, H + Z, Հայաստան, հայեր, ռուսեր, չեխեր, Հայոց ցեղասպանություն:

Երկրորդ աշխարհամարտից հետո երիտասարդ չեխ ինժեներներ Յիրի¹ Հանզելկան և Միրոսլավ Ջիկմունդը *Տատրա* մեքենաշինական գործարանի տնօրինության առջև են կանգնում տասը տարի գաղտնորեն մշակված ու փայփայված «5» անունը կրող ծրագրով:² Հինգ մայրցամաքներով շրջագայելու չափազանց հանդուգն ծրագիր էր դա, որի ճակատագիրը որոշող գլխավոր տնօրեն Յարոսլավ Ռուժիչկան և վաճառքի ու տեխնիկական հարցերով փոխտնօրեններ Ֆրանտիշեկ Սվոբոդան ու Բոհումիլ Միմրան հավանություն տալով առաջարկվող ծրագրին, այդուամենայնիվ ավելացնում են. «Պարոնա՛յք, դուք այս շաբաթ նման ծրագրով մեզ դիմող

¹ Ճանապարհորդների գրքերը ռուսերեն ընթերցած մեր հայրենակիցներն այս անվանը ծանոթ են իբրև *Իրժի*. չեխերեն *Ի* տառը, որ թրթռացող *ր* է, ավանդաբար ռուսերենում տառադարձվում է *ժ*-ի, իսկ *Ջի*՛ն անվան մեջ, համապատասխան տառի բացակայության պատճառով տառադարձվել է նաև առաջին Յ կիսաձայնը:

² «Հ+Ձ լեզենդ» որակմամբ հայտնի ճանապարհորդների, նրանց «5» ծրագրի և ուղեգրությունների մասին մանրամասներ կարելի է կարդալ նաև հեղինակվածս հոդվածներում, որ լույս են տեսել Չեխիայում հրատարակվող գիտական *Պարեսիա* և համաեվրոպական *Օրեր* ամսագրերում (A. Karapetyan, “Armenians in the Travelogues of Jiří Hanzelka and Miroslav Zikmund, and Their Journey to Armenia”, *Parrésia* 15, /2021/, էջ 275–312, և Ա. Կարապետյան, «Լեզենդ, որ կոչվում է Հ+Ձ», *Օրեր*, 1-4, /92/2022, էջ 64-68):

հինգերորդը կամ վեցերորդն եք, բայց մյուսներն ավելի չափավոր էին»¹:

Ավելի չափավորների անուններն այդպես էլ մնացին անհայտ, մինչդեռ Հանգելյան ու Զիկմուլը դարձան երկու երկարամյա ճամփորդությունների, ինը տարի շարունակված շրջագայությունների հերոսներ իրականացնելով հեռավոր երկրներում համերկրացիների «աչքերն ու ականջները դառնալու» իրենց երազանքը,² ինչպես նաև ապահովելով *Տասրայի* և չեխոսլովակյան բազում ապրանքների վաճառքի առևտրային պայմանագրեր: Զուգահեռաբար, այն տարիներին, երբ գնդիկավոր գրիչ ձեռք բերելն անգամ մեծ հաջողություն էր համարվում, իրենց միայն առաջին ճամփորդության ընթացքում երիտասարդները հասցրել են 450 ռադիոռեպորտաժ հաղորդել, ավելի քան 100 հաղորդագրություն գրել չեխական *Svět práce* շաբաթաթերթի և տասնյակ հոդվածներ այլ թերթերի համար, նկարել են 10,000 լուսանկար և 16,000 մետր 16մմ և 35 մմ կինոժապավեն, չհաշված Հարավային Աֆրիկայում սխալ երևակելու արդյունքում կորսված 3000 մետրը:³ Ըստ ճամփորդների, բրիտանական հետախուզությունն էր շահագրգռված, որպեսզի չիրապարակվեն աֆրիկյան գաղութների իրական դեմքը

¹ J. Hanzelka, M. Zikmund, *Život snů a skutečnosti*. Praha: Primus, 1997, էջ 54, (32): (Սա Հանգելային և Զիկմունդին ուղղված միևնույն 50 հարցերի պատասխաններով Յարոմիր Սլոմեկի հարցազրույցի գիրքն է, որ ճանտապարհորդների ինքնակենսագրականների է նման: Պատասխանողին անձնավորելու համար այսուհետ տվյալ աղբյուրին հղում անելիս կնշենք պատասխանողի անուն-ազգանվան սկզբնատառերը):

² J. Hanzelka, M. Zikmund: Úvodem. In: M. Galuška, *Cestou inženýrů Hanzelky a Zikmunda: katalog putovní výstavy Národního musea– Náprstkova musea všeobec. národopisu v Praze*. Praha: Národní museum–Náprstkovo museum všeobecného národopisu, 1953, էջ 7:

³ Չվերնագրված ներածություն, In: J. Hanzelka, M. Zikmund, *S československou vlajkou na Kilimandžaro: dvě reportáže z cesty po Africe*. 1. vyd. v SNDK. Praha. Státní nakladatelství dětské knihy, 1954, չհամարակալված էջեր:

բացահայտող իրենց նևարահանումները:¹ Ջիկմունդի առանձնատանը, որ 2022 թվականից թանգարանի է վերածվել, գրադարակներին կարելի է տեսնել ճամփորդական զույգի գրքերի 148 հրապարակումները, որ վաճառվել են 6.5 միլիոն օրինակով: ²

Նրանք չափազանց հանրահայտ ու սիված էին Վարչավյան ուխտի բոլոր երկրներում: Պատահական չէ, որ ժամանակին Մարիետա Շահինյանն իր «Չեխոսլովակյան նամակներ» շարքը սկսել է հենց ճանապարհորդներից, նշելով, որ բոլորը նախանձում են Աֆրիկայով մեկ շրջագայած երկու սթանչելի չեխերին, բայց շատերն էլ հիանում են չեխական արտադրության նրանց *Տատրա* մեքենայով:² Շատերը հիանում էին այդ մեքենայով, քանի որ չեխ ինժեներները 1947 թ. ապրիլի 22-ից մինչև 1950 թ. նոյեմբերի 1-ը, դեպի Աֆրիկա և Ամերիկաների ճանապարհներին առանց տեխնիկական խափանումների անցկացրել էին 1290 օր, ուղևորության ընթացքում եղել երեք մայրցամաքի 47 պետություններում: Այդ շարքային արտադրության մարդատար մեքենայով կտրել անցել էին Նուբիական անապատը, ինչն ինքնաապանության փորձի էր հավասար, հատկապես որ «գինված էին» Կահիրեի մի հնավաճառի շուկայից գնված որոշակի շեղում ունեցող կողմնացույցով:

Մինչ 2+2 երկյակն Արևմտյան կիսագնդում էր, Չեխոսլովակիայում 1948 թ. փետրվարին իշխանության են գալիս կոմունիստները, և շատերը մտածում են, որ նրանք

¹ J. Hanzelka, M. Zikmund, *Afrika sni a skutečnosti*, հատոր 3, էջ 206: (Լիբիայի Սիրո բաղաբում մեքենայի աբգեյակների լարերի կտրված լինելու պատճառով նրանք մահից փրչվել էին միայն Հանգեյկայի արապ սրճագանձման և պոֆեսիոնալիզմի շնորհիվ):

² Мариэтта Шагинян, «Чехословацкие письма», *Литературная газета*, 1955, № 104 (сент. 01), էջ 3: («Իզվեստիայի գրադարան» շարքով 1960 թվականին լույս բնծայված համանուն գրքույկը տարբերվում է թերթային երեք մասանոց տարբերակից):

այլևս տուն չեն վերադառնա: Մինչդեռ ճանապարհորդները հասկանում են, որ իրենց չվերադառնալու դեպքում *Տատրայի* ողջ ղեկավարությունը կհայտնվի բանտում, որ իրենց տունը Չեխոսլովակիան է, ու վճռում են վերադառնալ:՝ Պրահայում նրանց դիմավորում են իսկական հերոսների պես, սակայն նրանք վերադարձել էին բոլորովին այլ երկիր, և Ասիայի, Աֆրիկայի և Ամերիկայի մշակույթների Նապրատեկի թանգարանում բացված իրենց ցուցահանդեսի բացատրական գրքույկի նախաբանն ընդունված կարգի համաձայն համեմվում է Ստալինից մեջբերումով:՝

Առաջին ուղեգրությունը լույս է տեսնում երեք տարի դարակներում մնալուց հետո և Եյուրնբերգյան դատավարությունների մասին հաղորդագրություններով հայտնի դարձած խմբագիր Միրոսլավ Գալուշկայի միջնորդությունից հետո միայն: Այն ամփոփում է Աֆրիկյան 21 երկրներում անցկացրած 414 օրը և ծավալուն եռահատորյակ է՝ «Երագի և իրականության Աֆրիկա» վերնագրով, որ թարգմանվել է կոմունիստական ճամբարի բոլոր լեզուներով և սպառվել միլիոնավոր օրինակներով: Շեւց այս գրքերում էլ նրանք առաջին անգամ անդրադարձել են տարբեր երկրներում իրենց հանդիպած հայերին, որ հաճախ Հայոց ցեղասպանությունը վերապրածների գավակներ էին:

Կահիրեում ճանապարհորդներն իրենց կինո և ֆոտոժապավեններն երևակելու համար մտնում են Կոդակի մի գրասենյակ:՝ Շուտով աշխատող երիտասարդից մատիտ են խնդրում ժապավենի վրա նշումներ կատարելու համար և հայտնաբերում, որ մատիտը չեխոսլովակյան արտադրության է: Այս պարզ իրը խոսքի բռնելու առիթ է դառնում. չեխ

¹ J. Hanzelka, M. Zikmund, *Život snů... Էջ. 59, (32):*

² M. Galuška: *Uvodem. In: ŠOI.C, Václav, ed. Cestou inženýrů Hanzelky a Zikmunda: výstava - Náprstkovo museum. 1. vyd. Praha: Náprstkovo museum. 1951, էջ 2.*

³ J. Hanzelka, M. Zikmund, *Afrika snů a skutečnosti. Praha. 1952. հատոր 1, էջ 113-115*

ինժեներները հպարտությամբ նշում են, որ այն հայրենական արտադրության է, և քանի որ նաև առևտրա-տնտեսական սլայմանագրեր ապահովելու ծրագիր ունեին, հարցուփորձ են անում, արդյոք Եգիպտոսում շատ են չեխոսլովակյան ապրանքները: Երիտասարդը նշում է, որ ամեն օր տոննաներով չեխոսլովակյան ապրանք է դատարկվում եգիպտական նավահանգիստներում, և ոչ պակաս հպարտությամբ ավելացնում, որ մի քանի օրից այդ նավահանգիստներից մեկից (Ալեքսանդրիա) 800 հայերի հետ վերադառնալու է Հայաստան՝ սեփական փորձառությունն ու գիտելիքները հետպատերազմյան հայրենիքին բերելու. «Պոբեդա նավն հաջորդ շաբաթ ուղղություն է վերցնում տուն... դե տուն, որ երբեք չեմ տեսել, քանի որ ծնվել եմ Եգիպտոսում: Ուզում եմ հայրենիքում ֆոտո-ստուդիա բացել, ես լավ եմ այդ գործում: Եթե չկարողանամ էլ դա անել, ավելի լավ կլինի այնտեղ սովորական քարտաշ լինեմ, բայց սեփական ժողովրդիս մեջ»:¹

Այս հանդիպումից տասը տարի անց՝ 1958-ին, Միրուսլավ Զիկմունդը նամակ է ստանում Երևանից, Հակոբ Տեր Գևորգյանից, Կահիրեի այս երիտասարդից: Հակոբ Տեր Գևորգյանն իր նամակում հայտնում է, որ կարդացել է գրքի անգլերեն թարգմանությունը և զարմացել, որ հեղինակներն իրեն էլ են հիշել: Նա իր հիացմունքն է արտահայտել ու նաև հայտնել. «Այժմ Երևանում եմ, աշխատում եմ իբրև լուսանկարիչ և շատ երջանիկ եմ»:²

¹ Հեղինակները շատ նրբանկատորեն իրենք էլ պարբերաբար կիրառում են «վերադառնալ» բառը: Այս երանգն ավաղ կորել է Այրիս Էրուինի (Iris Urwin) անգլերեն թարգմանության մեջ (1955 թ.), քանզի բուօրինակի "Vrátit se"-ն (վերադառնալ) թարգմանիչը փոխարինել է «մեկնել» բառով:

² MJVM Archiv H+Z cestovatelů Hanzelky a Zikmunda v Muzeu jihovýchodní Moravy ve Zlíně (Հ+Զ արխիվ, ճանապարհորդներ Հանզելկայի և Զիկմունդի արխիվը հարավ-արևելյան Մորավայի Զլինի թանգարանում. այսուհետ չեխական ընդունալված հապավումով՝ MJVM), Արտասահմանյան

«Երազանքների և իրականության Աֆրիկա» եռահատորյալը հրատարակվել է 21 անգամ, 11 լեզուներով, իսկ ռուսերեն տարբերակը նաև կույրերի համար բրեյլյան համակարգով: Ռուսերեն տարբերակը շատ ընթերցողներ է ունեցել Խորհրդային Հայաստանում: Ընթերցողներից մեկը ինժեներ Տիգրան Գորոյանը, որ իր խոստովանությամբ, պատանեկան հավիշտակությամբ է ընթերցել, անգամ սկսել է առաջին հատորը թարգմանել հայերենի: Հենց նա էլ նկատել է, որ հեղինակները Կահիրեի Ալ Ազհար համալսարանի իսլամի ուսուցման լսարանում ի «շարս կարմիր ֆեսերով ծալապատիկ նստած» եգիպտացի, սիրիացի և պարսիկ ուսանողների նշել են նաև հայերին:¹

Իբրև գրոսաշրջիկ 1958-ի ապրիլին նա մեկնում է Չեխոսլովակիա և լինում նաև ճանապարհորդների բնակության վայրում՝ Պրահայից գրեթե չորս ժամ հեռավորության վրա գտնվող Ջլին (այն ժամանակ Գոտվալդով) քաղաքում: Բնականաբար նաև ցանկանում է հանդիպել նրանց, սակայն ապարդյուն: Պաշտոնական բացատրությունը ժամանակի սղությունն է նշվում, սակայն պարզ է, որ խորհրդային գրոսաշրջիկները ծրագրված հանդիպումներից ու երթուղուց շեղվել չէին կարող: Այդուհանդերձ էքսկուրսավարը համաձայնվում է նամակ փոխանցել Միրոսլավ Զիկմունդին:

Իր նամակում Գորոյանը գրում է, որ հայերը քրիստոնյա են IV դարից, և ոչ մի կերպ չէին կարող համալսարանում իսլամ սովորողների մեջ լինել. «Դա նույնպիսի անհեթեթություն է, ինչպես մեկը գրի, որ չեխերը հեթանոս են կամ բուդդիստ»: ²

նամակագրություն, ԽՍՀՄ, ֆոնդ Հ+Ձ, գործ 31-6: Հակոբ Տեր Գևորգյանի նամակը, ստորագրված Jacob DerKevorkian, Երևան, 21 հունվարի, 1958:

¹Ганзелка И., Зикмунд М. *Африка грез и действительности.*

Москва: Издательство Иностранной литературы, 1956, Հատոր 1, էջ. 144.

(Չեխերեն բնօրինակում՝ էջ 130):

² МЖՄМ Հ+Ձ արխիվ, Արտասահմանյան նամակագրություն, ԽՍՀՄ, ֆոնդ Հ+Ձ, գործ 31-6, Նամակ Տիգրան Գորոյանից, 24 ապրիլի, 1958, էջ 2:

Շուտով Գորոյանը Երևանյան իր փոստարկղից Հանգելկայի և Ջիկմունդի կնիքով պատասխան է ստանում,¹ որով հեղինակները շնորհակալություն են հայտնում սխալը մատնանշելու համար, պարզաբանում, որ *հայերի* փոխարեն պետք է *ինդոնեզացի* գրած լինեին և խոստանում են հետագա հրատարակություններում սրբագրել սխալը:² Նամակագրությունից հետո հրատարակված հունգարերեն օրինակում իրոք ճշգրտումն արված է, բայց հիմնական տպաքանակներն անշուշտ հրատարակվել ու սպառվել էին մինչև այդ:³

Նամակի ավարտին ճանապարհորդները հույս են հայտնում, որ Տ. Գորոյանը նույնքան լավ ժամանակ է անցկացրել Չեխոսլովակիայում, ինչպես երեք տարի առաջ իրենք՝ Հայաստանում և խնդրում են բարի ողջույններ հաղորդել Հայաստանի երգի-պարի անսամբլին: Նամակը գրված է չեխերեն: Ամենայն հավանականությամբ Գորոյանն այն կարդացել է ապավինելով ռուսերենի իմացությանը, այդ իսկ պատճառով փոքր-ինչ սխալ է ըմբռնել գրվածը: Արդյունքում, «Կոմունիստ» թերթում լույս է տեսել մի լուր «Նրանք կգան Հայաստան» վերնագրով. «Մենք հուսով ենք, որ մեր չեխոսլովակ բարեկամները կկատարեն իրենց խոստումը և կայցելեն Խորհրդային Հայաստան»:⁴ Ավելին, դրան հաջորդել է «Երեկոյան Երևանի» մի հրատարակում, որ հայտնում է, որ երեք տարի հետո Հանգելկան և Ջիկմունդը կայցելեն

¹ Գորոյանների քնտանեկան արխիվ, նամակ Հանգելկայից և Ջիկմունդից, 13 մայիսի, 1958 թ.: Ճանապարհորդների այս և հետագա նամակները մեզ հրատարակելու արտոնությամբ տրամադրել է Գորոյանի որդին Արամ Գորոյանը:

² Չհաջված չինարենը, որն իրականացվել է ստանց հեղինակների համաձայնության և գիտության, նամակագրությունից հետո հրատարակվել են չորս թարգմանություններ՝ Էստոներին (Տալլին, 1958), գերմաներեն (Բեռլին, 1959), ռուսերեն (Մոսկվա, 1961) և հունգարերեն (Բրատիսլավա, 1967):

³ J. Hanzelka, M. Zikmund, *Afrika az álmok világában és a valóságban*, 1. 2. kiadás. Bratislava: Tatran, 1967, էջ 86):

⁴ «Они придут в Армению», *Коммунист*, 135 (7302), 10.06.1958:

Հայաստան:¹ Այդուհանդերձ թերթերից ոչ մեկը չի նշել, որ Տիգրան Գորոյանն ուղղում է մտքրել չեխոսլովակ հեղինակների ամենաընթերցված ու ամենից շատ թարգմանված ուղեգրությունում:

Հայաստանում Հանգելկան և Զիկմունտը եղել են 1954 թ. հոկտեմբերին, Գորոյանի հետ նամակագրությունից 3,5 տարի առաջ: Փաստն այն է, որ առաջին մեծ շրջագայության ընթացքում քաղաքական փոփոխությունների և Չեխոսլովակիայում կոմունիստների իշխանության գալուց հետո նրանց չի հաջողվել շարունակել հինգ մայրցամաքներում լինելու իրենց «5» ծրագիրն իրականացնել. շատ պետություններ, ներառյալ Միացյալ Նահանգները, մերժել են մուտքի անգամ տարանցիկ մուտքի արտոնություն տալ: Երկրորդ անգամ իրենց ծրագիրն ավարտին հասցնելու մտադրությամբ Զիկմունդն ու Հանգելկան մեծ շրջագայության են դուրս եկել 1959 թ. ապրիլից և ճանապարհներին անցկացրել մինչև 1964-ի նոյեմբեր 2030 օր: Այս երկու ճամփորդությունների արանքում է, որ նրանք այցելել են Հայաստան:

Այն ժամանակ մեկ ամսով Մոսկվա, Լենինգրադ, Կիև և Երևան է ժամանել Չեխոսլովակիայի 15 հոգանոց պատվիրակությունը. Ուղևորությունը կազմակերպել էին Չեխոսլովակիա-ԽՍՀՄ բարեկամության ընկերությունը և ՎՈԿՍ-ը:² Չեխոսլովակիայի պաշտոնական ՉՏԿ լրատվա-կանը հայտնել է, որ պատվիրակությունը Խորհրդային Միություն է մեկնել

¹ «Նամակներ արտասահմանից. Չեխոսլովակիայից...». *Երեկոյան Երևան*, 130 (195), 3.07.1958:

² Հապավումը ռուսերեն Всесоюзное общество культурной связи с заграницей կառույցի սկզբնատառերից է: Հայաստանում պատվիրակության ընդունողը հայաստանյան մասնաճյուղն է եղել ԱՕԿՍ-ը, Արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի հայկական ընկերությունը:

ուսումնասիրության նպատակով:¹ Բացի կուսակցական պաշտոնյաներից պատվիրակության կազմում են եղել նաև Չեխոսլովակիայի գիտությունների ակադեմիայի տնօրեն Յոզեֆ Սացեկը, Բոնոյի համալսարանի ռեկտոր, ակադեմիկոս Ֆրանտիշեկ Տրավնիչեկը, գրողներ Ֆրանտիշեկ Կուբկան, Յոզեֆ Հորակը, դերասան Ֆրանտիշեկ Վնուչեկը, կոմպոզիտոր Դեզիդիր Կարդոշը, նկարիչ Վինսենտ Հլոժնիկը, ռեժիսոր Յան Կադարը: Բոլորն էլ պետական զանազան շքանշանների ասպետներ ու տարբեր մրցանակների դափնեկիրներ, ներառյալ Յիրի Հանզելկան և Միրոսլավ Զիկմունդը:²

Ընտրյալների այս պատվիրակությունը Երևան է ժամանել հոկտեմբերի 14-ին: Նրանց արդեն կազմված ու հաստատված ծրագրով դիմավորել են ԱՕԿՄ-ի աշխատակիցները: Ժամանակի և գաղափարախոսության համապատասխան, պատվիրակությանը ոչ միայն Հայաստանի պատմամշակութային կոթողներ են ցույց տվել, այլ նաև արտադրական ու գյուղատնտեսական ներուժը, ձեռքերումները:³ Միրոսլավ Զիկմունդը, ինչպես այցելած բոլոր երկրներում, Հայաստանում էլ է զուգահեռաբար երկու օրագիր պահել:⁴ Դրանցից մեկում սովորականի պես ծրագրերն է գրի առել՝ *diáře*, իսկ մյուսում՝ *deník*, իրադարձություններն ու տպավորությունները:⁵

¹ ČTK, “Kulturní delegace SČSP odcestovala do Sovětského svazu”, *Rudé právo: orgán Československé sociálně demokratické strany dělnické*. Praha: [s.n.], 2.10.1954, 34–35 (273), էջ 3:

² Národní archiv, ֆոնդ KSC–Ústřední výbor 1945–1989, Praha – sekretariát 1954–1962, գրք՝ KSC–ÚV-02/4, Sv. 53, Arch. jed./ Bod schůze 20/66, էջ 2–3:

³ ՀՀԳ, «Չեխոսլովակա-սովետական բարեկամության միության դելեգացիայի այցը Երևան», *Սովետական Հայաստան*, 16.10.1954, էջ 3:

⁴ MJVM Հ+Զ արխիվ, Osobní deníky, ֆոնդ Հ+Զ, գրք՝ 1908, pomůcka 28. Անձնական օրագիր, հոկտեմբեր, 1954:

⁵ M. Zikmund, et al. *Století Miroslava Zikmunda*, էջ 26:

Հայաստանի մասին իրադարձային օրագիրը սկսվում է դեպի Երևան ճանապարհին քաղաքների անունների թվարկությամբ՝ Մոսկվա, Խարկով, Ռոստով, Մուխոմախ, Երևան: Այդուհետ օրագիրն ավաղ գաղտնագիր *Միկուլիկ* համակարգով է գրված, որ Միրոսլավը սովորել էր դեռևս ավագ դպրոցում, որպեսզի մայրը չկարողանար կարդալ իր պատանեկության օրագրերը:¹ Մինչ բոլորը Երևանի օպերային թատրոնում «Դավիթ Բեկը» դիտելուց հետո քնած էին, Մ. Զիկմունդը նստած հյուրանոցային սենյակի լայնորեն բացված պատուհանի մոտ նամակ է գրում իր հղի կնոջը՝ Էվա Մաշկովա-Զիկմունդովային. «Գիտես, բիրլիական Արարատը, որ այնքան նման է Կիլիմանջարոյին, ինձ թվում է երեկ չէ առաջին օրը, երբ վայրէջք կատարեցինք, ողջունեց մեզ իր սառցե ճակատով: Հիմա շրջում ենք Հայաստանով, որ Մորավայից մեծ չէ: Միության հանրապետություններից թերևս ամենափոքրն է Հայաստանը, սակայն ամենամեծ պատմություն ունեցող երկիրն է, և դու ամենուր կարող ես գգալ, թե այստեղ՝ Կովկասի նախաշեմին, Սև և Կասպից ծովերի արանքում, ինչպես էին միմյանց բախվում արևմուտքն ու արևելքը: (...) Վաղն ուղևորվելու ենք մի փոքր հյուսիս՝ Սևանա լիճ, որը 2000 մ ծովի մակարդակից բարձր է և խմելու ջրի ու երկրի էներգիայի ապահովման պաշարն է: (...) Ես մի շիշ արև ու գինի կբերեմ Արարատի փեշերից, և մենք կբացենք ու քո առողջության կենացը կխմենք, երբ դիմավորենք մեր փոքրիկ քաղաքացու ծնունդը: (...) Մինչ այդ, պաշտպանիր երեխային և հիշիր Կովկասի քո ճանապարհորդին»:²

¹ J. Hanzelka, M. Zikmund, *Život snů...*, էջ 21, (ՄԶ):

² MJVM, Հ+Զ արխիվ, Մ. Զիկմունդի անձնական նամակագրություն, ֆոնդ Հ+Զ, գործ 99, Նամակ Էվա Զիկմունդովային, Երևան, հոկտեմբերի 16-17 զիշերը, 1954: (Անձնական տվյալների պաշտպանության օրենքի համաձայն տրամադրվել են պահպանված բոլոր երեք բավական երկար նամակների բժախնդրորեն ընտրված ոչ անձնական հատվածները միայն, սակայն Հ+Զ

Չեխոսլովակիայի մտավորականների պատվիրակու-
թյանը բացի Գաոնի-Գեղարդ-Էջմիածին-Սևան դասական
ըրջապտույտից, ցույց են տալիս հնագույն ձեռագիր
մատյանները, Հրազդանի կիրճում կառուցվող հիդրոկայանը,
օլատվիրակները՝ ներկա են լինում Հայաստանի խորհրդարանի
նիստին, այցելում բամբակի այգիներ, սովխոզներ ու
կոլխոզներ, և ամենուր Հանգելկայի և Զիկմունդի ֆոտոխցիկ-
ները հետաքրքրիք պահեր են որսացել: Նրանց նկարած
Երևանն ու Հայաստանն այլևս մնացել է միայն այս ու նման
բուսանկարներում՝ Մայր Հայաստանի փոխարեն դեռևս
Մոսկվինի արձանն է, փողոցներում շատ մեքենաներ չկան,
փոխարենը Երևանը կանաչապատ է, իսկ բամբակի այգի-
ներում «սպիտակ ոսկի» է հավաքվում:

Չեխոսլովակիայից ժամանած հյուրերին տարել են նաև
եայկական ֆիլմեր դիտելու, այդուհետ հանդիպում են
կազմակերպել կինոգործիչների հետ՝ Էրազմ Քարամյան,
Լաերտ Վաղարշյան, Գուրգեն Տանիբեկյան:¹ Անշուշտ
պատվիրակությունը եղել է նաև կոնյակի Արարատ և գինիների
մսկելվազ գործարաններում:² Լուսանկարներ չեն պահպանվել,
սակայն հայտնի է, որ բոլորը խմել են Մաքսիմ Գորկու կենսացը
իր հանրահայտ կատակի համար: («Ավելի հեշտ է բարձրանալ
Արարատի գագաթը, քան «Արարատի» նկուղից»):³

Չեխոսլովակների վրա հսկայական տպավորություն է
գործել Հայաստանի երգի-պարի պետական անսամբլի ելույթը,
որ կազմակերպված է եղել հատուկ պատվիրակության համար,
Երեկոյան շատ ուշ: Համերգն ավարտվել է կեսգիշերից անց:
Զիկմունդն այնքան տպավորված է եղել, որ անմիջապես

արխիվների տնօրեն դոկտ. Մազգալենա Փրայնինգերովայի կողմից տրվել է
զրանք հրատարակելու հատուկ արտոնություն:

¹ МЖМ 2+2 արխիվ, Osobni deniky, ֆոնդ 2+2, գործ. 1908, pomůcka 28.
Անձնական օրագիր, հոկտեմբեր, 1954.

² F. Kubka. *Černomořská jitra*, էջ 143:

³ «Легче подняться на гору Арарат, чем выйти из подвала "Арарат"»:

համերգից հետո գրել է կնոջը. «Միշտ կարծել եմ, որ լեցուն սրահի համար ելույթն այլ է, քան մի 15 հոգու: Սակայն ուրիշ բան կարող են ապացուցել միայն հայերը, որոնց արյան փոխարեն կարծես կրակ է: Ամեն շարժում ու ամեն հայացք դա են վկայում: Ես վստահ եմ, որ երբևէ չեմ տեսել այսքան մեկամաղձություն, այսքան զգացմունք և հավաքական ուժ ու կորով: Նրանց նրբազեղությունը, որին հավելվում են միլիմետրերով հաշվարկված վազրային թռիչքներն այնքան նրբություն ու քնքշություն ունեն, որ չափազանց ազդեցիկ էին Ավարտից հետո ոչ մեկը չէր ցանկանում տուն գնալ: Խոսեցինք անսամբլի անդամների հետ, մենք բոլորս միայն մեկ ցանկություն ունեինք որպեսզի ողջ Պրահան հնարավորությու՛ն ունենար տեսնել սա»:¹ Ահա թե ինչու է 120 000 նեգատիվների ու տեսասահիկների արխիվը՝ դասավորելիս անհաջող լուսանկարների ժապավենները դեն նետած Զիկմունդը երևանյան այս համերգի ոչ այնքան որակով կադրերի ժապավենը դրել իր անձնական արխիվում այս պահպանելու հատուկ գրառումով,² ահա թե ինչու էր նա խնդրել Տիգրան Գորոյանին բարևներ փոխանցել անսամբլի անդամներին:

Զիկմունդը հայտնում է, որ իրենց պատվիրակությանը տարել են նաև Երևանի պետական օպերայում լսելու չեխ կոմպոզիտոր Բեդրիխ Սմետանայի «Վաճառված հարսնացուն» հանրահռչակ օպերան, որի մասին կրկին Զիկմունդը հիացական տողեր է գրում օպերային երգչուհի իր կնոջը և ավստասնք հայտնում, որ երկրորդ մասը չեն կարողացել վայելել, քանի որ պատվիրակությանը տարել են ԱՕԿՍ Հայաստանում Հ+Զ երկյակը որոշում է, որ Խորհրդային

¹ ՄԿՄՄ Հ+Զ արխիվ, Անձնական նամակագրություն, ֆոնդ Հ+Զ, գործ 99 Լամակ Էվա Զիկմունդովային, Մոսկվայից, 22 հոկտեմբերի, 1954:

² Նույն տեղում, Միրոսլավ Զիկմունդի անձնական լուսանկարների հավաքածու, 35 մմ, ֆոնդ Հ+Զ, գործ 1227, ժապավեն 71:

հանրապետություններով իրենց ծրագրվող շրջագայությունը պետք է իրականացնել կենտրոններից հեռու և ոչ ուս բնակչությամբ տարածաշրջաններով, բազմազանությունը տեսնելու և ցույց տալու համար:¹

Չէխոսլովակիա վերադառնալուց հետո պատվիրակության անդամները մամուլի ասուլիս են հրավիրել: Նրանցից յուրաքանչյուրը խոսել է մասնագիտական տարբեր խնդիրների և խորհրդային հասարակարգի ընձեռած հնարավորությունների ու առավելությունների, ինչ-ինչ նախաձեռնություններ ընդօրինակելու մասին, ներառյալ կոլխոզներում Արամ Խաչատրյանի ելույթները, մինչդեռ Զիկմունդն ու Հանգելկան խոսել են բացառապես Հայաստանից ստացած տպավորությունների շուրջ:²

Հայաստանյան այցի մասին շատ տեղեկություններ չեն պահպանվել, սակայն մի ուշագրավ մանրամասն, որ անկասկած հատուկ նշանակություն է ունեցել հատկապես Յիրի Հանգելկայի համար, կարդում ենք գրող Ֆրանտիշեկ Կուբկայի «Սևծովյան առավուտը» (Černomořská jitra) գրքում: Ի շարս այլ հետաքրքիր մանրամասների գրողը հուզիչ մի պատմություն է ներկայացնում, որ կարծում եմ, դուրս է եղել ծրագրված-նախապատրաստվածից: Մի օր Երևանի Լենինի անվան հրապարակում չէխոսլովակների պատվիրակությանը մի հայուհի է մոտենում, ուշադիր նայում է նրանց և ասում. «Հիմա գիտեմ, թե ինչ տեսք ունեն այն երկրի մարդիկ, որի հողում թաղված է որդիս: Այս պահից դուք իմ երեխաներն եք»: Այդուհետ կիևը գրկում է խմբից ամենաերիտասարդին,

¹ Նույն տեղում, Անձնական նամակագրություն, ֆոնդ Հ+Զ, գործ 99, Նամակ Էվա Զիկմունդովային, Մոսկվայից, 22 հոկտեմբերի, 1954:

² RP, "Nezapomenuté dojmy ze Sovětského svazu", *Rudé právo*, 2.11.1954, 34-35 (303), էջ 3: (Տուլե Պրավո թեքթի հրապարակումը լույս է տեսել «Անմոռանալի տպավորություններ Խորհրդային Միությունից» վերնագրով):

համբուրում նրան ու անհետանում:¹ Պատվիրակության ամենաերիտասարդ անդամը Յիրի Հանգելկան էր...

Երկրորդ շրջագայությունը սկսելուց առաջ Հանգելկան և Զիկմունդը անզգուշաբար հեռուստատեսությամբ հայտարարում են, որ այս անգամ երկու և հատուկ հավաքված *Տասրաներով* են ճանապարհ դուրս գալու և չորսով: Իրենց թեկնածություններով առաջարկ-նամակների հեղեղ է սկսվում: Ըստ որում, ճանապարհորդների՝ն են հասնում նաև անհասցե, պարզապես նրանց անուն-ազգանունով նամակները: Լենինգրադից *Ռուդե Պրավդի* հասցեով հայ ինժեներ, 25-ամյա Ռոբերտ Չալաբյանի ուղարկված նամակն էլ է հասել Հ+Զ երկյակին: Նա գրում է, որ 165 սմ հասակ ունի, 62 կգ քաշ, զբաղվում է սպորտով և կարդացել է նրանց ուղեգրությունները, մեծ-մեծ խոսքեր չի սիրում, սակայն եթե նրանք ամուր ձեռքի և նվիրված սրտի կարիք ունենան, ինքը պատրաստ է միանալու:² Հասկանալի է, որ շատերի համար սա երկաթե վարագույրից դուրս սողոսկելու միանգամայն օրինական ու պատվաբեր տարբերակ էր դիտարկվում, այն էլ հերոսներ դարձած ճանապարհորդների հետ:

Դեպի Ասիա առաջին ելրոպական պետությունը Ալբանիան է, որտեղ Հանգելկան և Զիկմունդը դադար են առել և անցկացրել 1959 թ. մայիս-հունիս ամիսները: «Շրջված կիսալուսին» վերնագրով գրքում նրանք գրում են Բաքվից նավթային ինժեներ, գլխարկը միշտ գլխին, մշտապես ձեռքերը գրպաններում դրած ամրակազմ Կորյուն Մուխյանի մասին:³ Նրան և լենինգրադցի Կոնստանտին Տկաչենկոյին հրավիրել էին Ալբանիա նավթատարի հրդեհը հանգցնելու: Երկու նավթային ինժեներները մանրամասն ներկայացրել են

¹ F. Kubka, *Černomořská jitra*, էջ 150:

² МЈУМ, արխիվ Հ+Զ, Արտասահմանցի ընթերցողներ, ֆոնդ Հ+Զ, գործ 31–6. Նամակ Ռոբերտ Չալաբյանից, Լենինգրադ 14.08.1958:

³ J. Hanzelka, M. Zikmund, *Obrácený pŭlměšc*, էջ 66:

ճանապարհորդներին, թե ինչպես են հանգցնելու կրակը, իսկ վերջիններս նրանց հետ քննարկելով համաձայնեցրել են այդ ամենը նկարահանելու հնարավորությունները:

Ճանապարհորդներին արտոնվել է ազբեստե հագուստներով և միայն 50 մետրից նկարահանել աշխատանքները, որ իրենք կատարելու էին «դժոխքի դոնից» ընդամենը 80 սմ հեռավորությունից: Առաջին անգամ չէր, որ Զիկմունդն ու Հանզելկան վտանգում էին իրենց կյանքը լավ տեսաշար ու լուսանկարներ ունենալու համար: Ալբանիայում գազատարի երդեհի շիջումը նկարահանելը նրանց համար անհամեմատ հեշտ էր Կոնգոյում բռնկված Նյամուլագիրա հրաբուխը 200 մետր հեռավորությունից նկարելուց հետո եռացող Կիվու լճով մեկուսացման մեջ հայտնվելու համեմատ.¹ «... սրտներիս գարկերը զգալով կոկորդներիս մենք շնչում էինք Կոնստանտինի և Կոյունի փոխարեն...»: Շատ վարպետորեն գրված ու լարվածություն պահող այս հատվածի գազաթնակետը կրակը հանգնելուց հետո ձեռքերը կրկին գրպանները խցկող Մունչյանի հանդարտությունն է:² Ճանապարհորդներն այս մասին հաղորդագրություն են ուղարկել նաև Մոսկվա SUՍՍ-ին, չիմանալով ասգամ, որ իրենց գնալուց հետո կրակը կրկին բռնկվել է, ու այդ երկուսը նորից են իրենց կյանքը վտանգելով հանգցրել այն:³

Ալբանիայից հետո Զիկմունդն ու Հանզելկան շարունակում են ճանապարհը Թուրքիայի տարածքով: «Հազար ու երկու գիշեր» ուղեգրությունում նրանք պատմում են, որ հենց սկզբից նեթ իշխանություններն իրենց արգելել են նկարահանել մերթ սահմանային տարածքում լինելու պատճառաբանությամբ, մերթ՝ զինվորական նշանակության կամ

¹ https://www.youtube.com/watch?v=SH1eM_p6uo. Վավերագրական ֆիլմ, "Տոյ ա ձկուեճոստ Հանզելկյ ա Զիկմունդ" («Հանզելկայի և Զիկմունդի երազանքներն ու իրականությունը»):

² J. Hanzelka, M. Zikmund, *Obraceny pulmésic*, էջ 69-70:

³ Նույն տեղում, էջ 91:

անվտանգության նկատառումներով: Շատ վայրերում, նրանց թույլ չեն տվել անգամ իջնել մեքենայից:

Ճանապարհորդներին հանդիպած քրդերը շատ պատմություններ են պատմել, ներառյալ Սևրի դաշնագրի-Քրդական պետություն ձևավորելու բրիտանացիների, ֆրանսիացիների ու իտալացիների, այդուհետ նաև Աթաթուրքի իրենց տրված խոստումների մասին: Մեզ համար առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հատվածը, որտեղ պատմվում է Հայ Յեղափոխական Դաշնակցության աջակցությամբ 1930 թ. Մասիսի հարավային լանջերին Արարատյան հանրապետության հռչակմամբ բարձրացված ապստամբության մասին: Պատմել են նաև, որ 1937 թ. «հատուկ Դերսիմի բնակչությանը բնաջնջելու ծրագրված գործողություններով» ապստամբությունը ճնշվել է այնպիսի դաժանությամբ, որից «Հիտլերը կարող էր դասեր քաղել»:¹ Հեղինակներն անշուշտ տեղյակ չէին, որ Դերսիմում բնակչության բնաջնջման գործողություններն ուղղված էին հատկապես Հայոց ցեղասպանության արդյունքում բռնի մահմեղականացված կամ ծպտյալ հայերի դեմ:

Ճանապարհորդները շատ տպավորված են եղել քրդերի պատմություններից, նրանց հետ հանդիպել են նաև Իրաքում ու առանձին մի գիրք գրել «Քրդստան» վերնագրով: Այս և վերը նշված «Հազար ու երկու գիշեր» գրքերում հեղինակները ներգայացնում են քրդերի շրջանում պատմվող Աժդահակի լեգենդն այն մասին, որ արյունաբքու այս թագավորն հանուն իր առողջության ամեն օր երկու քուրդ երեխայի զոհաբերություն էր պահանջում, մինչև այն պահը երբ մի քաջ քուրդ սպանում է նրան և փրկված երեխաներով ծնունդ է առնում քուրդ ժողովուրդը:² Ավաղ Զիկմունդն ու Հանգելկան ծանոթ չեն եղել

¹ J. Hanzelka, M. Zikmund, *Tisic a dve noci*, էջ 189:

² J. Hanzelka, M. Zikmund, *Kurdistan: country of insurrections, legends and hope*. Praha: Artia, 1962, էջ 6: Ինչպես նաև J. Hanzelka, M. Zikmund, *Tisic a dve noci*, էջ 206

Խորենացու «Հայոց պատմությանը», համաձայն որի Մարաստանի արյունարբու թագավոր Աժդահակը Ք.ա. VI դարում ընկել է Պարսից Աքեմենյան արքայատոհմի հիմնադիրը դարձած Կյուրոս Մեծի հետ դաշնակցած Հայոց Տիգրան Ա Երվանդունու հարվածից։¹

Թուրքիայով շրջագայելիս չէիս ճանապարհորդները Պոլսում տեսնում են նաև Բայանների նախագծած շինություններն ու Այվազովսկու կտավները, գրում դրանց մասին՝ առանց դրանց հայկականության մասին անգամ հեռավոր իմացության։²

Թուրքիայից Հանգելկա՛ն և Զիկմունդը ճանապարհը շարունակել են դեպի Լիբանան և Սիրիա, որտեղ անշուշտ տեսել են հայկական բնակավայրերը, որոնց սակայն շատ հպանցիկ են անդրադարձել իրենց ուղեգրություններում։ Բայց հայ հոր և եգիպտուհու զավակ Հակոբ Հակոբյանի պատմությունը չեն անտեսել։³ Նրանց զարմացրել է, թե ինչու է այս նրբաճաշակ և օտար լեզուներին այդքան հիտորեն ու սահուն տիրապետող տղան ընդամենը Հալեպի հյուրանոցի ընդունաբանում աշխատում։ Հակոբն էլ ամեն անգամ ճանապարհորդներին տեսնելիս առիթը բաց չի թողել մոտենալու ու հոգնեցնելու աստիճան իր պատմությունը պատմելու համար։ Նա խաղատներում ու ամենօրյա հաճույքների վրա մսխել էր հորից ժառանգած խոշոր կարողությունը, ու այժմ ուշացած խելքի գալով ծրագրեր էր կազմում, թե ինչպես է կրկին ոտքի կանգնելու լինի Լիբանանում, Ֆրանսիայում, կամ թե մի այլ երկրում։

Իրաքում ճանապարհորդները զարմանքով հայտնաբերում են պարոն Հինգ տոկոսին Գալուստ Գյուլբենկյանին, ու մանրամասն ներկայացնում, թե ինչպես և ինչու է նա վաստակել

¹ Մովսեսի Խորենացույ *Պատմություն Հայոց*, ի Վենետիկ, Ս. Ղազար, 1881-ՌՅԼ, էջ 101-127:

² Հովհաննես Այվազովսկու հայ լինելու մասին ճշգրտումը Պրահայի Կարոլինյան համալսարանի դոկտ. Նշան Մարտիրոսյանի ջանքերով տեղ է գտել ուշ շրջանի չեխոսլովակյան հանրագիտարաններում:

³ J. Hanzelka, M. Zikmund, *Tisíc a dve noci*, էջ 47:

այդ անունը, սակայն նաև շեշտվում է նրա դիվանագիտական տաղանդը. «Վիներ Գյուլբենկյանը ֆրբրուկի ողջ տարածա-շրջանն Առաջին աշխարհամարտից հետո կընկներ Թուրքիայի վերահսկողության տակ»:¹ Ասվում է, որ պարոն Հինգ տոկոսն իր մահից հետո թողել է 20 միլիոն ֆունտ և 150 միլիոն ֆունտի կարողություն Պորտուգալիայում, որտեղ նաև այսօր գործում է շուրջ 6000 ցուցանմուշներով թանգարանը: Ակներևաբար, պարոն Հինգ տոկոսը ժամանակին Իրաքում ձեռքից բաց է թողել հնագույն պատմական մի արժեք, շումերական արձանագրության մի բեկոր, որ հազարամյակներ անց, ճանապարհորդների պնդմամբ, իրենք գտել են Բաղդադից Բասրա ճանապարհներից մեկի ցեխերում ու իրենց հետ բերել Պրահա:

Հետաքրքիր այլ պատմությունների մեջ է հանդիպումը Մոսկվայի Բուրգենկոյի հիվադանացից հրավիրված հայ վիրաբույժ Մուրեն Զոհրաբյանի հետ, որը բարկությամբ նրանց պատմել է, որ գլխուղեղի բարդագույն անվճար վիրահատություններով իրեն հաջողվում է մարդկանց կյանքեր փրկել, որ հետո նույն հիվանդանոցում մահանում են սովահարությունից. մարդիկ մահանում էին սովից նավթառատ Իրաքում:²

Բաղդադում ճանապարհորդները հանդիպել են նաև Էջմիածնից հոգևոր ծառայության կոչված հայր Վարուժանի հետ, որին տարիներ առաջ Էջմիածնում էին տեսել:³ Հայր Վարուժանը նրանց հրավիրում է թեյի: Ուղեգրությունում նշվում է, որ հոգևորականն իրենց ասել է, որ Արամ Խաչատրյանը նոր օպերա է սկսել (մինչդեռ վերջինս ոչ մի օպերա երբևէ չի գրել) և հարցրել է, արդյոք իրենք ինչ տեղեկություն ունեն: Ճամփորդական գույզն Արամ Խաչատրյանին հանդիպել է տարիներ անց, Կրասնոյա-րսկում: Դատելով արխիվում պահպանված լուսանկարից, հանդի-

¹ Նույն տեղում, էջ 178-179:

² Նույն տեղում, էջ 47:

³ Նույն տեղում, էջ 139:

տումք տեղի է ունեցել համերգից հետո,¹ այնպես որ ամենայն հավանականությամբ Ա. Խաչատրյանի մասին հայր Վարուժանի հետ խոսակցությունը Հայաստանում տեղի ունեցած մեզ անհայտ խոսակցության շարունակությունն է:

Խորհրդային Միությունում ճամփորդությունը Զիկմունդն ու Հանզելկան սկսել են շեռավոր Արևելքից, նրանց դիմավորել են Երրոսների պես և տասն ամիս շարունակված ճամփորդության ընթացքում ոչ մի վայրկյան մենակ չեն թողել: Նրանք պետք է տեսնեին միայն այն, ինչ ցանկանում էր Կրեմլը, և պետք է նկարահանեին ու պատմեին միայն այն, ինչ ուզում էին Խորհրդային իշխանությունները: Նրանց մեծ պատիվներով բարոնել են Կրեմլում, հանդիպումներ կազմակերպել տիեզերագնացների ու բարձրաստիճան կուսակցական ղեկավարների հետ Խրուշչև, Բրեժնև, Կոսիգին, Միկոյան, անգամ սոռաօարկել են ռուս բևեռախույզների հետ լինել Անտարկտիդայում:² Բայց սա պատմության գեղեցիկ մասն է միայն:

Ճանապարհորդների գրական ժառանգության 13 գրքերը մի քանի բացառությամբ առաջին ճամփորդությունից հետո գրված ուղեգրություններն են: Նրանք լիովի օգտագործվել են խորհրդային և կոմունիստական պրուպագանդիստական մեքենայի կողմից, սակայն երկրորդ շրջագայության ողջ հարուստ նյութը մնացել է սրանց արխիվներում այն պարզ պատճառով, որ Մոսկվայից հորջում էր կայացվել լռեցնել նրանց, ոչ մի տեղ աշխատանքի չընդունել, զրկելով նյութական կենսապահովման բոլոր միջոցներից:³

¹ MJVM, արխիվ 2+2, անձնական լուսանկարների հավաքածու, 35մմ, ֆոնյ 2+2, գրք 477: ԽՍՀՄ պետական սիմֆոնիկի համերգից հետո, 27 մայիսի, 1964 թ.

Rozhovor: 68 odpovedì M. Zikmunda na otázky R. Svaříčka. In: J. Hanzelka, M. Zikmund a R. Švaříček, *Past na rovníku*. Brno. Livingstone, 2009, էջ 109:

M. Simečka: Předměluva. In: J. Hanzelka, M. Zikmund, *Zvláštní zpráva č. 4*, էջ 4-5: (Թիվ 4, քանզի մինչ այլ արդևն Լրեք այլ պետությունների մասին նման վերլուծական հեղինակները գրել էին, ու դա հաշվի առնելով են Խորհրդային իշխանությունները խնդրել նման վերլուծություն գրել նաև ԽՍՀՄ-ի համար):

Պատճառը Խորհրդային Միության իրավիճակի մասին հենց Ախութենական դեկավարության անձամբ Լեոնիդ Բրեժնևի հանձնարարությամբ գրված և ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ վերտառությամբ ստձեռն Բրեժնևին հանձնված «Հատուկ հաղորդագրություն, թիվ 4» վերնագրով վերլուծականն է:¹ Սա ըստ էության *գլաստնոստի-վերեատրոյկայի* ծրագիր էր, որ գորբաշևյան ժամանակաշրջանից 20-25 տարի առաջ էր ընկել: Դրանում ԽՍՀՄ-ի իշխանություններին ուղղված 50 խորհուրդ է՝ գրված իրենց եղած 76 պետությունների իրավիճակի, իրենց փորձառությունների և համեմատական վերլուծության հիման վրա:

Շատերը մտածում են, որ սա համարձակ մի քայլ էր նրանց կողմից, մինչդեռ ճանապարհորդներին լավ ճանաչողները պնդում են, որ դա հեղինակների միամտության արդյունք էր:² Չուշացսվ նաև 1968 թ. Մոսկվայի առաջնորդությամբ Վարշավյան ուխտի գորամիավորումների Պրահա մտնելու դեմ Հանգելկայի և Զիկմունդի քաղաքացիական դիրքորոշումը: Հետո նրանք ստորագրեցին նաև հանրահայտ Խարտիա 77-ը:³ Արդյունքում ճանապարհորդներին գրկեցին մշտական եթերներից, տպագրվելու հնարավորությունից, այնպես որ ջերմ ու շքեղ կրեմլյան ընդունելություններից մինչև նրանց գրքերի զրադա-րաններից դուրս թափելն ու մոռացության մատնելը, արդյունքում նաև չքավորության ճիրաններում հայտնվելն ընդամենը մի քանի տարվա խնդիր էր: Զիկմունդը մնացել էր երկարատև դատավարություններից հետո խստիվ կրճատված ծերության թոշակի հույսին, իսկ Հանգելկան գոյատևելու համար ստիպված մեկնել էր Ավստրիայի հետ սահմանամերձ հեռավոր մի գյուղ:⁴

Միայն կոմունիստական կարգերի փլուզումից հետո նրանց

¹ J. Hanzelka, M. Zikmund, *Zvlastni zprava c. 4.* 1. vyd. Praha: Lidove nakladatelství, 1990, էջ 96:

² M. Zikmund, et al. *Stoleti...*, էջ 280:

³ J. Hanzelka, M. Zikmund, *Život snů...* էջեր 126, 141–151. (ՅՀ և ՄՁ):

⁴ Վավերագրական ֆիլմ. «Ճանապարհորդների կյանքը». *Život cestovatelů...*

<https://www.youtube.com/watch?v=u2ZYaGHSuTU>

ըստ արժանվույն կրկին հիշեցին: Երկրի նախագահ Վազլավ
Հավելն անգամ առաջարկել էր մտնել քաղաքականություն, ինչից
երկու ճանապարհորդն էլ հրաժարվել էին:¹ Նրանց անունով 1995
թվականին անվանվեց չեխ աստղագետների հայտնաբերած
աստղը,² նրանք սկսեցին պարզաստրվել տարբեր կարգի
շքանշաններով ու մեդալներով, տպարաններում հայտնվեցին
նրանց մասին պատմող գրքեր, հենց ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ վերտա-
ռությամբ էլ լույս ընծայվեց «Հատուկ հաղորդագրություն, թիվ 4»-ը:
Հանգեղկայի առողջությունն այլևս չէր ներում, սակայն Զիկմունդը
կրկին ճանապարհ ընկավ ունենալով անդավաճան ընկերոջ
հորդորն ու հավանությունը...

Իր մահկանացուն 2003 թվականին կնքած Հանգեղկան
գնահատելով իրենց ճամփորդություններն ասել էր, որ իրենց
ամենամեծ նվաճումը ողջ ու հարաբերականորեն առողջ տուն
վերադառնալն էր:³ Միրոսլավ Զիկմունդն ապրեց գրեթե 103 տարի,
մահացավ 2021-ին: Նա հասցրեց դասավորել իրենց ողջ արխիվը
ասելով, որ չի գղջում, որ չեղան երկրագնդի բոլոր մասերում, քանի
որ այն ամենն ինչ տեսել են իրենց աչքերն ու լսել ականջները,
իրենց լիովին բավարար էր:⁴

¹ M. Zikmund, M. Náplava a P. Horký, *Sloni žijí do sta let*, էջ 129:

² M. Náplava: *S hlavou v obláčích...*, In: J. Hanzelka, M. Zikmund, *Legenda Z + H: výbor z díla. Druhá cesta Evropa – Asie*, 22.4.1959 – 11.11.1964. 1. vyd. Brno: Jota, 2011, էջ 8:

³ J. Hanzelka, M. Zikmund, *Život snů...*, էջ 90–91, (32 և 33):

⁴ <https://www.youtube.com/watch?v=սx2-8bVvKVs> Վավերագրական ֆիլմ, Petr Horký "Miroslav Zikmund – Plány B" (Պետր Հորկի «Միրոսլավ Զիկմունդ Պլաններ B»):

ANNA KARAPETIAN
Ph.D. candidate, Charles University, Prague

ARMENIA AND DIASPORA ARMENIANS IN THE
TRAVELOGUES AND ARCHIVES OF JIŘÍ HANZELKA AND
MIROSLAV ZIKMUND

SUMMARY

Keywords: Czech-Armenian Relations, Miroslav Zikmund and Jiří Hanzelka, H + Z, Armenia, Armenians, travelogues, Armenian Genocide.

Jiří Hanzelka and Miroslav Zikmund (H + Z) are the most acclaimed travellers of Czechoslovakia. They had an ambitious project of travelling across five continents by Czechoslovak *Tatra* automobile under the code name "5." Throughout two trips from 22 April 1947 to 1 November 1950 and 22 April 1959 to 11 November 1964 they met various Armenians on their way in dozens of countries and wrote about them or told their stories in their travelogues.

The phenomenal travelling duo, often called 'Legend H+Z,' also visited Armenia in mid-October 1954. Unfortunately, they did not write anything about that trip, nor about their 10-month travels in the Soviet Union, including the materials collected during the second trip, as they were silenced for 20 years. They left a sizeable literary heritage behind, however, the unpublished materials in the archives are also voluminous. Anna Karapetian introduces H+Z's trip to Armenia, the Armenian stories included throughout their travelogues, and Armenia-related materials in the travellers' archives, drawing on archival material, letters, all of H + Z's travelogues, their films, media articles, as well as extensive interviews found in documentaries and books. Karapetian also believes that this article will trigger interest towards their books, which have remained highly compelling even amongst a huge array of modern travelogues.

АННА КАРАПЕТЯН

К. д. ф. Карлова университета, Прага

АРМЕНИЯ И АРМЯНЕ ДИА СПОРЫ В ПУТЕШЕСТВИЯХ И АРХИВАХ ИРЖИ ГАНЗЕЛКИ И МИРОСЛАВА ЗИКМУНДА

РЕЗЮМЕ

Ключевые слова: чешско-армянские отношения, Мирослав Зикмунд и Иржи Ганзелка, Н+Z, Армения, армянс. литература о путешествиях, путевые заметки, Геноцид армян.

Иржи Ганзелка и Мирослав Зикмунд (Н + Z) - самые известные путешественники Чехословакии. У них был амбициозный проект путешествия на чехословацком автомобиле *Tatra* по пяти континентам под кодовым названием «5». В течение двух поездок с 22 апреля 1947 г. по 1 ноября 1950 г. и с 22 апреля 1959 г. по 11 ноября 1964 г. они встречали на своем пути армян в десятках стран и писали о них или рассказывали их истории в своих книгах.

Феноменальный путешествовавший дуэт, часто называемый «Легенда Н+Z», также посетил Армению в середине октября 1954 года. К сожалению, они ничего не написали ни об этой поездке, ни о 10-месячном путешествии по Советскому Союзу, в ящиках так же остались и другие материалы, собранные во время второй поездки, так как их замалчивали 20 лет. Н + Z оставили значительное литературное наследие, однако не менее объемны и неопубликованные материалы в архивах. Опираясь на архивные материалы, письма, все Н+Z книги, их фильмы, статьи в СМИ, а также емкие интервью в документальных фильмах и книгах, Анна Карапетян представляет поездку Н+Z в Армению, армянские истории, разбросанные по их книгам о своих путешествиях, и связанные с Арменией материалы архива Н+Z. Карапетян также считает, что эта статья вызовет интерес к их книгам, которые остаются весьма привлекательными даже среди огромного количества современных путевых заметок.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՆԻ ՖԻՇԵՆԿՃԵԱՆ

ՅՈՒՐԵԼԵՆԱԿԱՆ ՀԱԼԷՊԻ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՐԷՆ ԵՓՓԷ
ՃԵՄԱՐԱՆԸ ԵՕԹԱՆԱՍՈՒՆՀԻՆԳ ՏԱՐԵԿԱՆ.....6

ԱՅՍՐԿՈՎԿԱՍ ԵՎ ԱՐԵՎԵԼՔԻ ԵՐԿՐՆԵՐ

2. ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՇԱՄԱԽԻ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԵՐԻ
ՄԱՍԻՆ.....12

3. ԱՐՄԱՆ ՄԱԼՈՅԱՆ

Լ.-Ֆ. ՖԵՐԻԵՐ-ՍՈՎԲԵՖԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՏՍՈՒԹՅԱՆ
ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ (XVIII Դ. ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴ).....28

4. ԷԼԻԶԱԲԵԹ ԹԱԶԻՐԵԱՆ

ՄԻ ԱՂԱՄԱՆԴԻ ՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ.....39

3. ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ԻՐԱՆԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՆ ԻՐԱՆԱՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ
ՄԱՍԻՆ.....51

4. ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈ-
ՐՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ
ՋԱՎԱԽՔԻ ՎՐԱ (1991 – 2021 ԹԹ.).....63

5. ԱՆԻ ՖԻՇԵՆԿՃԵԱՆ

ՆՈՒՍԷՅՊԻՆԷՆ (ՄԾԲԻՆԷՆ) ԶԱԼԻՆ/ ԳԱՄԻՇԼԻ/.....85

6. ՄԵՂԱ Տ. ՕՀԱՆԵԱՆ

ՀՆԴԿԱՀԱՅ ՄԵԾ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԸ (THE GREAT ARMENIAN
CASE) ԿԱՄ ՄԵԾ ՀԱՅՑԻՈՐԻ ԴԱՏԸ ԿԱՄ ՀԱՅ ՊԱՀԱՆՋԱ-
ՏԻՐՈՋ ՄԵԾ ԴԱՏԸ.....96

ԵՎՐՈՊԱ ԵՎ ԱՄՆ

7. ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

ԷՂՍՈՆԴՈ ԴԵ ԱՄԻՉԻՍԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ.....108

8. ԳՈՀԱՐ ԽՆԿԱՆՈՍՅԱՆ

ԲՈՒԼՂԱՐԱԿԱՆ «ՊՈԽՈՂ» ԹԵՐԹԸ 1941 Թ.-ԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՏԵՂԱՑԻ ՀԱՅԵՐԻՆ.....122

9. ՖԵԼԻՔՍ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԼԵՀԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ XVI-XVII ԴԱՐԵՐԻ ՎԱՐՇԱՎԱՅԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ.....132

10. ՀԵՆՐԻ ՄԱՏԻՆՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ՀԱՐՑԸ ՀԱՅԼԵՀԱԿԱՆ ԱՌԵՉՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 1991-2018 ԹԹ.....154

11. ԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՆ ՈՒ ՍՓՅՈՒՈՔԱՀԱՅԵՐԸ ՅԻՐԻ ՀԱՆԶԵԼԿԱՅԻ ԵՎ ՄԻՐՈՍԼԱՎ ԶԻԿՄՈՒՆԴԻ ՈՒՂԵԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒ ԱՐԽԻՎՆԵՐՈՒՄ.....172

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ
ԳԱՂԹԱՎԱՅՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱԼԵՊԻ «ՔԱՐԷՆ ԵՓՓԷ» ԱԶԳԱՅԻՆ ՃԵՄԱՐԱՆԻ
ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 75-ԱՄՅԱԿԻՆ ԼՎԻՐՎԱԾ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ
ԼՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ՊՐԱԿ Գ

Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Տպարանակը՝ 100 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
RA, 0019, Yerevan, pr. Marshal Baghramyan 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
<http://www.academhistory.am>

ԳԱՍ Հիմնարար Պիտ. Պրադ.



FL0682103

A^N
111710